

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ  
<<ՈՒՐԱՐՏՈՒ>> ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՌԱՖԻԿԻ**

**ԱԽՏԱԾԻՆ ԴԵՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

*ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընդհանրական, տարիքային, մանկավարժական խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական ասպիրանտի հայցման*

**Գիտական ղեկավար՝**

Հոգեբանական գիտությունների  
դոկտոր՝ **Ս.Ա. Սեդրակյան**

**ԵՐԵՎԱՆ 2017**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

### ԳԼՈՒԽ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԽՏԱԾԻՆ ԴԵՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

**ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ, ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** .....14

1.1. Ընտանիքը որպես սոցիալական խումբ, ընտանիքի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ընտանեկան կարգավիճակներն ու դերերը, դերերի ծագումը ..... 24

1.1.1. Ընտանեկան դերերի բախման և հարմարման մեխանիզմները որպես ախտահարված փոխհարաբերությունների սկիզբ ..... 30

1.2. Ներընտանեկան դերային բախում. ախտածին դերերի և ճգնաժամերի դրսևորման փուլերն ընտանիքում ..... 36

1.3. Ընտանեկան ախտածին դերեր. ծագումը, էությունը, առանձնահատկությունները, ախտածնության դրսևորումը որպես ամուսնալուծության պատճառ..... 41

### ԳԼՈՒԽ 2. ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

**ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ** ..... 47

2.1. Ամուսնալուծությունը որպես ախտածին դերերի հետևանք, ախտածին դերերի քայքայիչ բնույթը և ամուսնալուծության հետևանքները..... 56

2.2. Անբարենպաստ ընտանիքը որպես երեխայի սոցիալ-հոգեբանական առողջ զարգացմանը խոչընդոտող պատճառ, վարքի ռիսկայնության նախապայման ... 76

2.3. Ամուսնալուծություն և ծնողներ, հարազատներ. շփումների սակավություն, քննադատական վերաբերմունք..... 80

2.3.1. Ամուսնալուծություն և շրջապատող միջավայր. հետագա զարգացման առանձնահատկությունները ..... 83

<b>ԳԼՈՒԽ 3. ՆԵՐՇՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԱԽՏԱԾԻՆ ԴԵՐԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
3.1. Հետազոտության մեթոդները, կազմակերպում և նկարագրությունը .....	85
3.2. Ախտածին դերերի ազդեցությունը բացահայտող գործոնների հետազոտումը առողջ և ամուսնալուծված ընտանիքների շրջանում՝ դերային սպասումների և հավակնությունների մեթոդիկայի կիրառմամբ .....	97
3.3. Առողջ և ամուսնալուծված ընտանիքների կոնֆլիկտային վարքի գործոնների հետազոտումը՝ ախտածին դերերի ազդեցությամբ անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկայի կիրառմամբ.....	112
3.4. Ախտածին դերերի քայքայիչ ազդեցության գործոնների հետազոտումը առողջ և ամուսնալուծված ընտանիքներում՝ ամուսնությամբ բավարարվածության մեթոդիկայի կիրառմամբ .....	121
3.5. Առողջ և ամուսնալուծված ընտանիքներում մեծացող երեխաների պատկերացումները ընտանիքի մասին: «Ընտանիքի կինետիկ պատկերը» և «Անավարտ նախադասություններ» մեթոդիկաները որպես միջանձնային հարաբերությունների ախտորոշման միջոց.....	126
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	135
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	138
ՀԱՎԵԼՎԱԾ.....	144

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հեղազոտության արդիականությունը:** Ընտանիքը, որպես սոցիալական խումբ, իր խնդիրներով և զարգացման առանձնահատկություններով մշտապես գտնվել և գտնվում է հասարակագետների ուշադրության կենտրոնում:

Հասարակության զարգացման ներկայիս արմատական փոփոխությունները և վերակառուցված կամ նորովի ձևավորված գործընթացներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում նաև ընտանիքի վրա, և վերջինիս առնչվող խնդիրները սկսում են էլ ավելի անհանգստացնել թե՛ բնագավառի մասնագետներին, թե՛ հասարակությանն ընդհանրապես:

Պատմականորեն ձևավորված և ժամանակով ամրագրված խմբերի շրջանում ամենակայունը համարվել և համարվում է ընտանիքը, ուրեմն և հասարակական այդ կառույցի սոցիալ-դերային հետազոտությունն այսօր ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, ինչն էլ իր հերթին ենթադրում է ընտանիքի դերային համակարգի ու կարգավիճակադերային փոխհարաբերությունների նոր և առավել հանգամանալից մոտեցումների ու հայեցակետերի մշակում:

Ընտանիքն իր տեսակներով, գործառույթներով և դերային փոխհարաբերություններով յուրովի է նպաստում հասարակության դինամիկ զարգացմանը, սակայն միշտ չէ, որ ընտանիք կառույցն ինքը կարողանում է զարգանալ ներդաշնակորեն, քանի որ այն անմասն չի մնում սոցիալ-տնտեսական տարաբնույթ գործոնների, սոցիալական խնդրահարույց փոխհարաբերությունների, սեռադերային բաշխման լարված վիճակների ներգործություններից:

Ուստի ընտանիքը, որպես սոցիալ-հոգեբանական դինամիկ համակարգ, կարիք ունի նոր և խորացված հետազոտությունների՝ հիմքում ունենալով սոցիալական հոգեբանության, անձի հոգեբանության և հոգեբանության այլ ոլորտների նորանոր ձեռքբերումները, սոցիալ-հոգեբանական էական և մշտապես գործող մեխանիզմները երևան հանող մեթոդները, դրանց մշակումն ու կիրառումը:

**Աշխատանքի գիտական նորույթը** նշված հոգեբանական խնդիրների հետազոտությունն է՝ սոցիալ-դերային, մասնավորապես կարգավիճակադերային մոտեցման հետևողական կիրառման պայմաններում, որն ուղղված է աշխատանքի

հիմնաքարը հանդիսացող ախտաձին (պաթոգեն) – դեզադապտիվ դերային փոխհարաբերություն ների հետազոտման և ազդեցության ոլորտների, ինչպես նաև ընտանիքի՝ դրանից բխող խնդիրների, գործառույթների և հետագա փոխհարաբերությունների ուսումնասիրմանը: Հետագա ախտահարված փոխհարաբերությունների «հանգուցալուծումը» մենք դիտարկում ենք ընտանիքի փաստացի կամ էմոցիոնալ տրոհման, այն է՝ ամուսնալուծության հանգեցման տեսանկյունից:

Սույն աշխատանքում հենց այս՝ ախտաձին դերային փոխհարաբերություններով պայմանավորված բախումնաձին ընտանեկան մեխանիզմներն ու գործառույթներն են համարվում ամենաարդիականներից մեկը ընտանեկան խմբերն ուսումնասիրող գիտության մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ մեր կողմից կազմակերպվել և իրագործվել են ներընտանեկան փոխհարաբերությունների դինամիկայի մեթոդաբանական, տեսական և փորձարարական հետազոտություններ:

Սույն աշխատանքում դերային, մասնավորապես ախտաձին դերային մոտեցումը համալրվում է վարկածով, ենթավարկածներով, որով, ըստ էության սկիզբ է դրվում ընտանիքի հետազոտման նոր՝ ախտաձին սոցիալ-հոգեբանական ուղղության ներկայացման համար:

**Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը:** Քանի որ դերերի և գործունեության տեսությունները արդեն վաղուց մշակված են նախորդ հետազոտողների կողմից, ուստի շեշտը դրվել է այդ երկու տեսությունների համադրման և իրական կյանքում դրանց բազմակողմանի դիտարկման վրա՝ սկսած ընտանիքի սոցիալ-հոգեբանական բնութագրից, գործառույթներից, դերերի ծագման, բախման և հարմարման մեխանիզմներից մինչև ապագա ամուսինների նախամուսնական շփումը, դերային, միջդերային ակնկալիքները, սպասումները (էքսպեկտացիաներ), վերջիններիս ախտաձին դրսևորումները և, արդյունքում, նրանց ընտանիքի գոյության փաստացի կամ էմոցիոնալ ավարտը՝ ամուսնալուծությունը:

Սոցիալական դերերի մասին հիմնական մոտեցումների առաջին ստեղծողները (Տ. Սարբին [93], Ռ. Լինտոն [90], Ջ. Գ. Միդ [91], Ա. Մ. Ռոշերլավ-Սպենլե, Մ. Միդ [55] և ուրիշներ) համոզված էին, որ դերերի տեսությունն այն առանցքային կողմերից մեկն

է, որը կարելի է կիրառել ընտանիքի հետազոտության ոլորտում, քանի որ հենց այդ դերերի աններդաշնակությունն է հանգեցնում ընտանիքի տրոհմանը:

Նշված հեղինակների աշխատություններում հանդիպում են ընտանիքի և նրանում գոյություն ունեցող դերերի վերաբերյալ հղումներ, որոնք առավելապես բերված են օրինակների տեսքով, քանի որ նրանց հիմնական նպատակը ոչ թե ընտանիքի դերային փոխհարաբերությունների խորքային հետազոտումն էր, այլ տարբեր ժողովուրդների ընտանիքների մասնավոր կողմերի վերլուծությունը:

Ընտանեկան հոգեբանության մեջ ընտանիքի դերային ամբողջական կառուցվածքի (այդ թվում և ախտաբանական, ախտածին դերերի) մասին գաղափարները սկսել են հանդես գալ այն հեղինակների աշխատություններում, ովքեր մասնագիտացված էին հատկապես սոցիոլոգիայի և ընտանիքի սոցիալական հոգեբանության ոլորտներում (արտասահմանյան հետազոտողներից՝ Ն. Սմելգեր [73], Է. Բերն, Մ. Բուուեն [87], Կ. Վիտակեր [31], Մ. Ջեյմս, Կ. Իմելինսկի [46], Գ. Կրայզ [51], Ս. Կրատոխվիլ [50], Ս. Մինուֆին [56], Մ. Նիկոլս, Ռ. Ռիչարդսոն, Վ. Սատիր [70], Ռ. Սկիններ, Ջ. Հեյլի [80], Է. Էրիքսոն [85], ռուսաստանյան և նախկին ԽՍՀՄ հետազոտողներից՝ Լ. Յա. Գոզման [33], Է. Ե. Այրոշինա [24], Տ. Վ. Անդրեևա [26], Ն. Ն. Օբոզով [61], Ռ. Վ. Օվչարովա, Ս. Ի. Գոլոդ [35], Ի. Ս. Կոն [52], Ի. Ի. Լուին, Օ. Ա. Կարաբանովա [48], Ի. Վ. Դորնո [37], Մ. Ա. Մազմանյան, Ս. Ա. Սեդրակյան [20], Ա.Ա. Նաչաջյան [17], Ն. Ի. Օլիֆիրովիչ [65], Ե. Տ. Սոկոլովա, Է. Թիյտ [79], Վ. Վ. Ստոլին [75], Ն. Վ. Տոլինա, Վ. Ա. Սիսենկո [78], Գ. Գ. Ֆիլիպովա, Ի. Վոլկովա [32] և ուրիշներ):

Մեր աշխատանքի համար, մասնավորապես, կոնցեպտուալ հիմք են հանդիսացել Ս. Ա. Սեդրակյանի՝ ընտանիքի դերային կառուցվածքի վերաբերյալ բազմաբնույթ հետազոտությունները (1997, 2008, 2010), Օ. Ա. Կարաբանովայի՝ ոչ նորմատիվ ընտանեկան ճգնաժամերի տեսությունը (2008), Ռ. Ռայգորոդսկու խմբագրությամբ հրատարակված ընտանեկան կոնֆլիկտները նկարագրող և համակարգող աշխատությունների համակազմը (2002, 2003, 2004):

Սակայն վերոգրյալ հեղինակներն իրենց առջև նպատակ չէին դրել քննարկելու և, ընդամին, հետազոտելու հատկապես ախտածին դերերն իրենց ամբողջականության և ազդեցության լայն ոլորտների շրջանակներում, մի հանգամանք, որը հիմնավորում է

մեր աշխատանքի ընտրությունը: Մենք փորձել ենք հանգամանալից կերպով քննարկել մասնավորապես ախտածին դերերն իրենց առաջացման, դրսևորման և, ըստ այդմ էլ, կործանարար ազդեցության շրջանակներում, քանի որ ընտանիքներում տիրող բախումնային, լարված փոխհարաբերությունների մեծ մասի հիմքում, ըստ մեր հետազոտությունների և ըստ համարժեք վերլուծությունների, ընկած են ախտածին դերերը, ախտահարված փոխհարաբերությունները: Ընդ որում, ախտածին դերերն ի սկզբանե, կարծես, հանդես են գալիս չգիտակցված տեսքով, մյուս դերերի հետ հարակցված, սակայն, աստիճանաբար խորանալով, նրանք առավել ուժգնությամբ են ներազդում ընտանեկան փոխհարաբերությունների վրա և կազմալուծում ընտանիքը հիմքից:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է փաստել, որ առաջադրված թեման համալիր է և ունի միջգիտական ուղղվածություն, որը հիմնականում առնչվում և ուսումնասիրվում է՝

ա) հոգեբանության տարբեր բնագավառներում՝ սոցիալական, մանկավարժական, բժշկական.

բ) հարակից գիտություններում՝ սոցիոլոգիա, հոգեբուժություն, հոգեախտաբանություն, հոգեֆիզիոլոգիա:

**Հետազոտության օբյեկտ են** ընտանիքի սոցիալ-դերային փոխհարաբերությունների կառուցվածքը, ախտածին դերային փոխհարաբերությունները, ընտանեկան կոնֆլիկտները, ամուսնալուծությունները և դրա հետևանքները, ամուսնալուծությունները և երեխաները, ամուսնալուծությունները և հասարակության տարբեր շերտերի փոխադարձ կապերն ու ազդեցության ոլորտները:

**Հետազոտության առարկա են** ընտանիքի անդամների դերերի և կարգավիճակադերային համակարգի փոխադարձ կապը, ընտանիքի անդամների փոխադարձ սպասումների չարդարացված մեխանիզմները, ախտածին դերերի առաջացման արդյունքում կոնֆլիկտային իրավիճակները, ճգնաժամերը, ամուսնալուծությունները և դրանց հետևանքները:

**Հետազոտության նպատակն է՝** տեսանելի դարձնել ընտանեկան դերային փոխհարաբերությունների բախումնային, մասնավորապես ախտածին դերային փոխհարաբերությունների քայքայիչ, կործանարար ազդեցությունը ընտանիքի վրա, այդ ազդեցությունը նվազեցնելու կամ հաղթահարելու ուղղությամբ համապատասխան

ուղիներ մշակելու նպատակով կանխատեսել դրա սոցիալ-հոգեբանական մեխանիզմների հետագա դինամիկան:

Վարկածի հետազոտման նպատակով առաջադրել ենք մի շարք **խնդիրներ՝**

1. Ընտանիքի տեսական և գործնական հետազոտությունների արդյունքների ուսումնասիրության հիման վրա ներկայացնել արդի բջջային ընտանիքի կառուցվածքը, դինամիկան, նկարագրել դերային նորմալ և ախտածին դրսևորումները, որպես ամուսնալուծության՝ ընտանիքի քայքայման պատճառ:

2. Համակարգել դերային յուրօրինակ՝ ախտածին հիմքով առաջացած բախումները, վերջիններիս դրսևորման առանձնահատկությունները և լուծման հնարավոր եղանակները: Այդ նպատակով կիրառել զրույցի, դիտման, հարցման, թեստավորման և սոցիալ-հոգեբանական այլ մեթոդներ, ինչպես նաև կատարել հոգեբանական գիտության մեջ կուտակված փորձարարական նյութերի տեսամեթոդաբանական վերլուծություն:

3. Հետազոտել ամուսնալուծության հիմնական պատճառները և առաջացման մեխանիզմները, մասնավորապես ամուսնալուծությունը դիտարկել ախտածին-դեզադապտիվ դերերի ճնշման տեսանկյունից:

4. Հետազոտել ամուսնալուծության արդյունքում առաջացող այն կարգավիճակների և դերերի փոփոխությունները, որոնք դրսևորվում են արդեն իսկ նախկին ամուսինների և երեխաների, ինչպես նաև լայն հասարակության փոխհարաբերություններում:

5. Առաջադրել այն ճանապարհներն ու մեխանիզմները, որոնց օգնությամբ կամ որոնց արդյունքում նոր դերային փոխհարաբերությունները կրում են ադապտիվ (նորմալ) և դեզադապտիվ (ախտածին) բնույթ:

### ***Հետազոտության վարկածն է՝***

Ենթադրվում է, որ յուրաքանչյուր ստեղծվող ընտանիք կարգավիճակների և դերերի համակարգ է, որի սպասումները (էքսպեկտացիաները) փոխկապակցված են, և վերջիններիս չարդարացվելու կամ մասնակիորեն արդարացվելու պարագայում կարող են դրսևորվել նոր՝ ախտածին-դեզադապտիվ դերեր, որոնք փոխում են ընտանիքի կառույցը, քայքայում այն:



### **Հեղափոխության ենթավարկածներն են՝**

1. Ենթադրվում է, որ գոյություն ունեն ներընտանեկան հարաբերություններում դրսևորվող դերային բախումներ, կոնֆլիկտներ, բախումների «զարգացման» փուլեր, որոնք պայմանավորված են ախտածին դերերի և սպասումների (էքսպեկտացիաների) հակասությամբ, ստեղծում են լարված փոխհարաբերություններ և ճգնաժամեր, որոնք էլ իրենց հերթին արտահայտվում են ինչպես ամուսինների, այնպես էլ ողջ ընտանեկան հարաբերությունների համակարգում:

2. Ենթադրվում է, որ ախտածին դերերի կիզակետում դրսևորվող բախումնաձին, ճգնաժամային փոխհարաբերությունները, որոնք առավելապես տանում են ընտանիքի կազմալուծման՝ ամուսնալուծության, մեծամասամբ հետևանք են ընտանեկան դերերի նորմալ (ադապտիվ) կերպի ընդունման անկարողության և փոխընդունման բացակայության: Վերոգրյալի արդյունքում ախտածին- դեզադապտիվ դերերի ճնշմամբ ընտանիքը կազմալուծվում, քայքայվում է:

**Աշխատանքն ունի տեսական և գործնական նշանակություն,** քանի որ ընտանիքի հոգեբանական հետազոտությունները, մասնավորապես, ընտանիքի տրոհման (ամուսնալուծության) հիմնական պատճառների հետազոտությունները համակարգված ձևով քննարկվում են սոցիալ-դերային (ախտածին դերերով պայմանավորված) տեսանկյունից, որտեղ ընտանեկան դերերի իրականացումը կամ վերջիններիս իրականացման անկարողությունը դիտվում է որպես ընտանիքի գործունեության կարևորագույն բաղադրիչ: Այն թույլ է տալիս նորովի լուսաբանել ժամանակակից ընտանիքների առջև ծառայած հիմնախնդիրները և լայն հեռանկար է բացում ընտանիքի հոգեբանության տեսական և գործնական բազմաթիվ հետազոտությունների համար:

**Հեղափոխության մեթոդները և մասնակիցները:** Հետազոտությունը կատարվել է համակարգված մի շարք մեթոդների (դիտում, զրույց, թեստերի մեթոդ, հետազոտության արդյունքների մաթեմատիկական վերլուծություն) համադրման եղանակով: Կիրառվել են նաև մի շարք հեղինակների առաջարկած մեթոդիկաներ (Վ. Վ. Ստոլին՝ «Ամուսնությամբ բավարարվածության հարցարան» [74], Կ. Թոմաս՝ «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկա» [5], Ա. Ն. Վոլկովա՝ «Դերային սպասումներ և հավակնություններ (մեթոդիկա)» [32], Ռ. Բեռնս և

Ն. Կաուֆման՝ «Ընտանիքի կինետիկ պատկերը» (թեստ) [5], Ս. Արզումանյան՝ «Հետազոտվողի միջանձնային հարաբերությունների ախտորոշումը անավարտ նախադասությունների միջոցով» (մեթոդիկա) [5]): Ստացված արդյունքների հավաստիությունն ապահովվել է տվյալների մշակման և վերլուծության մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով:

Ընդհանուր առմամբ հետազոտությանը մասնակցել է 150 ընտանիք, որոնք դասակարգվել են փաստացի կամ զգայական ամուսնալուծության փուլում գտնվող և առողջ ընտանիքների խմբերով: Մասնակցել են նաև այդ ընտանիքների անդամ ներկայացնող 140 աշակերտներ, ովքեր սովորում են հանրակրթական չորս (որից մեկը՝ հիմնական) դպրոցներում՝ հիմնականում 7-12-րդ դասարաններում:

Փաստենք, որ վերոգրյալ ընտանիքներն ընտրել և հետազոտել ենք բազմագործոն և բազմատիրույթ դերային մոտեցման սկզբունքով, այսինքն՝ հետազոտել ենք թե՛ այնպիսի ընտանիքներ, որոնք ունեին կրթական մակարդակի բարձր շեմ (հիշյալ դպրոցներում աշխատող ուսուցիչներ), թե՛ այնպիսի ընտանիքներ, որոնք չունեին բարձրագույն կրթություն, թե՛ այնպիսի ընտանիքներ, որտեղ «նախկին» ամուսիններից կրթություն ստացել էր մեկը:

Երեխաների ներգրավվածությունը հետազոտություններին ևս բացատրվում էր դերային, մասնավորապես կարգավիճակադերային համակարգի դինամիկ զարգացման սկզբունքով, այսինքն՝ նպատակամղված էր վերլուծելու նրանցում երևան եկած վարքագծային այն փոփոխությունները, որոնք հետևանք էին ընտանիքում առկա խնդիրների, բախումների, ճգնաժամերի և, ի վերջո, ամուսնալուծությունների: Ուզում ենք փաստել նաև, որ այդ փոփոխություններն ախտահարված փոխհարաբերությունների բացահայտ կամ թաքնված «արգասիքներն» էին, և մեր կողմից կիրառված մեթոդների միջոցով ստացված արդյունքները վերջիններիս ապացույցներն էին:

### ***Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝***

1. Ընտանեկան բարդ փոխհարաբերություններում դրսևորվող ախտածին-դեզապտատիվ դերերը հիմնականում առաջանում և դրսևորվում են դերային լարված փոխհարաբերությունների, չարդարացված սպասումների և բախումների արդյունքում՝ հանգեցնելով հարաբերությունների խորը ճգնաժամի, ընդհուպ՝ ամուսնալուծության:

Ամուսնալուծությունը դիտարկում ենք որպես հարաբերությունների փաստացի կամ զգայական/էմոցիոնալ/ տրոհում:

2. Ընտանեկան փոխհարաբերությունների անմիջական ոլորտում մարդիկ պատկերացումներ են ձեռք բերում հիմնական սոցիալական դերերի և գործընթացների՝ համագործակցության և մրցակցության մասին: Եթե դերային այդօրինակ փոխհարաբերություններում գերակշռող է համարվում համագործակցային բնույթը, ապա այդտեղ դերերի բաշխումը մեծամասամբ սահուն, նորմալ և ադեկվատ կերպով է ընթանում, իսկ հակառակ պարագայում դրսևորվում են դերային լարված փոխհարաբերություններ, սեփական դերի «գերազանցություն», ընտանիքում միանձնյա լիդերի և այլ, ոչ ադեկվատ հարաբերություններ, որոնք պատճառ են դառնում դերերի ախտահարման, բախման և ախտածին- դեզադապտիվ դերերի առաջացման համար:

3. Ընտանեկան ճգնաժամային փոխհարաբերություններում առաջացող ախտածին-դեզադապտիվ դերերը երևան գալով ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների վարքագծում, սկսում են աստիճանաբար ներգործել մյուսների վարքի վրա և քայքայել, կազմալուծել ընտանիքը ներսից: Այս պարագայում ուշադրության է արժանի հատկապես այն համգամանքը, համաձայն որի դերերի ախտածինությամբ պայմանավորված, լարված ճգնաժամային փոխհարաբերությունները պատճառ են հանդիսանում երեխաների կարգավիճակադերային վարքականոնների խեղմանը, ծնողների, շրջապատի հետ փոխհարաբերությունների վատթարացմանը: Նման երեխաներից շատերը կորցնում են հետագայում նորմալ ընտանիք կազմելու կամ ամուսնական փոխհարաբերություններում հարմարվելու ոնակությունը, ձգտում են միայնակության, անգամ դառնում են մարդատյաց:

4. Ներկայացվում է նաև ընտանեկան ախտածին- դեզադապտիվ դերերի ճնշմամբ պայմանավորված ամուսնալուծությունների վերաբերյալ տեսակետ, համաձայն որի, արդեն կազմալուծված ընտանիքի անդամները ախտահարված դերային փոխհարաբերությունների թատերաբեմ են դարձնում նաև հասարակության այսպես կոչված արտաքին հատվածը՝ իրենց անմիջական շրջապատը, դրսևորելով հարմարման անկարողություն, երբեմն՝ անընկալություն:

Ատենախոսության **մեթոդաբանական և տեսական հիմքն են հանդիսանում** Ա.

Ա. Սեդրակյանի՝ ընտանիքի հոգեբանության բնագավառում կատարած լայնածավալ հետազոտությունների և, ըստ այդմ էլ, համակարգված աշխատությունների համակազմը ( [20], [71], [72], [22]), ռուսաստանյան հոգեբանության մեջ մշակված ընտանեկան դերերի և կոնֆլիկտների վերաբերյալ մի շարք տեսություններ (մասնավորապես՝ Օ. Ա. Կարաբանովա [48], Ի.Ս. Գոլոդ [35], Ն.Վ. Գրիշինա [36], Օ. Մ. Զդրավոմիսլովա [43], Վ. Ն. Դրուժինին [39], Ս. Կրատոխվիլ [50], Դ. Մայերս [53], Ն. Ն. Օբոզով [61], Ն. Ի. Օլիֆիրովիչ [65], Դ. Յա. Ռայգորոդսկի [67], Վ. Վ. Ստոլին [75], Է. Թիյտ [79], Է. Գ. Էյդեմիլեր, Վ. Վ. Յուստիցկիս [84]), ինչպես նաև ամերիկյան և եվրոպական սոցիոլոգների և սոցիալական հոգեբանների կողմից մշակված դերերի տեսությունը (Զ. Գ. Միդ [91], Ռ. Լինտոն [90], Մ. Միդ [55], Տ. Շիբուտանի [83], Տ. Սարբին [93]) և ուրիշ աշխատություններ: Ուսումնասիրվել է ընդհանուր առմամբ 96 անուն գրականություն:

Ընտանեկան հոգեբանության և մասնավորապես ընտանեկան դերերի և կոնֆլիկտների հետազոտման համար նախադրյալ են հանդիսացել այն հեղինակների աշխատությունները, որոնք իրենց առջև ծառայած խնդիրների լուծման ժամանակ կիրառել են դերային փոխհարաբերությունների, մասնավորապես ընտանեկան կոնֆլիկտների, ճգնաժամերի, ախտահարված ընտանիքների, ամուսնալուծությունների և դրանց հետևանքների, ինչպես նաև միայնության և այլ գործունեության մոդելը (Ա. Ա. Սեդրակյան [20], Օ. Ա. Կարաբանովա [48], Է. Գ. Էյդեմիլեր, Վ. Վ. Յուստիցկիս [84], Ս. Խուդոյան [81], Ն. Ի. Օլիֆիրովիչ [65], Դ. Յա. Ռայգորոդսկի և համահեղինակներ [67]):

Մեր հետազոտությունների հիմքում այն հիմանական դրույթն է, ըստ որի, հասարակության մեջ յուրաքանչյուր մարդու դերը մարդկային կերպի և գործունեության կարևոր և յուրահատուկ ձև է: Դա այնպիսի սոցիալ-հոգեբանական կազմավորում է, որն ունի յուրօրինակ կառուցվածք և գործառույթներ, որոնք իրագործվում են փոխլրացված կերպով՝ շրջապատողների դերերի կատարման համատեքստում: Դրա հենքով մենք գտնում ենք, որ ընտանեկան դերերի, մասնավորապես ներընտանեկան դերերի ախտահարված վիճակը չի կարող

ուղղակիորեն չազդել ընտանիքի կառույցի վրա, քանի որ այստեղ կարծես համադրվում են դերերի և գործունեության տեսությունների հենց այդ հատվածները:

Հետազոտական աշխատանքի հիմնական դրույթները գեկուցումների և քննարկումների տեսքով **ներդրվել են** Արմավիրի մարզի Նորակերտի, Մուսալեռի, Ծաղկալանջի միջնակարգ և Փարաքարի հիմնական դպրոցների մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի նիստերում, «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի ամենամսյա տեսական սեմինարներում, էջմիածին քաղաքի կանանց խորհրդի համաժողովներում, Երևան քաղաքի թիվ 2 հատուկ/օժանդակ դպրոցի մանկավարժական և ծնողական խորհրդի նիստերում:

Հետազոտության տվյալները կարող են կիրառվել ընտանիքի հոգեբանությամբ և հոգեթերապիայով զբաղվող մասնագետների ուսումնասիրություններում, սոցիալ-հոգեբանական խորհրդատվական կենտրոններում, բուհական համապատասխան դասընթացներում:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գործնական առաջարկություններից, գրականության ցանկից [96 անուն]: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 144 էջ, որտեղ ներառված են 5 գծապատկեր, 2 նկար, 11 աղյուսակ: Ատենախոսությանը կցված է նաև 5 հավելված (14 էջ):

## **ԳԼՈՒԽ 1**

### **ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԽՏԱԾԻՆ ԴԵՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

#### **ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ.**

#### **ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ**

#### **ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ընտանիքի և ընտանեկան փոխհարաբերությունների տիրույթում ախտածին դերերի առաջացման, մեխանիզմների վերլուծության, ամուսնալուծությունների վրա էական ազդեցության, դերերի և կարծրատիպերի վերաբերյալ դիրքորոշումները ընտանիքաբանության ոլորտում համեմատաբար նոր և դեռևս համալիր վերլուծության կարիք ունեցող բնագավառ են: Իհարկե, ընտանիքաբանությունը և ընտանեկան խնդիրներով զբաղվող սոցիալական հոգեբանության մի շարք բնագավառներ էական զարգացում ապրեցին նախորդ դարի վերջերին, սակայն ախտածին դերերի և ընդհանրապես դերային փոխհարաբերությունների մասին հետազոտություններն արդիական են նաև մերօրյա հասարակարգում:

Այդ հետազոտությունները ընդգրկում են ընտանիք հասկացության բոլոր բնագավառները, բոլոր կենսաձևերը և աշխարհի տարբեր մասերում ապրող հասարակարգերը: Նման համատեքստում ընտանիքի կառուցվածքը փոփոխությունների ենթարկվեց հատկապես դերերի բաշխման՝ խոցելի համարվող հատվածում, քանի որ դարերով արմատավորված կնոջ դերի (որպես ընտանիքի «ներսի սյուն») և տղամարդու դերի (որպես ընտանիքի «դրսի սյուն») տեսակետները արմատապես փոխվեցին: Սա կարելի դիտարկել իբրև ժողովրդագրական փոփոխություններից բխող արմատական տեղաշարժ, որն իր ուրույն հետևանքն ունեցավ ընտանիքի մոդելի վրա: Այս համատեքստում փոխվեցին ընտանիքի անդամների՝ միմյանց հանդեպ ունեցած պարտականությունների բնույթը, փոխհարաբերությունների չափանիշները, սպասելիքների, հատկապես դերային սպասելիքների (ակնկալիքների) բնույթը, որոնք ստացան այսպես կոչված պահանջատիրական երանգ: Դա պայմանավորված է հատկապես սոցիալ-դերային պահանջների բնույթի փոխհարաբերություններով, որոնք ընտանիքի դերային տիրույթը հետազոտելու նոր հենք ապահովեցին: Այս ձևաչափում էլ տարբեր գրական

մասնագիտական շրջանակներում՝ հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններում, սկսեցին հստակորեն ուրվագծվել դեր, դերային սպասում, դերային կառույց, դերերի տեսակներ (հատկապես ախտաճին-պաթոգեն), ամուսնություն-ամուսնալուծություն հասկացությունների նոր վերլուծությունները:

Մարդկանց սոցիալական կյանքի բնութագրիչ դերային վերլուծությունը, դերային մոտեցման մասին սկզբնական պատկերացումները ձևավորվել են 20-րդ դարի 30-ական թվականների՝ ականավոր մտածողներ Ջ. Հ. Միդլի, Ռ. Լինտոնի, Ջ. Մորենոյի և մի շարք այլ գիտնականների ջանքերով, որոնց հետազոտություններով դերերի տեսության հիմնահարցը մուտք գործեց քննարկման նոր ասպարեզ: Այս հիմքով, դերերի տեսությունն իր սկզբնական ծավալուն արտահայտությունը գտավ ամերիկյան սոցիոլոգ և հոգեբան Ռալֆ Լինտոնի հրատարակումներում: Լինտոնի կարծիքով սոցիալական դերը ներկայացվում էր որպես կարգավիճակի դինամիկ տեսանկյուն, քանզի անհատը սոցիալական իմաստով կապված է վերոգրյալ կարգավիճակին և զբաղեցնում է այն՝ այլ կարգավիճակի հետ ունեցած կապի մեջ, և, երբ անհատն իրագործում է իր իրավունքներն ու պարտականությունները, ապա նա դրանով իսկ դեր է կատարում [20, էջ 31-32]:

Ռուսաստանյան հայտնի սոցիոլոգ Ի. Ս. Կոնի համոզմամբ «Ո՛չ առօրյա խոսքում և ո՛չ էլ գիտական հասկացությունների օգնությամբ մենք այլ կերպ չենք կարողանա նկարագրել մարդու վարքն ու այլ մարդկանց հետ ունեցած փոխհարաբերությունները, քան նրա կողմից իրագործվող սոցիալական դերերի հասկացությունների օգնությամբ» [52, էջ 14], [20, էջ 32]:

Այս մոտեցումը, դերերի կառուցվածքային մեխանիզմները նորովի վերլուծելով հանդերձ, դրանք դարձրեց ավելի ամբողջական և համալիր:

Սոցիալական դերերի յուրատիպ վերլուծությամբ է աչքի ընկնում Տ. Սարբինը, ով դերերի նման բազմության մեջ առանձնացնում է սպասումների (էքսպեկտացիաներ) մասին գաղափարը և նշում, որ սպասումները (ակնկալիքները) ցույց են տալիս տվյալ դերակատարի այն գործողությունները, որոնք նախկինում նա չէր կատարել այլ դերակատարների հետ իր փոխհարաբերություններում: Այս գործողությունները վերոնշյալ հեղինակը որակեց պահանջվող կամ վերագրվող դերեր [93, էջ 488-567]:

Սարբինի բնութագրած հաջորդ խմբում այն սպասումներն են, որոնք տվյալ սոցիալական դիրքն զբաղեցնող դերակատարն ինքն է ներկայացնում, այսինքն, երբ

անձը որոշակի կարգավիճակի է հասնում, ապա պատկերացում է ձեռք բերում այն մասին, թե ինչ ակնկալիքների նա պետք է ընդառաջ գնա, ինչպես պետք է վարվի այլ դերակատարների հետ առնչվելիս, ինչ վարք է իրենից սպասվում և այլն: Սրանք կոչվում են նաև սուբյեկտիվ դերեր: Սրանք տարբեր դերային գործողություններ են և, համապատասխանաբար, տարբեր դերային վարքագծեր, որոնք իրենց տարաբնույթ որակավորումներով կարող են լուրջ դերային բախման (բախումների) տեղիք տալ: Բախումների արդյունքում դրսևորվում է դերերի և վերջիններիս կառուցվածքի ախտահարում (հաճախ համալիր), որն էլ ծնում է ախտածին-պաթոգեն դեր ողջ ընտանիքի մակարդակում: Ախտածին են ընտանիքի անդամների կատարած այն դերերը, որոնք ախտաբանական գծեր, հակումներ և ապրումներ են առաջ բերում կամ հենց կատարողների, կամ ընտանիքի մյուս անդամների, կամ էլ ինչպես առաջինների, այնպես էլ երկրորդների մեջ [20, էջ 299-300]: Դերերի վերաբերյալ տարաբնույթ դրսևորումների համակազմը ընտանեկան փոխհարաբերությունները դարձնում են խիստ խոցելի, բախումնային, դիսկային, ամուսնալուծության շեմին...

Այստեղ փոխվում են մարդկային փոխհարաբերությունների բնույթը, արժեքները, պահանջմունքների բնույթը, ընդ որում, բոլոր տարիքային խմբերում:

Այս մոտեցումն, իհարկե, զերծ չէ թերություններից, սակայն դրանով հանդերձ հնարավորություն է ընձեռում հետազոտելու անձային փոխհարաբերությունների ախտածին-ախտաբանական դերային կարծրատիպերը: Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ախտածին դերերի բնույթը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար կարելի է առանձնացնել վերոբերյալ դերը բնութագրող տեսակները, որոնք հանդիսանալով ընտանիքի ախտահարման դրդապատճառներ՝ վերջինիս մղում են ամուսնալուծության [20, էջ 31-37]: Այս դերերը իրենց սկզբնական դասակարգումով առաջինը վերլուծել են Ֆ. Բարկերը և Հ. Ռիխտերը [86, էջ 29, 35]: Նրանք նախ քննում են դերերի տեսության հիմնարար դրույթները, մասնավորապես այն, ըստ որի՝ գոյություն ունեն ոչ միայն պայմանական (պաշտոնական), այլև միջանձնային (ոչ պաշտոնական) կարգավիճակներ և դերեր, որոնցով էլ պայմանավորվում է ընտանիքի ողջ կենսագործունեությունը և որոնց ախտահարումով էլ դերերը դառնում են ախտածին՝ ընտանիքը մղելով ամուսնալուծության:

Ախտածին-պաթոգեն, ընտանիքը կազմալուծող դերերի հետազոտությամբ զբաղվող հոգեբանները պնդում են, որ այդպիսիք կարող են լինել միջանձնային



դերերը, որոնք էլ ավելի սերտ են փոխկապակցված և մարդկանց համար առաջնային շփման հարթակ են ապահովում:

Միջանձնային դերային փոխհարաբերություններով պայմանավորված շփման և փոխազդեցության դաշտն առավել շատ մերձենալու հնարավորություն է ընձեռում, որի արդյունքում մարդկանց խմբերն իրար լավ են ճանաչում, գիտեն բոլոր արժանիքներն ու թերությունները, թույլ և ուժեղ կողմերը:

Այդուհանդերձ, այս մոտեցումը դեռևս վերջնական չի համարվում և վիճելի շատ կողմեր ունի: Սա նշանակում է, որ ախտածին դերերի ոչ բոլոր դրսևորումներն են նկատվում միայն միջանձնային դերերի մակարդակում՝ սերտ շփումների տիրույթում, և որ ախտածին կարող է դառնալ նաև այն մարդու դերը, ով, բնակվելով մեկ ընտանիքում, մեկ այլ ընտանիքի որևէ անդամի դերը կամ դերերի ողջ համալիրը կարող է դարձնել ախտահարված, ախտածին: Օրինակ՝ մայրը և մեկ այլ ընտանիքում ապրող աղջիկը կամ առանձին ապրող զույգերը և երկկողմանի ծնողները, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում «զիջել» իրենց հիմնական, իրենց կարծիքով հստակ կարգավիճակը և ըստ այդմ՝ ակնկալվող դերային սպասումները:

Ըստ որոշ հեղինակների կարելի է առանձնացնել հիմնախնդրի (այն է՝ ախտածին դերերով պայմանավորված ամուսնալուծությունների ռիսկի) 4 խումբ, որոնք իրենց հետևից կարող են բերել նախադրյալներ, որոնք մղում, դրդում են ընտանիքի ախտահարված փոխհարաբերությունների, դերերի ախտածին բնույթի, ճնշվածության, բախման և, ի վերջո, ամուսնալուծության [48, էջ 246, 263]:

Առաջին խմբում սեփական-անձնային ախտածին դերի այն մակարդակն է, երբ անձի կատարած դերն ընտանիքում ախտածին է հենց իր համար, սակայն «օգտակար» է (համենայնդեպս այդպես է կարծում ընտանիքի տվյալ անդամը) ընտանիքի մյուս անդամների համար:

Այդպիսի օրինակ կարող է համարվել «ընտանիքի տառապյալ անդամի» դերը, որը ստանձնողը նվիրվում է իր ընտանիքին անմնացորդ նվիրումով, անընդհատ ստորադասում է իր անձնային շահերն ու սպասելիքները ընտանիքի շահերին և ակնկալիքներին, չունի (կամ արտամղում է) ոչ մի անձնային պահանջմունք, ես-ի որոշակի դրսևորում, գրեթե մշտապես ցուցաբերում է անձնազոհության ակնհայտ վարքագիծ, ընդ որում՝ կամավոր: Հետազոտությունները ցույց են տալիս [20, էջ 299-307), որ նման վարքագիծ դրսևորող անձը ընտանիքը «կորցնելու» մշտական

վախի մեջ է, անընդհատ ուղիներ է փնտրում (իրական և թվացյալ)՝ ընտանիքը պահպանելու ամեն տեսակի դժվարություններից, որոնք կարող են և չլինել, սակայն անձին կարող է թվալ, որ դրանք կան: Սա դիտարկվում է որպես կամավոր ինքնազոհաբերման դեպք:

Երկրորդ խմբում «քավության նոխազի դերն» է, այսինքն՝ ընտանիքի այն անդամի դերը, ով դառնում է ընտանեկան ամեն տեսակի դժգոհությունների «մեղավորը» կամ «կրողը», ընտանիքի անդամների դժգոհության և ագրեսիայի թիրախը: Սա այն դեպքն է, երբ ընտանիքի մեկ կամ մի քանի անդամներ մի որևէ անդամին մղում (դրդում, ստիպում) են կատարել այնպիսի դեր, որը նրա վրա ախտածին-պաթոգեն ազդեցություն է թողնում: Այս ճնշումն առավել սուր և կործանարար բնույթ է կրում հատկապես այն դեպքում, երբ ընտանիքի վերոնշյալ անդամը «կամավոր» ստանձնում է այդ դերը, դրսևորում է իրեն տրված դերին համարժեք դերային վարքագիծ, ենթարկվում է այդ բոլոր «չգրված օրենքներին»: Անձն այս դեպքում սուր ներքին ճգնաժամ է ապրում, որն ուղեկցվում է անձնային բնույթի տարաբնույթ կառուցվածքային փոփոխություններով՝ ճնշված վիճակ, մեղավորության զգացում, ներքին ագրեսիայի դրսևորում, այնպիսի զգացում, թե ինչ-որ բան այնուամենայնիվ այն չէ, հոգեբանական կախվածություն, սթրեսածին իրավիճակ:

Երրորդ խմբում կարելի է դիտարկել ախտածնության դրսևորումը ընտանիքի մակարդակում, այսինքն, երբ ընտանիքի որևէ անդամի կատարած դերն ախտածին չէ իր համար, սակայն ախտածին կարող է լինել ընտանիքի մյուս անդամների համար [20, էջ 302-304]: Ենթադրվում է, որ այդպիսին կարող է լինել, օրինակ, ընտանիքում բնակվող մեծահասակի կատարած դերը և համապատասխան դերային սպասումը ընտանիքի մյուս անդամների կողմից (ակնկալիք, էքսպեկտացիա): Օրինակ, ընտանիքում բնակվող մեծահասակի կողմից իրագործվող դերը կարող է իր համար լինել ուղղակի ընտանիքը ամուր և կուռ պահելու համար նպատակամղված դերային գործառույթի իրականացում, սակայն ընտանիքի այլ անդամների կողմից այն ընկալվի որպես «բռնակալի» դեր, քանի որ այստեղ անխուսափելիորեն ծագում են սերունդների բախման, դերերի տարբերակման սկզբունքային դիրքորոշումների տարբերությունների հիմնահարցերը, որոնք ընտանիքներում միշտ էլ եղել են վիճահարույց:

Ենթադրում ենք, որ այդպիսին կարող է լինել նաև մանկահասակ երեխայի դերը, որն իր վարքով, կամակորոթյամբ և անձնային պահանջներով խաթարում է մի ողջ ընտանիքի կենսակերպը և առօրյա մթնոլորտը դարձնում է լարված, առիթներ տալիս վեճերի և քննարկումների: Հարցն առանձնապես սուր բնույթ է ստանում այն դեպքում, երբ ընտանիքում, սովորաբար, մեծահասակներից որևէ մեկը կամ, հաճախ, երկուսն էլ «միանում» են երեխայի ինքնատիպ-կամակոր վարքագծին՝ այն համարելով ընդամենը երեխայություն, մանկական տարիքին բնորոշ վարք, որն անցողիկ է: Հաճախ մեծահասակների կողմից շահարկվում է նաև երեխայի՝ ծնողների, հատկապես մոր կողմից «ոչ ճիշտ» դաստիարակություն ստանալու փաստը, որի արդյունքում արդեն իսկ ախտահարված փոխհարաբերությունները ծնում են ախտածին դերեր: Իհարկե, այստեղ անխուսափելի են բախումնային իրավիճակները և երեխային որպես «կռվախնձոր» ծառայեցնելը, քանի որ երեխայի դերի մասնիկն է դառնում նաև մեծահասակը՝ երեխայի միջոցով ցանկանալով իրագործել սեփական վարքի չիրագործված գործառույթները: Այս վարքագիծը, իհարկե, մասամբ կարող է գիտակցված և նպատակաուղղված լինել, մասամբ էլ՝ մեծ սիրուց դրդված, քանի որ մեծահասակները երեխաների հետ, սովորաբար, յուրատեսակ մտերմություն են զգում:

Չորրորդ խմբում երկարժեք, հաճախ՝ եռարժեք ախտածին դերերի կատարման գործառույթներն են, երբ ընտանիքում նման դերակատարման «վառ օրինակներ» կարող են համարվել մեկից ավելի մասնակիցներ: Օրինակ՝ ընտանիքի մեկ անդամը կարող է կատարել այնպիսի դեր, որն ախտածին է իր անձի համար, մինչդեռ ընտանիքի մեկ այլ անդամ կարող է կատարել այնպիսի դեր, որն ախտածին է միայն մյուսների համար: Դիտարկվում է նաև այն տարբերակը, երբ ախտածին է անձի դերը թե՛ սեփական անձի մակարդակում, թե՛, միաժամանակ, ընտանիքի այլ անդամների մակարդակում: Առաջին դեպքում դիտարկում ենք այն մոտեցումը, երբ անձի վարքագիծն իր համար ախտածին է, ցավալի և ճնշված, սակայն նա դա չի տարածում ընտանիքի այլ անդամների վրա, չնայած որ ընտանիքի անդամների առանձնակի ուշադրության դեպքում գրեթե անհնար է թաքցնել անձնային դժվար ապրումները և տառապալից պահերը: Երկրորդ դեպքում դիտարկվում է այն փաստը, երբ անձնային ախտածին դերերը «ծնում են» նույնատիպ դերային գործառույթներ և համարժեք դերային վարքի նախադրյալներ նաև ընտանիքի մյուս անդամների համար, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով «ներգրավվում» են այդ հարաբերությունների մեջ:

Այդ հարաբերություններում ախտածին դերակատարումները, դերային վարքագիծն ու սպասումները դառնում են անձի առօրյա փոխհարաբերությունների ակնառու առիավատյան, որն, իհարկե, բախումների, դժգոհությունների, ճգնաժամերի անխուսափելի դրդապատճառ է:

Վերոնշյալ բոլոր դասակարգումները և մասնագետների յուրատիպ վերլուծություններն, իհարկե, զերծ չեն թերություններից և վերջնական, սպառիչ լուծումների չեն ձգտում, սակայն դրանց արդյունքում հնարավորություն ենք ստանում նոր հետազոտություններ կատարելու, դասակարգման նոր չափանիշներ ընտրելու: Այսպես, օրինակ, ընտանիքներում ախտածին դերերի և, համապատասխանաբար, ծագող ախտածին փոխհարաբերությունների դրսևորումներն, իհարկե, չենք կարող որակել որպես պատահաբար առաջացող երևույթներ:

Որոշ հետազոտողներ գտնում են, օրինակ, որ «քավության նոխազի» դերը հիմնականում ծագում է այն ընտանիքներում, որոնց անդամները մշտական սթրեսների մեջ են, խիստ ագրեսիվ են ու չարացած և ընտրում են իրենցից մեկին, որի վրա կարող են «թափել» բացասական տրամադրության մաղձը [20, էջ 304-305]:

Ելնելով վերոգրյալ դիտարկումներից մասնագետները հանգել են այն եզրակացության, որ եթե որևէ ընտանիքում կա մեկը, ում դերն իր համար արդեն իսկ ախտածին է և, բնականաբար, ախտածին է դառնալու նաև ընտանիքի մյուս անդամների համար, ապա այս դեպքում ախտածին վարքի պատճառը պարզելու համար պետք է ուսումնասիրել ընտանիքն ամբողջությամբ, քանի որ նմանօրինակ վարքագիծ դրսևորող անձի դեպքում խնդիրը պայմանավորված չի կարող լինել միայն առանձին անհատով:

Մասնագետները գտնում են, որ եթե ընտանիքում կան ներոզներով, փսիխոպաթիաներով, ալկոհոլիզմով կամ թմրամոլությամբ, ինչպես նաև սուր աֆեկտիվ հակաազդեցություններով աչքի ընկնող անձինք, ապա այստեղ միանշանակ առկա են ընտանիքում տիրող ախտածին դերեր՝ իրենց վարքային համապատասխան դրսևորումներով [20, էջ 307-312]:

Մեկ այլ օրինակի համաձայն, եթե որևէ ընտանիքում նրա անդամներից մեկին պարբերականորեն «զոհ» են դարձնում, ապա դա ինքնին նշանակում է, որ ընտանիքն ախտահարված է: Դա ցույց է տալիս, որ ընտանիքն իսկապես կարող է ախտածին լինել իր անդամի համար և, որ հիվանդությունների, ճնշվածության, կոնֆլիկտների,

ճգնաժամերի, ամուսնալուծությունների (իհարկե ոչ միշտ) հիմնական պատճառները ոչ թե պետք է փնտրել շրջապատի և այլ մարդկանց հետ սոցիալական շփումների տիրույթում, այլ հենց ընտանիքում, նրա ախտածին դերերում, ախտածին միջդերային հարաբերություններում:

Ախտածին դերերի առաջացման հետևանքով ընտանիքում առաջ եկած փոփոխությունների վերաբերյալ յուրօրինակ հետազոտություն է կատարել Հ. Ռիխտերը, որի գաղափարական վերլուծությունն արժարժվել է Էյդեմիլլերի և Յուստիցկիսի համարժեք աշխատության մեջ: Հեղինակները փաստում են, որ եթե ընտանիքի անդամներից մեկի մոտ ի հայտ է գալիս որևէ անսովոր հատկություն կամ նրան վերագրվում է այդպիսի որևէ հատկություն, ապա նա կարծես ականա «մտնում է» այդ դերի մեջ և դրսևորում այդ վերագրվող դերին համապատասխան վարք: Օրինակ, եթե նրան բնորոշում են որպես նյարդային, ագրեսիվ կամ իներտ անձնավորություն, որի որոշակի պահանջ-մունքները բավարարելու կամ վտանգավոր մղումները հսկողության տակ վերցնելու անհրաժեշտություն կա, ապա ընտանիքի ներքին դերային համակարգը լուրջ կազմաբանական փոփոխությունների է ենթարկվում, իսկ ընտանիքի որևէ կոնկրետ անդամ իր վրա է վերցնում որևէ կոնկրետ դեր, օրինակ՝ «խնամողի», «վերահսկողի», «կանխողի» և այլն, որոնց կատարումը նրա համար, մեղմ ասած, ցանկալի չէ: Այս լրացուցիչ, ստանձնյալ դերերը կարող են ախտածին ազդեցություն թողնել հենց իրենց՝ կատարողների վրա, և նրանք իրենք կարող են հայտնվել ախտաբանական փոփոխությունների թատերաբեմում: Այստեղ արդեն դրսևորվում է անձի՝ իր մասին ունեցած պատկերացումների և ստանձնած դերի միջև անհամապատասխանություն, որն իհարկե ադեկվատ հակազդումների առիթ է հանդիսանում: Այստեղ դրսևորվում է մեկ այլ շարժառիթ ևս. այն անձը, ով իր վրա է վերցնում լրացուցիչ դերը, իր հերթին է սկսում ճնշում գործադրել ընտանիքի անդամների վրա, օրինակ՝ պահանջել, որ օգնեն իրեն և «հիվանդին», որ «փրկեն» ընտանիքի անդամին և այլն: Ընտանիքում այս իրավիճակում դիտվում է մշտական լարված մթնոլորտ, դերերի լուրջ տեղաշարժեր՝ ախտաբանական-ախտածին դրսևորումներով: Այս դրսևորումները մշտապես ուղեկցվում են բախումներով, պահանջատիրական բնույթի վիճաբանություններով, փոխադարձ վիրավորանքներով, կոնֆլիկտներով և ճգնաժամերով [20, էջ 308-309]:

Ախտածին դերերի յուրօրինակ հետազոտությամբ է աչքի ընկնում Բարկերը, ով ախտածին դերերը դիտարկում է որպես միջանձնային, ոչ կոնվենցիոնալ դերեր, որոնք

իրենց թե՛ բովանդակությամբ, թե՛ կառուցվածքով ընտանիքի անդամների վրա թողնում են ավստահարող ազդեցություն [86, էջ 296]:

Ախտածին դերերի դրսևորման յուրատեսակ մեխանիզմ է քննվում նաև Ի.Գ. Մալկինա-Պիխի հրատարակած «Ընտանեկան թերապիա» աշխատության մեջ, որտեղ հեղինակը վերոնշյալ դերի ձևավորման պատճառ է դիտում ոչ թե ընտանիքի և սոցիալական միջավայրի միջև եղած միջանձնային փոխհարաբերությունների խաթարումները, այլ ընտանիքի մեկ անդամի մեջ մյուսի կամ մյուսների հանդեպ առաջացած փոխված, հաճախ նույնիսկ աղճատված պատկերացումները [54, էջ 73-75]: Այս դեպքում, ըստ վերոգրյալ հեղինակի անցումն ախտածին դերերին «իրագործվում» է հետևյալ մեխանիզմով.

Ընտանիքի անդամներից մեկը տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, և նա ուղղակի կամ անուղղակի կերպով փոխում է ընտանիքի պատկերացումը մեկ այլ անդամի իրական (փաստացի) կերպարի վերաբերյալ, որը միանշանակ բերում է դերերի վերակառուցման: Այս դեպքում իրական «խախտումը» որոշակի ջանքերի շնորհիվ «տեղափոխվում» է հենց այդ անդամի վրա, որի ժամանակ հաճախ ընտանիքի ճնշումն այնքան մեծ է լինում, որ այդ երկրորդ անդամի մեջ իրոք հայտնվում են նմանօրինակ գծեր կամ գծերի զուգորդություններ: Նման տիպի ախտածին դերերի դրսևորումները նաև դասակարգված են ըստ ստորև բերվող չափանիշների:

- Հոգեկան խնդիրների ծագում այն դեպքում, երբ ընտանիքի որևէ անդամի մոտ առկա են ուժեղ, խոր պահանջմունքներ (օրինակ՝ ագրեսիվության, սադիզմի, սեփական անձի վրա ուշադրության սևեռման և այլն), որոնք հակասության մեջ են սեփական անձի մասին ունեցած պատկերացումների հետ:

- Պահանջմունքների իրարամերժ բավարարում. այս դեպքում ախտածին դերերի առաջացման պատճառ է հանդիսանում սեփական պահանջմունքների բավարարման գնալը ընտանիքի մեկ այլ անդամի օգնությամբ: «Երեխա-վունդերկինդ (հրաշամանուկ)», «երեխա-ընտանիքի ապավեն» և այլ նմանատիպ դերեր հաճախ կապված են ծնողների՝ սեփական չիրականացած մղումները երեխաների վարքագծով փոխարինելու ակնկալիքով:

- Պրոյեկցիայի մեխանիզմի առկայությամբ առաջացող ախտածին դերեր. Ընտանիքի մեկ անդամ սեփական թերի համարվող գծերը ոչ միայն վերագրում է մեկ այլ անդամին, այլև օգտագործում է ազդեցություն պարունակող յուրաքանչյուր լծակ

այդ «գործընթացն» առավել հանգամանալից իրագործելու համար: Այդ ամենի արդյունքում՝ ընտանիքի մյուս անդամն, իսկապես, դեպքերի մեծամասնության ժամանակ ձեռք է բերում «անհրաժեշտ» թերությունը:

- Ընտանիքի անդամները փորձում են ընդդիմանալ ախտածին դերերի՝ ընտանեկան միջավայր «ներմուծմանը»: Ինչպես երևում է ախտածին դերերի ընդհանուր նկարագրությունից, ընտանիքի անդամներից մեկը, սովորաբար, ավելի շատ հետաքրքրված է դրանց առաջացմամբ, քան սուր և ցավոտ է ընդունում իր խնդիրը: Ընտանիքի մյուս անդամների համար այս անցումը սովորաբար նշանակում է լարվածության գերուժգնացում և ընտանեկան կյանքի դինամիկայի նվազում: Հիշյալ անդամի մեջ խաթարվում են կենսական երևույթների մասին ունեցած պատկերացումները, որոնք ցայտուն կերպով են դրսևորվում հատկապես շրջապատող սոցիալական իրականության մեջ. «բոլորը մեզ դեմ են», «ամենուրեք անիշխանություն է», «այս մեկը իրոք խուլիգանական հակումներ ունի», «ընտանիքի որևէ անդամ տաղանդավոր է» և այլն: Անցումը «պաշտպանված» աղճատված իրականությանը այնքան էլ սահուն կերպով չի ընդունվում ընտանիքի մյուս անդամների կողմից, քանի որ դժվար է հավատալ այն պնդմանը, թե իբր ամբողջ աշխարհը իրենց դեմ է, և դա այն դեպքում, երբ ընտանիքի մնացյալ անդամները դա չեն զգում: Այս ամենը բերում է ախտածին դերերի առաջացման մեխանիզմների հանդեպ լուրջ դիմադրություն, որը վերաճում է կոնֆլիկտի, եթե ընտանիքի անդամները նկատում են ախտածին դերերի «օգտագործումը» եսասիրական նպատակներով, ի շահ սեփական անձի, ի հաշիվ ընտանիքի:

- Ընտանիքի անդամի գերակշռող դիրքը և հակվածությունը դեպի պաթոգեն դերային համակարգ. սա այն դեպքն է, երբ բախվում են դրսևորվող դիմադրության մեխանիզմները և ախտածին դեր իրագործող անձի հեղինակությունը, ով, սովորաբար, բարձր հեղինակության դեպքում, «հաղթահարում» է մնացյալի դիմադրությունը և ընդունելի դարձնում ախտածին դերը կամ դերային բազմությունը ընտանիքում [54, էջ 73-75]:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, թե ընտանեկան (ներընտանեկան) հիմնական պատկերացումների որ համակարգերը պետք է աղճատվեն կամ խաթարվեն ընտանիքի որևէ կոնկրետ անդամի կողմից, որպեսզի «անցում» կատարվի դեպի ախտածին դերը: Օրինակ, որպեսզի այդ կոնկրետ անդամը

ընտանիքից կերտի «ընտանիք-ամրոց», ապա պետք է այնպես վարվի, որ ընտանիքի մնացյալ անդամներն իսկապես հավատան, որ բոլորն իրենց դեմ են, կամ, եթե ցանկանում է ստանձնել «շատ հիվանդ երեխայի» մոր կամ հոր դերը, ապա իրոք պետք է հավատան թվացյալ կամ ոչ այնքան վտանգավոր հիվանդության վերաբերյալ չափազանցված, սակայն իրենց համար իսկապես առկա փաստին:

Հաճախ առանցքային փաստերի շարքին է դասվում այն, որ ընտանիքի կոնկրետ անդամին վերագրում են որոշակի հատկանիշ (կա, թե ոչ, էական չէ վերագրողի համար), որը դարձնում են նրա համար բնութագրական: Այսպես՝ դեռահասին «անհրաժեշտ» է որակել որպես «ագրեսիվ», որպեսզի հայրը նրա հանդեպ արդեն որոշակի վերաբերմունք դրսևորի: Ամեն դեպքում, առանցքային է այն փաստը, որի աղճատումն էական նշանակություն ունի դերային ողջ կառուցվածքի դրսևորման համար: Ամփոփելով վերոնշյալ տեսակետներն ու օրինակները՝ կարելի է գալ եզրահանգման, որ ախտածին դերը բազմաբնույթ գործոնների փոխազդեցությունների արդյունք է: Այն ընտանիքում հիմնվում է մի շարք հատկությունների դրսևորման վրա, որոնցից յուրաքանչյուրի բացակայությունը տանում է նրան, որ ախտածին դերն իր ամբողջությամբ սողոսկում և խաթարում է ընտանեկան կյանքի դինամիկան:

### **1.1. Ընտանիքը որպես սոցիալական խումբ, ընտանիքի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ընտանեկան կարգավիճակներն ու դերերը, դերերի ծագումը**

Ընտանիքի ծագման, տեսակների և առանձնահատկությունների, զարգացման օրինաչափությունների և դինամիկայի ուսումնասիրությունները մշտապես գտնվել և գտնվում են մարդկության ուշադրության կենտրոնում, քանզի հանրահայտ ու անփոխարինելի են ընտանիքի տեղն ու դերը հասարակության զարգացման, նրա արժեքների պահպանման և վերարտադրության գործում: Ընտանիքի պատմական ծագումն ու զարգացումը, նրա սոցիալ-հոգեբանական բնութագիրը առավել մանրամասն հետազոտելու համար նախ անհրաժեշտ է մեկնաբանել, թե ինչ են ամուսնությունն ու ընտանիքը, ինչպիսի կապ կա այս երկու, թվում է թե համանման, սակայն տարբեր հասկացությունների միջև:



**Ամուսնությունը** մարդկային որոշակիորեն նպատակամղված փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով ստեղծված սոցիալական համակարգ է, որի արդյունքում կնքվում է ամուսնական դաշինք, իսկ ամուսնական կապը գրանցվում է հատուկ այդ նպատակով ստեղծված պետական մարմնի կողմից: Այս արարողության իրագործումից հետո տղամարդն ու կինը դառնում են ամուսիններ՝ միմյանց, իսկ հետագայում՝ ծնողներ իրենց երեխաների համար: Նրանք ձեռք են բերում որոշակի կարգավիճակներ, ստանձնում պարտականություններ, իսկ ամուսնական դաշինքի փաստացի կնքումը առաջ է բերում համապատասխան ամուսնական դերեր, դերային սպասումներ, որոնք արդեն ամուսիններ դարձած այրն ու կինը ներկայացնում են միմյանց: Ամուսնությունը նաև պատմականորեն պայմանավորված և հասարակայնորեն կարգավորվող փոխհարաբերությունների համակարգ է, որը տեղի է ունենում երկու սեռերի՝ կնոջ և տղամարդու միջև, այսինքն՝ ամուսնությունը ընտանիքի ստեղծման ձևն է, իսկ վերջինիս նկատմամբ դրսևորվում է հասարակական վերահսկողություն

[20,

էջ 85-86]: Այս իմաստով կարող ենք փաստել, որ ամուսնությունը, որպես սոցիալական երևույթ, ծագումնաբանական (գենետիկական) գործոն է, այն ծնում է ամուսինների կարգավիճակներ և դրանցից բխող դերեր (դերակատարումներ):

**Ընտանիքը** ամուսնության փաստի պաշտոնական գրանցման հիմքի վրա ստեղծված սոցիալական փոքր խումբ է, որը կազմված է ամուսիններից, նրանց երեխաներից (երեխայից), նաև այլ ազգականներից:

Վերոբերյալ սահմանումը թվում է շատ պարզ և ամբողջական, սակայն սրանով ընտանիքի մասին պատկերացումները չեն ավարտվում, քանզի ընտանիքը կամ նրա մասին պատկերացումների համակարգը բարդ է այնքան, որքան ինքը՝ հասարակությունը և իր ժամանակը: Պատմականորեն ձևավորված խմբերի պատմության մեջ ընտանիքը, թերևս, ամենակայունն է պահպանված թե՛ իր տեսակներով, թե՛ իր գործառույթներով ու կառուցվածքով: Վաղաժամ պետք է համարել հետազոտողներից շատերի այն մոտեցումները, համաձայն որոնց՝ ընտանիքը գտնվում է քայքայման և, անգամ, վերացման եզրին, քանզի ընտանիքը հասարակության զարգացման հետ զուգընթաց նորովի զարթոնք է ապրում իր խնդիրներով և տեսակային առանձնահատկություններով: Կազմակերպված համակարգի հենքը հենց հասարակական կարգավորումն է, իսկ հասարակական հարաբերությունների տիրույթում ընտանիքի

դերն ուղղակիորեն անփոխարինելի է: Այստեղից հետևում է, որ ընտանիքը նախ և առաջ այն կազմող անդամների միջև փոխհարաբերությունների տիրույթն է, որտեղ այդ անդամների «հին» սովորություններն ու հատկությունները կարող են «անհետանալ» և վերափոխվել որպես նոր իրականություն, նոր փոխհարաբերություններ, նոր բջիջների միասնություն [20, էջ 133-138]:

Ընտանիքի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետները գրեթե համակարծիք են այն հարցում, որ մինչև այժմ էլ ընտանիքի տեսակների գիտական տիպավորում գոյություն չունի, քանզի ընտանիքների հատկանիշներն այնքան մեծաթիվ են, որ դրանցից առավել էականներն ընտրելն իրոք դժվար խնդիր է: Այդ առումով փաստենք, որ ընտանիքի հիմնական տեսակների և գործառույթների բազմաբնույթ հետազոտություններ կատարվել և կատարվում են տարբեր մասնագետների, հոգեբանների աշխատություններում, ուստի մեր աշխատանքում փորձեցինք առավելագույնս կենտրոնանալ ընտանեկան դերային բախումների, կոնֆլիկտների և ճգնաժամերի հետազոտությունների վրա՝ հիմնաքարը դարձնելով վերոգրյալ իրավիճակներից առաջացող ախտածին-պաթոգեն դերերն ու վերջիններից բխող դերային փոխհարաբերությունները: Ստորև փորձենք վերլուծել դեր և դերային փոխհարաբերություններ հասկացություններն առավել հանգամանալից:

Ընտանիքը այնտեղ բնակվող մարդկանց և նրանց դերերի փոխկապակցված իրավիճակների ամբողջությունն է, որտեղ նրա անդամները գրավում են որոշակի կարգավիճակներ և դիրքեր, որոնք ստանձնելով՝ անձը պետք է իրագործի դրան համապատասխան գործառույթներ: Սոցիալական հոգեբանության բնագավառում ընդունված է այն տեսակետը, թե անձի սոցիալական դերը նրա համապատասխան կարգավիճակի իրագործումն է, ավելի սեղմ՝ դերը կարգավիճակի դինամիկան է ժամանակի ընթացքում: Թեև մեկ սահմանման մեջ հնարավոր չէ ընդգրկել նման բարդ ու բազմակողմանի երևույթների բոլոր կողմերը, ինչպիսիք են կարգավիճակն ու դերը, այդուամենայնիվ, վերոբերյալ սահմանումները կարող են որպես մեկնարկ ծառայել ներխմբային փոխհարաբերությունների ուսումնասիրության և սոցիալական դերերի տեսության զարգացման համար [20, էջ 28-29]:

Անձի կարգավիճակի էությունը և հիմնական տեսակները պարզելու համար նախ պետք է քննարկել «դիրք» հասկացության էությունը, որը փաստում է, որ մարդու դիրքը

նրա գրաված պաշտոնական-ձևական տեղն է որևէ խմբի կազմում: Տարբերվում են դիրքերի երկու հիմնական տիպեր.

- վերագրվող դիրքեր, որոնք պայմանավորված են մարդկանց անձնային-անհատական առանձնահատկություններով՝ տարիքային, սեռական և ռասայական, նաև էթնիկական.
- ձեռքբերված դիրքեր, որոնք պայմանավորված են մարդու գիտելիքներով ու հմտություններով, ձեռք են բերվում նրա անհատական աշխատանքի ջանքերով [20, էջ 85-86]:

Մարդկանց սոցիալական կյանքի դերային վերլուծության վերաբերյալ մոտեցումները սկզբնավորվել են 20-րդ դարի 30-ական թվականներին՝ խոշոր մտածողներ Ջ. Հ. Միդի, Ռ. Լինտոնի, Ջ. Մորենոյի և այլոց ջանքերով: Ըստ սոցիոլոգ և հոգեբան Ռալֆ Լինտոնի՝ «Դերը կարգավիճակի դինամիկ տեսությունն է: Անհատը սոցիալական իմաստով նշանակված է տվյալ կարգավիճակին և զբաղեցնում է այն՝ այլ կարգավիճակների հետ ունեցած կապի մեջ: Երբ անհատն իրագործում է իր իրավունքներն ու պարտականությունները, ապա նա դրանով իսկ դեր է կատարում» [20, էջ 31-32]: Ըստ հայտնի սոցիոլոգ Թ. Փարոնսոնի՝ դերը որոշակի կառուցվածք ունեցող, այսինքն՝ նորմատիվ կարգավորման ենթարկվող մասնակցություն է որոշակի դերային գործընկերների հետ կատարվող սոցիալական փոխներգործության գործընթացին [20, էջ 32]: Սոցիալական դերերը գոյություն ունեն անկախ առանձին կատարումներից և կապված են կարգավիճակների հետ: Յուրաքանչյուր կարգավիճակ անձից պահանջում է կատարել մեկ կամ մի քանի դեր:

Ընդունված է դերերի տեսակները բնութագրել և տարբերակել ըստ համարժեք կարգավիճակների, քանզի որքան մեծաթիվ են այն խմբերը, որոնց միաժամանակ անդամամագրվում որևէ անձ, այնքան ավելի լայն են այդ անձի սոցիալական շփման շրջանակները, այնքան ավելի շատ են նրա կարգավիճակներն ու դերերը: Ըստ այդմ էլ տարբերում ենք հետևյալ դերերը. պաշտոնական, ոչ պաշտոնական կամ միջանձնային [20, էջ 36-37]:

**Պաշտոնական** են այն դերերը, որոնք անձինք կատարում են իրենց գրաված պաշտոնական կարգավիճակներին համապատասխան:

**Ոչ պաշտոնական** կամ **միջանձնային** են այն դերերը, որոնք անձինք կատարում են իրենց ոչ պաշտոնական կարգավիճակներին համապատասխան (օրինակ, ընտանիքում):

Միևնույն խմբի կազմում անձինք սովորաբար ունենում են ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական դերեր:

Կենսաբանական չափանիշներից ելնելով՝ առանձնացնում են նաև տարիքային դերեր (մանուկ, երեխա, դեռահաս, պատանի և այլն):

**Ընտանեկան կարգավիճակներն ու դերերն** ընդգրկում են սոցիալական այն բոլոր դերերը, որոնք անձինք կատարում են ընտանիքում՝ միաժամանակ որոշակի դիրք (դիրքեր) զբաղեցնելով այնտեղ: Ընտանեկան դերերը կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ ներընտանեկան և միջընտանեկան դերեր:

**Ներընտանեկան** են այն կարգավիճակներն ու դերերը, որոնք ընտանիքի անդամները ստանձնում ու կատարում են միայն այդ ընտանիքի անդամների հետ փոխգործության մեջ մտնելիս: Դրանք են՝ ամուսնական դերերը (կին և տղամարդ), ծնողական դերերը (հայր և մայր), զավակների դերերը (տղա, աղջիկ, եղբայր, քույր): Հասարակության մեջ ընտանիքները հազվադեպ են լիովին մեկուսացված լինում ավելի լայն՝ այսպես կոչված սոցիետալ միջավայրից: Մարդիկ ունեն ազգակցական կապեր, որոնք ընտանիքի հոգեբանության սահմաններում դիտարկվում են որպես այնպիսիք, որոնք ծնում են հատուկ տեսակի՝ **միջընտանեկան** դերեր: Օրինակ՝ հորեղբոր կամ քեռու դերերը, ովքեր ունեն առանձին ընտանիքներ: Փաստենք, որ զուգամուսնությունն այն մեխանիզմն է, որի շնորհիվ ծնվում և առաջ են գալիս ներընտանեկան հիմնական ամուսնական դերերը [20, էջ 52-55]:

Մինչև պաշտոնական ամուսնական կյանքը երկու անձինք կարող են գտնվել սերտ, նույնիսկ ինտիմ հարաբերությունների մեջ, վարել համատեղ կենցաղ, սակայն դեռևս հասարակության մեջ չեն կարող ունենալ ամուսիններին հատուկ պաշտոնական դերեր: Այդ դերերը ծագում են միայն ամուսնության փաստի գրանցման պահից՝ իրենց հետ բերելով համապատասխան սպասումներ, իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն: Ամուսնությունից հետո, երբ ընտանիքում երեխա (երեխաներ) է ծնվում, նա էլ ինքնաբերաբար ստանում է իր կարգավիճակն ու դերը, որոնք ևս պաշտոնական են դառնում: Ընտանեկան կարգավիճակների և դերերի ձևավորումը անընդմեջ և երկարատև գործընթաց է, և ներընտանեկան կարգավիճակադերային

սոցիալականացումն ընթանում և շարունակվում է մինչև նրա անդամների կյանքի ավարտ: Նոր կարգավիճակներից յուրաքանչյուրի և դրանից բխող համապատասխան դերի մասին ևս տվյալ էթնոմշակութային միջավայրում գոյություն ունեն պատկերացումներ, որոնք դերակատարների ակնկալվելիք վարքագիծը ինչ-որ չափով դարձնում են նպատակաուղղված, և նրանք սկսում են (փորձում են սկսել) գործել այդ պատկերացումներին համապատասխան: Դերակատարման յուրացումը և իրագործումը երկար տարիներ է տևում: Օրինակ՝ տղամարդը կարող է իր ողջ կյանքի ընթացքում սովորել կատարել տվյալ էթնիկ միջավայրին բնորոշ «իսկական հոր» դերը, կինը՝ «իսկական մոր», «իսկական կնոջ», որդին կամ դուստրը՝ «իսկական երեխաների» և այլն: Յուրաքանչյուր ընտանիք հասարակության մեջ ունի իր կարգավիճակը և համապատասխան դերը: Ընտանիքի սոցիալական դերի մեջ մտնում են այն սպասումները, որոնք նրան ներկայացնում է հասարակությունը, նրա նշանակալից խմբերը՝ ռեֆերենտային և էտալոնային, նշանակալից անձինք [20, էջ 18-31]:

Այդ սպասումները սովորաբար նկարագրվում են որպես ընտանիքի գործառույթներ, որոնք խմբավորվում են հետևյալ տեսակներով [20, էջ 64-70].

1. նյութական, տնտեսական և կենցաղային գործառույթ.

2. վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) գործառույթ, որի շնորհիվ երեխաներ են ծնվում, և ապահովվում է հասարակության շարունակական գոյությունը.

3. դաստիարակչական գործառույթ, ըստ որի՝ ընտանիքում երեխաները ոչ միայն պետք է ծնվեն ու ֆիզիկապես աճեն, այլև պետք է դաստիարակվեն և դառնան հասարակության համար պիտանի անձինք.

4. ընտանիքի հաղորդակցական (կոմունիկատիվ) գործառույթ, որն ունի երկու կողմ.

ա) ընտանիքի ներքին հաղորդակցական գործառույթ, որն ապահովում է նրա անդամների մտերմիկ հաղորդակցությունը միմյանց հետ,

բ) ընտանիքի արտաքին հաղորդակցական գործառույթ, որն ապահովում է ընտանիքի շփումը և հաղորդակցումը լայն հասարակության հետ.

5. ընտանիքի կարգավորիչ (ռեգուլյատիվ) գործառույթ, երբ ընտանիքի անդամների վարքի վրա ազդում են.

ա) այդ խմբի անդամ լինելն ու նրանում ընդունված նորմերին ինքնին ենթարկվելը,

բ) խմբի մյուս անդամների տեսակները, կարծիքներն ու հայացքները:

Որպես օրինակ կարող է բերվել երեխայի վրա ծնողի ունեցած իշխանությունը: Երբեմն այդ իշխանությունը դառնում է նաև վերահսկողություն, սակայն առկա են նաև ռեֆերենտայնության դրսևորումները: Նմանօրինակ սպասումների միջև, սակայն, կարող են առաջ գալ անհամապատասխանություններ, նույնիսկ բախումներ: Այդ իսկ առումով փաստենք, որ յուրաքանչյուր ընտանիքում գոյություն ունեցող, կայուն որակվող կարգավիճակներն ու դրանցից բխող համապատասխան դերերը, դերերի մեջ մտնող սպասումները, գործողությունները, գիտելիքներն ու հմտություններն անփոփոխ չեն: Ընտանիքն ինքը ժամանակ առ ժամանակ կարող է վերանայել իր անդամների դերերը, սպասումներն ու անելիքները: Ընտանիքի երեխաները մեծանալով նոր և տարբեր ընդունակություններ են ձեռք բերում, կատարում գործեր, որոնք մինչ այդ չէին կարողանում կատարել և այստեղ, ահա, ներընտանեկան դերերի որոշ վերաբաշխումներ են կատարվում: Ինչպես տեսանք, ընտանիքի յուրաքանչյուր անդամ կատարում է մի շարք դերեր, որոնցից յուրաքանչյուրը փոխներգործության մեջ է այլ դերակատարումների հետ: Դերերի նման «բազմության» պայմաններում դերերի միջև անհամաձայնություններն ու բախումներն անխուսափելի են:

### **1.1.1. Ընտանեկան դերերի բախման և հարմարման մեխանիզմները որպես ախտահարված փոխհարաբերությունների սկիզբ**

Սոցիալական դերերի, սոցիալ-դերային փոխհարաբերությունների տիրույթում ներընտանեկան դերային բախումներ սովորաբար ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ անձը սկսում է ստանձնել, ապա՝ կատարել որևէ դեր: Այդ ժամանակ ելնելով իրավիճակից վերոգրյալ անձինք տարբեր սպասումներ են ունենում ընտանիքի մյուս անդամներից, որոնց կատարման անկարողությունը կամ մասնակի իրագործումը սկզբում թաքնված, հետագայում բացահայտ բախումների տեղիք է տալիս:

Դերային բախումներն, ըստ ժամանակակից պատկերացումների, հիմնականում լինում են երեք տեսակ՝ ներդերային, միջդերային, անձի ու նրա ստանձնած դերի միջև [19, էջ 231], [20, էջ 41,205]:

**Ներդերային բախումներ.** Երբ անձը որևէ դեր է ստանձնում, ապա դա ինքնին նշանակում է, որ նրա դերային վարքին ներկայացվում են տարբեր պահանջներ և սպասումներ: Եթե այդ սպասումների միջև հակասություններ կան, ապա տվյալ իրադրության մեջ միայն մեկ դեր կատարող անձը կարող է ներքին բախումներ ունենալ: Այդ ներդերային բախումները կարող են առաջացնել լուրջ հոգեբանական խնդիրներ, որոնք անձը պետք է այս կամ այն կերպ լուծի, որպեսզի կարողանա շարունակել իր նորմալ կենսագործունեությունը:

**Միջդերային բախումները** տարբեր ստանձնած դերերի և պահանջների անհամաձայնեցվածության արդյունք են: Օրինակ՝ որևէ անձի (կնոջ) նկատմամբ ամուսինն այլ պահանջներ է ներկայացնում, իսկ նրա ծնողները՝ այլ: Միջդերային բախումներ առաջանում են ոչ միայն դերային սպասումների տարբերություններից, այլև այն պատճառով, որ տարբեր դերեր կատարվում են տարբեր սոցիալական «բեմահարթակների» վրա: Օրինակ՝ որդու դերը տանը, ուսանողի դերը՝ ուսումնական հաստատությունում և այլն: **Բախումն անձի և իր դերի միջև.** նման անհամապատասխանություն կարող է ծագել տարբեր պատճառներով.

- ա) անձը չունի դերի կատարմանն անհրաժեշտ ֆիզիկական տվյալներ,
- բ) անձը չունի դերի կատարմանն անհրաժեշտ մոտիվացիա,
- գ) անձը չունի տվյալ դերի կատարմանն անհրաժեշտ գիտելիքներ:

Անձ-դեր տիպի բախում առավել հաճախ առաջանում է այն դեպքում, երբ անձի հնարավորությունները չեն համապատասխանում դերի պահանջներին: Օրինակ՝ անձը զբաղեցնում է պաշտոն, որը պահանջում է արագ և ճիշտ որոշումների կատարում, սակայն նա այդպիսի ընդունակություններ չունի [20, էջ208-210]:

Դերային բախումներն իրարից տարբերվում են ոչ միայն կառուցվածքով, այլև մակարդակով կամ խորությամբ: Ըստ այդ չափանիշի՝ դերային բախումները բազմաբնույթ են. շատ թեթև, մակերեսային դեպքերից մինչև շատ սուր և անհանդուրժելի մակարդակ, որը նաև համարվում է ճգնաժամային: Ճգնաժամային աստիճանի սրություն ունեցող դերային բախումների արդյունքում մարդկանց վարքը հիմնովին փոխվում է, իսկ բախումների «մասնակիցները» հոգեկան խոր ցնցումներ և սթրեսային վիճակներ են ապրում: Դերերի ուսումնասիրման պատմության ընթացքում ընտանիքաբանները նկատել են նաև դերերի նոր որակումներ, որոնց տվել են «իմացական դերեր» անվանումը: Խոսքն այն մասին է, որ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը

ներկայացնում է խնդրի մի կողմը և լուծման գործընթացի որոշակի կողմը: Վերոնշյալ դերային նոր որակումներից են՝

- Էվրիստ, ով ամենայն հստակությամբ տեսնում է խնդիրը, նոր լուծումներ է առաջադրում և լավատես է՝ վստահ լինելով, որ այն հնարավոր է լուծել.
- Հոռետես, ով հանդես է գալիս քննադատի դերում, խստորեն քննադատում է առաջադրվող լուծումները.
- Խթանիչ, ով առավելագույնս է զգում տվյալ խնդրի լուծման անհրաժեշտությունը:
- Կատարող՝ ում վիճակված է լինելու ընդունված որոշումը կյանքում իրականացնողը [20, էջ 184-186]:

Նման դերերի ինքնաբուխ ծագումն ու ընտանիքի անդամների միջև դրանց բաշխումը պայմանավորված է ոչ միայն օբյեկտիվ անհրաժեշտությամբ, թե խնդիրը պետք է լուծվի, այլև այն իրողությամբ, թե ընտանիքի անդամներից յուրաքանչյուրն իր գործի մեջ է գիտակ և հմուտ: Ներընտանեկան բախումնային վիճակի հակոտնյան ընտանիքի անդամների՝ միմյանց հարմարվածության վիճակն է: Ընտանիքի հոգեբանության ոլորտում այդ խնդիրների առավել հանգամանալից հետազոտություններ կան Վ. Ս. Սիսենկոյի աշխատություններում, որոնցում ներընտանեկան հարմարման վերաբերյալ ներկայացվում են հետևյալ հիմնական դրույթները՝ *ներքին* կամ *ներհոգեկան* և *արտաքին* կամ *սոցիալ-հոգեբանական հարմարման* [77, էջ 176]:

**Ներքին (ներհոգեկան) հարմարումն** անձի ներքին համակարգում բախումների կամ լարվածության բացակայությունն է կամ թուլությունը, դրա մասերի (ենթամասերի) հակասությունների բացակայությունը, ինչը նրան թույլ է տալիս ուժերը կենտրոնացնել կյանքի հիմնական խնդիրների վրա և արդյունավետ աշխատանք կատարել:

**Արտաքին (սոցիալ-հոգեբանական) հարմարումը**, որը հիմնականում միջանձնային բնույթ ունի, անձի հարմարվածությունն է այն սոցիալական միջավայրին, որտեղ նա ապրում և գործում է: Կարելի է տարբերել ամուսինների (ներընտանեկան) հարմարման երկու հիմնական մոտեցում՝ վարքային և հոգեբանական:

Վարքային հարմարումն այն է, երբ ամուսիններից մեկի գործողությանը տրվում է այնպիսի պատասխան, որը հաստատում է առաջինի գործողությունը, այսինքն՝ համապատասխանում է, համարժեք է նրան: Եթե ամուսիններից մեկի ցանկությունը առաջ է բերել մյուսի՝ նրան ընդառաջ գնալու ցանկություն, ապա կարելի է խոսել ներհոգեկան



կամ հոգեբանական հարմարման մասին [20, էջ 241-242]: Դա ընդհանուր հարմարման գործընթացի ներքին կողմն է, մինչդեռ արտաքին կողմը օբյեկտիվ դիտման համար մատչելի վարքն է: Նշենք, որ ամուսինների փոխադարձ հարմարվածությունն անշուշտ ընդհանուր առմամբ դրական երևույթ է: Ամուսինների հարմարման «տեսակների» մասին իր տեսակետն ունի Վ. Սիսենկոն [77, էջ 254, 20, էջ 242]: Նրա առաջարկած հարմարման տեսակներն են.

- հարմարում ամուսնական դերերին, նոր պարտականություններին, իրավունքներին, համատեղ և փոխհամաձայնեցված գործունեությանը և ամուսնական միության մեջ աշխատանքի բաժանմանը.

- հարմարում զուգընկերոջ խառնվածքին, բնավորությանը և ողջ հոգեկան աշխարհին.

- հարմարում զուգընկերոջ պահանջմունքներին, հետաքրքրություններին, սովորություններին, կյանքի ուղիին և ոճին, ողջ կենսակերպին.

- հարմարում զուգընկերոջ հիմնական կենսական արժեքներին.

- ֆիզիոլոգիական, այդ թվում նաև սեփական հարմարում.

- հարմարում զուգընկերոջ մասնագիտական գործունեությանը:

Հոգեբանական, մասնավորապես հոգեվերլուծական դպրոցի ներկայացուցիչները 20-րդ դարի սկզբներին ապրումակցման (էմպաթիայի, հուն․՝ *empathia*) երևույթի դրսևորումները սկսեցին դիտարկել որպես հոգեբանական հարմարման հիմքերից մեկը:

Նրանք մատնանշում էին, որ ապրումակցումը կազմում է ընտանիքի համախմբվածության անհրաժեշտ մասը, քանի որ, եթե ընտանիքը համախմբված է, այնտեղ թույլ և փոքրաթիվ են բախումները, հեշտ լուծելի և հաղթահարելի են բախումնային իրավիճակները: Հատկապես, որպես փաստարկ, բերվում էր հետևյալ դրույթը, համաձայն որի՝ եթե ընտանիքի անդամները համախմբված են, ապա լավ են ճանաչում միմյանց, իրար խառնվածքը և բնավորությունը, հաշվի են առնում դրանք իրենց հարաբերությունները կառուցելիս: Նման ընտանիքների անդամները ցանկանում են միասին լինել և համատեղված ջանքերով հաղթահարել ծագող դժվարությունները: Ընտանիքի անդամների միջև խոր և տևական ապրումակցական գոյությունը նրա ամրության և ընտանեկան կյանքից ունեցած բավարարվածության հիմքերից մեկն է՝ հանգամանք, որը նկատել են մի շարք հոգեբաններ [47, էջ 17, 20, էջ 243-244]: Բացի

վերոնշյալից՝ միմյանց ապրումակցող, իրար նկատմամբ ուժեղ համակրանք և հոգեբանական նույնականացում ունեցող անձանց մեջ դիտվում է ևս մեկ կարևոր փոփոխություն՝ աստիճանաբար ավելի ու ավելի են մոտենում ու նման դառնում նրանց հայացքները, կյանքի բազմաթիվ խնդիրների վերաբերյալ տեսակետները, նույնիսկ քաղաքական համոզմունքներն ու ընդհանուր կենսափիլիսոփայությունը: Ընտանիքում դերային հարմարումն անհրաժեշտ է ոչ միայն ամուսինների, այլև ծնողի և երեխայի փոխհարաբերություններում: Մինչև 20-րդ դարի 60-ական թվականների սկիզբը, ընտանեկան սոցիալականացումն ուսումնասիրող գիտնականների շրջանում այն մտայնությունը կար, թե ընտանիքում ծնողն իր դերով իր զավակի համար հանդես է գալիս որպես ընդօրինակման նմուշ, իսկ երեխան՝ որպես ընդօրինակող, այնպիսին, որի համար ծնողը (հատկապես իր սեռին պատկանող) ընդօրինակման օբյեկտ է, որի պահանջներն անպայման պետք է անփոփոխ ձևով կատարվեն, և որ երեխան պետք է լինի այնպիսին, ինչպիսին ծնողն է պահանջում: Սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երեխան՝ իր վարքով, պահանջներով, ժպիտով ու լացով ստիպում է ծնողին սովորել իր դերը, ծնող դառնալ իսկական և կոնկրետ իմաստով: Ոչ միայն ծնողն է սոցիալականացնում երեխային, այլև երեխան է սոցիալականացնում ծնողին. ահա այն հիմնական եզրակացություններից մեկը, որին կարելի է հասնել ծնող-երեխա (օրինակ մայր-տղա և մայր-աղջիկ) հարաբերություններն ավելի հանգամանալից ուսումնասիրելու ճանապարհով: Յուրաքանչյուր երեխա իր ծնողների համար ընտանիքում ակամա հանդես է գալիս որպես սոցիալականացնող գործակալ [20, էջ 247-260]: Տարիքային զարգացման ընթացքում փոխվում են ինչպես ծնողի, այնպես էլ երեխայի դերերը: Առօրյա դիտումները վկայում են, որ ծնողը մանկահասակ երեխայի հետ այլ կերպ է վարվում, 5 տարեկանի հետ՝ այլ կերպ, 15 տարեկանի հետ՝ ուրիշ կերպ և այլն: Նույնը կարելի է ասել նաև երեխայի մասին. նա ևս տարբեր տարիքներում և իր տարբեր տարիքների հասած ծնողների հետ ունեցած հարաբերություններում իր դերերը տարբեր կերպ է կատարում: Ծնող պարագայում, օրինակ, հայրը տղային սոցիալականացնում է որոշակի ձևով՝ «տղամարդ» է դարձնում, մինչդեռ դստեր հետ փոխներգործելիս նրա դերային վարքն ու սպասումները փոխվում են՝ «աղջիկ» է մեծացնում: Նույնը կարելի է ասել նաև երեխաների մոր մասին [20, էջ 248-255]:

Առօրյա կյանքում և՛ երեխան, և՛ մեծահասակը սկսում են սովորել ու հասկանալ, թե միմյանց հետ ունեցած փոխհարաբերություններում ինչ կարելի է անել և ինչ չի կարելի: Այդ կանոնները և վարքի ձևերը դիտարկվում են (կարող են դիտարկվել) որպես ձևավորվող ընտանեկան դերերի բաղադրիչներ: Ամուսինների միջև բախում ծագում է այն ժամանակ, երբ որևէ պահանջմունք մեկ կամ մի քանի անգամ մնում է չավարտված: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ ամուսնանալիս կողմերը կանխատեսում էին, որ այդ պահանջմունքը բավարարվում է [20, էջ 261-283]:

Այդ իսկ առումով փորձենք վերլուծել բախման առաջացման հիմնական նախադրյալները, որոնց պատճառը համապատասխան պահանջմունքների չբավարարված լինելն է.

- սեռական պահանջմունք և սրա բավարարման հետ կապված միջամուսնական բախումներ.
- փոխօգնության և համագործակցության պահանջմունք և համապատասխան բախումներ.
- ինքնագնահատականի և ողջ ինքնագիտակցության դրական բովանդակության պահպանման պահանջմունք և համապատասխան բախումներ.
- իշխանության և հեղինակության պահանջմունքի հետ կապված բախումներ.
- նյութական պահանջմունքներ և դրանց հետ կապված բախումներ.
- երեխաների սոցիալականացման մեթոդների հետ կապված բախումներ:

Նշենք, որ բախումը ճգնաժամի է հասնում, երբ տվյալ՝ կենսականորեն կարևոր պահանջմունքը չի բավարարվում, իսկ կողմերն էլ, առանց դրա բավարարման, չեն կարող շարունակել իրենց բնական կենսագործունեությունը: Ամուսինների միջև ծագող բախումները սոցիալ-հոգեբանական նախադրյալներով առլեցուն գործընթացներ են, որոնք ունեն իրենց արտահայտման բնական ընթացքն ու ավարտը:

Վերստին փաստենք, որ, որպես կանոն, երկու անձանց միջև ծագող յուրաքայուր բախում սկսվում է «ինչ-որ հարցի» շուրջ տարածայնությունից, որն այդուհետև վեր է ածվում հակադրության և ի վերջո՝ բախման, ապա ճգնաժամի: Այդ ամենից հետո, քանի որ մարդիկ ճգնաժամի սթրեսային վիճակները երկար ժամանակ տանել չեն կարող՝ առանց իրենց ֆիզիկական և հոգեկան առողջությունը վնասելու, ըստ այդմ էլ առաջանում է բախման լուծման կամ գոնե մեղմացման անհրաժեշտություն:

Ամուսինների միջև ծագող բախումները, հաճախ արտամղվելով կամ մեղմացվելով, կարող են պահպանվել մինչև այդ սոցիալական խմբերի գոյության ավարտը:

Շատ մարդիկ շարունակ ապրում են բացահայտ կամ ոչ բացահայտ բախումների պայմաններում, քանի որ, ելնելով հոգեբանական տարբեր իրավիճակներից, նկատառումներից՝ առաջին հերթին երեխաների շահերից, ցանկանում են պահպանել ընտանիքը: Ուստի հարկ է նշել, որ ոչ բոլոր բախումները կարելի է որակել որպես ճգնաժամեր, քանզի ճգնաժամերը դիտվում են որպես բախումների բարձրագույն աստիճան: Բազմաթիվ բախումներ, այդ թվում նաև ներընտանեկան և միջընտանեկան, այդպես էլ ճգնաժամային աստիճանի չեն հասնում: Փաստ է, որ յուրաքանչյուր բախում հնարավոր է մեղմել և ինչ-որ չափով շրջանցել, սակայն լոկ զարգացման սկզբնական փուլերում, ճգնաժամի վերաձվելուց շատ առաջ [36, էջ 84-85]:

## **1.2. Ներընտանեկան դերային բախում. ախտածին դերերի և ճգնաժամերի դրսևորման փուլերն ընտանիքում**

Ընտանեկան փոխհարաբերություններում տիրող փոխադարձ անհանդուրժողականությունը, տարածայնություններն ու անվստահությունը ծնում են բախումնային բարդ իրավիճակներ, որոնք քայքայիչ ազդեցություն են ունենում ընտանիքի վրա:

Այդ ազդեցության քայքայիչ բնույթն առավել ակնառու կերպով է երևում այն ժամանակ, երբ բախումնային իրավիճակներն առավել խորանալով դառնում են ճգնաժամային, իսկ ճգնաժամը բախումների բարձրագույն աստիճանն է:

Կարելի է ենթադրել, որ բախումը ճգնաժամի է վերաձվում այն ժամանակ՝

1. երբ հակասության մեջ գտնվող պահանջմունքները կամ սպասումները ակտիվորեն հակադրվում, բախվում են իրար,
2. երբ դրանք, որպես բախումների իրական և շոշափելի բաղադրամասեր, անհամատեղելի են,
3. երբ բացասական հույզերը շատ ուժեղ և իռացիոնալ են դառնում, որի հետևանքով կողմերի վարքին հաղորդվել է իմպուլսային և ագրեսիվ բնույթ,
4. երբ բախվող կողմերը հասկանում են, որ իրենք որպես անձնավորություններ անհամատեղելի են:

Բազմաթիվ են այն ընտանիքները, որոնք իրենց գոյության ժամանակահատվածում մեկ կամ մի քանի անգամ հայտնվում են ճգնաժամային իրավիճակներում: Այդ առումով պատահական չէ, որ ժամանակակից ընտանիքի հոգեբանության բնագավառում ճգնաժամերի ուսումնասիրությանը մեծ նշանակություն է տրվում:

Ընտանիքի (ներընտանեկան) փոխհարաբերությունների ընթացքում ճգնաժամային իրավիճակները կարող ենք համալրել նաև հետևյալ դրույթներով.

- ամուսինների միջև ճգնաժամ կարող է ծագել միմյանց հանդեպ ունեցած պահանջմունքների և սպասումների շուրջ երկկողմ հիասթափության և անբավարարվածության արդյունքում.

- բախումներն ու ճգնաժամերն էլ ավելի սուր և տառապալից են լինում, երբ դրանք ծագում են մեկից ավելի պահանջմունքների չբավարարված մնալու հետևանքով: Հետևաբար այստեղ կարող ենք խոսել տարբեր բարդության բախումների և ճգնաժամերի մասին, քանի որ, սկզբունքորեն, որքան ցածր է բախման բարդության աստիճանը, այնքան ավելի հեշտ է մեղմել կամ լուծել այն: Բարդ բախումները, որոնք ընդգրկում են չբավարարված երկու կամ ավելի պահանջմունքներ և դերային սպասումներ, շատ դժվար է լուծել.

- ճգնաժամն էլ ավելի բարդ է դառնում, երբ դրանում ընդգրկվում են ոչ միայն հիմնական գործող անձինք (տվյալ դեպքում ամուսինները), այլև նրանց ռեֆերենտային խմբերը (օրինակ՝ ծնողների ընտանիքները).

- ներընտանեկան ճգնաժամը բարդ և ավերիչ է դառնում, երբ նրանում ընդգրկվում են նաև ընտանիքի այլ անդամներ, հատկապես երեխաները, այսինքն, երբ ընտանիքը տրոհվում է հակառակորդ խմբերի [20, էջ 266-268]:

Գիտնականներ Պլզակը և Կրատոխվիլը ամուսինների փոխհարաբերություններում առանձնացնում են «ճգնաժամային» որակվող երկու իրադրություն.

«Առաջինը» վրա է հասնում ամուսնական կյանքի 3-րդից 7-րդ տարիների միջև ընկած ժամանակահատվածում: Բարենպաստ ընթացք ունենալու դեպքում այդ փուլը տևում է մինչև մեկ տարի: Ճգնաժամի առաջացմանը նպաստում են հետևյալ գործոնները՝ ռոմանտիկ տրամադրությունների անհետացումը, սիրահարվածության փուլի և հետագա կյանքում ամուսնու վարքի մեծ տարբերությունը, ամենատարբեր հայացքների և տեսակետների առաջ գալը և դրանց վերաբերյալ համաձայնության հասնելու անհնարինությունը, ամուսինների փոխհարաբերություններում բացասական հույզերի

գերակշռությունը, հայացքների ու վարքի բախումները և մշտական հոգեբանական լարվածությունը: Կրատոխսվիլը գտնում է նաև, որ, օրինակ, տնտեսական ոչ բարվոք վիճակը, ազգականների ազդեցությունը և այլն, պարտադիր պայմաններ չեն ամուսինների փոխհարաբերություններում ճգնաժամի առաջացման համար: Պարտադիր չի համարվում նաև դավաճանությունը կամ այլ կազմալուծիչ գործոններ: Ճգնաժամն, ըստ գիտնականի, կարող է առաջ գալ նաև նման գործոնների բացակայության պայմաններում, թեև, եթե դրանք առկա են, ապա կարող են արագացնել ճգնաժամի վրա հասնելը, դրան ավելի տհաճ և սուր բնույթ հաղորդել:

Նմանօրինակ ճգնաժամային վիճակը մեղմելու նպատակով Պլզակն ու Կրատոխսվիլը ամուսիններին առաջարկում են ավելի քիչ խոսել միմյանց հետ, ավելի հաճախ մասնագիտական կամ չեզոք հարցեր քննարկել, ժամանակավորապես դադարեցնել սեռական հարաբերությունները, ռոմանտիկ սիրո նշաններ չդրսևորել, չխոսել նույնիսկ երեխաների դաստիարակության մասին և այլն: «Երկրորդը» վրա է հասնում ամուսնական կյանքի 17-րդ և 25-րդ տարիների միջև ընկած ժամանակահատվածում: Այդ ճգնաժամը կարող է տևել մեկ տարուց մինչև մի քանի տարի: Այն, ըստ նշված հեղինակների, ավելի մակերեսային բնույթ ունի, քան նախորդը: Այդ ճգնաժամը սկսվում է մոտավորապես այն նույն ժամանակ, երբ ամուսինները սկսում են զգալ, որ ծերանում են, և տագնապներ ու վախեր են ունենում, նրանց մոտ մարմնական հիվանդությունների ախտանշաններ են ի հայտ գալիս: Կինն, օրինակ, ավելի հաճախ է անհանգստություն զգում իր ծերացման և արտաքին տեսքի վատացման առումով. ծերացող կինը մտավախություն է ունենում, թե ամուսինը կարող է արտամուսնական սեռական կապերի մեջ մտնել այլ կանանց հետ:

Ինչպե՞ս մեղմել այս ճգնաժամը. Պլզակը և Կրատոխսվիլը ամուսիններին խորհուրդ են տալիս հետևողականորեն խուսափել ծերացման հետ կապված խնդիրների մասին խոսելուց, մասնակցել տարբեր կոլեկտիվ միջոցառումների, որոնցից են՝ բարեկամներին այցի գնալը, զբոսաշրջությունը, մշակութային կենտրոններ այցելելը և այլն: Խորհուրդ է տրվում նաև ամուսնական անհավատարմության դեպքում ևս հանդուրժող լինել, քանի որ այդ տարիքում հրապուրվածությունն, ըստ հեղինակների, արագորեն թուլանում է [50, էջ 244-247]: Հիշյալ ճգնաժամերի հոգեբանական հիմնական դրսևորումը ամուսնական կյանքից ունեցած անբավարարվածությունն է, որը կարող է լինել

թույլ, նշանակալից կամ շատ խոր: Հենց վերջինն էլ վկայում է ամուսինների հարաբերություններում խոր ճգնաժամի առկայության մասին [20, էջ 268-270]:

Ճգնաժամի՝ որպես բախման սրման բարձրագույն աստիճանի առկայության դեպքում, ինչպես նշվեց, կողմերն այլևս ի վիճակի չեն ոչ միայն համագործակցել, այլև պարզապես համատեղ գոյակցել:

Ելնելով այս իրողությունից՝ առաջարկվում է տարբերակել ճգնաժամի առնվազն երկու մակարդակ.

- պարզ ճգնաժամ, որը հետևանք է միայն մեկ բախման զարգացման,
- բարդ (համալիր) ճգնաժամ, երբ ամուսինների փոխհարաբերություններում սրվել, խորացել և ճգնաժամի բնույթ են ստացել միաժամանակ մեկից ավելի բախումներ: Բարդ ճգնաժամերը ևս ունեն տարբեր ենթահամակարգեր՝ կախված այն բանից, թե քանի բախում և անհամաձայնություն է ծագել կողմերի միջև:

Ընդ որում, որքան ավելի մեծաթիվ են ճգնաժամի բարդույթի մեջ մտնող բախումները, այնքան ավելի դժվարին են դառնում ստեղծված վիճակը և նրանից դուրս գալու ուղիների որոնումը [20, էջ 271]: Ճգնաժամերի, մասնավորապես ընտանեկան ճգնաժամերի բնորոշման հարցում որոշակի դեր և նշանակություն ունի «համակարգային մոտեցման» դրույթը, որը զարգացրել է ամերիկյան ընտանիքաբան Զ. Հեյլին, իսկ նրա հայացքները քննարկել ու զարգացրել են Ն. Ի. Օլիֆիրովիչը և այլք: Նրանք, հենվելով Ս. Մինուխինի հայացքների վրա, այդ երևույթին տալիս են իրենց բնութագիրը. «Ընտանեկան ճգնաժամն ընտանեկան համակարգի այնպիսի վիճակն է, որին բնորոշ է հոմեոստատիկ գործընթացների խանգարումը, ինչը հանգեցնում է ընտանիքի գործունեության սովորական եղանակների ֆրուստրացմանը և նոր իրադրությունը վարքի հին մոդելների օգնությամբ հաղթահարելու անհնարինությանը» [59, էջ 25-56]: Նշենք, որ ընտանեկան ճգնաժամ է առաջանում այն դեպքում, երբ ընտանիքի անդամների միջև գոյություն ունեցող հակասություններն ու անհամաձայնությունները՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ, գիտակցված կամ չգիտակցված, անհատական հասարակական գործոնների ազդեցությամբ, ընդունում են բախումների բնույթ: Երբ ընտանիքում ծագում է ճգնաժամը հաղթահարելու ցանկությունը, լուծման երկու հիմնական ուղի է առաջանում՝

- բաժանվել միմյանցից, հեռանալ ինչպես տարածականորեն, այնպես էլ հոգեբանորեն և վերացնել բախումները. դա ընտանիքի լուծարման, տրոհման ուղին է,

- գտնել այնպիսի կառուցողական լուծում, որը թույլ կտա անցնել ընտանեկան կյանքի նոր և ավելի արդյունավետ փուլի:

Լուծման առաջին ձևը հանգեցնում է ամուսնալուծության, իսկ երկրորդը թույլ է տալիս, որ ընտանիքը պահպանի ամբողջականությունը և շարունակի իր կյանքի ուղին:

Ջ. Հեյլին, Է. Գ. Էյդեմիլլերը և Վ. Վ. Յուստիցկիսը առաջ են քաշել մի տեսակետ, ըստ որի ընտանեկան ճգնաժամերը լինում են 2 տեսակ՝ նորմատիվ և ոչ նորմատիվ [20, էջ 273-284]:

**Նորմատիվ ճգնաժամերի** մասին պատկերացումը առաջադրվել է՝ ելնելով ընտանեկան կյանքի պարբերաշրջանի մասին պատկերացումից, որը ժամանակակից ընտանիքի հոգեբանության մեջ ընտանիքի կյանքի ուղին է՝ սկսած ամուսնության ձևակերպման, գրանցման պահից, մինչև ընտանիքի վերջնական տրոհումը՝ ամուսիններից մեկի կամ երկուսի մահը, ինչպես նաև զավակների հեռանալը և սեփական ընտանիքներ ստեղծելը:

Ըստ հեղինակների՝ ճգնաժամերը նորմատիվ են համարվում, քանի որ ծագում են օրինաչափորեն՝ որպես ընտանեկան կյանքի «նորմեր», դրանում դիտվող բնականոն երևույթներ: Եվ ծագում են այն դեպքում, երբ ընտանիքը չի կարողանում հարմարվել գոյություն ունեցող պայմաններին, հանդիպում է անհաղթահարելի արգելքների և դժվարությունների, ստեղծված իրավիճակից ելք չի գտնում:

**Ոչ նորմատիվ ընտանեկան ճգնաժամեր.** ինչպես անհատները, այնպես էլ սոցիալական խմբերը, այդ թվում նաև ընտանիքը, գտնվում են բազմաթիվ արտաքին գործոնների ազդեցության տակ: Դրանցից մի քանիսը անձին և խմբին կարող են հասցնել այնպիսի ճգնաժամային վիճակի, որը պայմանավորված չէ տարիքային զարգացման փուլերով: Այդպիսի վիճակներին տրվել է «ոչ նորմատիվ ճգնաժամեր» անվանումը:

Սրանց առանձնահատկությունն այն է, որ եթե հիշյալ արտաքին գործոնները բացակայեն (իսկ դրանք կարող էին և չլինել), ապա անձը կամ խումբը ճգնաժամային վիճակում չեն հայտնվի: Օրինակ, եթե երկրում, անկախ տվյալ ընտանեկան խմբից, տնտեսական ճգնաժամ է սկսվել, և ընտանիքի նյութական պահանջումները սկսում են վատ բավարարվել, ապա առաջ է գալիս ընտանեկան ճգնաժամ, որը ոչ նորմատիվ



է, այսինքն՝ ընտանիքի կյանքի տվյալ փուլի հետ այն գրեթե կամ ուղղակի ոչ մի կապ չունի:

**Հիմնական նորմատիվ ճգնաժամեր.** սրանց նկարագրությունը տվել է ամերիկյան ընտանիքաբան Ջ. Հեյլին [80, էջ 340-367]: Նա, ինչպես է. Էրիքսոնը, ճգնաժամեր է համարել անհատի զարգացման և կյանքի ճանապարհի ողջ ընթացքում [85, էջ 214-308]:

Ընտանիքի կյանքի ընթացքում Ջ. Հեյլին և մյուս հեղինակներն առանձնացնում էին 7 փուլ և հետևաբար նույնքան էլ ճգնաժամ [20, էջ 278-281].

- Առաջինը ամուսնական պարտականությունների ընդունման փուլն է և համապատասխան ճգնաժամը: Սա այն փուլն է, երբ երիտասարդ ամուսինները սկսում են հարմարվել միմյանց:

- Երկրորդ փուլը սկսվում է առաջնեկի ծննդյան օրվանից, երբ ամուսինները պետք է արդեն ծնողների (հոր և մոր) դերեր ստանձնեն և կատարեն:

- Երրորդ փուլը սկսվում է այն պահից, երբ երեխան սկսում է մուտք գործել ընտանիքից դուրս գտնվող սոցիալական համակարգեր, մասնավորապես՝ մանկապարտեզ, դպրոց և այլն:

- Չորրորդ փուլն սկսվում է այն ժամանակ, երբ երեխան անցնում է իր տարիքային

զարգացման դեռահասության փուլին:

- Հինգերորդ փուլի հիմնական առանձնահատկությունն այն է, որ զավակը թողնում է ընտանիքը՝ բուհ է ընդունվում, բանակ է զորակոչվում և այլն:

- Վեցերորդ փուլում ամուսինները հիմնականում մենակ են մնում, քանզի կատարվում է դերերի վերաբաշխում նրանք պատրաստվում են կենսաթոշակի անցնել:

- Վերջին՝ յոթերորդ փուլում ամուսիններից մեկը վախճանվում է, և փաստորեն ընտանիքը վերանում է որպես այդպիսին: **Ոչ նորմատիվ ճգնաժամեր են.** կրկնամուսնությունը (նորից՝ երկրորդ և ավելի անգամ ամուսնանալը), ամուսնական անհավատարմությունը, ամուսնալուծությունը, ընտանիքի որևէ անդամի ծանր հիվանդությունը, արյունապղծությունը, ընտանիքի անդամի մահը:

### 1.3. Ընտանեկան ախտածին դերեր. ծագումը, էությունը,

**առանձնահատկությունները, ախտածնության դրսևորումը  
որպես ամուսնալուծության պատճառ**

Ախտածին (պաթոգեն) են ընտանիքի անդամների կատարած այն դերերը, որոնք ախտաբանական գծեր, հակումներ և սպասումներ են առաջ բերում կամ հենց կատարողների, կամ ընտանիքի մյուս անդամների, կամ էլ՝ ինչպես առաջինների, այնպես էլ երկրորդների մեջ: Ախտածին դերերի գոյությունը ցույց է տալիս, թե ինչպիսի սերտ միջդերային կապեր կան ընտանիքի անդամների միջև [20, էջ 299-300]:

Ընտանեկան ախտածին դերերի բացահայտման և ուսումնասիրության գործում առաջին լուրջ ներդրումները կատարել են Ֆ. Բարկերը և Հ. Ռիխտերը [86, էջ 29-296]:

Ախտածին դերերի բնույթը ճիշտ հասկանալու համար պետք է հիշել դերերի տեսության հիմնարար դրույթները, մասնավորապես այն, որ գոյություն ունեն ոչ միայն պայմանական (պաշտոնական, կոնվենցիոնալ), այլ նաև միջանձնային ոչ պաշտոնական կարգավիճակներ և դերեր: Ընտանիքում պաշտոնական են այն դերերը, որոնք պայմանավորված են օրենքներով, ավանդույթներով և բարոյական նորմերով (ամուսինների, ծնողների և զավակների դերեր): Միջանձնային կամ պաշտոնական դերերից են, օրինակ, սոցիոմետրական դերերը, ընտանիքի առավել սիրված անդամի և «քավության նոխագի» դերերը, նաև դերեր, որոնք առաջանում են միջանձնային հարաբերությունների ընթացքում և պաշտոնապես չեն կարգավորվում: Հարկ է նշել, որ նորմալ համարվող դերերն ու դրանց նորմալ կատարումն ունեն հետևյալ պահանջները.

- Ներընտանեկան դերերը միասին պետք է կազմեն մեկ ամբողջական համակարգ և չպետք է հանգեցնեն ո՛չ միջդերային և ո՛չ էլ ներդերային բախումների, իսկ եթե, այդուհանդերձ, բախումներն անխուսափելի են, ապա պետք է հնարավորինս շտապ հարթվեն:

- Ներընտանեկան դերեր կատարելու միջոցով ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա բավարարել իր հիմնական պահանջամունքները, օրինակ, տղամարդը (ամուսինը) իր կնոջ հանդեպ ունի պարտականություններ, բայց ունի նաև իրավունքներ. նա ակնկալում է հարգալից վերաբերմունք, սեր, սեռական պահանջամունքների բավարարում և այլն:

- Ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի դերը պետք է համապատասխանի նրա ֆիզիկական և հոգեբանական հնարավորություններին: Օրինակ՝ չի կարելի դեռևս երեխա համարվող անդամի ուսերին դնել ընտանիքի գլխավորի և ապրուստ հայթայթողի հիմնական դերը, քանի որ նմանատիպ դերը հարիր չէ նրա ֆիզիկական և հոգեկան կերտվածքին: Եթե ընտանիքի անդամներից մեկը սոցիալական այդ խմբում մեկ կամ մի քանի դեր է կատարում, ապա դրանք իրենց տեսակով և կատարման որակով պետք է կարողանան բավարարել ոչ միայն տվյալ դերակատարի, այլև ընտանիքի մյուս անդամների պահանջմունքները: Բոլոր նմանօրինակ պահանջմունքներն էլ կարող են նորմալ կերպով չբավարարվել, և արդյունքում պարզվում է, որ ընտանիքներում առաջանում են ախտածին դերեր և, իհարկե, նաև ախտածին դերային բախումներ: Այստեղ բնական է դիտվում այն, որ ընտանիքի ախտահարված դերերով անդամները «ձգտում» են ախտածին դարձնել նաև մյուս անդամների դերերը և, ընդհանրապես, դերերի ողջ համակարգը: Նման վարքագծի պատճառները հիմնականում հետևյալներն են [20, էջ 303-312]. սեփական անձի դրական բարձր ինքնագնահատականը պահպանելու ցանկություն՝ չնայած ունեցած թերություններին, այնպիսի պահանջմունքների բավարարում, որոնք հակասում են անձի ինչպես սեռական, այնպես էլ ողջ ընտանիքի բարոյական սկզբունքներին: Հաշվի առնելով բերված փաստարկները՝ փորձենք վերլուծել բուն ախտածին դերերն այն տեսքով, ինչ տեսքով որ դրանք բացահայտվել ու ներկայացվել են վերոնշյալ հոգեբանների աշխատություններում:

1. Անձի կողմից կատարվող դերն ախտածին է իր համար, բայց հոգեբանորեն և այլ առումներով օգտակար է ընտանիքի մյուս անդամների համար: Օրինակ՝ «ընտանիքի տառապյալ անդամի» դերը, ով անմնացորդ նվիրվում է ընտանիքի շահերին և զոհաբերում է իր անձը: Սա կամավոր ինքնազոհաբերման դեպքն է:

2. Ընտանիքում ուղղակի կամ անուղղակի կերպով մեկ անդամի մղում են կատարել այնպիսի դեր, որը նրա կատարողի(ստանձնողի) վրա ախտածին ազդեցություն է գործում: Օրինակ՝ ընտանիքի «քավության նոխազի» դերը, որի կատարողը բոլոր դժգոհների ագրեսիայի զոհն է դառնում:

3. Լինում են նաև դեպքեր, երբ ընտանիքի անդամն այնպիսի դեր է կատարում, որն ախտածին է մյուս անդամների համար, մինչդեռ իր համար ախտածին չէ: Ընտանիքում ախտածին դերերի և համապատասխան ախտածին փոխհարաբերու-

թյունների ծագումը պատահական չէ: Պարզվում է, որ որոշ ընտանիքներում, օրինակ, ախտածին «քալոթյան նոխազի» դերը ծագում է այն պատճառով, որ նրա անդամները սթրեսների են ենթարկվում, խիստ ագրեսիվ ու չարացած են, և նրանց այնպիսի օբյեկտներ են պետք, որոնց վրա կարող են լիցքաթափել իրենց բարկությունը:

Ելնելով վերոնշյալից՝ շատ մասնագետներ եկել են այն եզրակացության, որ եթե որևէ ընտանիքում հիվանդ մարդ կա, ապա այդ հիվանդության պատճառը հասկանալու համար պետք է ուսումնասիրել ընտանիքն ամբողջությամբ, իսկ հաճախ էլ՝ բուժել ոչ միայն նրան, այլև ընտանիքն ամբողջությամբ: Սա ցույց է տալիս, որ ընտանիքն իսկապես կարող է ախտածին լինել իր անդամի համար, և որ հիվանդությունների պատճառները պետք է փնտրել հենց ընտանիքում, նրա ախտածին դերերում և ախտածին միջդերային հարաբերություններում: Հոգեբանները պարզել են, որ այնպիսի խանգարումներ, ինչպիսիք են ներոզները և փսիխոպաթիաները, ակոհոլիզմն ու թմրամոլությունը, սուր աֆեկտիվ հակազդումները և այլն, կարող են բացահայտվել ընտանիքում, ախտածին դերերի առկայությամբ: Հ. Ռիխտերը գտնում է, որ ընտանիքն այնպես կարող է փոխել իր հարաբերությունները շրջապատի՝ ազգականների, հարևանների և այլոց հետ, որ դրա հետևանքով ախտածին դերերի ծագումն անխուսափելի կլինի: Ըստ այդմ՝ Ռիխտերը ընտանիքները բնութագրում է հետևյալ ձևակերպումներով [86, էջ 29-35, 20, էջ 305-312]:

1. «*Ընտանիք-բերդ*», որտեղ կենտրոնական դիրք է գրավում նյարդային և հոգեկան խանգարումներ կամ պարանոյալ հակումներ ունեցող անձը: Երբ ընտանիքն ամբողջությամբ ընդունում է իր հիվանդ անդամի տեսակետ, ապա նրա հիվանդությունն արդեն հոգեկան խանգարում չի դիտվում, այլ դիտվում է որպես խելքի և մտքի սրաթափանցության արտահայտություն:

2. «*Հակասեքսուալ գաղափարախոսություն դավանող ընտանիք*», որը ձևավորվում է սեռական թուլություն ունեցող անդամի ազդեցության տակ: Նման գաղափարախոսության օգնությամբ սքողվում է հոգեսեռական խանգարում ունեցող անձի գոյության փաստը: Այստեղ ընտանիքի անդամները բոլորին մեղադրում են սեռական սանձարձակության ու անբարոյական վարքագիծ դրսևորելու մեջ, և սեփական անկարողությունը վեհացվում է՝ ներկայացվելով որպես բարձր զարգացման և զսպվածության նշան:

3. «Ընտանիք-հանգստյան տուն», երբ ախտածին դերը դրսևորվում է ընտանիք - սոցիալական միջավայր հարաբերությունների խախտման պայմաններում: Այստեղ, սովորաբար, ընտանիքի ավագ անդամը, օգտագործելով իր գերիշխող դերն ընտանիքի մյուս անդամների նկատմամբ, իր թերություններն ու արատները կոծկելու նպատակով փորձում է ապացուցել, որ ընտանիքից դուրս «պայքարում է» միջավայրի դեմ և միակ տեղը, որտեղ հանգստանում է, ընտանիքն է:

4. «Ընտանիք-թափրոն», որը ձևավորվում է անդամներից մեկի՝ իր բարձր ինքնագնահատականն իրականացնելու հակվածության հետևանքով: Այս ընտանիքի գերխնդիրը շրջապատի վրա տպավորություն գործելն է, իսկ ցուցադրական վարքի նպատակը՝ հոգեկան խանգարում ունեցող անձի գոյության փաստը սքողելը:

Նույն Հ. Ռիխտերը և մի շարք այլ հեղինակներ՝ Էյդեմիլլեր, Յուստիցկիս և այլք, գտնում են, որ ընտանիքներում կարող են առաջ գալ այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են նպաստել ախտածին դերերի առաջացմանը: Նրանց կարծիքով՝ հիմնական մեխանիզմը հետևյալն է. ընտանիքի անդամներից մեկի մոտ ի հայտ է գալիս որևէ անսովոր հատկություն կամ նրան վերագրվում է այդպիսին, և նա մտնում է համապատասխան դերի մեջ: Օրինակ՝ նրան կարող են բնորոշել որպես հոգեկան հիվանդ, գերագրեսիվ անձնավորություն և այլն, որին հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն է առաջանում, և այդ ժամանակ ընտանիքի մեկ այլ անդամ ստանձնում է համապատասխան դեր՝ «հիվանդապահ», «խնամող» և այլն: Այսօրինակ լրացուցիչ դերերը ոչ միայն փոխում են ընտանիքի ներքին դերային ողջ համակարգը, այլև կարող են ախտածին ազդեցություն թողնել հենց իրենց՝ կատարողների վրա [86, էջ 35], [84 էջ239]: Ախտածին դերերը ընտանիքում ծագում են այն դեպքում, երբ նրա անդամներից մեկն իր որևէ պահանջմունքը ցանկանում է բավարարել ընտանիքի մեկ այլ անդամի օգնությամբ: Օրինակ՝ երբ ծնողը (հայրը) կյանքում չի կարողանում հասնել իր առջև դրված նպատակին և իր առջև խնդիր է դնում այնպես անել, որ որդին հասնի այդ նպատակին: Սա համարվում է հոգեբանական փոխհատուցման ձև: Նման դեպքերում զավակին չափից մեծ պահանջներ են ներկայացվում. նաև այնպիսի դեր է վերագրվում նրան, որը, ուժեղ սթրեսների հանգեցնելով, նրա անձի կառուցվածքում կարող է առաջ բերել ախտաբանական փոփոխություններ (մեղքի զգացում, ճնշվածություն և այլն): Ընտանիքում ախտածին դերերի մեկ այլ նախադրյալ է նման դեր կատարող անձի այն

յուրահատկությունը, որին ամերիկյան հոգեբան Մյուրեյ Բուենը տվել է «չտարբերակված» կամ «ծուլվող» տիպ անվանումը (նրա տեսակետը համառոտ քննվում է Է. Էյդեմիլլերի և Վ. Յուստիցկիսի աշխատության մեջ [84, էջ 207-208]): Խոսքն այնպիսի անձի մասին է, որն իրեն, իր անձն ու նպատակները չի կարողանում առանձնացնել խմբի, տվյալ դեպքում ընտանիքի նպատակներից և մյուս դերակատարների նպատակներից ու հույզերից: Նման անձն իր մտքերն ու հույզերը վատ է տարբերում իրարից, իսկ ինչ է մտածում հարցին, պատասխանում է, թե ինչ է զգում: Նա հեշտությամբ է ներգրավվում ախտածին, ոչ նորմալ փոխհարաբերությունների մեջ և դառնում «քավության նոխազ»: Է. Էյդեմիլլերն ու Վ. Յուստիցկիսը առաջադրել են մի վարկած, որը դեռևս լիովին հիմնավորված չէ: Նրանք ենթադրում են, որ ախտածին դերեր ծագում են այն ընտանիքներում, որոնց անդամները նախապես որոշ պատկերացումներ ունեն այդ դերերի մասին, թեև դրանք իրենց ընտանիքներում մինչ այդ չեն եղել: Սակայն հեղինակները հստակ ապացույցներ չեն բերում: Ենթադրվում է, որ լիովին հնարավոր է, որ ընտանիքի անդամները կարող են նույնիսկ զերծ մնալ այդ դերը (դերերը) կատարելուց անգամ այն դեպքերում, եթե նույնիսկ ընտանիքի որոշ անդամներ նրանց վրա ուժեղ ճնշում գործադրեն: Օրինակ՝ նույն «հիվանդապահի», նույն «խնամողի» դերերը, որոնց կատարման անհրաժեշտությունն անձը կարող է զգալ, սակայն չկատարել՝ ելնելով դերի բնույթի վերաբերյալ սեփական պատկերացումներից: Որոշ մշակութային միջավայրում ապրողների համար նման վարքագիծը կարող է էգոիզմի և դաժանության մասին վկայել, սակայն հոգեբանորեն այն կարելի է բացատրելի համարել: Նման փաստերը վկայում են, որ մարդիկ, որոշակի նորմերի ենթարկվելով, հաճախ ստիպված են լինում այնպիսի սթրեսածին դերեր ստանձնել, որոնք, օրինակ, նրանց կարող են զրկել մասնագիտական գործունեության բնագավառում հաջողությունների հասնելու հնարավորությունից: Սա կարող է հենց ախտածին լինել [20, էջ 311-312]:

## ԳԼՈՒԽ 2

### ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

#### ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ

#### ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ընտանեկան բախումների և ճգնաժամերի հետևանքներից մեկը համարվում է ամուսնալուծությունը՝ ընտանիքի կազմալուծումը և փաստացի վերացումը:

Ամուսնալուծությունը նախ և առաջ ընտանեկան ոչ նորմատիվ ճգնաժամ է, որը հիմնականում բովանդակում է աններդաշնակ փոխհարաբերություններ և ընտանեկան կառույցի արմատական տեղաշարժ: Այս վիճակն ըստ էության պահանջում է ընտանիքի՝ որպես կառուցողական համակարգի վերակազմավորում կամ վերակառուցում, քանի որ առկա վիճակն արդեն անելանելի է երկու կողմերի համար:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ ամուսնալուծությունների թվական աճ է դիտարկվում գրեթե ողջ ժամանակակից աշխարհում, և ամուսնալուծության խնդիրը դարձել է ժամանակակից հասարակության ամենախոցելի հարցերից մեկը (եթե ոչ ամենազխավորը), որից էլ, որպես կանոն, ծագում են անձի սոցիալականացմանը խոչընդոտող մի շարք ակնառու գործոններ (անլիարժեք ընտանիք, միայնակ մայր կամ հայր, երկկողմանի լքված երեխաներ և այլն): Մասնագետները փաստում են, որ ամուսնալուծությունների կտրուկ աճ է դիտվում թե՛ Եվրոպայում և ԱՄՆ-ում, թե՛ նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, որն, իհարկե, խիստ անհանգստացնող երևույթ է բոլոր ժողովուրդների համար: Օրինակ՝ Ռուսաստանում ամուսնալուծվում է յուրաքանչյուր չորրորդ զույգը, ընդ որում, հետազոտվող տղամարդկանց 67, իսկ կանաց 32 %-ը գտել են, որ ամուսնալուծությունը հնարավոր էր կանխել: Ռուսաստանում 2004 թվականին արձանագրվել է հետևյալ փաստը. յուրաքանչյուր գրանցված 1000 ամուսնությանը զուգահեռ տեղի էր ունենում 800 ամուսնալուծություն, էականորեն նվազում էր ծնելիությունը: Ստացվում էր, որ այդ երկրում տարեկան միջին հաշվով ամուսնալուծվում էր 800000 ամուսնական զույգ, և մոտ 400000 երեխա մնում էր ապրելու անլիարժեք ընտանիքներում, մի իրողություն, որը նրանց սոցիալականացման առումով լուրջ դժվարություններ և վտանգներ էր ստեղծում [20, էջ 329-338]:

ԱՄՆ-ում, ըստ 1980 թվականի մարդահամարի տվյալների, բոլոր ամերիկացիների մոտավորապես 27 %-ը նորմալ ընտանիք չունի: Օրինակ՝ Սան Ֆրանցիսկոյում այդ թիվը կազմում է 53 %, Սիեթլում՝ 48 %, Վաշինգտոնում՝ 45 %, Օքլենդում՝ 44 %, Լոս Անջելեսում՝ 39 %, Նյու Յորքում՝ 37 % և այլն: Վերոբերյալ թվերը մեծ մասամբ վկայում են այն մասին, որ ԱՄՆ-ում ընտանիքը ճգնաժամ է ապրում [73, էջ 390]: Այս տվյալները գիտնական Ն. Սմելզերը բերում է ԱՄՆ-ի վիճակագրական գրասենյակի հրապարակումներից և, ըստ այդմ, եզրակացնում, որ ԱՄՆ-ում ընտանիքն արմատական փոփոխություններ է կրում: ԱՄՆ-ի հասարակագետներն ու ընտանիքի հիմնախնդիրներով զբաղվողները փորձել են պարզել ամուսնալուծությունների թվական աճի պատճառները, որոնք, բացի նյութական վատ պայմաններից, ամուսինների միջև մի շարք խնդիրների կապակցությամբ ծագած բախումներն էին [20, էջ 331, 73, էջ 390]: Դրանցից էին. ա) երեխաների դաստիարակության խնդրի շուրջ ծագող բախումներն ու վեճերը, բ) դերային բախումները (թե ընտանիքում ով և ինչ պարտականություններ պետք է կատարի) և հատկապես դերային բազմության դրսևորումները:

Ն. Սմելզերը ենթադրում է, որ ընտանիքի համար առավել վտանգավոր են ամուսինների անձնային հոգեբանական տարբերությունները, նաև նրանց բնավորության այնպիսի գծերը, որոնք կողակցի կողմից գնահատվում են որպես տհաճ (օրինակ՝ հարբեցողությունը, ծխելը, թմրամոլությունը և այլն):

Եվրոպական երկրների վիճակագրությունը վկայում է, որ յուրաքանչյուր 0,5 ժամը մեկ այնտեղ մեկ ընտանիք է լուծարվում [73, էջ 414]: Այսպես, օրինակ, ԵՄ երկրներում յուրաքանչյուր 2,2 ամուսնությանը բաժին է ընկնում 1 ամուսնալուծություն:

2004 թվականին Եվրոպայում գրանցվել է 2,2 միլիոն ամուսնություն (յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով՝ 4,8), բայց և նույն տարում արձանագրվել է մոտ մեկ միլիոն ամուսնալուծություն, այսինքն՝ յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով՝ 2,1 ամուսնալուծություն: Ամուսնալուծությունների ամենամեծ տոկոսը, տարեկան կտրվածքով, գրանցվել է Չեխիայում և Լիտվայում: Եվրոպայում 1990-2004 թվականների ամուսնալուծությունների քանակը կազմում է 10 միլիոն [20, էջ 332]:

Բարվոք չէ վիճակը նաև Հայաստանի Հանրապետությունում: Այստեղ ևս արձանագրվում է ամուսնալուծությունների թվի աճ, որը, իհարկե, մեր երկրի ներկայիս վիճակի պարագայում ցավալի իրողություն է: Մեզանում ամենացածր ցուցանիշը



գրանցվել է 20-րդ դարի 60-ական թվականներին (20928 ամուսնացածներից ամուսնալուծվել է 626-ը), իսկ ամենաբարձրը՝ 2007-ին (18145 ամուսնացածներից ամուսնալուծվել է 2931-ը): Իսկ եթե փաստենք, որ 2000 թ. ՀՀ-ում գրանցվել է 1343 ամուսնալուծություն, ապա 2007-ի վերոնշված ցուցանիշը վկայում է մեր երկրում ամուսնալուծության թվի աննախադեպ աճի մասին: Բարձրացել է նաև առաջին ամուսնության միջին տարիքը (և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակչության շրջանում). այսպես՝ եթե քաղաքաբնակ տղամարդկանց միջին տարիքը եղել է 25,9, աղջիկներինը՝ 22,5, իսկ գյուղաբնակներինը՝ 25,1 (տղաներ) և 20,3 (աղջիկներ), ապա 2007 թ. այդ տարիքն ունեցել է հետևյալ ցուցանիշները. քաղաքաբնակներինը՝ 28,7 (տղաներ), 25,1 (աղջիկներ), գյուղաբնակներինը՝ 27,5 (տղաներ), 23,1 (աղջիկներ) [10, էջ 116, 20, էջ 333-338]:

Չնայած վերոնշյալ փաստերը վերջնական ու ստույգ չեն, սակայն, որ ամենացավալին է, կանխատեսումներն էլ հուսադրող չեն, քանի որ նկատելիորեն ավելանում է ամուսնալուծությունների քանակը՝ խաթարելով հասարակության աճի ու զարգացման բնականոն ընթացքը: Այս իմաստով, նախ փորձենք անդրադառնալ ամուսնալուծության հիմնական պատճառներին և առաջացման մեխանիզմներին, որոնք էականորեն նկարագրված են մասնագիտական գրականության մեջ: Է. Թիլտը առանձնացնում է ամուսնալուծության գործընթացին նպաստող 3 հիմնական գործոն.

**Առաջինը** ամուսնալուծության ռիսկ պարունակող անձնային գործոնն է, որի մեջ մտնում են ամուսինների անհատական-տիպոլոգիական առանձնահատկությունները, ծնողների ընտանեկան մոդելի նախատիպը, առողջական վիճակը, սոցիալ-ժողովրդական բնույթը և այլն:

Այստեղ գիտնականը ներառում է նաև ապագա ամուսինների դաստիարակության գործոնը, այսինքն՝ այն պայմանները, որում գտնվել են ապագա ամուսինները. անլիարժեք ընտանիք և աններդաշնակ, խնդրահարույց ամուսնական փոխհարաբերություններ: Նա հատկապես կարևորում է մանկական տարիքում երեխայի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի գործոնը, որը էականորեն ազդում է նրա՝ ապագայում կազմվելիք ընտանիքի և այնտեղ դրսևորվելիք փոխհարաբերությունների վրա: Ամուսինների տարիքային էական տարբերությունները, կրթական մակարդակը և սոցիալական կարգավիճակը նույնպես էականորեն ազդում են ապագա ամուսինների փոխհարաբերությունների վրա:

**Երկրորդ գործոնը** ընտանիք կազմելու նախապատմությունն է՝ ամուսնության մոտիվացիոն կողմը, ապագա զույգերի առաջնային (նախնական) համատեղելիությունը, որոնք ներառում են ապագա ամուսինների ծանոթացման, նրանց հույզերի ու զգացմունքների դրսևորման և նմանատիպ այլ իրավիճակներ:

Է. Թիյտը գտնում էր, որ ամուսնության կայունության աստիճանը նվազում է, եթե ծանոթության (նախամուսնական) շրջանը կարճատև է եղել (կես տարուց պակաս), որը բավարար չի համարվում իրար լավ ճանաչելու և իրավահավասար փոխհարաբերություններ ձևավորելու համար:

Նկատենք, որ չնայած հեղինակը վաղաժամ սեքսուալ հարաբերությունները չի դիտել որպես ամուսնության պահպանման կամ ամուսնալուծության նպաստող գործոն, սակայն անդրադարձել է վաղաժամ հղիության փաստին, որը վերլուծել է որպես ամուսնալուծությանը նպաստող կարևոր գործոն

**Երրորդ գործոնը** ընտանիքի նորմալ գործառույթների իրականացմանը խոչընդոտող իրավիճակներն են, որոնք ներառում են կենցաղային և նյութական անբարենպաստ վիճակ, ընտանիքի անդամների դերային նորմալ փոխհարաբերությունների բացակայություն, ընտանիքի որևէ անդամի՝ առավել կարևոր պահանջմունքների դեպրիվացիա (չբավարարում), զույգերի դևիանտ վարքագիծ (ալկոհոլիզմ, նարկոմանիա), կոնֆլիկտայնության բարձր շեմ, սեքսուալ դիսհարմոնիա (աններդաշնակություն): Ս. Գոլոդը գտնում է, որ ինչպես ամուսնալուծությունների թվի աճը, այնպես էլ ծնելիության նվազումը պայմանավորված են ընտանիքի պատմական տիպով, այսինքն՝ եթե ընտանիքն իր պատմական նախորդ տեսակներից անցում է կատարում բջջային ընտանիքին, ապա վերոբերյալ գործընթացներն անխուսափելի են դառնում [79, էջ 721-733]:

Սա իհարկե վիճելի հարց է, քանի որ դեռևս լիարժեք և հանգամանորեն ուսումնասիրված չէ: Սակայն գիտնականը, իր տեսակետների հաստատումն ապահովելու միտումով, բերում է առնվազն երկու հիմնական գործոն.

ա) ամուսնությունը տևական և առավել բարենպաստ էր մեծ և նահապետական ընտանիքներում, քանի որ այնտեղ ամուսնական զույգերի վրա սոցիալական վերահսկողությունն ավելի լայն ու ինտենսիվ բնույթ ուներ, և այդ վերահսկողությունն իրագործողների թիվն ավելի մեծ էր, քան բջջային ընտանիքներում.

բ) ամուսնու ընտրության ազատությունը ենթադրում է նաև ամուսնալուծվելու առավել դյուրին պայմաններ, եթե ստեղծված փոխհարաբերությունները կողմերին կամ նրանցից մեկին չեն բավարարում:

Գիտնականն ամուսնալուծության և ծննդաբերության նվազմանը միտված կարևորագույն գործոն է համարում նաև սոցիալ-տնտեսական դժվար պայմանները, որը ևս, սակայն, միանշանակ ընդունել չի կարելի:

Այսպես, օրինակ, նախկինում գյուղացիների մեծամասնությունը գոյատևում էր ծայրագույն աղքատության և թշվառության մեջ, սակայն ընտանիքներում շատ երեխաներ էին ծնվում, իսկ ներկայումս նյութապես բարվոք երկրներում ոչ միայն ծննդաբերությունն ունի նվազագույն մակարդակ, այլև ամուսնալուծությունների թիվն է չափազանց մեծ (օրինակ՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա և այլն) [34, էջ 74-87, 20, էջ 341-343]:

Կարելի է փաստել, որ Հայաստանում 20-րդ դարի վերջերին վերոբերյալ երկու միտումների՝ աղքատության և բջջային փոքր ընտանիքների թվական գերակշռության ուժեղացումը պայմանավորված էր նաև «ոչ լրիվ» ընտանիքների թվի աճով, քանի որ շատ տղամարդիկ հարկադրված էին բարեկեցիկ կյանքի ապահովման միջոցներ փնտրել արտերկրում, իսկ հաճախ էլ ուղղակի հաստատվել այնտեղ:

Ռուս հետազոտողներ Լ. Ռժանիցկայան և Վ. Արխանգելսկին, հենվելով հատկապես կանանց կարծիքների վրա, նշում են ամուսնալուծությունների հետևյալ պատճառները.

1. ամուսինների բնավորությունների հիմնական տարբերությունները,
2. ամուսինների հայացքների տարբերությունները,
3. հարբեցողությունը, թմրամոլությունը և այլ ախտաբանական հակումներ,
4. ամուսնական անհավատարմությունը,
5. ընտանիք կազմելու համար անպատրաստ լինելը:

Չնայած մեր հասարակարգում ևս դրանք համարվում են ամուսնալուծության առաջացման ընդհանուր պատճառներ, այնուամենայնիվ շատ ավելի մանրակրկիտ քննարկման և ուսումնասիրման պահանջ ունեն [20, էջ 337-338]:

Մեր հետազոտությունները, սակայն, միտված են առավելապես շեշտադրելու դերային (ներդերային, միջդերային) բախումներով և դրանցից բխող ճգնաժամերով պայմանավորված ամուսնալուծությունների հիմնական պատճառներն ու պայմանները,

Ինչպես նաև, ամուսնալուծությունների փուլային վերլուծությանն անդրադառնալուց հետո, հաջորդիվ քննելու բախումնաձին-ախտաձին դերերը:

Ամուսնալուծության գործընթացը ներառում է երկու հիմնական շրջան. **բուն ամուսնալուծություն** և **հետամուսնալուծական շրջան**:

**Բուն ամուսնալուծության** շրջանում առանձնացվում է 3 հիմնական փուլ.

ա) ամուսնալուծության որոշման կայացում և վերջնական ընդունում,

բ) ընտանեկան կառույցի վերացում, տրոհում,

գ) սեպարացիայի փուլ:

*Ամուսնալուծվելու որոշումը* կայացվում է՝ ելնելով մի շարք էական հանգամանքներից, երբ՝ անընդհատ տեղի են ունենում ապակառուցողական և աններդաշնակ փոխհարաբերություններ, վիճաբանություններ, աճում է տագնապայնության մակարդակը, անընդհատ լարվածության և հիասթափության մթնոլորտ է տիրում. ընտանիքում դիտվում է թշնամական մթնոլորտ, սիրո և հանդուրժողականության բացակայություն, տագնապայնության աճ, վատ տրամադրություն, այսինքն՝ գործոններ, որոնք հանգեցնում են էմոցիոնալ ամուսնալուծության բուն փաստին՝ ամուսնալուծության հիմնական գործընթացի սկզբնական փուլին:

Ամուսնալուծության վերաբերյալ որոշման կայացումը և զուգընկերոջ հետ փոխհարաբերությունների վերջնական խզումը կարող են տևել օրեր, ամիսներ, կամ նույնիսկ տարիներ, քանի որ զույգերից քչերի մոտ է նկատվում արտահայտած որոշման միանգամից ընդունման փաստ: Սովորաբար, արդեն փաստացի նախկին ամուսինների մոտ նկատվում է ամբիվալենտ (երկակի) զգացմունքների մի ամբողջ շարք՝ քաոս և դատարկություն, էմոցիոնալ մերժվածության զգացում, և այնքան ժամանակ, մինչև որ հաստատվում է որոշման վերջնական ընդունման փաստը:

Երկրորդ՝ *ընտանեկան կառույցի վերացման, տրոհման* փուլը սկսվում է ամուսիններից մեկի կամ երկուսի՝ ամուսնալուծության մասին վերջնական վճիռ կայացնելու փաստով: Այս փուլին ևս բնորոշ են բացասական-տագնապային զգացմունքային ապրումները, բարձր լարվածությունը և անընդմեջ ֆրուստրացված հոգեվիճակը, որը, իհարկե, անհնարին է դարձնում առողջ, տրամաբանական որոշումների ընդունումը, և իրավիճակն առավել տագնապալից է դառնում: Այս փուլում սովորաբար ակտիվանում են դերերի բաշխման և վերաբաշխման գործընթացի առավել արտահայտված տեսակ

ները, քանի որ դերային անհամատեղելիության դրսևորումները հասնում են իրենց արտահայտման գագաթնակետին: Այս փուլն իր հերթին ունենում է ենթափուլեր.

1) զգացմունքային ամուսնալուծություն, որը ենթադրում է զույգերի էմոցիոնալ սեպարացիան, այսինքն՝ զուգընկերոջ հանդեպ էմոցիոնալ կապվածության վերափոխումը.

2) ֆիզիկական ամուսնալուծություն, որը ներառում է տարածքային սեպարացիան, որն էլ իր հերթին հանգեցնում է նախկին ամուսինների առանձին ապրելու գործընթացին.

3) տնտեսական ամուսնալուծություն, որը ներառում է նախկին զույգերի՝ ամուսնության ընթացքում համատեղ ձեռք բերած ունեցվածքի ողջ գործընթացը.

4) սոցիալական ամուսնալուծություն, որը ներառում է երկու խնդիր. նախ ամուսիններն իրազեկում են ընտանիքի այլ անդամներին իրենց ամուսնալուծության փաստի և արդեն իսկ ընդունված որոշման մասին, և երկրորդ՝ ամուսիններն իրենց ամուսնալուծության մասին իրազեկում են ընկերներին, ծանոթներին, գործընկերներին՝ ըստ անհրաժեշտության, այսինքն՝ այս պարագայում իրազեկելու անհրաժեշտությունը բխում է օգնություն (հոգևոր, ֆիզիկական) հայցելու դրդապատճառից:

Երրորդ փուլը ամուսինների վերջնական ամուսնալուծության՝ *սեպարացիայի* փուլն է, երբ փաստացի ավարտվում է ամուսինների համատեղ ապրելու և տնտեսություն վարելու գործընթացը:

Այս փուլում ամուսինները հիմնականում ապրում են տարբեր վայրերում, սակայն լինում են դեպքեր, երբ բնակվում են նույն բնակարանում, սակայն բաժանում են սենյակը, խոհանոցը, բյուջեն և այլն:

**Հետամուսնական փուլը՝** ամուսնալուծության մյուս շրջանը, իր հերթին բաժանվում է երեք հիմնական շրջափուլերի.

- 1) հետամուսնալուծական (մինչև 1 տարի),
- 2) վերակառուցման (2-3 տարի),
- 3) կայունացման (2-3 տարի):

*Հետամուսնալուծական* շրջանում արդեն նախկին ամուսիններն ունենում են մի շարք դժվարություններ, բարդություններ, որոնք կապված են երեխաների դաստիարակության, որոշումների ընդունման, ֆինանսական դժվարությունների և այլ գործոնների հետ: Զույգերից յուրաքանչյուրը յուրովի է սկսում պայքարել վերոնշյալ իրա-

վիճակների հաղթահարման համար, իսկ ամենակարևոր դժվարությունը՝ երեխաների դաստիարակության հիմնախնդիրը, պահանջում է արմատական տեղաշարժեր, դերերի նորովի վերագնահատում: Այստեղ շատ կարևոր է, որ երկու ծնողներն էլ ճիշտ ընկալեն և վերագնահատեն մոր և հոր դերերը, կարողանան այդ դերերը վեր դասել խնդրահարույց այլ դերային փոխհարաբերություններից, այլապես կկորցնեն արդեն երեխային, ինչպես կորցրեցին սեփական ամուսնական դաշինքը:

*Ամուսնալուծության վերակառուցման* շրջափուլում կարծես ավարտվում է նախկին ամուսինների զգայական ամուսնալուծության գործընթացը, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է «բուժել վերքերն» ու ձեռք բերել հոգեկան հանդարտություն, ընդ որում, այդ հանդարտությունը փորձում է ձեռք բերել նոր զուգընկերոջ փնտրտուքներով: Մյուս դեպքում փորձում են նորովի ձևավորել ծնող-երեխա հարաբերությունները՝ ամբողջ հոգով տրվելով երեխայի հանդեպ սիրո դրսևորմանը և հաճախ նույն երեխային դարձնելով սեփական սիրո գերին: Հոգեբանական տեսանկյունից այսօրինակ սիրո դրսևորումը ախտածին է հատկապես երեխայի համար, քանի որ նա, արդեն իսկ մեծանալով անլիարժեք ընտանիքում, ձեռք է բերում նաև այնպիսի հոգեկան հատկանիշներ, որոնք հասարակական հարաբերությունների տիրույթում միանշանակ չեն ընդունվում:

Զուգընկեր փնտրում և հաճախ կրկնակի ամուսնանում են տղամարդիկ: Հետազոտությունները վկայում են, որ տղամարդկանց 65 %-ը ամուսնանում է ամուսնալուծությունից 3-5 տարի անց:

Ամուսնալուծության եզրափակիչ՝ *կայունացման* ենթափուլում սովորաբար հարթվում են ընտանեկան փոխհարաբերությունների վերակառուցման հետ կապված դժվարությունները, և նախկին ամուսինների միջև հաստատվում են հավասար «գործընկերային» փոխհարաբերություններ: Շփման սոցիալական ոլորտներում նրանց փոխհարաբերությունները դառնում են կայուն, նվազում է վրեժի, վիրավորանքի, տազնապայնության աստիճանը, երկուստեք վարքը դառնում է առավել քաղաքակիրթ և կայուն: Այս փուլի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև հոգեվերլուծող Ա. Մասլոուն, ով գտնում էր, որ բաժանումը (ամուսնալուծությունը) նախկին ընտանեկան փոխհարաբերությունների վերակառուցողական բարդ գործընթաց է, և առանձնացնում էր այդ գործընթացի յոթ հիմնական փուլեր.

1. Էմոցիոնալ (զգայական) ամուսնալուծություն – ենթադրում է ամուսնական կյանքի պայմանների հանդեպ անբավարարվածության զգացում, անուրջների և երազանքների փլուզում, վախ և տագնապ, սիրո զգացողության կորուստ, սառնություն և օտարացում:

2. Նախամուսնալուծական մտորումների և հիասթափության փուլ – ենթադրում է ցավի, ապագայի հանդեպ վախի, շոկային տագնապահարույց վարքագծի դրսևորումներ, անգամ նախկին զուգընկերոջն ամեն ձևով հետ բերելու ցանկություն:

3. Իրավաբանական ամուսնալուծություն – ենթադրում է ամուսնալուծության գործընթացի իրավական կարգավորում, դեպրեսիվ հոգեվիճակ, սպառնալիքներ, անգամ ինքնասպանության մտքեր և սպառնալիքներ:

4. Տնտեսական ամուսնալուծություն – ենթադրում է արդեն իսկ ամուսնալուծված զույգերի տնտեսական, ֆինանսական, կենցաղային փոխհարաբերությունների կարգավորում:

5. Ծնողական պարտականությունների բաշխում, խնամակալական գործընթացի կարգավորում:

6. Նոր փոխհարաբերությունների հաստատում, սոցիալական նոր շփումներ, տխրության և լավատեսության համատեղ դրսևորում, զգացմունքների երկարժեքություն, «նոր կյանքի» ձևավորում, ընտանիքի առկա անդամների պարտականությունների նորովի վերադասավորում:

7. Հոգեբանական ամուսնալուծություն - ենթադրում է ուժերի վերագնահատում, ինքնավստահություն, ինքնագնահատականի և անձնային աճի նորովի դրսևորում, նոր սիրո փնտրտուք, նոր և երկարատև փոխհարաբերությունների պատրաստականություն [20, էջ 329-364]:

Այժմ փորձենք անդրադառնալ նաև ամուսնալուծության ռիսկերին, քանի որ ներընտանեկան բախումները ծագում են ամուսինների հիմնական պահանջմունքների անբավարարվածությունից, ինչն էլ ամուսնալուծության հիմնական վտանգ կամ ռիսկ է ծնում: «Ռիսկ» ասելով սովորաբար հասկանում ենք վտանգի առկայություն կամ ակնկալում, այսինքն՝ ընտանիք կազմող մարդիկ միշտ էլ գտնվում են ամուսնալուծվելու որոշակի ռիսկի առջև: Այս երևույթը (ռիսկային գործոնների որոշակի տեսակների ազդեցությունը ամուսնալուծության գործընթացում) ուսումնասիրել են մի շարք գիտնականներ՝ Է. Թիյտը, Ա. Ի. Վոլկովան, Տ. Մ. Տրապեզնիկովը և ուրիշներ: Է.

Թիյտը ռիսկային գործոններն անվանել է «ամուսնալուծության վտանգի գործոններ» կամ «ամուսնության քայքայման վտանգի գործոններ» [79, էջ 721-733]: Գիտնականն առանձնացրել է գործոնների երեք խումբ.

1. ամուսնալուծվողների անձի հետ կապված վտանգներ (ռիսկային գործոններ). այս խմբում հեղինակը ներառում է ամուսնացողների ծագումը, ծնողների ազդեցությունը, հոգեբանական առանձնահատկությունները և այլն.

2. զույգի առաջնային համատեղելիությունը, այսինքն՝ նրանց ծանոթության պայմանները, ամուսնանալու դրդապատճառները.

3. ռիսկային գործոններ, որոնք ծագում են արդեն ամուսինների համատեղ կյանքի ընթացքում. այս խմբում հեղինակը ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են, օրինակ, ընտանիքի տնտեսական վիճակը, բնակարանային պայմանները, նաև դերային սպասումների և դրանց իրականացման անհամապատասխանությունը:

Հեղինակը պնդում է, որ ռիսկային գործոնները որոշվում են երկրորդային անհամատեղելիությամբ, ամուսինների ոչ ճիշտ (ոչ համարժեք) վարքով, ընտանեկան բախումներով, սեռական աններդաշնակությամբ ու հարբեցողությամբ: Անշուշտ չենք կարող այս տեսակետը համարել վերջնական ու հիմնական, քանի որ այն դեռևս հետազոտման և առավել մանրամասն վերլուծության կարիք ունի [20, էջ 339-343]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ամուսնալուծությունների հիմնական պատճառները ամուսինների միջև ծագող այնպիսի բախումներն են (առաջին հերթին՝ դերային), որոնք հաճախ վերածվում են ճգնաժամերի, որոնց պայմաններում կողմերն այլևս չեն կարող գոյակցել, լիարժեք կերպով կատարել իրենց փոխկապակցված դերերը և պետք է հեռանան միմյանցից թե՛ հոգեբանորեն, թե՛ տարածականորեն:

Այլ կերպ ասած, առաջանում են դերերի ախտածին հետևանքներ, որոնք էլ յուրովի են նպաստում ընտանեկան կառույցի քայքայմանը, ընդ որում, ներգրավելով ընտանիքի բոլոր անդամներին: Ամուսինների վարքը դառնում է ախտածին և առանց բացառության համակում բոլորին՝ տրոհելով ընտանեկան փոխհարաբերությունները:

## **2.1. Ամուսնալուծությունը որպես ախտածին դերերի հետևանք. ախտածին դերերի քայքայիչ բնույթը և ամուսնալուծության հետևանքները**



Ինչպես արդեն նշեցինք, ամուսնալուծությունը ընտանեկան բախումների և ճգնաժամերի հետևանքներից մեկն է, երբ փաստացի վերանում և տրոհվում է ընտանիքը: Ամուսնալուծությունը, որպես կանոն, հետևանք է ամուսնական զույգի ընտանեկան ճգնաժամային փոխհարաբերությունների, որոնք ունեն որոշակի նախապատմություն, այն է՝ առաջացման որևէ պատճառ կամ պատճառների ամբողջ խնդրահարույց խումբ: Հանդիսանալով ոչ նորմատիվ ճգնաժամ՝ ամուսնալուծությունն այն գործընթացն է, որը «հաջորդում» է ընտանիքում տիրող լարված, ճգնաժամային և բախումնային փոխհարաբերություններին և համարվում է այսպես կոչված «բարեհաջող» հանգուցալուծում կամ ավարտ (ինչպես ամուսնալուծության սկզբնական շրջանում կարծում են արդեն նախկին ամուսինները): Որպես ընդունված փաստարկ շրջանառվում է այն դրույթը, թե ամուսնալուծությունների հիմնական պատճառը ամուսինների միջև ծագող այնպիսի բախումներն են (հատկապես դերային), որոնք հաճախ վերածվում են ճգնաժամերի: Նման իրավիճակներում (ճգնաժամային փոխհարաբերություններում) երկու կողմերն էլ այլևս չեն կարողանում գոյատևել, վարել համատեղ կենցաղ և, որ ամենակարևորն է, կատարել իրենց փոխկապակցված, միմյանց լրացնող դերերը, ինչն էլ հատկապես լարված և բախումնաժին փոխհարաբերություններ է ստեղծում:

Սույն աշխատանքի այս բաժնում փորձի է արվելու վերլուծել դերային անհամատեղելիության և, հատկապես, ախտաձին կոչվող դերերի անհամատեղելիության կործանարար ազդեցությունը ընտանիքի բուն կառույցի վրա, որի հետևանքով ամուսնալուծությունը, որպես կանոն, դառնում է անխուսափելի: Կարծում ենք, որ պատճառականորեն պայմանավորված երևույթների և իրադարձությունների շղթայում պարզապես անհրաժեշտ է բացահայտել, վեր հանել ամուսնալուծությունների անմիջական և դրանց նախորդած ոչ անմիջական կամ միջնորդավորված բախումնաժին պատճառները, որոնք, ըստ մեր հետազոտությունների, ախտաձին դերերով են պայմանավորված: Ինչպես արդեն իսկ նշել ենք մեր աշխատանքի 1.4 ենթագլխում, ախտաձին (պաթոգեն) են համարվում ընտանիքի անդամների կատարած այն դերերը, որոնք ախտաբանական գծեր, հակումներ և ապրումներ են առաջ բերում հենց իրենց կատարողների կամ ընտանիքի մյուս անդամների մեջ: Այս դերերի առկայությունն ապացուցում է, որ սերտ միջդերային կապեր գոյություն ունեն ընտանիքի բոլոր անդամների միջև և որ պարզապես անհրաժեշտ է ընտանիքն ուսումնասիրել ոչ թե միայն մեկ անդամի

խնդրահարույց վարքագիծը հետազոտելով, այլև ողջ ընտանիքին: Սա նշանակում է, որ ընտանեկան սխալ դերակատարումներն ու բախումները չեն կարող չանդրադառնալ ընտանիքի այլ անդամների վրա և նրաց չներգրավել բախումնաձին իրավիճակի մեջ:

Ախտաձին-պաթոզեն դերերի բացահայտման և հետազոտման գործում առաջին ներդրումը կատարել են Ֆ. Բարկերը և Հ. Ռիխտերը [86, էջ 29-290]: Հեղինակները նախ վերլուծել են դերերի տեսության հիմնարար դրույթները, մասնավորապես այն, որ այդ դերերը բաժանվում են պայմանական (պաշտոնական, կոնվեցիոնալ) և միջանձնային (ոչ պաշտոնական) տեսակների:

Ըստ Ռ. Լինտոնի տեսության՝ «Դերը կարգավիճակի դինամիկ տեսանկյունն է. անհատը սոցիալական իմաստով նշանակված է տվյալ կարգավիճակին և զբաղեցնում է այն՝ այլ կարգավիճակների հետ ունեցած կապի մեջ» [20, էջ 32]:

Սա նշանակում է, որ անձի դերակատարումների ողջ համակարգը պարզապես չի կարող չներառել ընտանիքի մյուս անդամներին և, մասնավորապես, երեխաներին:

Ընտանիքում պաշտոնական են այն դերերը, որոնք պայմանավորված են օրենքներով, ավանդույթներով և բարոյական նորմերով, իսկ ոչ պաշտոնական են անմիջական միջանձնային հարաբերություններից ծագած դերերը, որոնց շարքին էլ՝ ախտաձին դերերն ուսումնասիրող հոգեբանները դասում են վերոնշյալ դերերը: Խոսքն այստեղ այն միջանձնային դերերի մասին է, որոնք, ունենալով յուրահատուկ կառուցվածք և բովանդակություն, ընտանիքի անդամների վրա խեղիչ ազդեցություն են գործում:

Խեղիչ ազդեցության նախահիմք են սխալ դերակատարումներն ու բախումները, որոնք ընտանիքների մեծամասնության շրջանում տարածված երևույթներ են: Բնական է դառնում արդեն այն հանգամանքը, որ ընտանիքի ախտահարված (սխալ դերակատարում «որդեգրած») անդամը կամ անդամները ձգտում են ախտաձին դարձնել նաև մյուս անդամների դերերը և, ընդհանրապես, դերերի ողջ համակարգը: Եթե դա նրան (նրանց) որոշակիորեն հաջողվում է, և ընտանիքը պարզապես ախտահարվում-պարալիզացվում է, ապա անխուսափելի են դառնում բուռն ճգնաժամային իրավիճակները, բախումները, անլուծելի հանգուցային հարցերը, և, որպես ավարտ, մենք գործ ենք ունենում ամուսնալուծության փաստի հետ:

Այս դեպքերում դերային բախումները և ճգնաժամերը պարզապես անկառավարելի ընթացք են ունենում և մաս-մաս քայքայում ընտանեկան կառույցը:

Ընտանիքում ախտածին դերերի ծագումը և համապատասխան ախտածին փոխհարաբերությունների դրսևորումը պատահական լինել չեն կարող, քանի որ դրանց ծագումը և գործառույթները պայմանավորված են պաշտպանական մեխանիզմների դրսևորմամբ, այսինքն՝ սեփական անձնային հատկանիշների հանդեպ դրսևորած ոչ հստակ պատկերացումներով:

Սա նշանակում է, որ ընտանիքի ախտահարված անդամին կամ անդամներին թվում է, որ, կատարելով այդ «ճիշտ դերը», պնդելով սեփական գործողությունների կատարյալ ընթացքը, նրանք փրկում են ընտանեկան կառույցը փլուզումից, սակայն իրականում տեղի է ունենում հակառակ ազդեցությունը:

Ընտանիքի անդամը, ով, օրինակ, աներկբայորեն համոզված է իր ճշմարտացիության մեջ և ամեն գնով պաշտպանում է իր տեսակետը՝ առանց հաշվի առնելու ընտանիքի մյուս անդամների կարծիքները, առանց նույնիսկ լսելու նրանց, ախտահարում է նրանց վարքը՝ փոխհարաբերությունները դարձնելով լարված, բախումնային և ճգնաժամային:

Այդպիսին է, օրինակ, ընտանեկան բռնակալի դերը, որը կարող է կատարել ընտանիքի ցանկացած անդամ՝ յուրովի լարվածության մեջ պահելով ողջ ընտանիքը. նման դերում կարող են լինել հայրը, մայրը կամ նույնիսկ երեխան, ովքեր սեփական եսակենտրոն վարքագծով լարվածության մշտական առկայության պատճառ են: Ամուսնական զույգի պարագայում նմանօրինակ դեր սովորաբար ստանձնում է ամուսինը, ով, օրինակ, ոչ մի կերպ չի հաշտվում կնոջ աշխատելու փաստի հետ և ամեն կերպ փորձում է խոչնդոտել դրան:

Բնական է, որ ընտանեկան մթազնված անդորրը և լարված իրավիճակը չեն կարող բարելավված փոխհարաբերություններ ապահովել [20, էջ 32-34]:

Այնուհանդերձ, հաշվի առնելով վերոնշյալ մոտեցումները, փորձ է արվում ախտածին դերերը ներկայացնել իրենց գործառնության մեջ, այսինքն՝ այն տեսքով, որով դրանք դրսևորվում են և, ըստ մեր վերլուծությունների կազմալուծում են, ընտանիքը՝ ամուսնալուծությունը դարձնելով անխուսափելի:

Ախտածին-պաթոգեն դերերը, ըստ ծագման, լինում են **միջխմբային** և **ներընտանեկան**, որոնք էլ, իրենց հերթին, ըստ հետևանքների պաթոգենության, կարող են ունենալ ստորև բերվող ենթաբաժինները:

**1. Միջխմբային ծագման ախտածին դերեր և ամուսնալուծություններ:** Ըստ Հ.

Ռիխտերի՝ միջխմբային ծագման ախտածին դերերն առաջանում են այն դեպքում, երբ որևէ ընտանիք ակնհայտ կերպով փոխում է իր հարաբերությունները շրջապատի, հարևանների, ազգականների և այլոց հետ, դրսևորում է ախտածին դերերի ողջ համակարգ:

Սա չի կարող դրսևորվել ընտանիքի բոլոր անդամների նախաձեռնությամբ կամ հազվադեպ է նման փաստ արձանագրվում, քանի որ ընտանիքում լինում է որևէ ախտահարված անդամ, ում դրդմամբ, պարտադրմամբ կամ խղճահարույց վարքագծի թելադրանքով, ընտանիքը պարզապես դառնում է կամակատար: Նմանատիպ ախտածին դերերը, ըստ Ռիխտերի ձևակերպման, դրսևորվում են հետևյալ ընտանիքներում.

ա) «ընտանիք-բերդ», բ) «հակասեքսուալ գաղափարախոսություն դավանող ընտանիք», գ) «ընտանիք-հանգստյան տուն», դ) «ընտանիք-թատրոն» [20, էջ 299-307, 86, էջ 29-35]:

Չնայած այս մասին համառոտ խոսվել է մեր աշխատանքի առաջին գլխում, սակայն, ընտանիքում ախտածին դերերի ծագման պատճառներն ու դրսևորման առանձնահատկություններն ավելի խորությամբ լուսաբանելու միտումով, փորձենք ավելի հանգամանորեն անդրադառնալ դրանց:

Ա) «Ընտանիք-բերդի» կենտրոնական դերակատարը՝ նյարդային և հոգեկան խանգարումներ ունեցող, պարանոյալ հակումների տեր անձը, ողջ ընտանիքը պահում է մշտական լարվածության մեջ, քանի որ նրան թվում է, թե շրջապատում բոլորն «իրենց դեմ են», «իրենք պաշտպանության կարիք ունեն», «իրենց վրա հարձակվում են» և այլն:

Ընտանիքներում, ըստ հետազոտությունների, նմանօրինակ հակումներով աչքի են ընկնում հիմնականում տղամարդիկ, ովքեր մշտական լարվածության և վերահսկողության մեջ են պահում բոլորին: Նմանատիպ անձինք ընտանիքից պահանջում են սեփական տեսակետի (գաղափարախոսության) անվերապահ ընդունում, մի հանգամանք, որը ոչ միշտ է ընդունվում միանշանակորեն: Ընտանիքի այդ անդամի դերն արդեն իսկ ախտահարված է և ախտածին է դարձնում նաև մյուս անդամների, հատկապես կողակցի դերը:

Եթե ընտանիքն ընդունում է իր անդամի (կողակիցը՝ զուգընկերոջ) նմանօրինակ պահվածքը, ապա վերջինիս հոգեկան հիվանդությունը չի ընկալվում որպես հոգեկան

խանգարում, այլ դիտվում է որպես ընտանիքը «փրկելու» միտում, մի հանգամանք, որը մեր իրականության մեջ հաճախ հանդիպող երևույթ է:

Կինը, մեր պարագայում հայ կինը, «ընդունում է» կողակցի պահանջը, որպեսզի «ընտանիքը չքայքայվի», «երեխաները որբ չմնան» և այլն, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ երբեմնի ընտանիքն արդեն իսկ էմոցիոնալ ամուսնալուծության փուլում է, իսկ փաստացի (իրավական) ամուսնալուծությունն արդեն ժամանակի խնդիր է դառնում:

Կնոջ վիճակի անելանելիությանն է նպաստում նաև այն, որ նա հաճախ չի աշխատում և կախման մեջ է գտնվում ամուսնուց:

Հետազոտությունների ընթացքում բախվեցինք նման իրավիճակի, երբ բռնակալ ամուսինը նախկինում ակտիվ կենսակերպ վարած կնոջն անընդհատ ստիպում էր երեխաներ ծնել և մնալ տանը, քանի որ գտնում էր, որ կնոջ շրջապատում բոլորը «նախանձում են իրենց և պատրաստ են քանդել տունը»:

Մեր այն հարցին, թե ինչու չի պայքարում և համակերպվում է նման իրավիճակի հետ այն դեպքում, երբ անգամ սեռական հարաբերություններն են բռնի կերպով տեղի ունենում, կինը պատասխանում է, որ չի կարող իրեն պահել, գնալու որևէ տեղ չունի, այստեղ գոնե հաց կա և այլն: Ակնհայտ են ախտահարված դերի և մյուս անդամի (անդամների, տվյալ դեպքում՝ երեխաների) ախտածին վարքագծի դրսևորումները, որոնք, մեր կարծիքով, որքան էլ երկար շարունակվեն, որևէ դրական ավարտ չեն կարող ունենալ:

Նման «բերդ» ընտանիքների ականատես ենք լինում եթե ոչ ամեն քայլափոխի, ապա բավականին հաճախ, քանի որ նրանցում պարանոյալ հակումներով անձը «նպաստում» է, որ ընտանիքում կատարվեն ներքին դերային կառուցվածքի վերակառուցումներ, հանդես է գալիս որպես առաջնորդ և պնդում, որ կողակիցը դառնա իր զինակիցը և միասին պայքարեն «թշնամիների» դեմ:

Կա նաև հակառակ փաստը, երբ ընտանիքի որևէ անդամը (կինը կամ ամուսինը) չեն հաշտվում վերոնշյալ վարքագծի հետ և ուղղակի հեռանում են, գնում, ի վերջո՝ ամուսնալուծվում:

Մեր հետազոտություններում հանդիպած ուշագրավ օրինակներից էր նաև այն դեպքը, երբ կինն էր տառապում պարանոյալ նմանատիպ հակումներով և ստիպում ամուսնուն՝ դատական գործ հարուցել շենքի բոլոր բնակիչների դեմ, քանի որ նրանց

անառողջ միջավայրում իրենց երեխան կդառնա հանցագործ: Ամուսնու դերն արդեն իսկ ախտահարվել էր կնոջ դերի ազդեցությամբ, քանի որ, անգամ կնոջից հեռանալուց հետո (փաստացի ամուսնալուծվել էին), նրա մեջ շարունակվում էր պայքարը՝ կնոջ իրավացիությունն ընդունելու (միգուցե կինը ճիշտ էր, ինչ-որ բան էր նկատել) և առողջ մտածելակերպի միջև: Նա երկարատև պայքար էր մղել ընտանիքը պահելու համար, սակայն ապարդյուն: Նա չէր ընկել ընտանիքի հիվանդ անդամի ազդեցության տակ, քանի որ հակառակ պարագայում, ինչպես արդեն նշել ենք, նրա հիվանդությունը կընկալվեր որպես խելքի և մտքի սրաթափանցության արտահայտություն, ընտանիքը փրկելու միջոց: Հոգեբանական գրականության մեջ իրավացիորեն նշվում է նաև այն դրույթը, թե ընտանիք և հասարակություն յուրատեսակ փոխհարաբերությունների խնդրահարույց տիրույթում կարող են և չլինել ախտածին դերերի դրսևորումներ: Օրինակ՝ եթե ընտանիքը տարիներ շարունակ ստիպված է լինում զբաղվել իր նյութական պայմանների բարելավմամբ կամ երբ լիովին մեկուսանում է ակտիվ հասարակական հարաբերությունների տիրույթից, միշտ չէ, որ ստեղծված յուրահատուկ ընտանիք-հասարակություն փոխհարաբերությունները ախտածին են համարվում: Այդ հարաբերություններում ընտանիքի անդամները համերաշխություն և ներդաշնակություն են դրսևորում, մի հանգամանք, որը չի դիտվում վերոբերյալ փոխհարաբերությունների դեպքում: Այդ ընտանիքի անդամը (անդամները) չի գտնվում որևէ հիվանդության կամ հիվանդագին ազդեցության ներքո և չի ձգտում ստանձնել միանձնյա «առաջնորդի» ախտածին դերը:

Բ) «Հակասեքսուալ գաղափարախոսություն դավանող ընտանիքը» ձևավորվում է սեռական թուլություն ունեցող անդամի ազդեցության տակ: Սովորաբար նման գաղափարախոսությամբ փորձ է արվում գիտակցաբար կամ ենթագիտակցաբար սքողել հոգեսեռական որոշակի խանգարման առկայության փաստը: Սրանք այն ախտածին փոխհարաբերություններն են, որոնց առկայության դեպքում ընտանիքի՝ սեռական խնդիրներ ունեցող անդամը մյուս բոլոր ընտանիքներին մեղադրում է սեռական սանձարձակության, անբարոյականության, անդաստիարակության և այլ անպարկեշտ հատկանիշների մեջ: Նման վարքագծի պատճառն անշուշտ այդ անձի սեռական կյանքի ուղղակիորեն ախտահարված լինելն է: Այս դեպքում սեռական հարաբերությունների ստորադասումը և սեփական սեռական կարողության պակասը վեհացվում են և համարվում բարձր զարգացածության, բնազդային հակումներին

չտրվելու նշան, մի երևույթ, որը բավականին տարածված է մերօրյա հասարակարգում, սակայն ոչ միշտ է բարձրաձայնվում: Վիճակագրությունը չի սահմանում, թե ամուսնական զույգից կի՞նը, թե՞ տղամարդն է առավել մեծ չափով տառապում ախտահարման նշված հատկանիշներով, սակայն դժվար չէ նկատել, որ հատկապես այս ախտածին դերային փոխհարաբերություններով աչքի ընկնող ընտանիքներն են կարծես կազմում առանձնահատուկ ամբողջություն: Սա նշանակում է, որ դրսևորելով նման վարքագիծ և այն պարտադրելով կողակցին, դաստիարակության նման ոճով պարուրելով երեխաներին՝ ընտանիքի ախտահարված անդամը ախտածին է դարձնում ևս մեկ սերնդի՝ ապագայում կատարվելիք դերը, «նպաստում» կազմվելիք ընտանիքի քայքայմանը. չէ՞ որ երեխան, ով սերվել է նման ընտանիքից, արդեն սեփական ընտանիքում էլ գրեթե նույնությամբ կրկնում է իր «ժառանգած» վարքը: Նմանատիպ դեպքեր հաճախակի են հանդիպում: Սակայն, լինում է նաև հակառակը. ախտահարված վարքագիծը ծնում է հակառակ դերային կառուցակարգ, այն է՝ հիպերսեքսուալ փոխհարաբերությունների պահանջ, որը ևս միանշանակ անընդունելի է: Կնոջ կամ ամուսնու՝ ակտիվ սեռական կյանքով ապրելու պահանջը և, ընդհանրապես, սեքսուալ «հեղափոխություն» կատարելու միտումները ևս քննադատվում ու չեն ընդունվում:

«Հակասեքսուալ գաղափարախոսություն» դավանող ընտանիքի անդամը (կինը, ամուսինը) ամեն կերպ ձգտում և ջանք է գործադրում՝ սեփական ախտահարված վարքագիծը ներկայացնելու որպես բարձր արժեք ու միակ ճշմարիտ ուղի, և ոչ մի կերպ չի ընդունում կողակցի որևէ հակափաստարկ: Նա ստիպում, պարտադրում է զուգընկերոջը դրսևորել իր արժեհամակարգին հարիր վարքագիծ՝ առանց հաշվի առնելու մարդ արարածի՝ որպես առանձին անհատի բնական պահանջը, որը գիտակցորեն ճնշվում, զսպվում է՝ իր հավանությանն արժանանալու համար: Ստացվում է ախտահարված դերերի մի ողջ բազմություն, որը փորձ է արվում ներկայացվելու որպես «բարձր» արժեք:

Հետազոտությունների ընթացքում հանդիպեցինք մի ընտանիքի, որի ներսում եղած ախտածին դերային փոխհարաբերությունների դրսևորումն ուղղակիորեն թաքցնել հնարավոր չէր, իսկ այն, ինչը լսեցինք, մեղմ ասած, տարակուսանք էր հարուցում: Զույգն ամուսնացել և ընտանիք էր կազմել 2008 թ., ունեին երկու երեխա և սեռական կապի մեջ էին եղել հենց երկու երեխաների բեղմնավորման համար, կնոջ պահանջով: Վերջինս ներկայացնում էր, որ սեքսը կամ, ընդհանրապես, սեռական

փոխհարաբերությունները «կենդանական-անասնական» են, և պետք է ձգտել ապրել հոգևոր արժեքներին հարիր պահանջներով, իսկ սեքսուալ փոխհարաբերություններն անհրաժեշտ են միայն սերնդի շարունակությունն ապահովելու համար: Եթե կողակիցը ընդունել և համաձայնել զուգընկերոջ հետ, ապա նման դերերի (դերային վարքագծի) դրսևորումները միանշանակ ախտածին կդարձնելին ընտանեկան փոխհարաբերությունների ողջ համակարգը: Ամուսինը սկզբնական շրջանում համաձայնել է «հակասեքսուալ» գաղափարախոսությամբ առաջնորդվող կնոջ պահանջներին, անգամ հիացել նրա «պարկեշտությամբ»՝ չկասկածելով, որ ախտահարված վարքագիծը նորմալ կոչելն անիմաստ է և հենց իր (ամուսնու) վարքն է դարձնում ոչ ադեկվատ: Նա տրվել է այդ ախտածին հորձանուտին, հիացել, հիասթափվել, փորձել պայքարել, սակայն, անհաջողության մատնվելով, ամուսնալուծության պահանջ ներկայացրել զուգընկերոջը:

Սա ևս չի օգնել փոխհարաբերությունները փրկելուն, քանի որ կինը նմանօրինակ փոխհարաբերություններն ախտածին չէր համարել: Ամուսինը ցավով էր խոսում ախտածին վերոբերյալ դերերի տխուր ավարտի փաստի մասին, սակայն շեշտում էր, որ նման կերպով համատեղ կենցաղ վարելը ախտածին կարող էր լինել (և չի բացառում, որ հետագայում կլինի) երեխաների համար այնպես, ինչպես իր կնոջ վրա է ներգործել նրա ծնողներից (հատկապես մորից): Ամուսնու պնդմամբ՝ կնոջ հայրը մասամբ է կողմ եղել փոխհարաբերությունների նման պահպանմանը՝ գտնելով, որ երեխաները անհայր չպետք է մեծանան:

Սա իհարկե վիճելի տեսակետ է, քանի որ դեռևս պարզ չէ, թե արդյոք նման հոր ներկայությունն է առավել օգտակար, թե՛ բացակայությունը, քանի որ ագրեսիվության, ջղաձգության, տխրության, փոխադարձ սառնության դրսևորումների «պարպումները» երեխաների վրա չեն խոսում նրանց ճիշտ դաստիարակության և հոր դերի «անհրաժեշտության» մասին:

Գ) «Ընտանիք-հանգստյան տունը» ընտանիքի և սոցիալական միջավայրի հարաբերությունների խզման հետևանք է, որը ևս ծնում է ախտածին դերեր: Այս դեպքում ևս ընտանիքի անդամներից մեկը, որպես կանոն, ընտանիքի ավագ անդամը, արգելում է ընտանիքի մյուս անդամների շփումը արտաքին միջավայրի հետ, ընդ որում, չի շփվում նաև ինքը: Այստեղ ընտանիքի ղեկավարն ամեն ձևով փորձում է օգտագործել ընտանիքում ունեցած իր գերիշխող դիրքը, թաքցնում է իր արատները,



թերությունները և փորձում ամեն կերպ ապացուցել արտաքին միջավայրի կործանարար ազդեցությունն իրենց ընտանեկան կառույցի վրա: Նա բոլորին ստիպում է հավատալ, որ միակ հանգիստ վայրը ընտանիքն է, ուր կա «սեր» և «համերաշխություն», և այդ ամենը չկորցնելու համար պետք չէ շփվել որևէ խմբի հետ: Այս փոխհարաբերությունները արտաքուստ կարող են և նորմալ թվալ, նաև կարող է և ոչ մի խնդիր չառաջանալ, եթե չփորձենք ներթափանցել այդ փոխհարաբերությունների ներքին տիրույթ: Իրականում այստեղ աններդաշնակ փոխհարաբերությունների և լարված հոգեվիճակի ենք ականատես լինում: Եթե ընտանիքի անդամները համակերպվում են ստեղծված վիճակի հետ և աներկբայորեն ընդունում ընտանիքի գլխավորի պահանջը, ապա ամեն ինչ թվում է «հարթ ու խաղաղ», և ոչինչ չի խոչընդոտում նրանց անդորրը: Բայց, քանի որ մարդը հասարակական հարաբերությունների տիրույթում է հասնում ինքնադրսևորման, ապա գալիս է մի ժամանակ, երբ նա այլևս չի կարողանում հանդուրժել կամավոր բանտարկյալի կարգավիճակը և ըմբոստանում է: Սա՝ որպես կանոն: Իսկ անձի ախտահարված դերն իր ընտանիքի համար ախտածին է դառնում, եթե նա վերափոխված դերային փոխհարաբերությունները ներկայացնում է որպես միակ ճշմարիտ ճանապարհ և մյուսներից ևս ակնկալում նույն վարքաձևը:

Մեր ուսունասիրություններից մեկի ընթացքում հանդիպեցինք մի ընտանիքի, որի ներսում դրսևորված ախտածին փոխհարաբերությունները, բարձր լարվածությունը ամուսնալուծության պատճառ էին դարձել՝ հիմքում ունենալով վերոբերյալ «ընտանիք-հանգստյան տուն» ախտածին դերի դրսևորման տեսակներից մեկը: Ամուսինների լարվածության սկզբնապատճառը տղամարդու լարված վերաբերմունքն էր կնոջ նկատմամբ՝ կապված նրա մոր (իր զոքանչի) հետ: Սա այն դեպքն է (իհարկե եզակի դեպքերից), որի դրսևորումը ախտածին է դարձնում ոչ միայն տվյալ ընտանիքի փոխհարաբերությունները, այլև մեկ այլ, տվյալ դեպքում կնոջ հայրական ընտանիքի փոխհարաբերությունները: Ամուսինը գտնում էր, որ կնոջ հայրական տան անդամները բարենպաստ ազդեցություն չէին թողնում իր ընտանիքի վրա, և պարզապես արգելում էր փոխադարձ շփումները: Սկզբնական շրջանում կինը համակերպվել էր իր դերի հետ՝ մտածելով, որ այդ ամենը կանցնի, սակայն ախտահարված փոխհարաբերություններն ավելի էին խորացել՝ ընդգրկելով նաև տան միակ երեխային, ում ևս արգելվել էր շփվել այդ ընտանիքի հետ: Պատճառն այն էր, որ ամուսնուն թվում էր, թե կնոջ հայրն ու

մայրը վարում են «ազատամիտ կենցաղ», ավանդապաշտ չեն, չեն հարգում ավանդույթները և իրենց աղջկան «ճիշտ» չեն դաստիարակել: Ամուսինը «ազատամիտ կենցաղ» էր համարել այն, որ ամուսնության սկզբնական փուլում կինը փորձել էր դրսևորել սեռական ինքնուրույնություն, արտահայտել սեփական կամքը, ընդունել որոշումներ, այսինքն՝ ձգտել էր դառնալ իրավահավասար անձնավորություն: Նա նաև սերտ շփումներ էր ունեցել շրջապատի այլ անձանց հետ՝ ինչպես աշխատավայրում, այնպես էլ առօրյա կյանքում: Բայց այդ ամենը մնացել էր անցյալում, քանի որ ամուսինն իր ախտահարված վարքագծով նրա մեջ ճնշել էր ինքնուրույնության ցանկացած դրսևորում, արգելել շփումները՝ գտնելով, որ այս ամենը շրջապատի վնասակար ազդեցության արդյունքն է, և ընտանիքի պահպանմանը չի նպաստում: Ինչպես արդեն նշեցինք, կինը սկզբում լուռ համակերպվել էր (ախտածին դերի պարզ դրսևորում), սակայն հետագայում սկսել էր պայքարել, ըմբոստանալ՝ պահանջելով հանդիպումներ հայրական ընտանիքի հետ. մշտական միայնությունը և շփումների բացակայությունը նրան հասցրել էին լարվածության գագաթնակետին:

Վերոհիշյալ ախտածին փոխհարաբերությունները հանգեցրել էին ամուսնալուծության և, որ տարօրինակ է, հայցը ներկայացրել էր ամուսինը՝ պնդելով, որ նման անհնազանդ, ընտանիքի անդորրը խախտող և ամուսնուն «չհարգող» կին իրեն պետք չէ:

Սա մեկն է այն բազմաթիվ դեպքերից, որոնք առաջանում են նմանատիպ ախտածին փոխհարաբերությունների դրսևորման արդյունքում:

Կա նաև այլ մոտեցում, երբ կինը կամ ամուսինը համակերպվում են դիմացինի պահանջների հետ և սկսում «հավատալ», որ միակ տեղը, ուր խաղաղ է, հանգիստ և վտանգներից իսպառ ձերբազատված, իրենց «չորս պատն» է, և դրանից դուրս սկսվում է դժոխքը: Այս դեպքում նրանք սկսում ան ապրել միայն այդ գաղափարախոսությամբ և օրինակ դառնում (վա՛տ, թե՛ լավ՝ միանշանակ չենք կարող պնդել) երեխաների համար: Սակայն այստեղ հետագայում կարող է բարդություն առաջանալ երեխաների շփման բնագավառում, և նրանք պարզապես կարող են դառնալ շփման համար անկարող, ոչ պիտանի անձնավորություններ: Նման երեխաներն աչքի են ընկնում միայնության հակվածությամբ, ընկճվածությամբ, երբեմն էլ՝ շրջապատի հանդեպ ատելությամբ և այլ հատկանիշներով:

Ստացվում է, որ ախտահարված դերային հատկանիշներով ծնողները, հաշվի չառնելով երեխաների ցանկություններն ու կարծիքները, ախտածին են դարձնում նաև նրանց վարքագիծը և դերային փոխհարաբերությունները, մինչդեռ երեխաները մշտապես առաջնորդվում են ծնողների կարծիքներով և կատարում նրանց հրահանգները: Վերոնշյալ ախտածին փոխհարաբերությունները դրսևորվում են նաև մեկ այլ տարբերակով (այս դեպքերը նկատվում են ոչ այնքան հաճախ), երբ ամուսիններից մեկը (ավելի հաճախ՝ ընտանիքի հայրը) չի կարողանում հոգալ ընտանիքի կարիքները, ձևավորել նորմալ փոխհարաբերություններ, երբեմն էլ՝ պարզապես սովորում է չաշխատելուն և հանգիստ ապրելուն, սեփական անկարողության դրսևորումները փորձում է բարդել արտաքին միջավայրի վրա՝ անընդհատ տան անդամներին ապացուցելով, որ իր չաշխատելու, չվաստակելու կամ պարզապես անկարողության համար մեղավոր է շրջապատը և ոչ թե ինքը: Նա ամեն կերպ մեղավորներ է փնտրում և տան անդամներին համոզում, որ իրեն պարզապես չեն հասկանում, և ինքը, այլևս անկարող լինելով «պայքարելու» շրջապատի հետ, հանգիստ է գտնում տանը, տունն իր միակ հանգիստ «ապաստանն» է: Լինում են նույնիսկ դեպքեր, երբ տվյալ անձը մատնանշում է որևէ կոնկրետ անձի կամ անձանց՝ ասելով, որ իր բոլոր անհաջողությունների մեջ նրանք են մեղավոր: Այս կերպ նա ախտահարում, ախտածին է դարձնում նաև ընտանիքի այլ անդամների փոխհարաբերությունները տվյալ անձի (անձանց) հետ, անգամ մղում է վիճաբանությունների, փոխադարձ վիրավորանքներ հասցնելու և այլն:

Դ) «Ընտանիք-թատրոնում» ախտածին դերային փոխհարաբերությունները դրսևորվում են այն ժամանակ, երբ անդամներից մեկն անվերջ ձգտում է իր հոգեկան որոշակի խնդիրների առկայությունը սքողել բարձր ինքնագնահատականի շղարշով, այսինքն՝ իր ամբողջ ուժով և կարողությամբ ջանում է շրջապատի, ընտանիքի մյուս անդամների վրա ազդեցիկ տպավորություն թողնել, բոլորին ստիպել ընդունել իր «բարձրությունն ու կատարելությունը»: Նման անձնավորության վարքը կատեգորիկ է, սովորաբար լարված և նյարդային, քանի որ նա անընդհատ ձգտում է զանազան հնարների, ազդեցիկ միջոցների օգնությամբ ներգործել շրջապատի վրա, բոլորին ստիպել ընդունել իր «անգերազանցելիության» փաստը և այն, որ ընտանիքի անդամները պետք է հնազանդվեն և ընդունեն իր կատարելության ցանկացած դրսևորում: Նման անձնավորության ընտանիքում բոլոր իրադարձությունները, տոներն

ու այլ արարողությունները կարծես վերաժվում են վերոնշյալ անդամի մեծարման արարողության, քանի որ նա միշտ ձգտում է հայտնվել կենտրոնում, որպեսզի բոլորի հայացքներն ուղղված լինեն իրեն, բոլորը հիանան իրենով և փառաբանեն: Սա թվացյալ «անմեղ» տարբերակն է: Առկա է «ընտանիք-թատրոն» ախտածին դերային փոխհարաբերությունների դրսևորման այլ տարբերակ ևս, որի ժամանակ իրադարձություններն ուրիշ ընթացք են ունենում:

Ընտանիքի որևէ անդամ ոչ միայն մշտապես դրսևորում է շրջապատի վրա ցնցող տպավորություն գործելու իր մոլուցքը, այլև ընտանիքին ստիպում է, երբեմն էլ ուղղակի ուժով պարտադրում անընդհատ մեծարել իրեն, իր գերազանցության ցանկացած դրսևորում ընդունել որպես վերջնական որոշում: Ընտանիքի այլ անդամը, սովորաբար կինը, համակերպվելով նման իրավիճակի հետ, այսինքն՝ նույնպես ախտահարվելով, երեխաներին էլ է (եթե նրանք կան) ստիպում ընդունել այդ փաստը (այսինքն այն, որ հայրը միշտ ճիշտ է իր բարձր ձայնով, թատերական վարքագծով, ուժով) և մշտապես ենթարկվել, անգամ՝ հիանալ այդ վարքագծով: Ստացվում է, որ ախտածին դարձան միանգամից երկու սերնդի դերային փոխհարաբերությունները, որոնք դեռևս վերջնական չեն. չի բացառվում, որ երեխաները ևս հետագայում կրկնեն և վերարտադրեն այդ վարքագիծը:

Հետազոտելով աշխատանքի այս բաժինը՝ ականատես եղանք ուսումնասիրվող ընտանիքներից մեկի անդամի՝ կնոջ նմանատիպ վարքագծին:

Կինը ամեն օր երեխային ուղեկցում էր դպրոց և ուսուցչի ներկայությամբ նրան «խրատում ու դաստիարակում»՝ ասելով, որ իրենց նման կիրթ, դաստիարակված ընտանիքի երեխան չի կարող վատ սովորել և թույլ լինել: Նա դասարանի ներկայությամբ երեխային անընդհատ վատաբանում էր՝ ասելով, որ իրենց երեխան չի ժառանգել իր (տվյալ դեպքում մոր) խելքը, մտավոր կարողությունը, այլ ժառանգել է հոր անկատարությունը: Երեխան այնքան էր ազդվել նման պահվածքից, որ որոշ ժամանակ անգամ հրաժարվել էր դպրոց հաճախելուց, ապա լուռ համակերպվել: Ստացվել էր փակ շղթայական ռեակցիա՝ ախտահարված դեր - ախտածին ընդօրինակում:

Այս ընտանիքն արդեն ամուսնալուծված էր, քանի որ ընտանիքի տղամարդը պարզապես չէր հաշտվել կնոջ մշտական դեմոնստրատիվ պահվածքի հետ:

**2. Ներընտանեկան ծագման ախտաճին դերեր և ամուսնալուծություններ:** Ըստ Հ. Ռիխտերի և մի շարք այլ հեղինակների (Էյդեմիլլեր, Յուստիցկիս և ուրիշներ)՝ ընտանիքներում կարող են այնպիսի փոփոխություններ առաջ գալ, որոնք էականորեն կարող են նպաստել ախտաճին դերերի առաջացմանը:

Նրանց կարծիքով՝ այդօրինակ դերերի առաջացման մեխանիզմը հետևյալն է. ընտանիքի որևէ անդամի մոտ ի հայտ է գալիս որևէ նոր (մինչ այդ բացակայող), անսովոր հատկություն կամ նրան սկսում են այդ հատկությունը վերագրել, և նա մտնում է համապատասխան դերի մեջ, վարվում ըստ այդ վերագրված դերի պահանջների:

Նմանատիպ անձնավորությունը այդ դերային պահանջները ստիպում է կատարել նաև ընտանիքի մյուս անդամներին:

Օրինակ, ենթադրենք, թե նրան բնորոշել են որպես հոգեկան հիվանդ կամ որպես գերագրեսիվ անձնավորություն, որպես հանճար և այլն, ապա նրա մեջ առաջանում են այնպիսի հակումներ, արարքներ և գործողություններ, որոնք զսպելու անհրաժեշտություն է առաջանում: Ըստ այդմ էլ՝ ընտանիքի մեկ այլ անդամը պետք է համապատասխան դեր ստանձնի («հիվանդապահի դեր», «խնամողի դեր» և այլն):

Ստացվում է, որ ախտաճին դերային փոխհարբերությունների մեջ է ներքաշվում ևս մեկ անձնավորություն: Այս պարագայում ընտանիքի ներքին դերային ողջ համակարգը փոխվում է, այդ լրացուցիչ դերերը ախտաճին ազդեցություն են գործում իրենց կատարողների վրա [20, էջ 299-307]:

Ապացուցված է, որ մեծամասամբ նա, ով իր վրա լրացուցիչ դեր է վերցնում, ինքն է ճնշում գործադրում ընտանիքի մյուս անդամների վրա, որպեսզի նրանք իրեն՝ որպես ընտանիքի առանձնահատուկ անդամին հատուկ հոգատարություն ցուցաբերեն: Այսինքն՝ ստացվում է ախտաճին դերի նախ լրացուցիչ դրսևորում, ապա՝ հավելյալ, ընտանիքի այլ անդամների հանդեպ: Ներընտանեկան ծագման ախտաճին դերեր առաջանում են նաև այն ժամանակ, երբ նրա անդամներից մեկն իր որևէ պահանջմունք ցանկանում է բավարարել ընտանիքի մեկ այլ անդամի օգնությամբ [84, էջ 549-610]:

Սա այն երևույթն է, երբ ծնողն իր կյանքում չի կարողանում հասնել իր առջև դրած նպատակին և խնդիր է դնում այնպես անել, որ իր որդին հասնի դրան. օրինակ՝ չի դարձել բժիշկ և ցանկանում է որդուն անպայման բժշկական համալսարանի ուսանող

տեսնել: Նման դեպքում զավակին մեծ պահանջներ են ներկայացվում, որոնք շատ դեպքերում նրան ուժեղ սթրեսների են հասցնում, նրա անձի կառուցվածքում առաջ են բերում ախտաբանական փոփոխություններ:

Այդ ախտածին դերային փոփոխություններն առաջանում են հատկապես այն դեպքում, երբ զավակը չի կարողանում արդարացնել հոր հույսերը և այդ պատճառով ունենում է մեղքի զգացում, խղճի խայթ, ճնշվածություն, լարվածություն և այլն: Նման դեպքերը մեր իրականության մեջ բազմաթիվ են: Ստորև կներկայացնենք ախտածին դերերի և ամուսնալուծությունների «սերտ» կապերի առաջացման մեխանիզմներին վերաբերող հետազոտություններ, որոնց մեծամասնությունը ցավոք ընդհանրական է մերօրյա ընտանիքներից շատերի համար:

Հ. Ռիխտերը նկարագրում է ընտանիքում ախտածին դերի ծագման մի հետաքրքիր մեխանիզմ, այն է՝ ընտանիքի անդամներից մեկն իր սեփական թերությունները վերագրում է մեկ այլ անդամի, որն ի սկզբանե թերություններով աչքի չի ընկել: Նման վերագրումը սկսում է պարբերական բնույթ կրել, անընդհատ հնչել, ասվել, և եթե վերագրողը ազդեցիկ է, ապա, որքան էլ զարմանալի է, նա, ում նման թերությունները վերագրում են, հետագայում իրոք ձեռք է բերում դրանք և սկսում դրանց համարժեք դեր կատարել [84, էջ 465-533]:

Փորձենք վերլուծել վերոնշյալ ախտածին դերային փոխազդեցությունը և համապատասխան ախտահարված փոխհարաբերությունները ամուսնական զույգերի դեպքում: Դրանք սովորաբար դրսևորվում են ինչպես նորաստեղծ, այնպես էլ բավականին կայացած ընտանիքներում. ախտածին դերերի առաջացումը կոնկրետ ժամանակային արտահայտվածություն չունի: Փորձենք դրանք քննել՝ ըստ ախտածին դերերի առաջացման մեխանիզմների: Ընտանիքում ամուսնական զույգերի փոխհարաբերությունները միշտ չէ, որ կարող են ընթանալ ներդաշնակ, և ժամանակի ընթացքում առաջանում են խնդրահարույց իրավիճակներ, որոնք զույգերի միջև դնում են անհաղթահարելի պատնեշներ, դժվարացնում կյանքը, լարված պահեր «պարզևուր»: Եթե ընտանիքում, օրինակ, զույգերից մեկը հիվանդագին հակումներ ունի թմրամոլության, հարբեցողության և այլ արատների հանդեպ, ապա նա այնպիսի դիրք է ընդունում, որ ընտանիքի մեկ այլ անդամ ստանձնի իրեն վերահսկելու և իր հակման դրսևորումները կանխելու գործառույթը (քանի որ ինքն ի վիճակի չէ դրան դիմադրել): Մեր հասարակության շրջանում նմանօրինակ վարքագծով հիմնականում աչքի են

ընկնում տղամարդիկ, ովքեր զանազան ընտանեկան և կենցաղային պատճառների, ֆինանսական բարդությունների և այլ հանգամանքների պատրվակով վարում են արատավոր կենցաղ և կնոջից պահանջում՝ տան հոգսերը հոգալուց զատ համակ ուշադրության կենտրոնում պահել նաև իրեն: Ոմանք պատճառաբանում են, որ զգում են իրենց կատարած դերի աղետալի հետևանքները ընտանիքի համար, սակայն միայնակ պայքարել ի վիճակի չեն (շատերն ուղղակի չեն ուզում): Տվյալ դեպքում ամուսինը սեփական ախտահարված դերային կառույցը վերափոխված կերպով փորձում է դնել կնոջ «ուսերին»՝ կատարման ողջ պատասխանատվությունը նրա վրա դնելով: Եթե կինը ենթարկվում է այդ պահանջին և իր վրա վերցնում ամուսնու ախտահարված դերային կառույցի ողջ ծանրությունը, ապա միանշանակ մտնում է ախտածին դերի մեջ: Ամուսինն ազատվում է մինչ այդ ունեցած խղճի խայթից և պատասխանատվությունից, քանի որ այդ ամբողջ բարդությունն իր վրա է վերցրել կինը: Տղամարդը նման գործելաոճով մեծամասամբ ոչ միայն չի օգնում կնոջը, այլև ավելի է ակտիվացնում անցանկալի պահանջմունքների բավարարմանն ուղղված իր գործունեությունը: Նա դառնում է այսպես կոչված խնամյալ, «հիվանդ», «խեղճ, կործանվող մարդ» և իր ճակատագրի ողջ պատասխանատվությունը բարդում կողակցի վրա: Նա վարվում է այնպես, ասես կողակիցն է մեղավոր իր արարքների համար՝ նրա մեջ արթնացնելով «կործանվող» ամուսնու համար խղճի խայթի զգացում: Դեռ ավելին, տղամարդը նույնիսկ փնտրում և վիրավորում է կնոջը՝ խնամողի դերը լավ չկատարելու համար, քանի որ ինքը դեռևս չի բուժվել, դեռևս օգնության կարիք ունի և այլն:

Մեկ այլ դեպքում կինը դերը ստանձնում է պարտադրաբար. սա նշանակում է, որ, ելնելով մի շարք հանգամանքներից, կինը ստանձնում է ընտանիքը փրկողի դերը, որը, նրա կարծիքով, իր արժանիքները դրսևորելու արտահայտումն է (սա իհարկե սկզբնական շրջանում): Ինչպե՞ս է դա դրսևորվում. եթե ընտանիքում ամուսինն ունի խնդրահարույց ախտահարված վարքագիծ (թմրամոլ է, հարբեցող, տառապում է որևէ հիվանդությամբ և այլն), ապա կինը, որոշակի գործոնների ազդեցությամբ, նույնիսկ առանց ամուսնու պարտադրանքի, ստանձնում է խնամողի իր դերը: Այդ գործոնները կարող են լինել հասարակական կարծիքը (լավ կնոջ կերպար), ծնողների դաստիարակությունը, երեխաների պահանջը և այլն: Սկզբում կինը չի էլ պատկերացնում իր ստանձնած դերի իրագործելիության սահմանը, և նրան թվում է, որ իր դերով կարող է

հաղթահարել (լինում են նաև նման դեպքեր) այդ դժվարին կացությունը: Սակայն հետագայում զոհի ախտածին կերպարը և համապատասխան «լավ» կնոջ դերը դառնում են անհամատեղելի, և կնոջը սկսում են պարուրել ամբիվալենտ զգացմունքներ՝ սեր և ատելություն, ինքնասիրություն և մերժվածություն և այլն:

Այսօրինակ զգացումներ մասնավորապես առաջանում են այն դեպքերում, երբ ամուսիններն իրենք չեն ցանկանում ոչ մի պարագայում ինքնուրույն փոխվել, բուժվել և ամեն կերպ սեփական «անկարողության» բեռը դնում են կնոջ ուսերին: Այս ախտածին դերային փոխհարաբերությունները, իհարկե, ոչ միշտ են ունենում բարենպաստ ավարտ: Հետազոտությունների ընթացքում նման դեպքերն, իհարկե, բացառություն չէին կազմում, քանի որ ընտանիքների ստվար մասը (հետազոտության ենթարկված) խնդրահարույց փոխհարաբերությունների հենց նմանատիպ հարթության վրա էր գտնվում:

Ընտանիքներից մեկում ախտածին դերային փոխհարաբերություններն այնքան էին սրվել, որ անգամ ամուսինը մի քանի օր նկուղում փակված էր պահել կնոջը՝ իրեն «վատ խնամելու» և «խմելու կարիքը չբուժելու» (ամուսնու խոսքերն են) համար: Կնոջ հետ զրույցից պարզ դարձավ, որ ավրոհողի հանդեպ մոլի կիրքն ամուսնուն ամբողջությամբ պարուրել էր այն ժամանակ, երբ նա կորցրել էր աշխատանքը. մի բեռնափոխադրումների ընկերությունում նրան ազատել էին աշխատանքից, քանի որ ընդունել էին նոր, ավելի երիտասարդ աշխատակցի: Սկզբում ամուսինն ավելի սառն էր վերաբերվել այդ փաստին՝ անընդհատ հուսալով, որ նորեկը կձախողի աշխատանքը, և իրեն հետ կկանչեն: Սակայն օրերն անցել էին, և նա այդպես էլ անգործ էր մնացել: Փրկություն սկսել էր որոնել ամենուր, և ավրոհողը նրան «գտել» էր համապատասխան մարդկանց շրջապատում: Կինն անընդհատ պայքարել էր՝ թե՛ հանդուրժելով ու խրատելով, թե՛ սկանդալներով, թե՛ ամուսնալուծվելու սպառնալիքով: Չէր օգնել ոչինչ: Ամուսինն անընդհատ պնդել էր, որ ուզում է ազատվել այդ վիճակից, սակայն մենակ չի կարող, և իրեն օգնություն է հարկավոր: Կինն այդ դերը՝ օգնողի, խնամողի, վերցրել էր, թեև դա իր համար շատ ծանր էր. խնամքի տակ երեք երեխաներն էին: Սակայն ամուսինը միայն խոսքերով էր ուզում փոխվել, քանի որ իրականում իրեն վերափոխելու ողջ պատասխանատվությունը աստիճանաբար դրել էր կնոջ ուսերին: Կնոջ դերն ինքնըստինքյան ախտածին էր, քանի որ նա «կամավոր կերպով» իր վրա էր վերցրել ախտահարված վարքագծի հանդեպ ողջ պատասխանատվությունը և վերահսկողու-



թյունը, որն, իհարկե, անհաջողության էր մատնվել, քանի որ ամուսինն ինքը, հույսն ամբողջապես կնոջ վրա դնելով, ոչինչ չէր անում իրավիճակի հաղթահարման համար: Վիճահարույց փոխհարաբերությունների նման ընթացքը տևել էր տարիներ, և կինը որոշել էր պարզապես հեռանալ, քանի որ, ինչպես ինքն էր նշում, էլ չէր կարողանում այդպես ապրել:

Ձույգերը օրինական (իրավաբանորեն) չէին ամուսնալուծվել, սակայն կինն ու երեխաները հեռացել էին տնից:

Վերոնշյալ բոլոր վերլուծությունները, փաստերն ու օրինակները միանշանակ հաստատում են այն դրույթը, որ ամուսնալուծությունների որոշակի տոկոսն անկասկած պայմանավորված է ախտածին դերերով:

Միայն հավելենք, որ նմանատիպ դերային փոխհարաբերությունների առկայությամբ ամուսինները նույն հարկի տակ կարող են երկար ապրել, քանի որ անընդհատ նրանցից ինչ-որ մեկը վերադարձի ճանապարհի հույս է փայփայում: Իհարկե, լինում են նաև դեպքեր, երբ համապատասխան միջամտությունների օգնությամբ կամ էլ յուրովի պայքարի միջոցով ամուսիններին, այնուամենայնիվ, հաջողվում է հաղթահարել դերային անհամատեղելիությամբ պայմանավորված ախտահարված փոխհարաբերությունները:

Լինում են նաև ընտանիքներ, որտեղ վերոնշյալ ախտածին դերերն ուղղակի չեն ծագում. այդօրինակ ընտանիքների անդամները կարողանում են դիմակայել ախտահարման գործընթացին: Սակայն, դեռևս պարզ չէ, թե ինչի շնորհիվ են նրանք կարողանում զերծ մնալ ախտահարումից, ինչպիսի հատկություններ և մեխանիզմներ պետք է ունենալ դրա համար: Եվ ընդհակառակը, ինչպիսի հատկություններ պետք է ունենան ընտանիքն ամբողջությամբ և նրա առանձին անդամները, որպեսզի նրանում ախտածին դերեր չառաջանան:

Է. Էյդեմիլլերը և Վ. Յուստիցկիսն ախտածին դերերի ծագման վերաբերյալ առաջադրել են մի վարկած, որը դեռևս հազիվ թե կարելի է միանշանակ հիմնավորված համարել: Նրանք ենթադրում են, որ ախտածին դերեր (համապատասխանաբար նաև բախումներ, ճգնաժամեր, ամուսնուլուծություններ) ծագում են այն ընտանիքներում, որոնց անդամները նախապես որոշ պատկերացումներ ունեն այդ դերերի մասին, թեև դրանք իրենց ընտանիքում մինչ այդ չեն եղել: Այս դրույթն ամբողջությամբ հաստատելու համար հեղինակներն ապացույցներ և հիմնավորումներ չեն բերում և չեն

փորձում հաշվի առնել այն հանգամանքը, որ այն ընտանիքները, որոնցում նման դերեր չեն ծագում, նույնպես կարող են նման պատկերացումներ ունենալ հիվանդագին դերերի մասին:

Որպես ապացույց նշենք մի զույգի, որը ոչ մի կերպ չէր կարողանում ամուսնանալ: Նրանք գտնում էին (հատկապես աղջիկը), որ ամուսնությունը ծնում է պարտավորվածության և կամակատարության-ենթակայության զգացում և պարզապես «փչացնում» է սերը: Աղջիկը նշում էր, որ վախենում է ամուսնանալ այն պատճառով, որ ամուսնական կյանքի մի որոշակի փուլում իրենք կարող են լուրջ խնդիրներ ունենալ, և իրենցից որևէ մեկը, մյուսի հոգսն իր վրա վերցնելով և հիվանդապահ դառնալով, չի կարող սերը երկար պահպանել, կհոգնի, և իրենք կդառնան պարզապես մի հարկի տակ ապրող «օտար» մարդիկ:

Սա, իհարկե, անհասկանալի մոտեցում է, սակայն, հաշվի առնելով, որ ամուսնությունն ինքնին կարող է ծնել պարտականությունների լայն շրջանակ, ընդունելի է դառնում այն կարծիքը, թե նման գործառույթները հաղթահարել ոչ բոլոր զույգերն են կարողանում: Դա նաև վկայում է ընտանիք կառուցին վերաբերող ոչ արմատական մոտեցման մասին, ըստ որի՝ իբրև թե ընտանիքը հեշտ «սարքվող» և նույնքան հեշտ էլ «քանդվող» կառույց է: Այս ֆոնի վրա ավելի է կարևորվում գիտական այն մոտեցումը, որը ենթադրում է, թե ախտածին դերերի գենետիկական և գործառույթների շրջանակը մեծապես պայմանավորված են ընտանիքի յուրաքանչյուր անդամի պրոբլեմներով և դրանց հետևանքով առաջացած պաշտպանական մեխանիզմներով, ինչպես նաև ընտանիքի ամբողջական մոդելի գործառույթների խանգարումով:

Վետևար՝ ախտածին դերերի առաջացման հիմքում ընկած են ընտանիքի անդամների՝ իրար մասին ունեցած պատկերացումների ախտահարումը, դերային այնպիսի պահանջների ու սպասումների (էքսպեկտացիաների) ներկայացումը մեկը մյուսին, որն իրագործելը պարզապես անհնար է: Այդ ֆենոմենը կոչվում է նաև «ընտանեկան միֆերի (անուրջների)» ֆենոմեն: Անհնարինության դրսևորումը ծնում է համապատասխան հակազդում՝ ախտահարված փոխհարաբերություններ, ախտածին դերեր:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ ամուսնալուծությունների հիմնական պատճառները ամուսինների միջև ծագող այնպիսի բախումներն են (առաջին հերթին՝ դերային, մեր ուսումնասիրության պայմաններում՝ ախտածին դերային), որոնք հաճախ

վերածվում են ճգնաժամերի, որոնց առկայությամբ կողմերն այլևս չեն կարողանում գոյակցել, լիարժեք կերպով կատարել իրենց փոխկապակցված դերերն ինչպես նախկինում և հեռանում են միմյանցից ինչպես հոգեբանորեն, այնպես էլ ֆիզիկապես և տարածականորեն:

... Հարսանիք, երջանիկ զույգեր, ընտանիք կազմելու և ընտանեկան կյանքով ապրելու տենչ. զույգերը ցանկանում են, ավելին, համոզված են, որ միասին կառուցելու

են կուռ ընտանիք, ապրելու են սիրով և համերաշխությամբ, լինելու են տեր և տիկին, սակայն ...

Ամուսնալուծություն. ինչպես արդեն բնութագրել ենք աշխատանքի նախորդ բաժիններում, սա մի երևույթ է, որն առաջանում է ընտանեկան բախումների և ճգնաժամերի առավել արմատական դրսևորումներից հետո: Երբեմնի երջանիկ զույգերը, որ խոստացել էին իրար սիրել և պաշտպանել մշտապես, սկսում են պարզապես իրար չհասկանալ, չսիրել և, վերջապես, ատել: Հարց է առաջանում, թե հատկապես ի՞նչը կամ ինչե՞րն են նրանց ստիպում գնալ այդ քայլին, չկա՞ր արդյոք լուծման այլ տարբերակ: Թվում է՝ ամուսնական կյանքում տեղի ունեցող բարդությունները կամ պարզապես անհամաձայնության դրսևորումները ունեն բազմաթիվ պատճառներ, սակայն որքան էլ որ վերջիններս բազմաթիվ ու բազմաբնույթ լինեն, միևնույն է՝ ծագում են զույգերի միջև տեղի ունեցած միջդերային բախումներից: Հետևանքներն իհարկե տարբեր են, ազդեցության ոլորտներն էլ՝ համընդգրկուն, և մեր աշխատանքի այս բաժնում փորձելու ենք վեր հանել դերային, հատկապես ախտածին դերային փոխհարաբերությունների ազդեցությամբ առաջ եկող ամուսնալուծություններն ամբողջությամբ և վերջիններիս «ազդեցիկ» հետևանքները՝ ըստ ազդեցության ոլորտների:

Ինչպես արդեն վերլուծաբար ներկայացրել ենք մեր աշխատանքի նախորդ բաժիններում, ախտածին (պաթոգեն) են կոչվում այն դերերը, որոնք ամուսնական զույգերի փոխհարաբերությունների վրա թողնում են, մեղմ ասած, բացասական ազդեցություն:

Այդ դերային անհամատեղելիության և ոչ ճիշտ դերային բազմության պայմաններում զույգերը դրսևորում են համարժեք վարքագիծ, սրվում են փոխհարաբերությունները, առաջանում են բախումներ, ճգնաժամային իրավիճակներ, և, ի վերջո, ամուսնալուծվում են՝ եթե ոչ տարածականորեն, ապա էմոցիոնալ կերպով: Սակայն այսքանով խնդիրները չեն ավարտվում, և արդեն իսկ ախտահարված

վարքագծով աչքի ընկնող նախկին ամուսնական զույգը նույն կերպ ախտահարում է (փորձում ախտաձին դարձնել) նաև իր շրջապատում գտնվող մարդկանց վարքը և, շատ դեպքերում, դա անում է ոչ թե միտումնավոր, այլ տխուր հոգեվիճակի ազդեցությամբ:

Զույգերից շատերին թվում է, թե իրենց տառապանքների, նվաստացումների ավարտը հենց ամուսնալուծության կայացման փաստն է, սակայն ոմանք հետագայում խոստովանում են, որ դա էլ վերջակետ չէին համարի:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կան մեծաթիվ ամուսնալուծված կանայք և տղամարդիկ, ովքեր կարոտում են իրենց նախկին կողակիցներին, զգում նրանց կարիքը և այլն:

Ունենալով նման զգացումներ՝ երբեմնի ամուսինները ձեռք են բերում նաև ջղաձգված, նյարդային վարքագիծ, դրսևորում համարժեք ախտահարված փոխհարաբերություններ արդեն նոր շրջապատում՝ ախտաձին դարձնելով ինչպես իրենց երեխաների (եթե նրանք կան), այնպես էլ ծնողների և հարազատների վարքագիծը, որոնք ակամայից դառնում են սփոփիչներ (նոր դեր են ստանձնում, իհարկե ստիպված, որն ինքնին ախտաձին է), ընդ որում, վատ:

Այդ նոր դերը ոչ բոլորն են հաճույքով ստանձնում, քանի որ հասկանում կամ գոնե պատկերացնում են, որ «սփոփողի» դերով ակամայից ստանձնում են նաև ամուսնալուծվածի ճակատագրի հանդեպ պատասխանատվության մեծ մասը: Այժմ փորձենք առավել հանգամանալից վերլուծել ամուսնալուծության և դրա ախտաձին դրսևորումների ազդեցության ոլորտները:

## **2.2. Անբարենպաստ ընտանիքը որպես երեխայի սոցիալ-հոգեբանական առողջ զարգացմանը խոչընդոտող պատճառ, վարքի ռիսկայնության նախապայման**

Այս հանգամանքը թերևս ամենախոցելիին է ամուսնալուծված զույգերի համար, քանի որ ծնողների ամուսնալուծության բացասական ազդեցությունը երեխաների վրա, որպես կանոն, ավելի խորն ու երկարատև է լինում: Ծնողները հիմնականում չեն կարողանում համաձայնության գալ երեխաների հետագա խնամքի, դաստիարակու-

թյան և դրանցից բխող այլ հարցերի շուրջ, դրսևորում են ոչ ադեկվատ վարքագիծ՝ չպատկերացնելով, որ ավելի են ցավեցնում և վնասում երեխային: Ամերիկյան ընտանիքաբաններից շատերի վկայությամբ, հատկապես նախադպրոցական տարիքի երեխաներն այդ նոր պայմաններում սարսափ են զգում, զգալիորեն կորցնում են ինքնավստահությունը, ապրում տհաճ հոգեվիճակներ, որոնց վերանալը կամ գոնե որոշակիորեն թուլանալը երկար ժամանակ է պահանջում: Երեխաներից շատերին թվում է, թե իրենք են ծնողների բաժանման պատճառը, և մեղքի, խղճի խայթի զգացումն ավելի տառապալից են դարձնում նրանց առօրյա կյանքը: Ամուսնալուծվելուց հետո շատ քիչ դեպքերում են ծնողները ճիշտ դասավորում երեխաների հանդեպ ունեցած իրենց պարտականությունները: Արդեն ամուսնալուծված զույգին սկզբում թվում է, թե ավարտվեցին տառապանքները, և շուտով նոր կյանք են սկսելու և ապրելու են խաղաղ, ապահով ու երջանիկ: Սակայն դա մնում է երազանքների մակարդակում՝ հատկապես միայնակ մնացած կանանց համար, ում ուսերին է ընկնում երեխաներին պահելու, կերակրելու և ուսման հոգսը հոգալու պարտականությունը: Իրավիճակն ավելի է սրվում, եթե կինը չի ունենում իրեն օժանդակող մարդիկ կամ այդ օժանդակությունը պարզապես չի բավարարում: Կինը սկսում է ճանապարհներ փնտրել իրավիճակի հաղթահարման համար և ակամայից լարված իրավիճակ է ստեղծում շուրջը, որի հետևանքներն ազդում են երեխայի վրա: Նա նորից դրսևորում է ախտահարված վարքագիծ, նյարդային պահվածք և անընդհատ դժգոհում է իր վիճակից: Իսկ եթե չի արտահայտում զգացմունքները, ապա դառնում է ինքնամփոփ, լռակյաց, ավելի քիչ է խոսում ու շփվում երեխաների հետ: Երկու դեպքում էլ երեխաներն ապրում և զգում են լարվածության ողջ ծանրությունը և հաճախ սկսում հաղթահարման սեփական ուղիներ որոնել: Շատերի պարագայում, որպես փրկություն, այդ ուղին դառնում է ախտածին դերի «ընդունումը». ստանձնում են դերեր («սփոփող», «խնամակալ» և այլն), որոնց իրականում պատրաստ չեն ո՛չ հոգեպես, ո՛չ ֆիզիկապես: Այստեղ է, որ հիմնականում ձեռք են բերում մեղքի և ճնշվածության զգացումներ, դրսևորում դժվար որակվող վարքագիծ՝ հատկապես դեռահասության փուլում գտնվելիս: Ստանձնած նոր դերը երեխայի կյանքում միանշանակ ախտածին է համարվում, քանի որ պարտականությունների նոր շրջանակի հետ «հաշտվել է» և նոր դերի ու համապատասխան դիրքի պահանջների կատարումը ծանր խնդիր է նրա համար: Երեխան փորձում է իրեն «պաշտպանել» հենց նույն ծնողից և սկսում է

դրսևորել իրեն ոչ բնորոշ վարքագիծ. նրա վարքն ու գործողություններն արդեն իսկ ախտահարված են: Երեխաների մի մասը սկսում է ակտիվորեն պաշտպանել ծնողներից մեկին մյուսից (անգամ այն դեպքերում, երբ համաձայն չէ պաշտպանվողի հետ)՝ հույս ունենալով, որ «իրեն պարզապես չեն դիպչի», մյուս մասը հակադրվում է ծնողներից մեկին և ընդունում մյուսին (մեծամասամբ մորը), ոմանք էլ պարզապես լռում են. մի իրավիճակ, որն ավելի խնդրահարույց է, քանի որ երեխան իր վրա է վերցնում «լռելու» կամ պարզապես «քավության նոխազի» ախտածին դերերը և, բնականաբար, ներքին լուրջ ճգնաժամ է ապրում: Հետազոտություններից մեկի ժամանակ հանդիպեց մի ընտանիք, որն ամուսնալուծվել էր զուտ էմոցիոնալ կերպով, այսինքն՝ հարցն իրավական հարթություն դեռ չէր տեղափոխվել, և ամուսիններն ընդամենը ապրում էին առանձին: Ախտածին դերային փոխհարաբերությունները, հիմքում ունենալով նախ պաթոլոգիկ խանդը, ապա ավելի երիտասարդ կնոջ հանդեպ կիրքը, արդեն իսկ քայքայել էին չորս երեխաներ ունեցող ընտանիքի բուն կառույցը: Սկզբնական շրջանում ամուսնու վարքը կնոջն այնքան արտառոց էր թվացել, որ նա կարծել էր, թե ամուսինը հոգեկան խնդիրներ ունի, քանի որ անընդհատ հետապնդում էր իրեն, արգելում նույնիսկ տարրական շփումները ցանկացած սեռի ներկայացուցչի հետ: Ամուսինն իրոք «մտել էր դերի մեջ» և սկզբում իրեն հենց խանգարված վարքագծով էլ դրսևորել (տիպիկ ախտածին դերի դրսևորում): Կինը ստանձնել էր ամուսնուն «հիվանդությունից» փրկողի ախտածին դերը, սակայն ապարդյուն. չէ՞ որ ամուսինը չէր ուզում «փրկվել»: Կնոջ հանդուրժող վերաբերմունքն ավելի էր «ոգևորել» ամուսնու բիրտ պահվածքը, իսկ արդյունքում՝ չորս երեխաները մեծանում էին վախի ու սարսափի մթնոլորտում: Ամուսինը, երբ բացահայտվել է իր դավաճանության փաստը, հույս ունենալով, որ իր բոլոր արարքների հետ կինը կհաշտվի, սկսել էր սեփական արատավոր վարքագիծը բարդել կնոջ վրա՝ պնդելով, թե նա է դավաճանում իրեն: Կինը վերջապես ըմբոստացել էր, և ամուսինն իր բռնկուն գործողությունների թիրախ էր դարձրել երեխաներին՝ զայրույթից մինչև ծեծ գործողությունների լայն համակարգ կիրառելով: Անգամ այս դեպքում կինը երեխաների մեջ ըմբոստություն չէր սերմանում, այլ ամեն անգամ նրանց հորդորում էր չվիճել, հաշտվել, մի խոսքով՝ ընդունել հոր ոչ նորմալ պահվածքը և ենթարկվել. ախտածին «զոհի» դեր, որի պարագայում անձն անընդմեջ ստանձնում է ենթակայի վիճակ և դրսևորում այն՝ որպես պաշտպանական մեխանիզմ: Ի վերջո զույգն ամուսնալուծվել էր, ամուսինը հեռացել էր, իսկ չորս

երեխաները մեծացել էին՝ ախտահարված վարքագծի «նորմերին» բնորոշ յուրովի դրսևորումներով: Փաստորեն նրանց համար լռելն ու ենթարկվելը, անկախ ամեն ինչից (ինչ էլ որ աներ հայրը, ընդհուպ՝ ծեծ), դարձել էր կենսակերպ, մի հանգամանք, որն անհետևանք չէր մնացել նաև սեփական ընտանեկան փոխհարաբերություններում: Այդ երեխաներից մեկը զրույցի ընթացքում պատմեց, որ այնքան էր ազդված, հիասթափված, խեղճացած և վախեցած, որ միայն ուզում էր փախչել ընտանիքից, գնալ: Դա էր պատճառը, որ առանց երկար-բարակ մտածելու ամուսնացել էր մի տղայի հետ, որի ընտանիքը, ինչպես պարզվել էր հետո, իրենց ընտանիքի նման խնդրահարույց էր: Ուղղակի նա այնքան էր ուզում փախչել «այդ տնից», որ աշխարհի մնացած բոլոր ընտանիքներն իր աչքին իդեալական էին թվում: Աղջիկը պատմում էր, որ լռելը և, շատ դեպքերում, ոչինչ չպատասխանելն իր կողմից կիրառվում են նաև իր նորօրյա ընտանիքում (դրանք դարձել են նրա վարքագծի ամրագրված ձև), սակայն փորձում է վերագտնել իրեն, իր եսը, այն, ինչ կորցրել էր հայրական տանը: Ընտանիքի մայրը զրույցի ժամանակ շեշտում էր, որ ի սկզբանե իր վարքագծով ցանկացել է այնպես անել, որ «լավ լինի երեխաների համար, որ լռեն և չծեծվեն, որ չպայքարեն և չըմբուտանան», սակայն հիմա է հասկանում, որ իր ստանձնած դերի մի մասի պարտադրանքը երեխաներին՝ նրանց դժբախտ է դարձրել յուրովի, և այդ հիշողություններն ու ահուսարսափի տարիները նրանց հիշողությունից պարզապես չի ջնջվում:

Սա դեռ մեկն է այն բազմաթիվ ընտանիքներից, որոնց մեջ ապրող երեխաները ակամա հայտնվում են ախտահարված փոխհարաբերությունների պարտադրված թատերաբեմում: Երեխաների պարագայում հիմնականում ախտահարված փոխհարաբերությունների տիրույթ է առաջանում նաև այն դեպքում, երբ ծնողները որոշում են կրկին ամուսնանալ: Այս հարցում վիճակագրությունը հստակ չի սահմանում՝ արդյոք կանա՞յք են ավելի շատ կրկնակի ամուսնանում, թե՞ տղամարդիկ: Ակնհայտ է, որ երկու դեպքում էլ երեխան նոր հարված է ստանում: Միշտ չէ, որ աղջիկը կամ տղան հեշտությամբ մտերմանում են խորթ մոր կամ հոր հետ. դա թերևս տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ երեխան վաղ տարիքում է հայտնվել ամուսնալուծության թիրախում: Հայրը կամ մայրը երեխային համոզում, պարտադրում, երբեմն ստիպում են ընդունել նոր ծնողին և նրան կոչել «հայր» կամ «մայր»: Գրեթե միշտ այդ պարտադրված դերը երեխան չի ընդունում և լուռ կամ բացահայտ պայքար է մղում: Այս պայքարն ախտածին է դառնում այն ժամանակ, երբ երեխան, չցանկանալով սկսում է յուրացնել ու

դրսևորել «ենթակայի» վարքի նորմեր, որոնք էլ ընտանիքում առաջացնում են ախտահարված փոխհարաբերություններ:

Ընտանիքներից մեկում հանդիպեցինք նման երևույթի. մայրը, սոցիալական պահանջների դրդմամբ, ամուսնացել էր երկրորդ անգամ՝ ընտրելով այնպիսի տղամարդու, ով իր նախորդ ռուս կնոջից ուներ չորս երեխա: Ամուսինը նոր կնոջը պարտադրել էր առաջնահերթությունը տալ իր (նախկին կնոջից ունեցած) երեխաներին, ամեն հարցում միշտ ընդունել նրանց գերակայությունը, իսկ կնոջ տղային ստիպել էին մշտապես լինել հետին պլանում, ընդ որում, դա պարտադրել էր անձամբ մայրը՝ խորթ հոր պահանջով: Ստացվում է ախտածին դերերի հոծ բազմություն. մայր - ախտահարված վարքագիծ - երեխա՝ համարժեք ախտածին դերակատարում: Փաստորեն ստացվում է, որ մասնավորապես ախտածին դերերով պայմանավորված ամուսնալուծությունները դեռևս ավարտ համարել չի կարելի, քանի որ ախտածին դերերն իրենց նորովի դրսևորումներն են ունենում նաև ամուսնալուծված զույգերի հետագա կյանքում:

Իհարկե, չենք կարող պնդել, որ բոլոր կրկնամուսնություններն են ավարտվում ախտահարված փոխհարաբերությունների եզրագծում. լինում են կրկնամուսնություններ, որոնք երեխաների համար անգամ երջանիկ ընտանիքի զգացում են ապահովում: Սա, իհարկե, տեղի է ունենում այն դեպքերում, երբ նորաստեղծ ընտանիքի նոր անդամը (հայրը, մայրը) դրսևորում է ծով համբերություն, սեր, քնքշանք, խնամք և հոգատարություն է ցուցաբերում երեխայի հանդեպ:

Սակայն, ըստ հետազոտությունների տվյալների, այս ընտանիքները մեծամասնություն կամ օրինաչափություն չեն համարվում, այլ ավելի շատ որակվում են որպես փոքրամասնություն:

Բերենք նաև մի հետաքրքիր փաստարկ, համաձայն որի՝ միշտ չէ, որ երեխաների հետագա ճակատագրում երկու ծնողների ներկայության ապահովումը պարտադիր է:

Եթե 20-րդ դարի կեսերից կատարվող հետազոտությունների ընթացքում հարցվածների մեծամասնությունը համոզված էր, որ ամուսնալուծված զույգերն առանձին ի վիճակի չեն երեխայի համար նորմալ դաստիարակություն ապահովել, ապա ներկայումս վերոբերյալ տեսակետը տիրապետող համարել չի կարելի:

Նորօրյա հետազոտությունները փաստում են, որ ծնողներն առանձին ի վիճակի են զբաղվել երեխաների առօրյա դաստիարակությամբ և հոգալ նրանց կարիքները,



Եթե կարողանան սեփական վարքագիծը և դերը համապատասխանեցնել երեխաների մտածելակերպին ու պահանջներին, լսել նրանց և կարողանալ ճիշտ վերլուծել պահանջների այն «բազմությունը», որը տիրապետող է երեխայի մոտ:

### **2.3. Ամուսնալուծություն և ծնողներ, հարազատներ, շփումների սակավություն, քննադատական վերաբերմունք**

Ամուսնալուծությունների թվի ավելացման կարևոր հետևանքներից մեկը ոչ լրիվ այսինքն՝ միայն մեկ ծնող ունեցող ընտանիքների թվի աճն է: Քիչ չեն այն անձինք, ովքեր ամուսնալուծվելուց հետո այլևս չեն ցանկանում ամուսնանալ և կամ մենակ են ապրում, կամ ապրում են իրենց երեխաների հետ: Նման միտումներ դիտվում են հատկապես ԱՄՆ-ում և Եվրոպական երկրներում, ուր ամուսնալուծվածները հազվադեպ են վերադառնում ապրելու իրենց ծնողների մոտ և ձգտում են ապրել առանձին [48, Էջ 263-268]:

Սակայն նույնը չենք կարող ասել ողջ աշխարհի կտրվածքով և հատկապես մեր երկրի մասին, ուր, մեծամասամբ, ապրելու այլ տեղ չունենալով կամ պարզապես տնտեսապես կախյալ վիճակում գտնվելով՝ ամուսնալուծվածները գնում են ապրելու ծնողների կամ, որոշ դեպքում էլ, հարազատների հետ՝ իրենց հետ տանելով նաև երեխաներին:

Այդպիսի ընտանիքներում բազմաթիվ տնտեսական, բարոյական և հոգեբանական նոր խնդիրներ են ծագում, որոնք ինքնին ախտածին դերերի ուղղակի և անուղղակի դրսևորումներ են: Մասնավորապես տնտեսական դժվարություններ առաջանում են այն դեպքերում, երբ ամուսնալուծված կնոջ կամ տղամարդու (հիմնականում՝ կնոջ) ծնողները սոցիալապես անապահով են կամ ապահովվածությամբ միջին վիճակում են և ինչ-որ չափով հարմարվել են իրենց ապրելակերպին, վերաբաշխել դերերն ու պարտականությունները: Եվ ահա գալիս է՝ թեկուզև իրենց շատ հարազատ, բայց և այնպես, կարիքի մեջ հայտնված, սոցիալական նորմալ պայմաններ ակնկալող մի անձնավորություն, որն ունի նաև նույն պահանջներով երեխա կամ երեխաներ: Ընտանիքի անդամներն իրենց «նոր» անդամին սկզբում ընդունում են սիրով, ջեր-

մությամբ և մեծ հոգատարությամբ, սակայն շուտով վրա է հասնում այն շրջանը, երբ «կարիքն սկսում է գերակայել», և սկսվում են, մեղմ ասած, դժգոհություններն ու լարվածությունը: Ամուսնալուծված կնոջ (կամ տղամարդու) վրա ենթագիտակցորեն բարդում են ընտանիքի անդամների ողջ բացասական ազդակները՝ նրան համարելով լրացուցիչ հոգս: Այս երևույթը առավել ակնհայտ է դառնում հատկապես այն ժամանակ, երբ կինը (տղամարդը) չի աշխատում, իսկ նախկին ամուսինը, ով պարտավոր է ֆինանսապես ապահովել նրան, կամ չի օգնում, կամ էլ օգնում է ոչ բավարար չափով: Ստացվում է փակ շղթա. լարված փոխհարաբերություններում մեղավորի փնտրտուք և «քավության նոխազ» ախտածին դեր, հետևաբար նաև ախտածին փոխհարաբերություններ:

Կինը (տղամարդը) անընդհատ փորձում է արդարանալ, որ իբր ինքը մեղավոր չէ ամուսնալուծվելու պարագայում, որ աշխատանք կգտնի (եթե աշխատում է, ապա՝ կգտնի բարձր վարձատրվող աշխատանք), որ կստիպի նախկին ամուսնուն ֆինանսական օգնություն տրամադրել և այլն: Ծնողի բացասական հոգեվիճակը և ախտածին՝ «քավության նոխազի» դերը չեն կարող չանդրադառնալ երեխաների հոգեվիճակի վրա, լարվածության մեջ չզգել և նրանց նոր դերերը չդարձնել ախտածին: Երեխաները որոշակի տարածական և էմոցիոնալ հեռավորության վրա են գտնվում բոլորից, դառնում մոր՝ «քավության նոխազ» դերի այսպես կոչված շարունակողները: Այսպես կարող է շարունակվել շատ երկար ժամանակ, մինև որ կինը (տղամարդը) կամ ընտանիքի որևէ անդամը չգտնեն լուծման այլընտրանքային տարբերակներ, այլապես ախտածին դերային անհամատեղելիության պայմաններում խաթարված փոխհարաբերությունները շարունակական բնույթ կկրեն [20, էջ 299-303]:

Ենթադրում ենք, որ նման ընտանիքների խնդրահարույց իրավիճակների հաղթահարումը մեծապես կախված է ռեֆերենտային խմբերի վերաբերմունքից և այլ գործոններից: Տվյալ դեպքում, բացի ընտանիքից, ռեֆերենտային խմբեր են համարվում նաև ընտանիքի մերձավոր հարազատները, ովքեր ևս որոշակի դերակատարում ունեն ամուսնալուծված զույգերի հետագա ճակատագրում: Նրանք ևս ստանձնում են որոշակի դերեր և փոխհարաբերությունների նոր ձևեր, որոնք մինչ այդ չէին դրսևորել:

Առանձնապես մոտ հարազատներն ու բարեկամները (երկու կողմից) նախ փորձում են ստանձնել միջնորդի դերը, որը առաջին հայացքից թվում է անմեղ, ընդամենը բարի գործ կատարելու միտում:

Սա տեղի է ունենում այն դեպքերում, երբ նախկին զույգերը, նրանց ծնողները այլևս չեն կարողանում հաշտության եզրեր գտնել, և հարազատները փորձում են սատարել նրանց: Սակայն այս փորձերը ոչ միշտ են հաջողությամբ ավարտվում, քանի որ ոչ բոլոր ամուսնալուծվածներն են հետադարձ ճանապարհի որոնում, և նույնիսկ լինում են այնպիսիք, ովքեր մեղադրում են հարազատներին և բարեկամներին այդ նոր դերերի ստանձման և դերակատարման համար:

Ահա այստեղ է, որ սկսվում է դերի պաթոլոգիկ դրսևորումը, այն է՝ վիրավորվածությունը, որ իրենց բարի նկրտումները չգնահատվեցին, որ «այսօրվա երիտասարդները» ոչ ոքի չեն հարգում, որ ...

Կարելի է անվերջ թվարկել, քանի որ նրանք սկսում են արդեն ոչ թե հաշտեցնել, այլ նմանօրինակ պահվածքի համար անգամ պախարակել նախկին զույգին (զույգերին) և նույնիսկ խզել կապերը նրանց հետ, նրանց ողջ ընտանիքի հետ: Սկսվում է ախտածին դերային փոխհարաբերությունների նոր շղթա. բարեկամները և հարազատները կնոջը կամ տղամարդուն մեղադրում են «վաղեմի» փոխհարաբերությունների խզման պատճառ դառնալու, իրենց արածը չհարգելու մեջ:

Կինը (տղամարդը) ապրում է նոր խնդրահարույց իրավիճակ, նոր ներքին ճգնաժամ, որն էլ ավելի է սրում փոխհարաբերություններն ընտանիքի անդամների հետ: Ուզում ենք կրկին փաստել, որ վերոգրյալ դրսևորումները տեղի չեն ունենում (կամ գրեթե տեղի չեն ունենում) այն ընտանիքներում, որտեղ հարգում և միանգամայն ընդունելի են համարում ամուսնալուծվածի կայացրած որոշումները և ամեն կերպ օգնում, օժանդակում են նրան, անգամ պաշտպանում ցանկացած հարազատի կամ բարեկամի կարծիքներից, եթե դրանց հետ համաձայն չէ ամուսնալուծված կինը (տղամարդը):

### **2.3.1 Ամուսնալուծություն և շրջապատող միջավայր. հետագա զարգացման առանձնահատկությունները**

Որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, ամուսնալուծության ախտածին պատճառահետևանքային կապերի «թատերաբեմում» հայտնվում են նաև ամուսնա-

լուծվածներին շրջապատող մարդիկ, ովքեր ևս որոշակի դերակատարում են ունենում նրանց ճակատագրում:

Հատկապես նրանք, ովքեր մշտապես շփվում են կնոջ (տղամարդու) հետ (աշխատակից, հարևան, ընկեր-ընկերուհի և այլն), սկսում են աշխուժորեն քննարկել այդ ամուսնալուծության փաստը, տալիս սեփական գնահատականներ, «ճիշտ և սխալ» փնտրում և այդ ինֆորմացիան հասցնում հասցեատերերին, տվյալ դեպքում՝ ամուսնալուծված զույգերին: Այդ ինֆորմացիան իհարկե միշտ չէ, որ օբյեկտիվ և ամբողջական է հասնում ամուսնալուծվածներին, ներկայացվում է նաև սեփական վերլուծությամբ՝ հաճախ չափազանցված, և նրանց մղում է նոր խնդիրների ոլորտ: Զույգերից յուրաքանչյուրն էլ ապրում է ներքին լարվածության և ճնշվածության զգացում, քանի որ հանրության կողմից սեփական սոցիալական նոր կարգավիճակի քննարկումը միշտ չէ, որ արդյունավետ է և ցանկալի:

Նմանատիպ քննարկումներն ախտահարված փոխհարաբերություններ են ստեղծում հատկապես այն դեպքում, երբ հասնում են երեխաներին, ովքեր իրենց հերթին ապրում են ներքին ճգնաժամ, հիասթափության և լարվածության պահեր:

Այս երևույթը ակամա հիշեցնում է ախտածին համարվող «պարադոքսալ հաղորդակցության երևույթը», իսկ պարադոքսը, ինչպես հայտնի է, այն երևույթը կամ իրադարձությունն է, որը, ըստ մեզ հայտնի օրենքների և կանոնների, չպետք է տեղի ունենար, բայց առկա է, տեղի է ունեցել: Սա նշանակում է, որ հաղորդակցության մեկ ուղիով երկու և իրար հակասող (բացասող) հաղորդումներ են տրվում, որոնցից յուրաքանչյուրը պետք է ընկալվի որպես ճիշտ: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ վրա իրար հակասող հաղորդումներն ու ինֆորմացիայի մեկը մյուսին բացառող բովանդակությունները չեն կարող ամուսնալուծված զույգերի միջև ախտածին փոխհարաբերություններ չստեղծել և լարվածության մեջ չպահել նրանց [20, էջ 300-304]:

Ոչ լրիվ ընտանիքներն ուսումնասիրող մասնագետները (Ա. Շորր, Ն. Սմելզեր և ուրիշներ) փորձում են քննադատորեն ներկայացնել վերոնշյալ երևույթների հակադարձ տարբերակը: Նրանք գտնում են, որ ներկայումս հասարակական միջավայրը և շրջապատը ավելի հանդուրժող և լոյալ են վերաբերվում ամուսնալուծվածներին, նրանց համար ստեղծում սոցիալական բարենպաստ պայմաններ: Այս վիճակը, ըստ հեղինակների, նույնպես կարող է ծնունդ տալ ախտածին դերային փոխհարաբերությունների, քանի որ լուրջ վտանգ է ծագում, որ ամուսնալուծությունների թիվը կարող է

աճել, ավելի շատ երեխաներ կարող են մնալ մեկ ծնողի խնամակալության տակ կամ ծնվել պաշտոնապես չամուսնացած ծնողներից, միաժամանակ կպակասի նաև կրկնամուսնությունների թիվը [73, էջ 418]:

### ԳԼՈՒԽ 3

## ՆԵՐՇՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԱԽՏԱԾԻՆ ԴԵՐԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 3.1. Հետազոտության մեթոդները, կազմակերպումը և նկարագրությունը.

Հետազոտությունը մեր կողմից կազմակերպվել և իրականացվել է մի շարք մեթոդների (դիտում, զրույց, թեստավորում, տվյալների մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն) համակարգման եղանակով: Կիրառվել են մասնավորապես հետևյալ մեթոդիկաները՝ «Ամուսնությամբ բավարարվածության հարցարան» (Վ. Վ. Ստոլին [74]), «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշում» մեթոդիկան (Կ. Թոմաս, [5]), «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան (Ա. Ն. Վոլկովա [32]), «Ընտանիքի կինետիկ պատկերը» թեստը (Ռ. Բեռնս և Ն. Կաուֆման [5]), «Հետազոտվողի միջանձնային հարաբերությունների ախտորոշումը անավարտ նախադասությունների միջոցով» մեթոդիկան (ըստ Ս. Արզումանյանի [5]):

Հետազոտությանը մասնակցել են փաստացի ամուսնալուծության մեջ գտնվող 100 և առողջ 50 ընտանիքներ, ինչպես նաև հանրակրթական չորս դպրոցների թվով 140՝ վերոգրյալ ընտանիքներում բնակվող աշակերտներ, որոնք սովորում էին յոթից տասներկուերորդ դասարաններում:

Ընտանիքներն ընտրվել և հետազոտվել են բազմագործոն դերային մոտեցման սկզբունքով, կատարվել է դերերի բազմության հիմնական գործառույթների ուսումնասիրում: Սա նշանակում է, որ հետազոտությունների կատարման ողջ ընթացքում աշխատանքները կառուցվել և իրագործվել են՝ հիմքում ունենալով անձի (զուգընկերոջ) ակտիվ դերային վարքի նկատմամբ ունեցած սպասումների, դրանց արդարացվածության կամ ապարդարացման դրույթները և, ըստ այդմ էլ, հետազոտվել են ինչպես ամուսնալուծված, այնպես էլ առողջ ընտանիքներն ու կատարվել են համապատասխան համեմատական վերլուծություններ: Նշենք, որ ընտանեկան

գործառույթների իրագործման ժամանակ անձի կողմնորոշումը զուգընկերոջ ակտիվ դերային վարքի նկատմամբ «դերային սպասումներ» են, սեփական դերային վարքի նկատմամբ՝ «դերային հավակնություններ»:

Թեստավորման շրջանում և ընդհանրապես հետազոտությունների կատարման ողջ ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել հետազոտվողների անհրաժեշտ չափանիշների որակական հսկողության կազմակերպման վրա, իսկ հետազոտության կազմակերպումն իրականացվել է՝ ելնելով դրված խնդիրների լուծման առանձնահատկություններից: Ստացված արդյունքների հավաստացիությունն ապահովվել է հետազոտական ընթացակարգերի և հնարքների բազմազանությամբ, նրանց փոխկապակցվածությամբ, փոխլրացվողականությամբ, ինչպես նաև տվյալների մշակման և վերլուծության մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով:

Հետազոտություններն անցկացվել են 2011-2014 թվականներին, ընդ որում, դրանցում փորձ է արվել ապահովել վերոնշյալ ընտանիքների գործառույթների լայն շրջանակների ակտիվ ներգրավվածություն:

Փորձարարական հետազոտություններն անցկացվել են երկու փուլով: Առաջինում գնահատվել և որոշվել են հիմնախնդրի՝ ախտածին դերային փոխհարաբերությունների հետազոտման համար ելակետ ընտրված ընտանիքները, մյուս հետազոտվողների իրազեկվածության աստիճանը, ընդ որում, գնահատվել և որոշվել է նաև ընդհանուր դերային սպասումների և հավակնությունների մասին իրազեկվածության աստիճանը: Իսկ երկրորդ փուլում, արդեն հստակեցնող դիագնոստիկ (ախտորոշիչ) աշխատանքի ժամանակ, վերլուծվել է այն իրական պատկերը, որը ստեղծվել էր համապատասխան մեթոդիկաների կիրառման արդյունքում:

Սա նշանակում է, որ թե՛ դիտման, թե՛ հարցման մեթոդներով ստացված բանավոր տվյալները վերստուգվել և սանդղակավորվել են նաև տարբեր այլ մեթոդների կիրառմամբ: Ըստ այդմ՝ վերոգրյալ երկու փուլերով ընթացող հետազոտությունները ևս դասակարգվել են երեք հիմնական բաժիններով:

Առաջին բաժինն ընդգրկում է մեթոդիկաների ընտրությունն ու անցկացումը, որոնք հետազոտում և գնահատում են հիմնախնդրի արտահայտվածության աստիճանը:

Երկրորդ բաժինն ընդգրկում է թեստային հետազոտությունների անցկացման, վերլուծության, ինչպես նաև վերստուգիչ քննարկման արդյունքների համեմատական վերլուծությունը:

Երրորդ բաժինն ընդգրկում է վերոգրյալ երկու բաժինների կիրառման արդյունքում ստացված տվյալների մշակումը, ինչպես նաև այն ուղիները, հնարները և միջոցները, որոնք կնպաստեն հիմնախնդրի արագ հաղթահարմանը, կանխարգելմանը կամ հնարավորինս նվազեցմանը:

Աշխատանքի հետազոտական բաժնի համար ընտրվել են հետևյալ թեստերը.

1. Ա. Ն. Վոլկովայի «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան [32, էջ 110-116]:

2. Կ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկան» [5, էջ 211-213]:

3. Վ. Վ. Ստոլինի «Ամուսնությամբ բավարարվածության հարցարանը» [74]:

4. Ռ. Բեռնսի և Ն. Կաուֆմանի «Ընտանիքի կինետիկ պատկերը» խաղը [5, էջ 297-299]:

5. Ս.Արզումանյանի «Հետազոտվողի միջանձնային հարաբերությունների ախտորոշումը անավարտ նախադասությունների միջոցով» մեթոդիկան [5, էջ 300-301]:

Թեստերից յուրաքանչյուրն ուներ նպատակային ընտրություն:

1) Ա. Ն. Վոլկովայի «Դերային սպասումներ և հավակնություններ» [32, էջ 110-116] մեթոդիկան ներառված է այն համալիր ծրագրային թեստերի շարքում, որոնք օգտագործվում են ամուսնական զույգերի հետ տարվող աշխատանքում: Ամուսնական փոխհարաբերություններն, ըստ հեղինակի, մեծամասամբ կախված են ամուսնու և կնոջ՝ ընտանեկան արժեքների և դերային փոխհարաբերությունների մասին ունեցած պատկերացումներից և փոխհամաձայնության գալու ընկալունակության աստիճանից: Զույգերի դերային ադեկվատ (նորմալ) վարքագիծը մեծամասամբ կախված է դերային սպասումների համարժեքության (կնոջ և տղամարդու՝ զուգընկերոջ պարտականությունների կատարման աստիճանի վերլուծման դիրքորոշումների հանրագումարը)



դրսևորումներից և ամուսինների դերային կապվածությունից (զուգընկերներից յուրաքանչյուրի՝ ընտանեկան դերերի կատարման պարտականությունը):

Մեթոդիկան թույլ է տալիս որոշել.

1. Ամուսինների պատկերացումներն ընտանեկան կյանքում սեռական հարաբերությունների, ամուսնու և կնոջ անձնային ընդհանրության, ծնողական պարտականությունների, ամուսիններից յուրաքանչյուրի մասնագիտական հետաքրքրությունների, տնտեսա-կենցաղային սպասարկման, բարոյական և հուզական աջակցության, զուգընկերոջ արտաքին գրավչության նշանակության մասին: Այս ցուցանիշները, արտացոլելով ընտանիքի հիմնական գործառույթները, կազմում են ընտանեկան արժեքների սանդղակը (ԸԱՍ):

2. Ընտանեկան գործառույթներում իրենց դերերի ցանկալի տեղաբաշխման մասին ամուսինների ունեցած պատկերացումները, որոնք միավորված են դերային սպասումների և հավակնությունների սանդղակում (ԴՍՀՍ):

**Մեթոդիկայի նկարագրությունը:** «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան տղամարդկանց և կանանց համար նախատեսված յուրաքանչյուր տարբերակում պարունակում է 36 պնդում և բաղկացած է սանդղակից: Ամուսիններին առաջարկվում է ինքնուրույն ծանոթանալ պնդումների խմբին՝ համապատասխան իրենց սեռի, արտահայտել իրենց կարծիքը յուրաքանչյուր պնդման վերաբերյալ՝ օգտագործելով պատասխանների հետևյալ տարբերակները.

- Լիովին համաձայն եմ
- Ընդհանուր առմամբ դա ճիշտ է
- Դա այնքան էլ այդպես չէ
- Դա ճիշտ չէ

Մեթոդիկայի տեքստը բաժանվում է ընտանեկան արժեքների 7 սանդղակի, որոնց վերլուծության արդյունքում առանձնացվում է ամուսնական զույգերի դերային համապատասխանության 5 ոլորտ:

Ընտանեկան արժեքների բալերը գումարվում են առանձին՝ ըստ յուրաքանչյուր սանդղակի:

Առաջին երկու սանդղակի արդյունքները համարվում են ամփոփիչ և տեղափոխվում աղյուսակի վերջին սյունակ: Մնացած հինգ սանդղակների ամփոփիչ

բալերը հաշվարկվում են որպես բալերի կես գումար՝ ըստ «սպասումներ» և «հավակնություններ» սանդղակների:

*Ընդանեկան արժեքների սանդղակ*

1	Ինտիմ սեքսուալ		
2	Ամուսնու հետ անձնային նույնականացում		
3	Տնտեսակենցաղային	սպասումներ	հավակնություններ
4	Ծնողական-դաստիարակչական		
5	Սոցիալական ակտիվություն		
6	Հուզական-հոգեթերապևտիկ		
7	Արտաքին գրավչություն		

Դերային սպասումներ - ամուսնու և կնոջ դիրքորոշումն է՝ զուգընկերոջ կողմից ընտանեկան պարտականությունների ակտիվ կատարման առումով:

Դերային հավակնություններ - զուգընկերներից յուրաքանչյուրի անձնական պատրաստակամությունն է՝ կատարելու ընտանեկան դերերը:

Պատասխանները գնահատվում են հետևյալ կերպ.

«Լիովին համաձայն եմ»՝	3 բալ
«Ընդհանուր առմամբ, դա ճիշտ է»՝	2 բալ
«Դա այնքան էլ այդպես չէ»՝	1 բալ
«Դա ճիշտ չէ»՝	0 բալ

Այսպիսով, ըստ սանդղակի, նվազագույն գումարային բալը զրո է, իսկ առավելագույնը՝ ինը:

Ցածր գնահատականներ՝	0-ից 3 բալ
Միջին գնահատականներ՝	4-ից 6 բալ
Բարձր գնահատականներ՝	7-ից 9 բալ

*Ընդանեկան արժեքների սանդղակների մեկնաբանություն.*

1. Ինտիմ սեքսուալ սանդղակը (պնդում № 1-3) ամուսնության մեջ սեռական հարաբերությունների նշանակալիության սանդղակն է:

Բարձր գնահատականները նշանակում են, որ ամուսինը/կինը սեռական ներդաշնակությունը համարում է ամուսնական երջանկության կարևոր պայման, իսկ ցածր գնահատականները մեկնաբանվում են որպես ամուսնության մեջ սեռական հարաբերությունների թերագնահատում:

2. Ամուսնու/կնոջ հետ անձնային նույնականացման սանդղակը (պնդում N° 4-6) արտացոլում է ամուսնական փոխհարաբերություններում ամուսնու/կնոջ անձնական նույնականացման մակարդակը:

3. Տնտեսակենցաղային սանդղակը չափում է ամուսինների դիրքորոշումը ընտանիքի տնտեսական-կենցաղային պարտականությունների իրացման հանդեպ: Այս սանդղակը, ինչպես և բոլոր հաջորդները, ունեն երկու ենթասանդղակ՝ դերային սպասումներ, դերային հավակնություններ:

*Դերային սպասումներ* ենթասանդղակում (պնդում N° 7-9) գնահատականները դիտարկվում են որպես զուգընկերոջից կենցաղային հարցերի ակտիվ լուծման սպասման աստիճան:

Ինչքան բարձր է գնահատականն ըստ դերային սպասումների սանդղակի, այնքան ամուսինը/կինը կենցաղի կազմակերպման մեջ մյուսի մասնակցության նկատմամբ շատ պահանջներ ունի:

*Դերային հավակնություններ* ենթասանդղակը (պնդում N° 22-24) արտացոլում է տնային տնտեսության վարման մեջ սեփական ակտիվ մասնակցության մասին դիրքորոշումը: Ընդհանուր գնահատականն ըստ սանդղակի դիտարկվում է որպես ընտանիքի կենցաղային կազմակերպման նշանակալիության մասին ամուսնու/կնոջ ունեցած վերաբերմունքը:

4. Ծնողական-դաստիարակչական սանդղակը թույլ է տալիս դատել ամուսինների՝ իրենց ծնողական պարտականությունների հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին: Դերային սպասումների ենթասանդղակը (պնդում N° 10-12) ցույց է տալիս ամուսնու/կնոջ դիրքորոշումների արտահայտվածությունը ամուսնական զուգընկերոջ ակտիվ ծնողական դիրքի հանդեպ:

Դերային հավակնություններ ենթասանդղակը (պնդում N° 25-27) արտացոլում է ամուսնու/կնոջ կողմնորոշումները երեխաների դաստիարակության գործում սեփական պարտականությունների հանդեպ:

Սանդղակի ընդհանուր գնահատականը դիտարկվում է որպես նշանակալիության ցուցանիշ ամուսնու/կնոջ համար՝ դեպի ծնողական գործառույթները: Որքան բարձր է սանդղակի գնահատականը, այնքան ավելի մեծ նշանակություն է տալիս ամուսինը/կինը հոր-մոր դերին և ծնող լինելն այնքան շատ է համարում հիմնական արժեք:

5. Սոցիալական ակտիվության սանդղակն արտացոլում է արտաքին սոցիալական ակտիվության (մասնագիտական, հասարակական) հանդեպ նշանակալիության դիրքորոշումը՝ ուղղված ընտանեկան հարաբերությունների կայունությանը: Դերային սպասումներ ենթասանդղակը (պնդում N<sup>o</sup> 13-15) չափում է ամուսնու/կնոջ կողմնորոշման աստիճանը առ այն, որ զուգընկերը պետք է ունենա մասնագիտական լուրջ հետաքրքրություններ, ապրի հասարակական ակտիվ կյանքով:

Դերային հավակնություններ ենթասանդղակը (պնդում N<sup>o</sup> 28--30) ցույց է տալիս ամուսնու/կնոջ սեփական մասնագիտական պահանջմունքների արտահայտվածությունը: Սանդղակի ընդհանուր գնահատականն արտացոլում է ամուսնու/կնոջ համար հասարակական հետաքրքրությունների նշանակալիությունը, որոնք ամուսինների միջանձնային փախազդեցության ընթացքում հիմնական արժեքներ են:

6. Հուզական-հոգեթերապևտիկ սանդղակն արտահայտում է ամուսնության հուզական-էմոցիոնալ գործառույթի նշանակալիության հանդեպ դիրքորոշումը: Դերային սպասումներ ենթասանդղակը (պնդում N<sup>o</sup> 16-17) չափում է ամուսնու/կնոջ կողմնորոշման աստիճանը այն հարցում, թե ամուսնական զուգընկերն իր վրա կվերցնի հուզական առաջնորդի դերը այնպիսի գործառույթներում, ինչպիսիք են ընտանիքում հոգեբանական մթնոլորտի ստեղծումը, բարոյական և հուզական աջակցության ցուցաբերումը:

Դերային հավակնություն ենթասանդղակը (պնդում N<sup>o</sup> 31-33) ցույց է տալիս ամուսնու/կնոջ ձգտումը՝ լինելու ընտանեկան «հոգեթերապևտ»:

Սանդղակի ընդհանուր գնահատականը ամուսնու/կնոջ համար դիտարկվում է որպես ընտանիքի անդամների փոխադարձ բարոյական և դյուրազգաց աջակցության, նշանակալիության ցուցանիշ, ամուսնության հանդեպ կողմնորոշումը՝ որպես մի այնպիսի միջավայրի, որ նպաստում է հոգեբանական լիցքաթափմանը և կայունացմանը:

7. Արտաքին գրավչության սանդղակն արտացոլում է ամուսնու/կնոջ դիրքորոշումը արտաքին տեսքի նշանակալիության, դրա՝ ժամանակակից նորաձևության պահանջներին համապատասխանության մասին:

Դերային սպասումներ ենթասանդղակը (պնդում N° 19-21) արտացոլում է ամուսնու/կնոջ՝ արտաքնապես գրավիչ զուգընկեր ունենալու ցանկությունը: Դերային հավակնություններ ենթասանդղակը (պնդում N° 34-36) ցույց է տալիս սեփական գրավչության հանդեպ դիրքորոշումը, նորաձև գեղեցիկ հագնվելու ձգտումը: Ընդհանուր գնահատականը ամուսնու/կնոջ՝ դեպի արտաքին տեսքի կողմնորոշման ցուցանիշն է:

Արդյունքների մշակումը և վերլուծությունն իրականացվում են 3 փուլով.

1. Ամուսնու և կնոջ ընտանեկան արժեքների, դերային սպասումների և հավակնությունների սանդղակի ցուցանիշների անհատական վերլուծություն.

2. Ամուսնու և կնոջ ընտանեկան արժեքների և դերային դիրքորոշումների մասին պատկերացումների համեմատական վերլուծություն.

3. Ամուսնական զույգերի դերային ադեկվատության աստիճանի որոշում ընտանիքում միջանձնային փոխազդեցության 5 ոլորտներում (3-7 ԸԱՍ): Արդյունքում ստացվում են տվյալներ, որոնք՝ ա) բնութագրում են ամուսնու/կնոջ պատկերացումները ընտանեկան արժեքների մասին: Ըստ ընտանեկան արժեքների սանդղակի՝ որքան ստացված բալլը մեծ է, այնքան նշանակալի է ամուսինների համար ընտանիքի կենսագործունեության տվյալ միջավայրը. բ) արտացոլում են ամուսնու/կնոջ կողմնորոշումը դեպի ամուսնական զուգընկերոջ ակտիվ դերային վարքը (դերային սպասումներ) և ընտանիքում սեփական ակտիվ դերը՝ ըստ ընտանեկան գործառույթների իրացման (դերային հավակնություններ). գ) արտացոլում են ընտանեկան արժեքների համաձայնեցվածությունը և դերային համապատասխանեցումը, որը հիմնականում բնորոշվում է տղամարդու ընտանեկան արժեքների սանդղակի և կնոջ ընտանեկան արժեքների սանդղակի բալերի ցուցանիշների տարբերությամբ:

Որքան փոքր է տարբերությունը, այնքան մեծ է ամուսինների պատկերացումների համաձայնեցվածությունը ընտանիքի կենսագործունեության առավել նշանակալի ոլորտների վերաբերյալ:

Մինչև 3 բալ տարբերությունը չի առաջացնում խնդրահարույց փոխհարաբերություններ, իսկ 3 բալից ավելին վկայում է ամուսինների կոնֆլիկտայնության բավականին բարձր աստիճանի մասին:

Վերլուծելով ամուսնու և կնոջ ընտանեկան արժեքների համաձայնեցվածության աստիճանը՝ անհրաժեշտ է շեշտադրել այն ընտանեկան արժեքները, որոնք բնութագրվում են ամենաքիչ համընկնումով, քանի որ դրանց ոչ համաձայնեցվածությունը ամուսնական զույգի դերային անհամապատասխանության պատճառներից մեկն է: Ամուսնական զուգընկերների սպասումների և հավակնությունների ոչ համաձայնեցվածությունը նաև ընտանիքում միջանձնային հարաբերությունները ապակայունացնող կոնֆլիկտաձին գործոն է:

Վերլուծելով ամուսնական զույգերի պատկերացումների առանձնահատկությունը ընտանեկան արժեքների նշանակալիության մասին՝ անհրաժեշտ է փաստել, որ ամուսնու և կնոջ դիրքորոշումները ըմտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտների վերաբերյալ կարող են ունենալ իդեալական բնույթ, սակայն չհամապատասխանել ամուսինների իրական դերային վարքին:

Ընդամին՝ ամուսնու և կնոջ դերային վարքի ադեկվատությունը կախված է ամուսինների դերային սպասումների և դերային հավակնությունների համապատասխանությունից:

2) Կ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկա» թեստը (ադապտացիան՝ Ս. Արզումանյանի) [5, էջ 211-213], հնարավորություն է ընձեռում բացահայտել կոնֆլիկտային իրավիճակներում վարքի համապատասխան ձևերի դրսևորման առանձնահատկությունները:

Թեստը բաղկացած է 30 պնդումից, որոնք իրենց հերթին բաժանվում են *ա)* և *բ)* ենթապնդումների: Մեթոդիկան ներառում է 5 հիմնական ոլորտ, որոնցից յուրաքանչյուրի անհատական վերլուծությունը տեսանելի է դարձնում անհատի կոնֆլիկտայնության աստիճանը բախումնային իրավիճակներում: Այդ հիմնական ոլորտներն են՝ մրցակցություն, համագործակցություն, փոխզիջում, խուսափում, հարմարում:

Թեստի վերլուծությունը կատարվում է ըստ աղյուսակի բանալու համընկնումների քանակական վերլուծության՝ յուրաքանչյուր սանդղակի համար առանձին կարգով:

Թեստի կիրառման ընթացքում մեր առջև նպատակ էինք դրել բացահայտելու կոնֆլիկտային իրավիճակներում ամուսնական զույգերի վարքի համապատասխան ձևերի դրսևորման առանձնահատկությունները, հետազոտելու դրանք հատկապես դերերի բախման և անհամաձայնությունների, տարաձայնությունների առաջացման ժամանակ: Մեր առջև խնդիր էինք դրել պարզելու, թե ամուսիններից և՛ կինը, և՛ տղամարդը ինչպիսի ադեկվատ վարք էին դրսևորում դերային բախումների կիզակետում, որ դեպքերում և ինչ հանգամանքներում էին դերային բախումները վերաճում ճգնաժամերի, ճգնաժամերը՝ նոր, սրված, ախտահարված փոխհարաբերությունների, վերջիններս էլ՝ ախտածին դերերի:

Թեստն անցկացվել է անհատական տարբերակով, կանանց և տղամարդկանց առանձնության սկզբունքով: Կանանց քանակական տարբերությունը տղամարդկանց նկատմամբ որոշակիորեն բարձր էր, քանի որ աշխատանքների կատարման ողջ ընթացքում տղամարդիկ դժվարությամբ էին համագործակցում:

3) Վ. Վ. Ստոլինի «Ամուսնությամբ բավարարվածության հարցարան» մեթոդիկան նախատեսված է ամուսնությամբ բավարարվածության-անբավարարվածության, փոխհամաձայնության-տարաձայնության աստիճանների արագ ախտորոշման համար: Այն հնարավորություն է ընձեռնում կարճ ժամանակահատվածում հետազոտել վերոգրյալ հատկանիշները և կատարել համապատասխան եզրահանգումներ:

Այս մեթոդիկան ընդգրկում է 24 պնդում, որոնք բաժանված են 3 հիմնական մոտեցումների.

- ա) ճիշտ է,
- բ) դժվարանում եմ պատասխանել,
- գ) ճիշտ չէ:

Թեստի արդյունքները բացահայտվում են բանալու հետ համընկնումների կամ անհամապատասխանության վերլուծության միջոցով, և հնարավորություն է ընձեռնվում հետազոտողին իր առջև դրված խնդիրը կամ խնդիրները ուսումնասիրել յոթ հնարավոր տարբերակներով, որոնք ներկայացնում ենք ստորև.

1. 0-16 միավոր - միանգամայն անբարենպաստ ընտանիքներ
2. 17-22 միավոր - անբարենպաստ ընտանիքներ
3. 23-26 միավոր - ավելի շուտ անբարենպաստ ընտանիքներ

4. 27-28 միավոր- անցումային ընտանիքներ
5. 29-32 միավոր - ավելի շուտ բարենպաստ ընտանիքներ
6. 33-38 միավոր - բարենպաստ ընտանիքներ
7. 39-48 միավոր - միանգամայն բարենպաստ ընտանիքներ

Թեստի կատարման ընթացքում մեր առջև դրել էինք երկու հիմնական նպատակ. նախ վերլուծել զույգերի պատկերացումները ամուսնության, ընդհանրապես ընտանիքի, վերջինիս հիմնական գործառույթների, դերային փոխազդեցության և բաշխման վերաբերյալ, որն իրագործեցինք թեստի անցկացումից առաջ՝ զրույցի միջոցով (խնդիրը՝ սպասումների և հավակնությունների մակարդակի արդարացումը կամ ապարդարացումը համեմատական վերլուծության ենթարկելն էր, մի դրույթ, որը թեստի շրջանակներում թույլատրվում էր). այնուհետև թեստի անցկացման միջոցով արդեն պատկերավոր վերլուծել, թե որքանով են արդարացված ընտանիքի, դերային և ներդերային հարաբերությունների վերաբերյալ կանանց և տղամարդկանց սպասումները, որքանով չեն արդարացվել ակնկալիքները, հատկապես որ բնագավառն է առավել խնդրահարույց եղել և առաջացրել անհամաձայնություն, դերային բախումներ, լարված և ճգնաժամային փոխհարաբերություններ միմյանց, երեխաների և շրջապատողների միջև, առաջացրել ավտոածին դերային փոխհարաբերություններ և արդյունքում փաստացի կամ հուզական ամուսնալուծություն:

4) Ռ. Բեռնսի և Ն. Կաուֆմանի «Ընտանիքի կինետիկ պատկերը» թեստը [5, էջ 297-299] նպատակ է հետապնդում հետազոտելու ներընտանեկան հարաբերությունների առանձնահատկությունները: Այս թեստն անցկացրել ենք երեխաների շրջանում, ովքեր ապրում էին թե՛ նորմալ, թե՛ փաստացի ամուսնալուծված ընտանիքներում: Հետազոտվողներին (երեխաներին) տրվում էին թղթեր, գրիչ, մատիտ և ռետին, ստեղծվում հնարավորինս անկաշկանդ միջավայր, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ազատ և ինքնաբուխ նկարելու, այնուհետև տրվում են հրահանգները:

*Հրահանգ 1:* «Նկարիր քո ընտանիքը»: Խորհուրդ չի տրվում բացատրել, թե ինչ է ընտանիքը: *Հրահանգ 2:* «Նկարիր քո ընտանիքը, որտեղ բոլորը սովորականի նման զբաղված են իրենց գործով»: *Հրահանգ 3:* «Նկարիր քո ընտանիքը, ինչպես դու ինքդ ես պատկերացնում»: *Հրահանգ 4:* «Նկարիր քո ընտանիքը, որտեղ յուրաքանչյուր անդամ պատկերված է արկածային (գոյություն չունեցող) էակի տեսքով»: *Հրահանգ 5:*



«Նկարիր քո ընտանիքը փոխաբերական տեսքով, առանց որևէ պատկերի, սիմվոլի, որն արտահայտի Ձեր ընտանիքի առանձնահատկությունները»:

Առաջադրանքը լրացնելուց հետո պետք է ձգտել ստանալ նաև լրացուցիչ ինֆորմացիա հարցման միջոցով, խնդրել երեխաներին հնարավորինս մեկնաբանել պատկերը: Հաճախ արդյունավետ են լինում պրոյեկտիվ բնույթի հարցերը. Օրինակ՝ «Ո՞ւմ մայրիկը կկանչի իր հետևից», «Ո՞վ կհաղթեր քո և եղբորդ մրցումից» և այլն: Կարելի է երեխաներին տալ այնպիսի հարցեր, որոնք ընտանիքի նկատմամբ կառաջացնեն թե՛ բացասական, թե՛ դրական զգացմունքներ:

Թեստի անցկացման ընթացքում մեր առջև նպատակ էինք դրել հետազոտել թե՛ նորմալ թե՛ ամուսնալուծված ընտանիքների երեխաների պատկերացումները ընտանիքի, ընտանեկան արժեքների, դերերի կատարման, հայրիկից և մայրիկից ունեցած սպասումների, վերջիններիս ազդեցության, արդարացման կամ ապարդարացման վերաբերյալ: Կատարել ենք համեմատական վերլուծություն նորմալ և ամուսնալուծված ընտանիքների երեխաների սպասումների և հավակնությունների մակարդակում, ինչպես նաև փորձել ենք վերլուծել ախտածին դերային փոխհարաբերությունների ակնհայտ և թաքնված ազդեցությունը երեխաների դերային վարքագծի, միմյանց և շրջապատի հետ փոխհարաբերությունների տիրույթում:

5) Ս. Արզումանյանի «Հետազոտվողի միջանձնային հարաբերությունների ախտորոշումը անավարտ նախադասությունների միջոցով» մեթոդիկան [5, էջ 300-301] հնարավորություն է ընձեռում հետազոտողին վերլուծել միջանձնային փոխհարաբերությունների համակարգում կոնֆլիկտայնության մակարդակը, այսինքն՝ թույլ է տալիս փորձարկվողների վարքի կոնֆլիկտային կողմերի հետազոտությունն իրագործել փոխհարաբերությունների արտաքին տիրույթում:

Մեթոդիկան պարունակում է 28 անավարտ նախադասություն, որոնք փորձարկվողները պետք է շատ արագ ավարտեն, այսինքն՝ ցանկալի է, որ գրվի առաջին իսկ մտքով անցածը:

Սույն աշխատանքում մեթոդիկան կիրառվել է երեխաների շրջանում (հանրակրթական չորս դպրոցում սովորող) և հետապնդել է երկու հիմնական նպատակ. նախ համակարգված ձևով հետազոտել աշակերտների միջանձնային փոխհարաբերությունների տիրույթում դրսևորվող վարքագծային առկա նորմերն ու առանձնահատկու-

թյունները, որն էլ իրագործվել է թեստում առկա նախադասությունների բանավոր վերլուծության ընթացքում. ապա փորձել թեստի գրավոր տարբերակի իրագործման արդյունքում վերլուծել սովորողների կոնֆլիկտայնության մակարդակի աստիճանը միջդերային-միջանձնային, ընտանեկան, ինչպես նաև արտաքին (այսինքն՝ շրջապատի հետ) փոխհարաբերություններում:

Մեր խնդիրն էր՝ բացահայտել, թե ընտանիքներում առկա դերային անհամաձայնությունները, բախումները, հաճախ ճգնաժամային փոխհարաբերությունները և ախտածին դերերի դրսևորումները ինչ ձևով են ազդում աշակերտ (երեխա)-շրջապատ հարաբերությունների վրա, այդ ազդեցությունները հիմնականում թաքնվա՞ծ, թե՞ բացահայտ են արտահայտվում նրանց վարքագծում և փոխում նրանց անզամ անճանաչելիության աստիճանի (մի վիճակ, որին մենք բազմիցս ականատես եղանք հատկապես հասարակության «աչքի համար» պահպանվող և «նորմալ» որակվող ընտանիքների երեխաների շրջանում):

### **3.2. Ախտածին դերերի ազդեցությունը բացահայտող գործոնների հետազոտումը առողջ և ամուսնալուծված ընտանիքների շրջանում՝ դերային սպասումների և հավակնությունների մեթոդիկայի կիրառմամբ**

Հետազոտության կազմակերպման և իրագործման ընթացակարգն ամբողջովին կառուցվել է՝ ըստ ատենախոսության ներածական բաժնում առաջադրված վարկածի, նպատակ է առաջադրվել ստանալ հնարավորինս հավաստի տվյալներ և կատարել արդյունքների համարժեք վերլուծություն:

Ինչպես արդեն նշել ենք, «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան (Ա. Ն. Վոլկովա) թույլ է տալիս որոշել ամուսինների պատկերացումները ընտանեկան դերերի բաշխման վերաբերյալ, դրանց համապատասխանության կամ անհամապատասխանությունների դրսևորումները: Տվյալ դեպքում աշխատանքի նպատակն էր թեստի երկու փուլերի կիրառման և վերջնական ամփոփման միջոցով պարզել ներընտանեկան փոխհարաբերություններում դերային ընկալման համապատասխանության և, մասնավորապես, անհամապատասխանության, լարվածության, բախումների ու հնարավոր ճգնաժամային իրավիճակների դրսևո-

րումները, որոնք, ցավոք, դարձել են ախտահարված փոխհարաբերությունների և ամուսնալուծությունների պատճառ՝ հիմքում ունենալով «նոր» դեգադապտիվ-ախտածին դերերի առաջացման մեխանիզմները: Հետազոտությունը կատարվել է 100 ամուսնալուծված և 50 առողջ համարվող ընտանիքների շրջանում: Շուրջ երեք և ավելի տևած տարիների ընթացքում փորձ է արվել ապահովել թեստի անցկացման առավելագույն ներգրավվածություն, քանի որ հատկապես տղամարդիկ խուսանալով էին մասնակցելուց՝ միաբերան պնդելով, որ համոզված են իրենց «արդարության» մեջ: Սա, իհարկե, վիճելի տեսակետ է:

Մեթոդիկայի գործարկմանը ընդհանուր առմամբ մասնակցել են 170 իգական և 130 արական սեռի ներկայացուցիչներ՝ 21-45 տարեկան:

Այժմ անհրաժեշտ է վերլուծել՝ ըստ ընտանեկան փաստացի կարգավիճակի: Մեթոդիկան ամուսնալուծված ընտանիքների շրջանում կիրառելիս մասնակցեցին 120 իգական և 80 արական սեռի ներկայացուցիչներ՝ 21-45 տարեկան: Մեթոդիկայի շրջանակում կանայք և տղամարդիկ հնարավորություն ունեին 36 պնդումներին պատասխանել անհատական կարգով, և, հենվելով մեթոդիկայի 2 փուլերի և 7 ենթաբաժինների արդյունքների վրա, կատարեցինք անհատական վերլուծություն՝ ըստ տնտեսական-կենցաղային, ծնողական-դաստիարակչական, սոցիալական ակտիվության, հոգեթերապևտիկ, արտաքին գրավչության, սեքսուալ-ինտիմ և անձնական նույնականացման սանդղակների (տե՛ս աղս. 1, 2): Մեր կարծիքով՝ նման բազմազործոն հետազոտությունը թույլ էր տալիս վեր հանել «դերային սպասումների» և «դերային հավակնությունների», ինչպես նաև դերային համապատասխանության և անհամապատասխանության բախումնածին պատճառները, որոնք վերոնշյալ ընտանիքներին մղել են ամուսնալուծության:

## Աղյուսակ 1

ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	քանակ	միավոր
Սոցիալական ակտիվություն	15	5-7
Հուզական-հոգեթերապևտիկ	40	8-9
Տնտեսակենցաղային	35	6-7
Արտաքին գրավչություն	20	3
Ծնողական-դաստիարակչական	10	3-5

<i>Ընդամենը</i>	120	-
-----------------	-----	---

***Ամուսնալուծված 120 կանանց դերային սպասումների և հավակնությունների քանակական ցուցանիշներն ըստ ընտանեկան արժեքների սանդղակի***

Հարցման ենթարկված 35 կանանց գնահատականները դերային սպասումների սանդղակով տնտեսական-կենցաղային ոլորտում զգալիորեն բարձր են եղել, այսինքն՝ զուգընկերոջ դերային վարքի նկատմամբ ունեցած հավակնությունները չեն արդարացվել՝ ծնելով համապատասխան դերային վարքագիծ: Սա նշանակում է, որ վերոնշյալ կանայք ամուսնանալիս զուգընկերոջից մեծ սպասումներ են ունեցել՝ կենցաղը կազմակերպելու առումով, որը փաստորեն չի արդարացվել կամ արդարացվել է մասամբ: Կանայք աստիճանաբար իրենց վրա են վերցրել տնտեսակենցաղային հմտությունների կիրառման ողջ գործընթացը, որը ծնել է բախումնաձին իրավիճակներ: Նրանք փաստում էին, որ ամուսնության սկզբնական շրջանում «համակերպվել են» իրենց նոր դերերի հետ (խոսքն արդեն իսկ ավտաձին դերերի մասին է), սակայն տարիներ հետո հասկացել, որ այդ բեռն այլևս մենակ կրել չեն կարող: Սկսվել են դերային սպասումների և դերային հավակնությունների բախումները, լարված, ճգնաժամային փոխհարաբերությունները: Այս սանդղակով կանանց հավաքած միավորների միջին հանրագումարը 6-7 միավորն էր՝ ըստ ընտանեկան արժեքների սանդղակի, որը վկայում է բարձր կոնֆլիկտայնության մասին: Կանանցից 20-ի՝ ծնողական-դաստիարակչական գործառույթներին վերաբերող գնահատականը դերային սպասումների սանդղակով հակառակ պատկերն է արձանագրում: Ծնողական պարտականությունների նկատմամբ դեպի ամուսիններն ունեցած սպասումների և հավակնությունների ցուցանիշները ցածր են եղել (միջին միավորների հանրագումարը 3-ն էր): Սա նշանակում է, որ կանայք երեխաների զբոսանքի, խաղի և դաստիարակման հետ կապված գործառույթներում ամուսիններից մեծ սպասումներ չունեին: Նրանք գտնում էին, որ երեխաների դաստիարակությամբ ավանդաբար զբաղվել է կինը: Այս վերաբերմունքը ևս բախումնաձին իրավիճակ էր ստեղծել ընտանիքներում, քանի որ տղամարդիկ համակարծիք չէին՝ նշելով, որ երեխաների այժմյան դաստիարակության մեջ հատկապես էական է տղամարդու, այսինքն՝ հոր

ներկայությունը (չհամակերպվելու, ըմբոստի «նոր» ախտածին դեր), և կարևոր չէ, օրինակ, թե ով է տանում զբոսանքի կամ խաղում նրանց հետ:

Կանանց գնահատականը, դերային սպասումների սանդղակով, սոցիալական ակտիվության ոլորտում բարձր է (միջին միավորների հանրագումարը 5-7-ն է): Փորձարկվող 15 կանայք ակնկալել են, որ զուգրնկերը պետք է ունենա լուրջ մասնագիտական հետաքրքրություններ, ակտիվ հասարակական դեր կատարի, լավ աշխատանք ունենա, սակայն, ըստ իրենց, հանդիպել են այնպիսի իրավիճակի, որը ճիշտ հակառակ պատկերն է արձանագրել. պետք է բավարարվել եղածով, չեմ կարող ավելին, առողջությունս չի ներում և այլն:

Դերային սպասումների սանդղակով կանանց գնահատականը հուզական հոգեթերապևտիկ սանդղակին, կարելի է ասել, ամենաբարձրն է (8-9 միավոր):

Հետազոտված 40 կին ակնկալել է, որ զուգրնկերն ամուսնության ընթացքում իր վրա կվերցնի հուզական լիդերի դերն այնպիսի հարցերում, ինչպիսիք են ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի շտկումը, հուզական օժանդակության ցուցաբերումը, հուզառատ վերաբերմունքի դրսևորումը և այլն: Սակայն, դերային սպասումները և սեփական դերային հավակնությունները բախվել են, քանի որ, նախ, ելնելով մեր ազգային ինքնությունից, հայ տղամարդիկ հուզառատ չեն, և հետո՝ հույզի դրսևորման չափանիշներն ընտանիքում և ներընտանեկան փոխհարաբերություններում տղամարդիկ այլ ձևով են պատկերացնում: Կանայք դժգոհում են այն հանգամանքից, որ ցանկացած հույզի դրսևորում «թույլ էր» ստացվում՝ բացի ամուսնու կողմից սեփական անձի վեհացման վերաբերյալ հույզերի դրսևորումից: Բուն ամուսնական շրջանում արտաքին գրավչությանը վերաբերող գնահատականը դերային սպասումների սանդղակով, հատկապես 35-45 տարեկան կանանց շրջանում, ներկայացվում էր միջին և ցածր ցուցանիշներով (3-5): Սա նշանակում էր, որ ցանկությունը՝ ունենալ արտաքինապես գրավիչ զուգրնկեր, ավելի մեծ էր, քան դիրքորոշումը՝ սեփական գրավչության նկատմամբ: Այս դրույթը ևս ծնել էր բախումնածին, լարված, ճգնաժամային փոխհարաբերություններ, քանի որ, ըստ կանանց, ամուսինները չէին գնահատել իրենց «զոհաբերությունը» և գտել էին, որ կանայք սկսել են տգեղանալ, մոդայիկ և նորաճ չեն, այլ կանայք ավելի լավն են և այլն: Այսպես կարծել են 10 կանայք: Ինչպես պարզեցինք, կանանց ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները

սպասումների սանդղակում գրանցվել են համապատասխանաբար տնտեսական-կենցաղային ոլորտում (6-7 միավոր), հուզական-հոգեթերապևտիկ ոլորտում (8-9 միավոր) և սոցիալական ակտիվության սանդղակով (5-7 միավոր), ծնողական-դաստիարակչական սանդղակով՝ 3 միավոր, արտաքին գրավչության սանդղակով՝ 3-5 միավոր:

## Աղյուսակ 2

<b>ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>քանակ</b>	<b>միավոր</b>
Սոցիալական ակտիվություն	7	3-4
Հուզական-հոգեթերապևտիկ	19	7
Տնտեսակենցաղային	25	7-9
Արտաքին գրավչություն	4	7-9
Ծնողական-դաստիարակչական	25	8-9
<i>Ընդամենը</i>	80	-

### **Ամուսնալուծված 80 տղամարդկանց դերային սպասումների և հավակնությունների քանակական ցուցանիշներն ըստ ընտանեկան արժեքների սանդղակի**

Հարցման ենթարկված 25 տղամարդկանց սպասումների և հավակնությունների ցուցանիշները դերային սպասումների սանդղակով, ըստ վերոգրյալ հինգ ոլորտների, արձանագրել է հետևյալ պատկերը՝

Տնտեսական-կենցաղային ոլորտում տղամարդկանց սպասումների ցուցանիշը բարձր էր (7-9 միավոր), որը վկայում է այն մասին, որ տղամարդիկ ևս, ամուսնանալիս, մեծ կարևորություն են տվել կանանց տնտեսական-կենցաղային հմտություններին՝ գտնելով, որ դարեր ի վեր հայ ընտանիքներում հատկապես տնտեսությունը կազմակերպել և վարել են հիմնականում կանայք: Հենց այս միտումն է եղել կանանց և տղամարդկանց (մեր կողմից հետազոտված) լարված փոխհարաբերությունների և բախումների պատճառը, քանի որ երկուստեք մտածել են, որ տնտեսություն վարելը կնոջ (տղամարդու) գործն է: Բախումներն էլ ավելի են սրվել, հարաբերությունները դարձել ճգնաժամային հատկապես այն ժամանակ, երբ սկսվել են փոխադարձ մեղադրանքները անկարողության, թափթփվածության, ընտանիք պահել

չկարողանալու և այլնի մեջ: Համեմատական վերլուծությունը վկայեց, որ տղամարդկանց և կանանց սպասումներն ու հավակնություններն այս սանդղակով ադապտացված են եղել, երկու դեպքում էլ ստացվել է կոնֆլիկտայնության բարձր շեմ:

Ծնողական-դաստիարակչական պարտականությունների հանդեպ տղամարդկանց ունեցած սպասումների և հավակնությունների ցուցանիշները, ի տարբերություն կանանց, բարձր են եղել, քանի որ տղամարդիկ երեխաների դաստիարակության, խնամքի և այլ փոխհարաբերությունների տիրույթում սեփական դերը արժևորում էին՝ չցածրացնելով կանանց դերի նշանակությունը:

Տղամարդկանցից մեկն անգամ նման մեջբերում արեց, որը շատ տպավորիչ էր. «Որբանում են երեխաները մոր, ոչ թե հոր կողմից, բայց դա չի նշանակում, որ մենք քիչ ենք ցավում կամ չենք տառապում» (Վ. Հ. Քոչարյան, 45 տ., Արմավիրի մարզ, գյուղ Նորակերտ):

Տղամարդկանց հավաքած միավորների միջին ցուցանիշներն այս սանդղակով ընկած էին 8-9 բալլի միջակայքում: Այսպես կարծել է 25 հոգի:

Դերային սպասումների սանդղակով տղամարդկանց գնահատականները սոցիալական ակտիվության ոլորտում բավականին ցածր ցուցանիշներ են արձանագրել (3-4 միավոր): Այս փուլում 7 տղամարդ գտնում էր, որ իրենց ամուսնական զուգընկերները պարտադիր չէ, որ ունենան լուրջ մասնագիտական հետաքրքրություններ, կատարեն ակտիվ հասարակական դերեր, զբաղեցնեն կարևոր պաշտոններ, այսինքն՝ տղամարդիկ այնքան էլ չեն կարևորում կնոջ դերը ընտանիքից դուրս, առաջնային չեն համարում նրա մասնագիտական և աշխատանքային հետաքրքրությունները: Տղամարդկանց սպասումների նման ցուցանիշները առավելապես պայմանավորված են կարծրատիպերով, որը դրսևորվում է «Կնոջ գլխավոր հոգսը ընտանիքն է» գաղափարախոսության սահմաններում: Այս մոտեցումը կանանց մեծամասնության մոտ բուռն, հակադարձ ազդեցություն է առաջացրել, բախվել են դերային սպասումների և անձնական դերային հավակնությունների սահմանները՝ առաջացնելով լարված փոխհարաբերություններ, նսեմացվածության զգացում, ցանկացած ձևով ինքնահաստատվելու ձգտում (տիպիկ ախտածին-դեզադապտատիվ դեր և համարժեք ախտահարված փոխհարաբերություններ):

Դերային սպասումների սանդղակի հուզական-հոգեթերապևտիկ ոլորտում բարձր ցուցանիշ են արձանագրել 19 տղամարդիկ՝ 7 միավոր (կանայք ևս այդպես էին

գտնում): Այս գործառույթը բնորոշ է ժամանակակից ընտանիքներին, այլ կերպ ասած, ժամանակակից գործառույթի «կարգավիճակ ունի»: Տղամարդիկ ևս գտնում էին, որ կինն իր վրա պետք է վերցնի ընտանիքի հուզական լիդերի դերն այնպիսի հարցերում, ինչպիսիք են հուզական օժանդակության ցուցաբերումը, «հոգեթերապևտիկ մթնոլորտի ստեղծումը», հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորումը: Տղամարդկանց կողմից նման ցուցանիշների արձանագրումը ևս արդյունք է այն ավանդույթների, ազգային դիրքորոշումների, որոնք որպես կարծրատիպեր ամրագրված են նրանց գիտակցականում՝ «Ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծողն ու պահպանողը կինն է»: Արտաքին հրապուրանքի սանդղակը տղամարդկանց շրջանում փոքր-ինչ իրարամերժ ցուցանիշներ է արձանագրել: Հետազոտված տղամարդկանցից 4-ը գտնում էր, որ պետք է ունենալ արտաքնապես գրավիչ զուգընկեր, ով պետք է նորաձև և գեղեցիկ լինի, հնարավորինս հետևի արդի նորաձևության միտումներին, իսկ 2 տղամարդու կարծիքով՝ կանանց՝ մշտապես հրապուրիչ և նորաձև երևալու հավակնությունները չեն նպաստում ընտանիքի դինամիկ զարգացմանը, քանի որ ընտանիքի հոգսերն ու խնդիրները, երեխաների դաստիարակությունը կարող են տուժել: Առաջին ենթախմբում արձանագրվել է 7-9, իսկ երկրորդ ենթախմբում՝ 3 միավոր: Այս սանդղակով երկու ցուցանիշի արձանագրումը պատահական չի կարելի համարել, քանի որ կարծիքներն այս դրույթի շուրջ տարբեր են եղել նաև առողջ որակվող ընտանիքներում:

Ըստ այդմ էլ տղամարդկանց ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները սպասումների սանդղակում գրանցվել են համապատասխանաբար տնտեսական-կենցաղային ոլորտում (7-9 միավոր), ծնողական-դաստիարակչական ոլորտում (8-9 միավոր), հուզական-հոգեթերապևտիկ ոլորտում (7-8 միավոր), սոցիալական-ակտիվության ոլորտում (3-6 միավոր), արտաքին հրապուրանքի ոլորտում համապատասխանաբար (7-9) և (3) միավորների հանրագումար:

«Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի օգնությամբ փորձեցինք (հանրագումարի բերելով վերոգրյալը) որոշել ամուսնալուծված ընտանիքներում միջանձնային փոխհարաբերությունների հինգ ոլորտներում ամուսնական զույգերի դերային համապատասխանության աստիճանը: Ամուսնու դերային համապատասխանությունը հավասար է կնոջ դերային հավակնությունների գնահատականի և ամուսնու դերային սպասումների գնահատականի տարբերությանը: Համապատասխանաբար՝



կնոջ դերային համարժեքությունը հավասար կլինի միավորների այն տարբերությանը, որը բնութագրում է ամուսնու դերային հավակնությունները և կնոջ դերային սպասումները: Որքան փոքր է տարբերությունը, այնքան բարձր է զուգընկերների դերային համապատասխանությունը (մի դրույթ, որը չարձանագրվեց ամուսնալուծված զույգերի հետազոտությունների արդյունքների ամփոփման ժամանակ. ակնհայտ էին բարձր կոնֆլիկտայնությունը, դերերի բախման կիզակետում առաջացած ախտահարված փոխհարաբերությունները):

Համաձայն կատարված հետազոտության տվյալների՝ սոցիալ-տնտեսական ոլորտում կանանց սպասումները գերազանցում են տղամարդկանց հավակնություններին, քանի որ վերջիններս չեն ցանկանում միանձնյա զբաղվել տնտեսության կառավարմամբ և հոգալ կենցաղային հարմարավետության ապահովման հոգսերը: Ըստ տղամարդկանց՝ այժմյան ընտանիքներում բոլոր դժվարությունները միայնակ հաղթահարելն անհնար է: Կանայք սա դիտարկել են որպես անկարողություն, անգամ՝ թուլակամություն, որն էլ առաջացրել է դերերի և կարծրատիպերի բախում, արդյունքում՝ ճգնաժամեր, անհաղթահարելի խոչընդոտներ:

Հետաքրքիր ցուցանիշներ են արձանագրվել ծնողական-դաստիարակչական ոլորտում: Տղամարդկանց բարձր հավակնությունները բախվել են կանանց ցածր սպասումների հետ և առաջացրել բախում. այս ոլորտում տղամարդու բարձր ներգրավվածությունը կանայք դիտարկել են որպես դերերի չարաշահում և գտել, որ երեխաների դաստիարակության խնդիրները հիմնականում կնոջ մենաշնորհն է, իսկ տղամարդը նյութական բարիքի ապահովողն է: Մինչդեռ ժամանակակից ընտանիքներում տղամարդիկ միտված են երեխաների դաստիարակության հարցում ունենալ առավել մասնակցություն, ինչը նրանցից այնքան էլ չեն սպասում կանայք:

Սոցիալական ակտիվության ոլորտում ակնառու է բախումների տեղատարափը, քանի որ կանանց՝ հասարակության մեջ բարձր դիրք գրավելու հավակնությունները բախվել են տղամարդկանց սպասումներին, որոնք ամբողջանում են կնոջը հիմնականում տան հոգսերը հոգացողի դերում տեսնելով: Այս ոլորտում երկու կողմերի մոտ էլ արձանագրվել է բարձր կոնֆլիկտայնություն, քանի որ տարաձայնությունների հարթման եզրեր գրեթե չեն գտնվել:

Հուզական-հոգեթերապևտիկ գործառույթի իրագործման նկատմամբ կանանց հավակնությունները բախվել են տղամարդկանց սպասումներին. թե՛ կանայք, թե՛

տղամարդիկ գտնում են, որ իրենց զուգընկերը պետք է կարողանա ընտանիքում ջերմ և հուզառատ մթնոլորտ ապահովել, քանի որ՝ ա) նա տղամարդ է, ուրեմն պարտավոր է ուշադիր և հոգատար լինել կնոջ ապրումների և տրամադրության հանդեպ, բ) նա կին է, ուրեմն պարտավոր է մշտապես հասկանալ և կողակցին ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա՝ անկախ սեփական տրամադրությունից, զբաղվածությունից և այլն: Արտաքին հրապուրանքի գործառույթի իրագործման ժամանակ ևս կանանց և տղամարդկանց սպասումների ցուցանիշները համարժեք չեն եղել, քանի որ կանայք ցանկություն են արտահայտել տղամարդկանց տեսնելու նորաձև և հրապուրիչ, այնինչ տղամարդկանց խմբում կարծիքները բախվել են. այստեղ ևս տղամարդիկ զերծ չեն մնացել կարծրատիպերի ազդեցությունից՝ «կինը պետք է առաջնային համարի ընտանիքի խնդիրները»: Ըստ «Դերային սպասումներ և հավակնություններ մեթոդիկայի» առաջին հինգ ոլորտների հետազոտության՝ բոլոր ընտանիքներում առկա է եղել դերային անհամապատասխանությունը, քանի որ բոլոր ցուցանիշները զրոյից բարձր են: Որքան ցուցանիշը բարձր է, այնքան համապատասխանությունը ցածր է: Այս անհամապատասխանության արդյունքում հետազոտված ընտանիքներում առաջացել են լարված, տհաճ իրավիճակներ, որոնք տարիների ընթացքում սրվել և դարձել են ճգնաժամեր: Վերջիններս ծնել են նոր՝ դեզադապտիվ-ախտածին դերեր, որոնք սկսել են քայքայել ընտանիքների առանց այն էլ խարխուլ կառույցը: Հարցման ենթարկված բոլոր ընտանիքներում, առնվազն մեկ ոլորտում առկա է կամ կնոջ, կամ ամուսնու, կամ միաժամանակ երկուսի դերային անհամապատասխանության դրսևորում: Վերոնշյալ կարգավիճակադերային փոխհարաբերությունները պայմանավորված են նաև նրանով, որ ժամանակակից ընտանիքներում ի հայտ են եկել շեշտված հակասություններ դերային պահանջների և դրանց իրականացման ցանկությունների միջև: Դա պայմանավորված է հասարակական հարաբերությունների արագընթաց փոփոխություններով, որոնք նպաստել են ոչ միայն ընտանիքի կառուցվածքային, այլ նաև սոցիալ-հոգեբանական, դերային և վարքագծային փոփոխությունների առաջացմանը: «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկան թույլ տվեց որոշել նաև հետազոտվող ընտանիքների պատկերացումները դերային համապատասխանության, մասնավորապես սեքսուալ փոխհարաբերությունների, ամուսնու և կնոջ անձնային ընդհանրությունների, ծնողական պարտականությունների, մասնագիտական

հետաքրքրությունների, տնտեսակենցաղային ոլորտի, բարոյական-հուզական աջակցության, արտաքին հրապուրանքի կարևորության և նշանակության մասին: Սա նշանակում է, որ մեթոդիկայի հաջորդ փուլի վերլուծությամբ ամփոփելու ենք այն բոլոր պատկերացումների հանրագումարը, որոնք վիճելի են դարձել արդեն իսկ նախկին զույգերի ներընտանեկան փոխհարաբերություններում (տե՛ս աղս. 3, 4):

### Աղյուսակ 3

<b>ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>քանակ</b>	<b>միավոր</b>
Ինտիմ սեքսուալ	10	3
Անձնական նույնականացում	15	1-3
Սոցիալական ակտիվություն	35	7
Հուզական-հոգեթերապևտիկ	7	6-7
Տնտեսակենցաղային	15	8
Արտաքին գրավչություն	25	7-8
Ծնողական-դաստիարակչական	13	7
Ընդամենը	120	-

### **Դերային սպասումների ցուցանիշներն ըստ ամուսնալուծված կանանց պատկերացումների**

Ինտիմ-սեքսուալ ոլորտում, օրինակ, արձանագրվել է ցածր ցուցանիշ (3 միավոր), որը վկայում է այն մասին, որ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ սեռական կյանքը գրեթե չեն դիտարկում որպես ընտանեկան երջանկության նախապայման: Սա նաև ազգային ձեռագիր ունի, քանի որ, ինչպես նշեց կանանցից մեկը (Մ. Մանուկյան, Արմավիրի մարզ, գյուղ Նորակերտ, 35 տարեկան), թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց ազատությունը դիտարկվում էր որպես «սանձարձակություն»: Հենց այս մտածելակերպն է ծնել դերային բախում և ախտահարված փոխհարաբերություններ: Այսպես կարծել են 10 ամուսնալուծված կանայք և 7 ամուսնալուծված տղամարդիկ:

Անձնական նույնականացման ոլորտում ևս արձանագրել ենք ցածր ցուցանիշներ (1-3 միավոր), քանի որ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ չեն կարևորել անձնային նույնականացման գործառույթը որպես ընտանիքի կայունության հիմք՝ նշելով, որ կան

էլ ավելի «պատասխանատու» գործառույթներ, քան ուղղակի կարծիքների և հետաքրքրությունների «հետևից ընկնելը»: Այսպես կարծել են ամուսնալուծված 15 կին և 6 տղամարդ:

**Աղյուսակ 4**

<b>ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>քանակ</b>	<b>միավոր</b>
Ինտիմ սեքսուալ	7	3
Անձնական նույնականացում	6	1-3
Սոցիալական ակտիվություն	16	7
Հուզական-հոգեթերապիա	11	5-6
Տնտեսական-կենցաղային	13	7-8
Արտաքին գրավչություն	15	6-7
Ծնողական-դաստիարակչական	12	7
<i>Ընդամենը</i>	80	-

**Դերային սպասումների ցուցանիշներն ըստ ամուսնալուծված տղամարդանց պատկերացումների**

Համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրվել սոցիալական ակտիվության ոլորտում՝ 7 միավոր 35 կնոջ և 16 տղամարդու կողմից, արտաքին գրավչության ոլորտում՝ 7-8 միավոր 25 կնոջ և 6-7 միավոր 15 տղամարդու կողմից, տնտեսական-կենցաղային ոլորտում՝ 8 միավոր 15 կնոջ և 7-8 միավոր 13 տղամարդու կողմից, ծնողական-դաստիարակչական ոլորտում՝ 7 միավոր 13 կնոջ և 7 միավոր 12 տղամարդու կողմից, հուզական-հոգեթերապիա ոլորտում՝ 6-7 միավոր 7 կնոջ և 5-6 միավոր 11 տղամարդու կողմից:

Այս ամենը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ մեր կողմից հետազոտված ամուսնալուծված 100 ընտանիքների շրջանում առավել բախումնային, ճգնաժամային և ախտահարված փոխհարաբերություններ դիտարկվել են հատկապես վերոգրյալ հինգ ոլորտներում:

Ըստ «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի հեղինակների՝ յուրաքանչյուր ոլորտի ու չափի անհամապատասխանություն չէ, որ կարող է սպառնալիք դառնալ ընտանեկան հարաբերությունների քայքայման համար: Մեր հասարա-

կության մեջ շատ կան դերային անհամապատասխանությամբ ամուսնական զույգեր, որոնց սպասումներն և հավակնությունները լիարժեքորեն համապատասխանում են: Եթե այս ընտանիքներում դերերն այնուհանդերձ բախվում են, և ամուսինները չեն կարողանում համակարգել սեփական գործողությունները, ապա սա դիտարկվում է որպես ընտանեկան գործառույթների ոչ ճկուն կատարում: Հենց այս դիտարկմամբ էլ կփորձենք վերլուծել նաև առողջ որակվող ընտանիքները՝ վերջնական համեմատություն կատարելու ակնկալիքով: «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի կիրառման այս փուլում մասնակցել են 21-45 տարեկան 50 իգական և 50 արական սեռի ներկայացուցիչներ (աղս. 5, 6): Ինչպես և նախորդ դեպքում, մեթոդիկայի անցկացումը կրեց անհատական բնույթ, համապատասխանաբար կիրառեցինք դիտման և հարցման մեթոդները՝ թե՛ մեթոդիկան բացատրելիս, թե՛ վերլուծության ընթացքում: Նկատենք, որ այս ընտանիքների հետազոտությունը պակաս հետաքրքրաշարժ չէր, քանի որ այստեղ ևս արձանագրեցինք սպասումների և հավակնությունների չարդարացման, անգամ՝ բախման դեպքեր: Նման ընտանիքներում, պարզապես, կարողացել են լուծման, փոխզիջման ընդհանուր եզրեր գտնել, չնայած ոչ միշտ է, որ դա բավարարել է զույգերին: Հանդիպեցինք, օրինակ, բացասական ադապտացիայի դեպքերի, երբ ամուսնական զույգը պահպանում է հարաբերությունները շնորհիվ այն հանգամանքի, որ կինը, չունենալով ծնողներ կամ մերձավորներ, ովքեր նրան կաջակցեին կամ կմխիթարեին ծանր պահերին, աներկբա ենթարկվել է (զոհի ախտածին դեր) և «պահպանել» ամուսնական դաշինքը:

## Աղյուսակ 5

<b>ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>քանակ</b>	<b>միավոր</b>
Ինտիմ սեքսուալ	6	1-3
Անձնական նույնականացում	6	0-3
Սոցիալական ակտիվություն	13	7-9
Արտաքին գրավչություն	10	7-8
Տնտեսակենցաղային	6	4-5
Ծնողական-դաստիարակչական	5	4-6
Հուզական-հոգեթերապևտիկ	4	0-3
<i>Ընդամենը</i>	50	-

**Ամուսնացած 50 կանանց դերային սպասումների և հավակնությունների  
ցուցանիշներն որսփ ընդանեկան արժեքների համաձայնեցվածության**

Աղյուսակ 6

<b>ԴԵՐԱՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>քանակ</b>	<b>միավոր</b>
Ինտիմ սեքսուալ	4	1-3
Անձնական նույնականացում	9	6-7
Սոցիալական ակտիվություն	12	7-9
Արտաքին գրավչություն	11	7-8
Տնտեսակենցաղային	7	4-5
Ծնողական-դաստիարակչական	4	4-6
Հուզական հոգեթերապևտիկ	3	0-3
<i>Ընդամենը</i>	50	-

**Ամուսնացած 50 տղամարդկանց դերային սպասումների և հավակնությունների  
ցուցանիշներն ըսփ ընդանեկան արժեքների համաձայնեցվածության**

Ստորև փորձենք քննել ըստ ընտանեկան արժեքների սանդղակի հիմնական ոլորտների կատարված հետազոտության արդյունքները:

Համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ տնտեսական-կենցաղային ոլորտում գրանցվել են միջին միավորներ (4-5), որը վկայում է այն մասին, որ ամուսնական զույգերի փոխադարձ պատկերացումները ընտանեկան կենցաղավարության վերաբերյալ կամ համընկնում են, կամ նրանք ընդունել են մեկը մյուսի կատարման ոճը և այն դարձրել սեփական գործառույթների հմտություն: Սա, իհարկե, չի խոսում կոնֆլիկտների բացակայության կամ դերերի միանշանակ ներդաշնակության մասին, պարզապես զուգընկերները գտել են այն ընդհանուր դիրքորոշումները, որով առաջնորդվում են կենցաղը վարելիս: Այդպես կարծում են ամուսնացած 6 կանայք և 7 տղամարդիկ: Ծնողական-դաստիարակչական սանդղակով հավաքած միավորների քանակը ևս միջին ցուցանիշներ է արձանագրել (4-6): Սա նշանակում է, որ ծնողական պարտականությունների նկատմամբ ամուսինների ունեցած սպասումների և հավակնությունների ցուցանիշները ընդհանուր եզրեր են գտել և որոշակիորեն համընկել: Հայիրականությանը գրեթե միշտ բնորոշ են եղել երեխայակենտրոն ընտանիքները, և այս

սանդղակում, չնայած որոշակի բախումնային մոտեցումներին, ամուսինները պահպանել են դերային հավասարակշռությունը: Այսպես կարծել են ամուսնացած 5 կանայք և 4 տղամարդիկ: Վիճելի արդյունքներ են արձանագրվել հատկապես սոցիալական (մասնագիտական, հասարակական) ակտիվության ենթասանդղակում: Այստեղ, ինչպես և ամուսնալուծված զույգերի դեպքում, տղամարդիկ առանձնապես չեն կարևորում կնոջ հասարակական դիրքը և մասնագիտական հետաքրքրությունները՝ գտնելով, որ կնոջ գերխնդիրը ընտանիքի «ներսի» հոգսերը հոգալն է: Կանայք, ընդհակառակը, կարևորել են թե՛ իրենց, թե՛ տղամարդկանց հասարակական ակտիվության դրսևորումները՝ գտնելով, որ վերջինս չի կարող խոչընդոտ հանդիսանալ ներընտանեկան փոխհարաբերություններում, այն կարող է միայն նպաստել դրանց դինամիկ զարգացմանը: Հայացքների բախումն արձանագրել է 7-9 միավորների հանրագումարը, որը, իհարկե, կոնֆլիկտայնության բարձր ցուցանիշի մասին է վկայում: Այսպես են կարծել ամուսնացած 13 կանայք և 12 տղամարդիկ:

Հուզական-հոգեթերապևտիկ սանդղակում արձանագրվել են ցածր միավորներ (0-3), որը կոնֆլիկտային չի համարվում: Հետաքրքիր է, սակայն, որ այս ենթասանդղակում ամուսնացած կանայք և տղամարդիկ նախապատվությունը տվել են հիմնականում կնոջը՝ գտնելով, որ «ընտանեկան հոգեթերապևտի և հուզառատ օժանդակողի» դերը բնորոշ է հենց կնոջը: Այս էական տարբերությունը կարելի է բացատրել միայն համակերպվածության, ազգային դիրքորոշումների և ավանդույթների հիմքով, քանի որ հույզերի դրսևորումները սեռային, առավել ևս՝ սեռադերային տարբերություններով հանդես չեն գալիս. խոսքն արդեն խառնվածքի խնդրի մասին է (հարմարման տիպիկ ախտածին դեր): Այսպես կարծել են ամուսնացած 3 տղամարդ և 4 կին:

Արտաքին հրապուրանքի սանդղակն արտացոլում է արտաքին տեսքի նկատմամբ դիրքորոշումը, համապատասխանությունը նորաձևության ստանդարտներին: Այս ենթասանդղակում ևս վիճելի արդյունքներ ենք արձանագրվել (7-8 միավոր): Ամուսնացած 10 կանայք գտել են, որ իրենց ամուսինները պետք է խնամված և կոկիկ տեսք ունենան, մշտապես հետևեն իրենց, իսկ ամուսնացած 11 տղամարդկանց համար բավարար է կնոջ մաքրությունն ու հավաքվածությունը, իսկ նորաձևության ստանդարտները կարևոր չեն համարվում: Անգամ գտնում են, որ կնոջ գլխավոր հոգսը իրենց խնամելն է, երեխաներին կոկիկ պահելը, տան մաքրությունը: Բանավոր

վերլուծության ժամանակ կանայք համաձայն չէին վերոնշյալ կարծիքների հետ, սակայն գտնում էին, որ պետք է «հարմարվեն»՝ ընտանիքում «ավելորդ» կոնֆլիկտներից խուսափելու համար (ախտահարվածության ակնհայտ դրսևորում): Ըստ «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի երկրորդ փուլի հետազոտության՝ ամուսնության մեջ գտնվող կանանց և տղամարդկանց սեքսուալ-ինտիմ ոլորտի վերաբերյալ ստացված տվյալները վկայում են այն մասին, որ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց պատկերացումներում վերոգրյալը չի հանդիսանում ընտանիքի ամրության և առողջ կենսագործունեության նախապայման, մի տեսակետ, որն անշուշտ վիճելի է: Արձանագրվել է 1-3 միավորների հանրագումար:

Փորձում ենք ենթադրել, որ այս ցուցանիշները և նման մտածելակերպը պայմանավորված են էթնոհոգեբանական առանձնահատկություններով և կարծրատիպերով: Այդպես են կարծել 10 կին և 4 տղամարդ:

Անձնային նույնականացման սանդղակում կոնֆլիկտային ցուցանիշներ չենք արձանագրել (0-3 միավոր): Անձնային նույնականացումը որպես արժեք և ընտանեկան կայունության համար կարևոր գործառույթ համարող ամուսիններն այստեղ հստակ դիրքորոշումներ ունեն կնոջ և տղամարդու աշխարհայացքի, դերերի («կնոջ», «մոր», «հոր», «ամուսնու») և կարծիքների վերաբերյալ: Այս առումով ևս ենթադրում ենք, որ «խոսել է» ազգային պատկանելությունը և հավանաբար կնոջ՝ «մշտապես զիջելու», որոշ առումներով, ախտածին դերը: Վերոնշյալ երկու սանդղակներում կանանց մասնակցության թիվը 6 և 7 էր, տղամարդկանցը՝ 9:

Այսպիսով, «Դերային սպասումներ և հավակնություններ» մեթոդիկայի կիրառման միջոցով մենք հնարավորություն ստացանք հետազոտելու ամուսնալուծված զույգերի փոխհարաբերություններում եղած կոնֆլիկտայնության դրսևորումները, ամուսնացած զույգերի մոտ առկա դերային և ներդերային փոխհարաբերությունները և վարքագծային փոփոխությունների դրսևորումները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ նկատենք, որ դեպի ամուսնալուծության ցավոտ փուլ արդեն իսկ նախկին հետազոտության օբյեկտ համարվող ընտանիքներին մղել են նախ սեփական դերային սպասումների անլիարժեքությունը և, շատ դեպքերում, չիմացությունը, ապա զուգընկերոջ նկատմամբ հավակնությունների անիրական պատկերացումները: Վերոգրյալ երկու գործոնների բախման կիզակետում առաջացել են նոր, ախտածին-դեզադապտիվ դերեր (օրինակ՝ զոհի, կամակատարի, ենթակայի, միանձնյա



ղեկավարի, «չափազանց սիրող ծնողի» և այլն), որոնք, աստիճանաբար «զարգանալով» և նորովի դրսևորվելով, յուրաքանչյուր նոր կոնֆլիկտի արդյունքում քայքայել են ընտանիքի կառույցը: Մեթոդիկայում առանձնացված հինգ ոլորտները գրեթե ամբողջությամբ հնարավորություն էին ընձեռում բացահայտել ընտանիք կառույցի հիերարխիկ զարգացման և վերջինիս զարգացմանը խոչընդոտող գործոնները: Գտնում ենք, որ ախտածին դերային փոխհարաբերությունները կարելի էր հաղթահարել, եթե արդեն նախկին ամուսինները առավել ճկուն դերային հայեցակարգ մշակեին սեփական վարքագծում, փորձեին առաջնորդվել ոչ միայն սեփական, այլև երկուստեք կարևոր շահերով:

Ամուսնությունը և ընտանիքը պահպանած զույգերը ևս գերծ չէին դերային բախումներից և ախտածնության ակնառու դրսևորումներից, սակայն, համեմատելով ամուսնալուծված զույգերի դերային և միջանձնային փոխհարաբերություններում առկա վարքականոնների հետ, բացահայտեցինք այն հանգամանքը, ըստ որի՝ նրանք կարողացել էին ճգնաժամային իրավիճակները հարթել երկուստեք զիջումների (շատ հաճախ՝ ոչ կամովին) միջոցով: Սա ևս ախտածին դերի դրսևորման մասին է վկայում, սակայն այս դեպքում խոսել է թեկուզև արդեն հնացած, սակայն այժմ էլ գործածելի «Ամոթ է, բա ինչ կասեն...» ախտածին դերային կարգախոսը:

Փաստորեն այս խմբում մենք բացահայտեցինք այնպիսի ընտանիքներ, որոնք էմոցիոնալ-հուզական ամուսնալուծության մեջ էին գտնվում, սակայն, օտար աչքին ոչ տեսանելի, «ամուր» պահպանում էին ընտանիքը: Եվ, այնուամենայնիվ, դժվար է ասել՝ դրակա՞ն, թե՞ բացասական միտում է վերոգրյալ երևույթը և ի՞նչ ազդեցություն է թողնում այն թե՛ զույգերի, թե՛ ընտանիքի մյուս անդամների, հատկապես երեխաների վրա:

### **3.3. Առողջ և ամուսնալուծված ընտանիքների կոնֆլիկտային վարքի գործոնների հետազոտումը՝ ախտածին դերերի ազդեցությամբ անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկայի կիրառմամբ**


4. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման» մեթոդիկայի ընտրությունը մեր հետազոտության համար պատահական բնույթ չէր կրում, քանի որ այն հնարավորություն է ընձեռնում վերլուծել բախումնային

իրավիճակների, լարված, կոնֆլիկտային փոխհարաբերությունների, ճգնաժամերի, և, ըստ այդմ էլ, նոր, ախտածին դերերի դրսևորումների հաղթահարման տարբերակներ, որոնք առավել տարածված և կիրառելի բնույթ են կրում մերօրյա ընտանիքներում: Մեթոդիկայի կիրառման ընթացքում մեր առջև նպատակ էինք դրել համակարգելու ամուսնական զույգերի (թե՛ արդեն ամուսնալուծված, թե՛ նորմալ) վարքի համապատասխան ձևերի դրսևորման առանձնահատկություններն ու մեխանիզմները կոնֆլիկտային իրավիճակներում (հատկապես ներընտանեկան դերային բախումներում, լարված, ճգնաժամային իրավիճակներում և ախտահարված փոխհարաբերություններում կամ, այլ կերպ ասած, ախտածին դերերի առաջացման ընթացքում):

Մեզ առանձնապես հետաքրքրում էր այն, թե կանանց և տղամարդկանց միջև կոնֆլիկտների առաջացման և սրման ընթացքում վարքի ինչ նոր մեխանիզմներ են առաջանում, ինչպես են նրանք փորձում հաղթահարել ստեղծված, թվում է՝ անելանելի իրավիճակը, և արդյո՞ք լուծման տարբերակը չի ծնում նոր ախտածին դեր, հետևաբար և նոր կոնֆլիկտ: Նման դեպքերի մենք բազմիցս ականատես եղանք: Ամուսնալուծված ընտանիքներից մեկի հետազոտության ժամանակ Խաչատրյան Ժ.-ն, ով 25 տարեկան կին էր, պատմեց, որ ընդունել է ամուսնու պնդումը՝ սեքսուալ հարաբերությունների ժամանակ հնարավորինս անբռնազբոս և ազատ վարքագիծ դրսևորելու՝ մտածելով, որ հարգում է ամուսնու պահանջը (տիպիկ հարմարման ախտածին դեր, քանի որ սեփական ցանկությունը չկա): Ամուսինը՝ Բարոյան Ա.-ն (28 տարեկան), ով սկզբում նման պահանջ էր առաջ քաշել, սեքսուալ ակտն ավարտելուց հետո կնոջը մեղադրել էր «անբարոյականության» մեջ և ասել, որ նրան՝ Ռուսաստանի Դաշնությունում ծնվելու փաստն է դարձրել «անառակ» (ի դեպ ամուսինը չժխտեց կնոջ պատմածը): Պատահածը դարձել էր կասկածների (տիպիկ ախտածին դեր) առաջացման, մեղադրանքների, կոնֆլիկտների պատճառ, և մեկ տարի համատեղ ապրած զույգն ամուսնալուծվել է: Համաձայն Կ. Թոմասի՝ բախման լուծման նպատակը ոչ միայն ոչ բախումնային իրավիճակն է, այլ նաև միջանձնային, այդ թվում՝ ամուսնական հարաբերությունների ընթացքում առաջացած բախումների հաղթահարումը: Հեղինակն առաջարկում է բախման կարգավորման մոդել, որի հիմքում ընկած են երկու մոտեցում. առաջինը, երբ անձը ուղղված է դիմացինի պահանջներին, երկրորդ, երբ անձի ուշադրությունը բևեռված է իր պահանջներին և հետաքրքրություններին: Թոմասը առանձնացրել է բախման հաղթահարման հինգ եղանակ՝ մրցակցություն,

համագործակցություն, փոխզիջում, փախուստ, հարմարում, որոնք, ըստ էության, միջանձնային հարաբերություններում դրսևորվող վարքի ձևեր են:

**Գծապատկեր 1**



**Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության քանակական ցուցանիշները ամուսնալուծված 120 կանանց մոտ**

Վերոնշյալ մեթոդիկան մեր կողմից կիրառվեց թե՛ ամուսնալուծված, թե՛ առողջ որակվող ընտանիքների կանանց և տղամարդկանց շրջանում: Կիրառման ընթացքում փորձեցինք հնարավորինս վերլուծել այն բոլոր բախումային իրավիճակները և ախտահարված փոխհարաբերությունները, որոնք, ծնելով դերային նոր անհամապատասխանություններ՝ ախտածին դերերի տեսքով, ընտանիքներին մղել են ամուսնալուծության և, փաստորեն, վերջիններս չեն կարողացել մինչև վերջ հարմարվել մեթոդիկայում նշված վարքի ձևերից և որևէ մեկի շրջանակներում: Փորձեցինք վերլուծել և այն, թե ընտանիքը պահպանած զույգերի շրջանում հաղթահարման հատկապես ո՞ր ձևն է գերակայել և արդյո՞ք զույգերը գտնում են, որ այն արդարացի է, և ախտածնության դրսևորումները նվազագույնի են հասցված: Կատարելով երկու խմբերի հետազոտությունը՝ փորձել ենք համեմատել և ամփոփել ստացված տվյալներն ըստ փաստերի և փաստացի ընտանեկան կարգավիճակների: Թեստավորմանը

մասնակցել են 21-45 տարեկան ամուսնալուծված 120 իգական և 80 արական սեռի ներկայացուցիչներ: Թեստն անցկացրել ենք առանձնության սկզբունքով՝ հարգելով կանանց և տղամարդկանց պահանջները (թեստի պահանջը ներկայացված է մեր աշխատանքի 3.1 ենթաբաժնում):

Այսպիսով, ընտանեկան բախումների հարթման, լուծման և ապահարմարման ընթացքում ամուսինների կողմից կիրառվում են տարբեր ոճեր, վարքի ձևեր, որոնք մի դեպքում արդարացվում են, և ընտանիքը պահպանվում է (հաճախ՝ գոյատևում), իսկ մյուս դեպքերում պարզապես տրոհվում է՝ չդիմանալով դերային ճնշումների տեղատարափներին: Ինչպես երևում է մեր հետազոտություններից և գծապատկերից (1), ամուսնալուծված կանանց շրջանում ամենատարածված եղանակը փախուստն է, խուսափումը, երբ ընտանիքում ամուսիններից մեկը (հիմնականում կինը) չի համագործակցում մյուսի հետ, հրաժարվում է բախումը լուծելուց և չի պաշտպանում իր իրավունքներն ու շահերը, դառնում է անտարբեր ինչպես իր, այնպես էլ դիմացինի պահանջմունքների բավարարման նկատմամբ (անտարբերություն, անբավարար վիճակ, զոհի տիպիկ ախտածին դեր): Այսպես կարծում են ամուսնալուծված 120 կանանցից 38-ը, որոնց ցուցանիշներն, ըստ սանդղակի, 11 միավոր են:

Ըստ գծապատկերի և մեր հետազոտությունների արդյունքների՝ ամուսնալուծված կանանց մյուս ցուցանիշը բարձրության առումով փոխզիջումն է (10 միավոր): Այսպես կարծել են 35 կանայք: Որպես կանոն փոխզիջումների են գնում այն ժամանակ, երբ բախման լուծման արդյունավետ եղանակներին չեն տիրապետում: Անընդհատ փոխզիջումների գնալով կանայք դարձել են կամակատար (ախտածին դեր) և, արդեն, չեն էլ կարողանում հիշել, թե երբ են վերջին անգամ ընդունել ինքնուրույն որոշում, և նրանց մեծամասնությունը փաստում է, որ ամուսնալուծության ցավոտ որոշումն ընդունելը, թերևս, ինքնուրույնության ոչ հաճելի, սակայն պարտադիր քայլ են համարում:

Ըստ մեթոդիկայի՝ միջին ցուցանիշներ են արձանագրվել մրցակցություն սանդղակում (8 միավոր): Այս եղանակին դիմող անձինք կարծում են, որ հարցի մոտեցման իրենց կերպը՝ դիմացինին սեփական հայացքների առավելությունը և կարևորությունը համոզելու փորձը, տվյալ իրավիճակում ամենալավն է: Հիմքում, այնուամենայնիվ, այն է, որ անձը ձգտում է հասնել իր ուզածին, բավարարել սեփական պահանջմունքները՝

նույնիսկ վնասելով ուրիշին, հաշվի չառնելով վերջինիս պահանջմունքներն ու հետաքրքրությունները (իշխելու, հաստատելու, կայանալու, անբավարարված վիճակը ճնշելու տիպիկ ախտածին դեր): Այսպես է կարծել 25 կին:

Ամուսնալուծված 15 կանանց շրջանում միջինից ցածր միավորներ են արձանագրվել հարմարման սանդղակում(7 միավոր): Սա այն ոճն է, ըստ որի ամուսինը (կինը) կարծես մի կողմ է դնում իր շահերը և փորձում հարմարվել «հակառակորդի» ցանկություններին: Նա համոզված չէ իր գործելակերպի ու փաստերի ճշմարտացիության մեջ, ուստի կիրառում է հարմարվողական վարք, զոհում սեփական շահերը, ցանկություններն ու կարծիքները (բացասական ադապտացիայի տիպիկ ախտածին դեր): Կանայք պնդում էին, որ նման գործելաոճ որդեգրելով՝ իրենք իրենց «ոչ պետքական իր» էին համարում, չնայած փորձում էին պահպանել ընտանիքը, որը, փաստորեն, հարցի լուծում չէր և ի վերջո ախտածին, կործանարար ելք ունեցավ, տվյալ դեպքում հանգեցրեց ամուսնալուծության: Ամուսնալուծված 7 կանանց շրջանում ամենացածր միավորներն են արձանագրվել համագործակցության սանդղակում (4 միավոր): Այս դեպքում անձն առաջ է քաշում խնդրի լուծման եղանակներ, հստակ են դառնում դիրքորոշումները, և հնարավորություն է ստեղծվում համագործակցության եզրեր որոնելու: Տվյալ դեպքում հետազոտվող կանանց շրջանում հարմարման այս եղանակը նախընտրողների թիվը քիչ է եղել, քանի որ ամուսինները նրանց չեն վերաբերվել որպես հավասար իրավունքներ և պարտականություններ ունեցողների:


Մեր կողմից հետազոտված ամուսնալուծված տղամարդկանց շրջանում արձանագրվել է հետևյալ պատկերը (գծապատկեր 2).

Տղամարդիկ բարձր ցուցանիշներ են գրանցել մրցակցության սանդղակում, քանի որ, ելնելով թե՛ սեռադերային, թե՛ էթնիկական առանձնահատկություններից, նման ոճ կիրառելով նրանք փորձել են «ճնշել» կնոջ ինքնուրույնության ցանկացած դրսևորում՝ գտնելով, որ հարցի մոտեցման իրենց եղանակը կամ տրամաբանությունը բեկանելի չէ և ճշմարիտ է («բռնակալի» տիպիկ ախտածին դեր): Այսպես կարծել է 30 տղամարդ՝ արձանագրելով 12 միավորային ցուցանիշ: Ամուսնալուծված տղամարդկանց շրջանում առավել բարձր միավորներ (10 միավոր) հավաքած մյուս ոճը խուսափումն է (փախուստ), որի ժամանակ հարցի լուծումը թողնվում է անորոշ ժամանակի մեջ, հետաձգվում են քննարկումները, քանի որ թե՛ տղամարդիկ, թե՛

կանայք կարծես չունեն ասելիք, կամ չեն ցանկանում դեռևս վերսկսել կոնֆլիկտը: Նմանօրինակ վարքագծերն են խորացված ձևով հանդես եկել վերոնշյալ ընտանիքներում, օտար դարձրել մեկը մյուսի հանդեպ՝ ստիպելով անտարբեր դառնալ, ուղղակի խուսափել ցանկացած շփումից: Այսպես կարծել են ամուսնալուծված 20 տղամարդիկ: Տղամարդկանց շրջանում միջին միավորներ (8) արձանագրվել են այնպիսի ոճերում, ինչպիսիք են՝ հարմարում, ընդառաջ գնալ դիմացինի ցանկություններին, ընդունել նրա տեսակետը, զիջել, համաձայնել կամ զոհել սեփական շահերը: Սակայն, միաժամանակ, նրանց կարծիքով, իրենց կողմից այս ոճի որդեգրումը «հակառակորդներն» ընդունել են որպես դիմագիծ չունենալու տենդենց, թուլակամություն, որն էլ, ըստ նրանց, հանգեցրել է ընտանեկան կառույցի տրոհմանը: Այսպես կարծել է 15 հոգի:

Միջինից ցածր միավորներ (6) արձանագրվել են փոխզիջում տարբերակում, որի էությունը երկու անձի տեսակետների մեջտեղում այսպես կոչված միջին տարբերակի գալն է: Անձը կարծես ձգտում է գտնել երկու կողմերի համար ձեռքբերումների և կորուստների համակցություն: Այստեղ դրսևորվել է այն մեխանիզմը, երբ տղամարդիկ, ըստ իրենց, զոհաբերել են սեփական հետաքրքրությունները և պահանջմունքները, ձգտել դիմացինին ընդառաջ գնալ, սակայն փոխադարձ վարքագիծ չի դրսևորվել՝ ծնելով բախումների նոր ալիք: Այսպես է կարծել ամուսնալուծված 10 տղամարդ:

## **Գծապարկեր 2**




**Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության քանակական ցուցանիշներն ամուսնալուծված 80 տղամարդկանց մոտ**

Յածր միավորներ (4) հավաքած վարքի դրսևորման մյուս ձևը, ինչպես և կանանց շրջանում, համագործակցություն ոճն է: Այս ոճը կիրառող ամուսինները հարցի լուծման համար անհրաժեշտ ժամանակ են գտնում, միջանձնային հարաբերություններում դրսևորում են համակրանք, համեմատաբար մոտ են իրենց արժեքային կողմնորոշումներով: Սա մոտեցումների հանրագումար է, որը գրեթե չի դրսևորվել հետազոտվող տղամարդկանց և կանանց շրջանում: Այսպես է կարծել ամուսնալուծված 5 տղամարդ:

Ստորև ներկայացնենք ընտանիքը պահպանած զույգերի հետազոտության արդյունքները՝ համեմատական վերլուծություն կատարելու նպատակով: Մեթոդիկան անցկացրել ենք տղամարդկանց և կանանց շրջանում, առանձնության սկզբունքով, մասնակցել են 21-45 տարեկան 50 կին և 50 տղամարդ (գծապատկեր 3):

**Գծապատկեր 3**



**Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության քանակական ցուցանիշներն ամուսնացած 50 կանանց և 50 տղամարդկանց մոտ**

Ամուսնության մեջ գտնվող 16 կանանց շրջանում առաջին տեղում է գտնվում փոխզիջման-հարմարման ոճը, որը ենթադրում է փոխզիջումային տարբերակի կիրառումը բախումնային իրավիճակներում, այսպես կոչված՝ միջին տարբերակը: Սա չի նշանակում, թե այս կանանց կարգավիճակադերային համակարգը լիովին նորմալ է: Պարզապես, ըստ նրանց, իրենք ընտրել են ընտանիքի պահպանման ուղիներից ամենաընդունելին (12 միավոր):

Ամուսնության մեջ գտնվող 15 տղամարդկանց մոտ առաջին տեղում է դրվել համագործակցության ոճը, որը ենթադրում է ամուսինների հստակ դիրքորոշումների, հավասար իրավունքների և պարտականությունների կիրառում (12 միավոր):

Կանանցից 15-ի շրջանում վարքի դրսևորման մյուս ոճը համագործակցությունն է (10 միավոր, բացատրությունը ըստ վերոնշյալ պարբերության): Կանայք ևս գտել են, որ, հստակ արտահայտելով սեփական տեսակետները, կխուսափեն ենթադրություններից և նոր կոնֆլիկտներից:

Տղամարդկանցից 14-ի մոտ վարքի հաջորդ դրսևորման ձևը հարմարման ոճն է (11 միավոր): Նրանք գտել են, որ հարմարումն այն ուղին է կամ միջոցը, որի օգնությամբ իրենց (կնոջ և ամուսնու) կոնֆլիկտային փոխհարաբերությունները չեն ազդի ընտանիքի մյուս անդամների վրա: Կանանցից 9-ի մոտ միջին միավորներ են



արձանագրվել հարմարում սանդղակում (բացատրությունը ըստ վերոնշյալ պարբերության, 7 միավոր): Միջին ցուցանիշները վկայում են, որ կանանց ավելի քիչ է մտահոգել ընտանիքի մյուս անդամների վրա կոնֆլիկտների ունեցած ազդեցությունը:

Տղամարդկանցից 10-ի մոտ միջին միավորներ են արձանագրվել փոխզիջում-նային տարբերակում, քանի որ նրանք իրենց դեռևս «պատրաստ» չեն համարում լիովին ընդունելու զիջման բոլոր տարբերակները՝ գտնելով, որ դրանով կորցնում են լիդերության, տան ղեկավարի որակները (8 միավոր):

Միջինից ցածր միավոր 7 կին արձանագրել է փախուստ տարբերակում, որը բնորոշ է հայ կանանց (6 միավոր): Կանանց կարծիքով, խուսափելով տհաճություններից, վեճերից, կարելի է «խաղաղ» պահել ընտանիքի մթնոլորտը: Ենթադրում ենք, որ կանայք այս կերպ ցանկանում են պարզապես հետաձգել վիճելի հարցի լուծումը կամ, որ ավելի հավանական է, վիճելի հարցի պատասխանատվությունը դնում են դիմացինի ուսերին (ախտածին դերի դրսևորում):

Միջինից ցածր միավոր 6 տղամարդ գրանցել է մրցակցություն ոճի կիրառման շրջանակներում (5 միավոր): Կանանց համեմատ տղամարդիկ այս ոճին հաճախ են դիմում՝ գտնելով, որ սեփական կարծիքներն ու համոզմունքները միանշանակ ճշմարտացի են: Այս դեպքում, սակայն, տղամարդիկ իհարկե պահպանում են առավելության զգացումը, սակայն կարողանում են իրենց մեջ ուժ գտնել և, եթե ոչ ընդունել, ապա լսել կանանց տեսակետը:

Ցածր միավորներ 3 կանայք արձանագրել են վերոնշյալ մրցակցության ոլորտում (էթնիկական ստերիոտիպեր)՝ գտնելով, որ հայ կինը պետք է լինի հեզ, «ենթարկվող» (նշեց նրանցից մեկը), լսող և այլն, որպեսզի պահպանի ընտանիքը: Գտնում ենք, որ կարծիքների իսպառ բացակայությունը դեռևս ընտանիքի ամրության գրավական չէ (4 միավոր): 5 տղամարդ ցածր միավորներ է արձանագրել փախուստ ոճում (5 միավոր)՝ նշելով, որ խնդրից կամ կոնֆլիկտային իրավիճակներից «փախչելը» հարցի լուծում չէ, և դա կարող է միայն սրել կոնֆլիկտը:

Բանավոր վերլուծության ընթացքում, իհարկե, տղամարդկանցից շատերը հաստատեցին, որ այդուհանդերձ եղել են կոնֆլիկտային իրավիճակներ, երբ իրենք վարվել են այդպերպ: Վերոնշյալը չի կարող չվկայել դերերի բախման մասին անգամ ամուսնությունը պահպանած ընտանիքներում: Այսպիսով, ի մի բերելով վերոգրյալը, փաստենք, որ ամուսնալուծված ընտանիքներում ակնառու էին դրսևորված

կոնֆլիկտայնության բարձր մակարդակն ու հարմարման անընկալունակության դրսևորումները, որոնք առաջացրել էին դերերի բախում և լարված փոխհարաբերություններ, ճգնաժամային իրավիճակներ, նոր- դեզադապտիվ ախտածին դերերի դրսևորումներ, և որոնց արդյունքում էլ աստիճանաբար տրոհվել էր ընտանիքը, որը, ինքնին, ցավոտ փաստ է:

Լիակատար ներդաշնակություն չարձանագրվեց նաև ընտանիքը պահպանած զույգերի շրջանում, սակայն կոնֆլիկտայնության միջին և միջինից ցածր մակարդակը նրանց հնարավորություն էր ընձեռել լսել մեկմեկու, ընդունել մեկ որոշում անգամ այն դեպքերում, երբ կողմերից մեկը համաձայն չէ: Նման վարքագիծ որդեգրելով՝ հետազոտվող վերոգրյալ զույգերը կարողացել էին պահպանել ընտանիքը:

Այլ խնդիր է, իհարկե, այն հանգամանքը, թե արդյո՞ք այդ «պահպանումը» միայն դրական ներգործություն ունի ընտանիքի մյուս անդամների վրա:

Ամուսնալուծված և ամուսնությունը պահպանած ընտանիքների կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության տարբերությունների գիտական հավաստման համար կիրառել ենք Խի-քառակուսու չափանիշը: Ստորև ներկայացնում ենք հաշվարկման բանաձևերը:

$$\chi^2 = \sum_{i=1}^{k-1} \frac{(f_e - f_i)^2}{f_i}, \text{ էմպիրիկ և տեսական հաճախականություններ}$$

$$f_{ij} = \frac{f_i \cdot f_j}{N}, \text{ } f_i f_j \text{ i-րդ և j-րդ հաճախականություններ}$$

df=16 ազատության աստիճանի դեպքում  $p < 0,001$  հավանականությամբ աղյուսակային արժեքը 39,26 է, իսկ մեր կողմից ստացված ցուցանիշը՝  $\chi^2 = 49,92$ : Կարող ենք հավաստել, որ երկու խմբերի համար տարբերությունն առկա է:

**3.4. Ախտածին դերերի քայքայիչ ազդեցության գործոնների հետազոտումը առողջ և ամուսնալուծված ընտանիքներում՝ ամուսնությամբ բավարարվածության մեթոդիկայի կիրառմամբ**

Վ. Վ. Ստոլինի «Ամուսնությամբ բավարարվածության հարցարան» մեթոդիկան նախատեսված է ամուսնությամբ բավարարվածության կամ անբավարարվածության, ինչպես նաև փոխհամաձայնության (փոխըմբռնման) կամ տարաձայնության աստիճանների արագ ախտորոշման համար, քանի որ հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակահատվածում իրագործել վերոգրյալ հատկանիշների հետազոտումը և կատարել համապատասխան եզրահանգումներ: Մեթոդիկան ներառում է 24 պնդում՝ «ճիշտ է», «դժվարանում եմ պատասխանել» և «ճիշտ չէ» պատասխանների ընտրության կիրառմամբ: Արդյունքները վերլուծվում են ըստ բանալու հետ համընկումների կամ անհամապատասխանության, յոթ տարբերակների ընտրության հնարավորությամբ: Մեթոդիկայի կիրառման շրջանակներում նպատակ էինք հետապնդում հետազոտել անձանց պատկերացումները ընտանեկան հարաբերությունների և դերերի բաշխման վերաբերյալ, ինչպես նաև վերլուծել այն բոլոր անհամաձայնությունները, անբավարարվածության դրսևորումները, որոնք ամուսնությունը դարձրել էին ռիսկային, իսկ ընտանիքը՝ տրոհված: Ընդհանուր անբավարարվածության հենքի վրա ավելի հաճախակի են դառնում դերային և այլ տեսակի կոնֆլիկտները և ամուսնալուծությունները, իսկ հիմնականում նման ապրում առաջ է գալիս այն դեպքում, երբ ընտանիքի ներքին իրադրությունը պաթոգեն-հիվանդագին, ախտածին է:

Ստորև կներկայացնենք «Ամուսնության բավարարվածության հարցարան» մեթոդիկայի կիրառմամբ ստացված տվյալները նախ ամուսնալուծված, ապա ընտանիք պահպանած անձանց շրջանում: Մեթոդիկան կիրառվել է 21-45 տարեկան 120 իգական, 80 արական սեռի ներկայացուցիչների շրջանում (աղս. 7, 8):

#### Աղյուսակ 7

<b>Ընտանիքի բնութագիրը</b>	<b>քանակ</b>	<b>միավոր</b>
Միանգամայն անբարենպաստ	5	0-16
Անբարենպաստ	40	17-22
Ավելի շուտ անբարենպաստ	35	23-26
Անցումային	22	27-28
Ավելի շուտ բարենպաստ	18	29-32
Բարենպաստ	-	-
Միանգամայն բարենպաստ	-	-

**Ամուսնալուծված 120 կանանց՝ ամուսնությամբ բավարարվածության**

**մեթոդիկայով հետազոտության ցուցանիշները**

Հետազոտված կանանցից 40-ը, ըստ հարցարանի, հավաքել էր 17-22 միավոր, որը համապատասխանում է սանդղակի «անբարենպաստ ընտանիքներ» ենթակետին: Սա նշանակում է, որ ամուսնության ընթացքում վերոգրյալ կանայք գրեթե բավարարվածություն չեն զգացել ընտանեկան հարաբերություններից, դերային և ներդերային շփումներից, ինչպես նաև ընտանեկան գործառույթներից: Վերոնշյալի արդյունքում էլ առաջացել են անհաղթահարելի խոչընդոտներ, որոնք էլ մղել են ընտանիքի քայքայմանը: Հետազոտված կանանցից 35-ի մոտ արձանագրեցինք 23-26 միավորների հանրագումարը, որը համապատասխանում է սանդղակի «ավելի շուտ անբարենպաստ ընտանիքներ» ենթակետին: Այս կանանց շրջանում ևս գրանցվեց ամուսնությամբ և ընտանեկան կյանքով ապրելու անբավարարվածության բարձր ցուցանիշ: Ենթադրում ենք, որ վերոնշյալ երկու փուլերում ակնհայտ են եղել դերային ախտահարված փոխհարաբերությունները, քանի որ արդեն, ինչպես նշել ենք, անբավարարվածությունն ինքը արդյունք է ընտանիքի ներքին պաթոգեն-ախտածին դերային փոխհարաբերությունների: Հետազոտված 22 կանանց մոտ գրանցվեց 27-28 միավոր, որը համապատասխանում է սանդղակի «անցումային ընտանիքներ» ենթակետին: Սա այն վիճակն է, որը համարվում է սահմանային: Ենթադրում ենք, որ եթե նման անձինք ունենային դերային համաձայնության կամ ընտանեկան փոխհարաբերությունների լիարժեքության մասին փոքր ինչ ավելի տեղեկատվություն կամ դիմեին համապատասխան մասնագետների օգնությանը, ապա ընտանիքը հնարավոր կլիներ փրկել: Հետազոտված 18 կանանց մոտ արձանագրվեց 29-32 միավոր, որը համապատասխանում է սանդղակի «ավելի շուտ անբարենպաստ ընտանիքներ» ենթակետին: Արդյունքն ինքնին զարմանալի է, քանի որ այն չէր արդարացվել նախկինում, և դերերի բախման ու կոնֆլիկտների ազդեցության պայմաններում ընտանիքները տրոհվել էին:

Կանանցից միայն 5-ի մոտ արձանագրվեց 0-16 միավոր, որը համապատասխանում է սանդղակի «միանգամայն անբարենպաստ ընտանիքներ» ենթակետին. մի արդյունք, որն ինքնին խոսում է: Այս հինգ կանանց ընտանիքները տրոհվել էին ամուսնության առաջին հնգամյակում (պարզեցինք բանավոր հարցման ժամանակ,

թեստի կիրառման արդյունքների ամփոփումից հետո): Մյուս սանդղակներում միավորներ չեն արձանագրվել:

### Աղյուսակ 8

Ընտանիքի բնութագիրը	քանակ	միավոր
Միանգամայն անբարենպաստ	12	0-16
Անբարենպաստ	27	17-22
Ավելի շուտ անբարենպաստ	35	23-26
Անցումային	8	27-28
Ավելի շուտ բարենպաստ	-	-
Բարենպաստ	-	-
Միանգամայն բարենպաստ	-	-

**Ամուսնալուծված 80 տղամարդկանց՝ ամուսնությամբ բավարարվածության մեթոդիկայով հետազոտության ցուցանիշները**

Ըստ տղամարդկանց խմբի հետազոտման արդյունքների (աղս. 8)՝ ունենք հետևյալ միավորները, հետևաբար նաև սանդղակի՝ դրանց համապատասխանող ենթակետերը.

35-ը գրանցել են 23-26 միավոր՝ «ավելի շուտ անբարենպաստ ընտանիք». 25-ը՝ 17-22 միավոր՝ «անբարենպաստ ընտանիք» (բացատրությունը ըստ կանանց վերոնշյալ արդյունքների). 12-ը՝ 0-16 միավոր՝ «միանգամայն անբարենպաստ ընտանիք» (սա, իհարկե, կարելի էր կանխատեսել, քանի որ արդյունքները առավել քան ակնհայտ են. տրոհված, քայքայված ընտանիքներ). 8-ը՝ 27-28 միավոր՝ «անցումային ընտանիք»:

Մյուս սանդղակներում միավորներ չեն արձանագրվել:

Ստորև, վերջնական համեմատություն կատարելու նպատակով, ներկայացնենք ամուսնության մեջ գտնվող զույգերի պատասխանների արդյունքները (աղս. 9, 10):

### Աղյուսակ 9

Ընտանիքի բնութագիրը	Քանակ	Բալ
Միանգամայն անբարենպաստ	-	-
Անբարենպաստ	-	-
Ավելի շուտ անբարենպաստ	9	23-26
Անցումային	12	27-28

Ավելի շուտ բարենպաստ	18	29-32
Բարենպաստ	11	33-38
Միանգամայն բարենպաստ	-	-

**Ամուսնացած 50 կանանց՝ ամուսնությանը բավարարվածության մեթոդիկայով հետազոտության ցուցանիշները**

Հետազոտված 18 կանայք գրանցել են 29-32 միավոր, որը համապատասխանում է սանդղակի «ավելի շուտ բարենպաստ ընտանիք» ենթակետին:

Սա, իհարկե, լավագույն ցուցանիշը համարել չի կարելի, քանի որ միանձնյա ներդաշնակություն կարծես թե չի արձանագրվել (հարմարման կամ փոխզիջման դերային ոճ):

12 կանանց գրանցած 27-28 միավորը համապատասխանում էր սանդղակի «անցումային ընտանիք» ենթակետին: Ենթադրում ենք, որ այս կանանց հաջողվել է գտնել փոխզիջման ընդհանուր եզրեր: 11 կանանց գրանցած 33-38 միավորը սանդղակի «բարենպաստ ընտանիք» ենթակետի ցուցանիշն է:

9 կնոջից գրանցված 23-26 միավորը, որը համապատասխանում է «ավելի շուտ անբարենպաստ ընտանիք» ենթակետին, վկայում է ոչ թե կանանց լիարժեք ներդաշնակ փոխհարաբերությունների, այլ անբավարարվածության կիսով չափ գիտակցված վիճակների մասին, որտեղ ախտահարված փոխհարաբերությունները, որպես կանոն, եզակի երևույթներ չեն: Մյուս սանդղակներում միավորներ չեն արձանագրվել:

**Աղյուսակ 10**

<b>Ընտանիքի բնութագիրը</b>	<b>քանակ</b>	<b>միավոր</b>
Միանգամայն անբարենպաստ	-	-
Անբարենպաստ	-	-
Ավելի շուտ անբարենպաստ	3	23-26
Անցումային	10	27-28
Ավելի շուտ բարենպաստ	20	29-32
Բարենպաստ	15	33-38
Միանգամայն բարենպաստ	2	39-48

**Ամուսնացած 50 տղամարդկանց՝ ամուսնությանը բավարարվածության մեթոդիկայով հետազոտության ցուցանիշները**

Ամուսնացած 20 տղամարդ արձանագրել է 29-32 միավոր, որը համապատասխանում է սանդղակի «ավելի շուտ բարենպաստ ընտանիք» ենթակետին: 15 տղամարդկանց շրջանում գրանցվել է 33-38 միավոր, որը սանդղակի «բարենպաստ ընտանիք» ենթակետն է: 10 տղամարդ ընտրել է «անցումային ընտանիք» ենթակետը, այսինքն՝ հավաքել էր 27-28 միավոր: Իսկ 3 տղամարդու արձանագրած 23-26 միավորը համապատասխանում է «ավելի շուտ անբարենպաստ ընտանիք» ենթակետին, մի արդյունք, որը ևս վկայում է ամուսնական փոխհարաբերություններում ընդհանուր անբավարարվածությունից առաջացած ախտածնության մասին: Միայն 2 տղամարդ է արձանագրել 39-48 միավոր, որը սանդղակի «միանգամայն բարենպաստ ընտանիք» ենթակետի ցուցանիշն է: Սա, իհարկե, փաստում է այն մասին, որ ընդհանուր կամ գիտակցված անբավարարվածությունը չի շրջանցել նաև ամուսնացած զույգերին, պարզապես վերջիններս կարողացել են գտնել անբավարարվածության հենքով առաջացած կոնֆլիկտների նվազեցման ուղիներ: Մյուս սանդղակներում միավորներ չեն արձանագրվել: Այսպիսով, եթե ընդհանրացնենք, պետք է հաստատենք, որ թե՛ ամուսնալուծված, թե՛ ամուսնացած ընտանիքներում, ըստ մեթոդիկայի արդյունքների, ամուսնությամբ անբավարարվածության դրսևորումները վկայում են ամուսնալուծված ընտանիքներում առկա բարձր կոնֆլիկտայնության և ախտահարված փոխհարաբերությունների մասին, իսկ ամուսնացած ընտանիքներում՝ ավելի շուտ ընդհանուր անբավարարվածության մասին, որի դրսևորումները զույգերը փորձում են հարթել երկուստեք՝ ընտանիքը պահպանելու համար:

### **3.5. Առողջ և ամուսնալուծված ընտանիքներում մեծացող**

#### **երեխաների պատկերացումներն ընտանիքի մասին:**

**«Ընտանիքի կինետիկ պատկերը» և «Անավարտ նախադասություններ»**


**մեթոդիկաները որպես միջանձնային հարաբերությունների**

**ախտորոշման միջոց**

Ռ. Բեռնսի և Ն. Կաուֆմանի «Ընտանիքի կինետիկ պատկերը» խաղ-մեթոդիկան կիրառել ենք չորս հանրակրթական դպրոցների շուրջ 140 աշակերտների շրջանում: Աշակերտները սովորում էին վերոգրյալ դպրոցների յոթից տասներկուերորդ դասա-


րաններում, նրանց միջին տարիքը 12-17(18) էր: Այդ դպրոցներն են՝ Արմավիրի մարզի Նորակերտի, Ծաղկալանջի, Մուսալեռի միջնակարգ և Փարաքարի հիմնական դպրոցները: 140 աշակերտներից 80-ը ամուսնացած ընտանիքներից էին, իսկ 60-ը՝ ամուսնալուծված ընտանիքներից: Երեխաների ներգրավվածությունը հետազոտությանը միտված էր պարզելու ընտանիքի, ընտանեկան փոխհարաբերությունների, դերային կարծրատիպերի վերաբերյալ նրանց պատկերացումները, մասնավորապես այն երեխաների, ովքեր ամուսնալուծված ընտանիքներում էին ապրում, հոր կամ մոր հետ, առավելապես մոր հետ: Թեստն անցկացրել ենք երեք տարիների ընթացքում, տարբեր դպրոցներում, վերջում կատարել ամփոփ վերլուծություն: Թեստի կատարման հրահանգները և պահանջները մեկնաբանված են մեր աշխատանքի 3.1 ենթագլխում: Միայն հավելենք, որ մեթոդիկան ներառում է հինգ հիմնական սանդղակներ՝ ընտանեկան բարենպաստ իրավիճակ, տազնապայնություն, կոնֆլիկտայնություն, անլիարժեքության զգացում (անլիարժեքություն), ընտանեկան անբարենպաստ իրավիճակ (թշնամանք): Ամուսնացած 80 ընտանիքների երեխաներ արձանագրել են հետևյալ պատկերը (նկար 1).





**«Ընտանիքի կինետիկ պատկերը» մեթոդիկայի թվային արդյունքները՝ ըստ ամուսնությունը պահպանած ընտանիքների երեխաների հետազոտության**

52 երեխա (13 միավոր) արտացոլել էր բարենպաստ ընտանիքի պատկերը, այսինքն՝ այս երեխաները ներդաշնակ պատկերացումներ ունեին առողջ ընտանիքի դերային փոխհարաբերությունների մասին: 12 հոգի (14 միավոր) արտացոլել էին տագնապային ընտանիքի պատկերը, որն ինքնին մտահոգիչ ցուցանիշ է առողջ համարվող ընտանիքների երեխաների համար: 7-ի (18 միավոր) ցուցանիշները խոսում էին կոնֆլիկտային ընտանիքի մասին, 8-ինը՝ (11 միավոր)՝ անլիարժեք ընտանիքի, իսկ 1 երեխա (12 միավոր) արտացոլել էր թշնամական (անբարենպաստ) ընտանիքի պատկերը: Ամուսնալուծված 60 ընտանիքների երեխաներ իրենց նկարներում արտացոլել էին հետևյալ պատկերը (նկար 2). 4 երեխա արտացոլել էր բարենպաստ ընտանիքի պատկերը (13 միավոր), 10 երեխա՝ տագնապային ընտանիքի (14 միավոր), 18 երեխայի նկարներում հստակ ուրվագծված էր կոնֆլիկտային ընտանիքը (18 միավոր), 20-ի (11 միավոր) նկարներում՝ անլիարժեք ընտանիքը, իսկ 8 երեխա (12 միավոր) ներկայացրել էր թշնամական (անբարենպաստ) ընտանիքի պատկերը:



**«Ընտանիքի կինետիկ պատկերը» մեթոդիկայի թվային արդյունքները՝ ըստ ամուսնալուծված ընտանիքների երեխաների հետազոտության**

Այսպիսով, վերլուծելով վերոգրյալ կրթական հաստատություններում անցկացված հետազոտության արդյունքները, փաստենք, որ առողջ ընտանիքներում բնակվող աշակերտների զգալի մասը կայուն պատկերացումներ ունի ներընտանեկան հարաբերությունների ներդաշնակության, դերերի ճիշտ տեղաբաշխման («մոր» դեր, «հոր» դեր և այլն), ընտանիքում դրական հույզերի արտահայտվածության և ընտանիքի անդամների փոխկապվածության մասին: Սակայն, ականատես եղանք և այն փաստին, որ նույն՝ առողջ ընտանիքներում բնակվող աշակերտների որոշ մասն էլ կայուն պատկերացումներ չունեն ընտանիքի, ընտանեկան փոխհարաբերությունների, դերերի ներդաշնակության մասին: Սա վկայում է այն մասին, որ վերոգրյալ ընտանիքներում կամ առկա են ախտահարված ներքին կամ արտաքինապես դրսևորվող փոխհարաբերություններ կամ, այսպես կոչված, «լրդված» դերեր (հոր կամ մոր դերի ոչ ճշգրիտ դրսևորում), որոնք երեխաներն այնքան էլ լավ չեն ընկալում (ախտաճնության դրսևորում երկու սերունդների միջև): Ամուսնալուծված ընտանիքների երեխաների զգալի մասի շրջանում, ինչպես և սպասում էինք, արձանագրվեց բարձր կոնֆլիկտայնություն և տագնապայնություն, որը բնորոշ է դերային աններդաշնակությամբ,

լարված, բախումնային ընտանիքներին և, ըստ այդմ էլ, նրանցում մեծացող երեխաներին: Եթե անգամ երեխաները արտաքուստ կոնֆլիկտային և տագնապային վարք չեն դրսևորում, ներքուստ նրանց չեն լքում «կիսատ լինելու», «կորստի» և այլ նմանօրինակ զգացումները: Ինչ խոսք, հուսադրող էր այն փաստը, որ ամուսնալուծված ընտանիքների երեխաներից շատերը, հաղթահարելով ընտանիքում եղած ախտածին փոխհարաբերությունները, կարողացել են պահպանել ընտանիք հիշեցնող կուռ ամրության սեփական տեսլականը և ընթանալ առաջ:

Ցանկանում ենք նշել հատկապես աշակերտուհիներից մեկին՝ Մկրտչյան Մ.-ին (Արմավիրի մարզի Նորակերտի միջանակարգ դպրոց, X դասարան), որը, անտեսելով երկու ծնողների անբարո վարքագիծը և ամուսնալուծության փաստը, շարունակում է լավ սովորել և կերտում է ապագայի վերաբերյալ հաստատուն պլաններ:

Հուսանք, որ նման երեխաների թիվը մեր երկրում կավելանա և տարբեր սոցիալական ինստիտուտներ կաջակցեն նրանց:

**«Միջանձնային հարաբերությունների ախտորոշումը անավարտ նախադասու թյունների միջոցով»** մեթոդիկական հետազոտողին հնարավորություն է ընձեռում կոնֆլիկտայնության մակարդակը վերլուծել միջանձնային փոխհարաբերությունների համակարգում, այսինքն թույլ է տալիս փորձարկվողների վարքի կոնֆլիկտային կողմերի հետազոտությունն իրագործել փոխհարաբերությունների արտաքին, տեսանելի հատվածում: Մեթոդիկայի բացատրությունը տրված է մեր աշխատանքի 3.1 ենթաբաժնում:

Մեթոդիկայի անցկացումը հետապնդում էր երկու նպատակ. նախ՝ համակարգված ձևով հետազոտել փորձարկվողների միջանձնային փոխհարաբերությունների տիրույթում դրսևորվող վարքագծային առկա նորմերն ու առանձնահատկությունները (իրագործվել է թեստում առկա նախադասությունների բանավոր վերլուծության ընթացքում), ապա, թեստի գրավոր տարբերակի միջոցով փորձել վերլուծել հետազոտվողների կոնֆլիկտայնության մակարդակի աստիճանը միջդերային-միջանձնային արտաքին (այսինքն շրջապատի հետ) փոխհարաբերություններում:

Մեր խնդիրն էր պարզել, թե ընտանիքներում առկա դերային անհամաձայնությունները, բախումները, ախտահարված-ախտածին փոխհարաբերու-

թյունները ինչ ձևով են ազդում հետազոտվողների և շրջապատի հարաբերությունների տարբեր կողմերի վրա:

Հետազոտությունն անցկացրել ենք 4 դպրոցների 140 աշակերտների շրջանում: Հետազոտության արդյունքների առավելագույն հավաստիությունն ապահովելու համար 28 անավարտ նախադասությունները խմբավորել ենք 7 հիմնական խմբերում՝ ըստ աղյուսակի համարների համընկնումների, և կատարել հետազոտվողների՝ յուրաքանչյուր ոլորտի նկատմամբ ունեցած վերաբերմունքի անհատական ուսումնասիրում: Այդ վերլուծություններն էլ, համաձայն մեթոդիկայի պահանջի, դասակարգել ենք ըստ դրական, բացասական և չեզոք սանդղակների, որտեղ ամփոփել ենք թե՛ ամուսնությունը պահպանած, թե՛ ամուսնալուծված ընտանիքների երեխաների պատասխանների արդյունքները:

**Համարակալված նախադասությունների այդ 7 խմբերն են.**


1	Վերաբերմունքը ընտանիքի նկատմամբ	1, 8, 15, 22
2	Վերաբերմունքը տղամարդկանց /կանանց նկատմամբ	2, 9, 16, 23
3	Վերաբերմունքն իր նկատմամբ	3, 10, 17, 24
4	Կյանքի նպատակները	4, 11, 18, 28
5	Վերաբերմունքը հոր նկատմամբ	5, 12, 19, 26
6	Վերաբերմունքը մոր նկատմամբ	6, 13, 20, 27
7	Վերաբերմունքը ընկերների և ծանոթների նկատմամբ	7, 14, 21, 28

Նշյալ խմբերին համապատասխանող ցուցանիշներն ավելի տեսանելի են դառնում գծապատկերների (հիստոգրամների) միջոցով:

**Ամուսնացած ընտանիքներում բնակվող 80 երեխաներ** (գծապատկեր 4). նրանցից 45-ի վերաբերմունքը ընտանիքի նկատմամբ դրական է, հարգալից, 20-ինը՝ բացասական, 15-ինը՝ չեզոք: 80 երեխաներից 50-ի վերաբերմունքը տղամարդկանց և կանանց նկատմամբ ընդհանրապես դրական էր, 10-ը բացասական կարծիք և համարժեք վերաբերմունք ուներ, 20-ը ընդհանրապես չեզոք էր, և, կարելի է ասել, անտարբեր վերաբերմունք ուներ: Սեփական անձը դրական է գնահատել 40 երեխա, բացասական՝ 25-ը, իսկ 15-ը՝ այդպես էլ, կարծիքների մեջ «սուղ» գտնվեց և հաստեց

չեզոքության սահմանագիծը: Կյանքի նպատակները հստակ էին, արժևորված և դրական 48-ի համար: 19 երեխա այդ հարցում ցուցաբերեց բացասական նախատրամադրվա ծություն, իսկ 13-ը՝ չեզոք: Հոր նկատմամբ դրական վերաբերմունք ուներ 35 երեխա, 15-ի մոտ գերակշռում էր բացասական սանդղակը, իսկ 30-ը չեզոք վերաբերմունք դրսևորեցին: Երեխաներից 65-ը սիրով և քնքշությամբ են վերաբերվում մորը, դրական, 5-ը՝ ընդգծված բացասական, իսկ 10 երեխաների պատասխանները համապատասխանեցին չեզոք սանդղակին: Ընկերներին և ծանոթներին դրական են վերաբերվում 28-ը, 25-ը՝ ընդգծված բացասական, 27-ը՝ չեզոք:

#### Գծապատկեր 4



#### Ամուսնացած ընտանիքների 80 երեխաների տվյալներն ըստ «Անավարտ նախադասությունների մեթոդիկայի»


Ամուսնալուծված ընտանիքներում բնակվող 60 երեխաներից 15-ը ընտանիքի հանդեպ դրական վերաբերմունք ունեին, 40-ը՝ բացասական, ինչը հստակ արտահայտվեց նաև բանավոր վերլուծության ընթացքում, իսկ 5-ը՝ չեզոք:

18-ը դրական էին վերաբերվում տղամարդկանց և կանանց, 33-ը՝ բացասական, իսկ 18-ը՝ չեզոք: Սեփական անձը դրական են գնահատել 22-ը, բացասական՝ 20-ը, իսկ չեզոք սանդղակում տեղորոշվել են 18-ը:

Երեխաներից 15-ի կյանքի նպատակները հստակ էին, 35-ը՝ ընդգծված բացասական վերաբերմունք ունեին իրենց կյանքի և ընդհանրապես ապագայի նկատմամբ, իսկ 10-ի վերաբերմունքը պասիվ էր, չեզոք:

10-ի վերաբերմունքը հոր նկատմամբ դրական էր, 38-ինը՝ շեշտված բացասական, որը նրանք բանավոր հարցման ընթացքում ևս չթաքցրեցին, իսկ 12-ն ունեին չեզոք վերաբերմունք:

## Գծապատկեր 5



### Ամուսնալուծված ընտանիքների 60 երեխաների տվյալներն ըստ «Անավարտ նախադասությունների մեթոդիկայի»

Մորը շատ լավ, դրական էին վերաբերվում 40-ը, 5-ի վերաբերմունքը՝ բացասական էր, այն էլ՝ շեշտված, քանի որ մորն էին համարում ընտանիքի կործանման պատճառ, իսկ 15-ը, ընդհանրապես, չեզոք վերաբերմունք ունեին:

Ընկերներին և ծանոթներին դրական էին վերաբերվում 22-ը, բացասական, մերժողական՝ 18-ը, իսկ 20-ն ունեին չեզոք, անտարբեր վերաբերմունք: Փաստերն ինքնին խոսուն են, քանի որ ընտանիքի հայելային արտացոլումը համարվող երեխան ուղղակիորեն անմասն չի կարող մնալ ընտանեկան փոխհարաբերությունների ցանկացած դրսևորումից և, կամա թե ակամա, հայտնվում է իրադարձությունների թատերաբեմում: Ընտանիքներում մշտապես ականատես լինելով ծնողների

փոխհարաբերություններում առկա կոնֆլիկտային դրսևորումներին, գործառույթների ոչ նորմալ կենսագործմանը, դերային սպասումների և հավակնությունների բախմանը, ախտահարված փոխհարաբերություններին՝ երեխաները խոր և անջնջելի տպավորություններ են ունենում, որոնք նրանց վրա ուժգին ազդեցություն են թողնում. նրանք դառնում են ավելի խոցելի, դյուրաբորբոք, հաճախ՝ ծայրահեղ անտարբեր, ագրեսիվ, անբավարարության զգացումով. վիճակներ, որոնք չեն կարող մտահոգիչ չլինել:

Գտնում ենք, որ, անկախ ընտանեկան կարգավիճակից, երեխաների համար շատ կարևոր է իրենց գնահատված ու սիրված զգալը: Անգամ լիարժեք համարվող ընտանիքներում բնակվող շատ երեխաներ, ըստ հետազոտության ցուցանիշների, դարձյալ չեն վստահում ծնողներին: Իհարկե, ամուսնալուծված ընտանիքներում այս երևույթն առավել տեսանելի է, քանի որ երեխաները, անընդհատ գտնվելով խնդրահարույց իրավիճակներում, անկախ իրենց կամքից, ցուցաբերում են վարքագիծ, որը մինչ այդ խորթ էր իրենց համար, կատարում են այնպիսի արարքներ, որոնց համար հետագայում գուցե զղջում են, ասում են բառեր, որոնց թողած ազդեցությունը ցավոտ է լինում:

Բերենք հերթական ցավոտ օրինակը. Արմավիրի մարզի Նորակերտի միջնակարգ դպրոցի տասներորդ դասարանում սովորում է Խաչատրյան Ա.-ն (աղջիկ), ում ծնողներն ամուսնալուծվել են մեր կողմից հետազոտված դերային բախումների և փոխադարձ անընկալունակության պատճառով: Երեխայի հայրը նոր ընտանիք է կազմել (ոչ փաստացի) և ունի երեխա (տղա), որը սովորում է նույն դպրոցում: Հայրն ամեն անգամ դպրոց գալուց այցելում է որդուն, հետաքրքրվում նրա դասերով, պարապմունքներով, իսկ ավագ դստերը չի նկատում անգամ: Երեխան ամեն անգամ լուրջ ճգնաժամ է ապրում, քանի որ ամեն տեսնելուց հոր հանդեպ դրսևորվում է սիրո և ատելության համախառն զգացում: Մեր հետ զրույցներում հայրն ասաց, որ ինքը նախկին ընտանիքի մասին ուզում է մոռանալ, իսկ երեխան էլ «մոր կտորն» է, և դրա համար էլ ինքը տեսնել չի ուզում: Սա, իհարկե, սարսափելի իրողություն է, քանի որ մանկական անմեղ աշխարհում և պարզ գիտակցության մեջ չեն տեղավորվում մեծերի «բացատրությունները», նրանք ուզում են միայն սիրվել և հասկացվել: Ստացված

արդյունքների գիտական հավաստման նպատակով կատարել ենք մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն խի-քառակուսի չափանիշի օգնությամբ:

### Աղյուսակ 11

Վերաբերմունքը ընտանիքին	10,415
Վերաբերմունքը տղամարդկանց/կանանց	12,544
Վերաբերմունքն իր նկատմամբ	1,399
Կյանքի նպատակները	9,558
Վերաբերմունքը հոր նկատմամբ	12,568
Վերաբերմունքը մոր նկատմամբ	1,792
Վերաբերմունքը ընկերների և ծանոթների նկատմամբ	0,020

#### **Վիճակագրական վերլուծություն՝ ըստ խի-քառակուսի չափանիշի ( $p < 0,05$ )**

$\chi^2$  հաշվարկային արդյունքները ամուսնալուծված և ամուսնությունը պահպանած ընտանիքների երեխաների խմբերի համար ներկայացվում է աղյուսակում:  $df=4$  ազատության աստիճանի դեպքում  $p < 0,05$  հավանականությամբ աղյուսակային արժեքը 9.49 է: Կարող ենք հավաստել, որ տարբերությունն առկա է վերաբերմունքի 4 ձևերում, որը նաև ցույց են տալիս վերոնշյալ երկու խմբերի վերաբերմունքի ձևերում առկա էական տարբերությունները:

Այս ամենից կարելի է գալ հետևության, որ մեր իրականության մեջ դեռևս շատ են այնպիսի ընտանիքները, որոնք, հայտնվելով լարված դերային փոխհարաբերությունների թատերաբեմում, սեփական արարքներն ինչ-որ կերպ արդարացնելու թյուր պատկերացմամբ, օգտագործում են անգամ իրենց երեխաներին՝ նրանց կանգնեցնելով թիրախային խմբում հայտնվելու մեծ վտանգի առաջ: Եվ քանի որ ընտանեկան բախումնաձին, լարված իրավիճակները բացասական ազդեցություն են թողնում երեխայի վրա, ուստի հարկ է, որ ծնողները, իրենց վերաբերող որոշումներն ընդունելուց առաջ, փորձեն առավել խորությամբ գիտակցել ախտաձին հետևանքների անդառնալիությունը երեխայի կյանքում:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներընտանեկան դերային համակարգի և, մասնավորապես, ախտածին-դեզադապտիվ դերերի ու դրանց քայքայիչ ազդեցության մասին մեր հետազոտությունը թույլ է տալիս կատարել ստորև բերվող եզրահանգումները:

1) Յուրաքանչյուր ստեղծվող ընտանիք կարգավիճակների և դերերի համակարգ է, որի սպասումները(էքսպեկտացիաները) փոխկապակցված են և վերջիններիս չարդարացվելու կամ մասնակիորեն արդարացվելու պարագայում դրսևորվում են նոր՝ ախտածին- դեզադապտիվ դերեր, որոնք փոխում են ընտանիքի կառույցը:

2) Ներընտանեկան հարաբերություններում գոյություն ունեն դերային բախումների և, հետևաբար, կանֆլիկտների «զարգացման» փուլեր, որոնք պայմանավորված են ախտածին դերերի և սպասումների(էքսպեկտացիաների) հակասությամբ, ստեղծում են լարված փոխհարաբերություններ և ճգնաժամեր, որոնք էլ իրենց հերթին արտահայտվում են ինչպես ամուսինների, այնպես էլ ողջ ընտանեկան հարաբերությունների մակարդակում:

3) Ախտածին- դեզադապտիվ դերերի կիզակետում դրսևորվող բախումնածին, ճգնաժամային փոխհարաբերությունները մեծամասամբ հետևանք են ընտանեկան դերերի նորմալ-ադապտիվ կերպի ընդունման անկարողության և փոխընդունման բացակայության: Վերոգրյալի արդյունքում ախտածին- դեզադապտիվ դերերի ճնշմամբ ընտանիքը կազմալուծվում, քայքայվում է: Սա վկայում է այն մասին, որ դերերի փաստացի փոխընդունման կարողությունը ամուսինների և ընտանիքի մյուս անդամների փոխադարձ հարմարման գլխավոր պայմանն է:

4) Ընտանեկան ճգնաժամային փոխհարաբերություններում առաջացող ախտածին- դեզադապտիվ դերերը երևան գալով ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների վարքագծում, սկսում են աստիճանաբար ներգործել մյուսների վրա և քայքայելով՝ կազմալուծել ընտանիքը: Այս պարագայում ուշադրության է արժանի հատկապես երեխաների կարգավիճակադերային փոխհարաբերությունների ակնհայտ փոփոխականության դրսևորումը և որոշակի վարքականոնների ուղակի խեղման դեպքերը: Նման երեխաներից շատերը ուղղակիորեն կորցնում են հետագայում նորմալ Ընտանիք կազմելու կամ ամուսնական փոխհարաբերություններում հարմարվելու

ունակությունը, ձգտում են միայնակության, անգամ դառնում են մարդատյաց:

5) Արդեն ամուսնալուծված ընտանիքի անդամները շատ հաճախ ախտահարված դերային փոխհարաբերությունների թատերաբեմ են դարձնում նաև հասարակության այսպես կոչված արտաքին հատվածը՝ իրենց անմիջական շրջապատը, դրսևորելով հարմարման անկարողություն, երբեմն՝ անընկալություն:

6) Ընտանեկան խնդիրների, առաջացած և առաջացող խնդրահարույց, լարված փոխհարաբերությունների, ախտածին դեզադապտիվ դերերի և ախտահարված հարաբերությունների հիմնական պատճառը սեփական դերի ոչ ճիշտ, հաճախ՝ «ուռճացված», «գերազանցված» պատկերացումն է՝ դիմացինի նսեմացման կամ ստորադասման հաշվին:

### **Գործնական առաջարկություններ**

Ներընտանեկան դերային համակարգի և, մասնավորապես ախտածին դերերի քայքայիչ ազդեցության մասին մեր կողմից կատարված տեսական և փորձարարական հետազոտությունները թույլ են տալիս կատարել հետևյալ առաջարկությունները.

1. Ախտածին- դեզադապտիվ դերերի առաջացման և քայքայիչ ազդեցության դրսևորման պատճառները մեծամասամբ դերային սպասումների և հավակնությունների ապարդարացումն է: Սա նշանակում է, որ վերոգրյալ լարված, բախումնածին փոխհարաբերությունների առաջացման հավանականությունը էապես կնվազեր, եթե ընտանիք կազմող զույգերը ունենային սպասվելիք դերային հարաբերությունների մասին իրական, ադեկվատ պատկերացումներ: Սա նշանակում է, որ ընտանիքի անդամների դերային սոցիալականացումը ավելի հստակ ու իրական կլիներ, եթե նրանց սոցիալականացման գործընթացում ներգրավված անձինք առավել հստակ իրագործեին դերային սպասումների և ակնկալիքների վերաբերյալ իրենց գործառույթները:

2. Առաջարկում ենք ներընտանեկան փոխհարաբերությունների ախտածինությամբ պայմանավորված ամուսնալուծությունների վերաբերյալ տեսակետ, ըստ որի ամուսնալուծությունների և դերերի ախտահարման հնարավորինս կանխարգելման արդյունավետ միջոցներ են ապագա ամուսինների, ինչպես նաև

արդեն ամուսնացած անձանց շրջանում ընտանեկան առողջ դերային փոխհարաբերությունների թեմայով տարվող հատուկ դասընթացների կազմակերպումը և ընտանեկան հոգեթերապիան՝ այդ գործընթացներում ընտանիքի բոլոր անդամների ներգրավվածության ապահովմամբ: Գտնում ենք, որ ժամանակակից ընտանիքներում ամուսնա լուծությունների կանխարգելմանն ուղղված մյուս գործոնները, այն է՝ հասարակությունը, եկեղեցին, ինչու չէ, նաև պետությունը արդյունավետ չեն և մեծամասամբ որևէ լուրջ ազդեցություն չեն թողնում:

3. Ընտանեկան ախտածին, լարված փոխհարաբերությունները լուրջ սթրեսածին գործոն է հատկապես երեխաների համար, քանի որ նման երեխաներից շատերը իրականում կորցնում են հետագայում նորմալ ընտանիք կազմելու և ամուսնական հարաբերություններում հարմարվելու ունակությունը: Այդ առումով առաջարկում ենք ապագա ամուսինների, ընտանիքի հիմնախնդիրներով զբաղվողների և ընդհանրապես հասարակության համար պարզ և հասանելի դառնա ընտանիքի դերային մոտեցման գենետիկ փորձի դրույթը: Այս դրույթի էությունն այն է, որ ծնողը և երեխան սկսած իրենց առաջին հանդիպումից փոխադարձաբար սոցիալիզացնում են միմյանց, նրանց մեջ առաջանում են ծնողի, զավակի, հոր, մոր սոցիալական դերեր և կարգավիճակներ, որոնք տարիների ընթացքում ձևավորվում և զարգանում են՝ ստեղծելով ընտանիքի վերաբերյալ ուրույն մոտեցում: Եթե դերերի փոխադարձ ընդունման կարողությունը և սոցիալիզացիան իրական և ադեկվատ կերպով է ընթացել, ապա նման ընտանիքների երեխաները իրենց կողմից ապագայում կազմվելիք ընտանիքի վերաբերյալ դրսևորում են առողջ վերաբերմունք, իրական պատկերացումներ և ադեկվատ դերային փոխհարաբերություններ: Կարծում ենք, նման մոտեցումը թույլ է տալիս ավելի լավ պատկերացնել և հասկանալ ընտանիքի անդամների փոխադարձ հարմարման գործընթացները:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ադոյան Ա. Գ. Սիրո և ընտանիքի էվոլյուցիան: Գիրք I. - Եր. : Հայաստան, 1967. - 723 էջ:
2. Ադոյան Ա. Գ. Սիրո և ընտանիքի էվոլյուցիան: Գիրք II. - Եր. : Հայաստան, 1972. - 797 էջ:
3. Ամիրյան Ս. Ս. Խոհեր ընտանիքի միջանձնային փոխհարաբերությունների մասին // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2007. - №1-2. - էջ 103-109:
4. Արզումանյան Ա. Ս. Անբարենպաստ ընտանիքի երեխայի ես-ի դրսևորումների հոգեբանական յուրատիպությունը սոցիալականացման վաղ շրջանում // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2002. - №2. - էջ 37-45:
5. Արզումանյան Ս. Զ., Մկրտչյան Ս. Շ., Սարգսյան Վ. Ժ. Կիրառական հոգեբանության պրակտիկում. - Եր. : Զանգակ-97, 2002. - 391 էջ:
6. Գասպարյան Յու. Ա. Ժողովրդական ավանդույթները և սովորույթները հայ ընտանիքում: Սոցիոլոգիական հիմնահարցեր. - Եր. : Ճարտարագետ, 2003. - 172 էջ:
7. Գևորգյան Ս. Ա. Հայ ավանդական ընտանիքի էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական ակունքները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2001. - №2. - էջ 12-21:
8. Ընտանիք և ազգային հոգեբանություն / ՀՀ Լուս. նախ.: Մանկ. գիտ. ԳՀԻ; Գիտ. խմբ.՝ Ա. Ա. Նալչաջյան. - Եր. : Հայաստան, 1991. - 152 էջ:
9. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու. - Եր.: Բլանկիրատ, 2008. - 116 էջ:
10. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք: ՀՀ պաշտոնական տեղեկագիր. - Եր. : Տիգրան Մեծ, 2008. - 216 էջ:
11. Հարությունյան Ն. Ընտանիքի դերային համակարգը սոցիալական հոգեբանության համատեքստում // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2008. - №1-2. - էջ 66-71:
12. Հարությունյան Ս. Ֆ. Ներընտանեկան բախում, սիրուց մինչև ապահարզան // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2002. - №2. - էջ 33-37:

13. Հովսեփյան Ն. Միջանձնային հարաբերությունները ընտանիքում, հաղորդակցման խանգարումները և կոնֆլիկտները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2002. - №1-2. - էջ 107-113:
14. Մնացականյան Ն. Ս. Ամուսնալուծությունը և երեխան // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2002. - №3-4. - էջ 79-87:
15. Նալչաջյան Ա. Ա. Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական հարմարում. - Եր. : ՀՀ ԳԱԱ հրատ., 1968. - 132 էջ:
16. Նալչաջյան Ա. Ա. Ընտանեկան կյանքի փակ էջերը. կնոջ նկատմամբ ներընտանեկան բռնությունների խնդրի շուրջ. - Եր. : Զանգակ-97, 2003. - 240 էջ:
17. Նալչաջյան Ա. Ա. Ընտանիքի սոցիալական հոգեբանություն. ակնարկներ ծնողների և մանկավարժների համար. - Եր., 1992. - 231 էջ:
18. Նալչաջյան Ա. Ա. Սոցիալական հոգեբանություն. - Եր. : Զանգակ-97, 2004. - 432 էջ:
19. Սեդրակյան Ս. Ա. Ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը // Հոգեբանությունը և կյանքը. - Եր. : Զանգակ-97, 2010. - 9-23 էջ:
20. Սեդրակյան Ս. Ա. Ընտանիքի հոգեբանություն (մեթոդաբանական վերլուծություն). - Եր. : Ուրարտու համալսարան, 2010. - 465 էջ:
21. Սեդրակյան Ս. Ա. Ընտանիքի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության ժամանակակից հիմնախնդիրները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2008. - №3-4. - էջ 11-19:
22. Սեդրակյան Ս. Ա., Հարությունյան Ն. Ա., Ներընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և հաղթահարման ուղիները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2001. - №3. - էջ 47-56:
23. Алешина Ю. Е. Цикл развития семьи: исследования и проблемы // Вестник МГУ. - Сер. 14. - Психология. - 1987. - N2. - с. 60-72.
24. Алешина Ю. Е., Борисов И. Ю. Полоролевая дифференциация как комплексный показатель межличностных отношений супругов // Вестник МГУ. - Сер. 14. - Психология. - 1989. - N2. - с. 44-53.
25. Алешина Ю. Е., Гозман Л. Я., Дубровская Е. М. Социально-психологические методы исследования супружеских отношений. - М.: Изд. МГУ, 1987. - 120 с.
26. Андреева Т. В. Семейная психология. - СПб : Речь, 2004. - 244 с.

27. Бахадова Е. В. Неблагополучная семья как фактор формирования девиантного поведения детей // Вопросы психологии. - М. : Школа-Пресс, 2009. - N1. - с. 37-51.
28. Берберян А. С., Седракан С. А. Представление о семейных ценностях у современной молодежи России и Армении // Семья в контексте педагогических, психологических и социологических исследований. Материалы междунар. научно-практической конф. (5-6 октября 2010). - Пенза-Ереван-Прага, 2010. - с. 173-179.
29. Бернс Р. Развитие Я-концепции и воспитание. - М. : Прогресс, 1986. - 120 с.
30. Васильева Э. К. Семья и ее функции (демографо-статистический анализ). - М. : Статистика, 1975 - 184 с.
31. Витакер К., Бамберри В. Танцы с семьей: семейная терапия, символический подход, основанный на личностном опыте. - М. : Класс, 1997. - 176 с.
32. Волкова А. Н., Трепезникова Т. М. Методические приемы диагностики супружеских отношений // Вопросы психологии. - М., 1985. - N5. - с. 110-116.
33. Гозман Л. Я. Закономерности распада эмоциональных отношений // Психология и психотерапия семейных конфликтов / Под ред. Д. Я. Райгородского. - Самара : Бахрах-М, 2008. - с. 701-710.
34. Голод С. И. Моногашная семья: кризис или эволюция // Психология семьи / Под ред. Д. Я. Райгородского. - Самара : Бахрах М, 2002. - с. 74-87.
35. Голод С. И. Стабильность семьи: социологические и демографические аспекты. - Л. : Наука, 1984. - 136 с.
36. Гришина Н. В. Психология конфликта. - СПб : Питер, 2000. - 464 с.
37. Дорно И. В. Семейные проблемы // Психология и психотерапия семейных конфликтов / Под ред. Д. Я. Райгородского. - Самара : Бахрах М, 2003. - с. 203-294.
38. Дорно И. В. Современный брак: проблемы и гармония. - М. : Педагогика, 1990. - 272 с.
39. Дружинин В. Н. Психология семьи. - Екатеринбург: Деловая книга, 2000.- 176с.
40. Дружинин В. Н. Психология семьи, 3-е изд. - СПб : Питер, 2005. - 176 с.
41. Зацепин В. И. Брак и семья // Психология семьи / Под. ред. Д.Я. Райгородского. - Самара : Бахрах-М, 2009. - с. 422.
42. Зацепин В. И. Молодая семья. - Киев : Украина, 1991. - 314 с.

43. Здравомыслова О. М. Психологические и социально-культурные функции семьи // Психология семьи / Под. ред. Д. Я. Ройгородского : Самара : Бахрах-М, 2002, с. 82-85.
44. Здравомыслова О. М. Эволюция семьи и семейная политика в СССР. - М. : Наука, 1992. - 140 с
45. Имелинский К. Сексология и сексопатология. - М. : Медицина, 1986. - 424 с
46. Имелинский К. Психология половой жизни. - Хабаровск : Гармония, 1990. - 104 с.
47. Изард К. Психология эмоций. - СПб : Питер. - гл. 6. - с. 17.
48. Карабанова О. А. Психология семейных отношений и основы семейного консультирования. - М. : Гардарики, 2008. - 320 с.
49. Ковалев С. В. Психология современной семьи. - М. : Просвещение, 1988. - 208 с.
50. Кратохвил С. Психотерапия семейно-сексуальных дисгармоний. - М., Медицина, 1991. - с. 244-247.
51. Крайг Г. Психология развития. - СПб : Питер, 2001. - 205 с.
52. Кон И. С. Социология личности. - М. : Политиздат, 1967. - 384 с.
53. Майерс Д. Социальная психология. - СПб : Питер, 1997. - 688 с.
54. Малкина-Пых И. Г. Семейная терапия: справочник практического психолога. - М. : Эксмо, 2006. - 992 с.
55. Мид М. Культура и мир детства. - М. : Наука, 1988. - 429 с.
56. Минухин С., Фишман Р. Техника семейной терапии. - М. : Независимая фирма "Класс", 1998. - 304с.
57. Мишина Т. М. Психологическое исследование супружеских отношений при неврозах // Семейная психотерапия при нервных и психических заболеваниях / Под ред. В. К. Мягер и Р. А. Зачевицкого. - Л. : изд, 1987. - с. 13-20.
58. Налчаджян А. А. Этническая психология. - Ер., 2001. - 448 с.
59. Обозов Н. Н., Обозова А. Н. Диагностика супружеских затруднений // Психологический журнал. - М., 1982. - т. 3. - N2. - с. 147-151.
60. Обозов Н. Н., Обозова А. Н. Три подхода к исследованию психологической совместимости // Психологический журнал. - М., 1981. - N6. - с. 98-101.
61. Обозов Н. Н. Межличностные отношения. - Л. : Изд-во ЛГУ, 1979. - с. 151.

62. Обозов Н. Н. Психология конфликта. - ЛНПП : Облик, 2001. - с. 51.
63. Обозова А. Н. Психологические проблемы службы семьи и брака // Вопросы психологии. - М., 1984. - №3. - с. 104-110.
64. Обуховский К. Психология влечений человека. - М. : Прогресс, 1972. - 248 с.
65. Олифинович Н. И., Зинкевич Куземкина Т. А., Велента Т. Ф. Психология семейных кризисов. - СПб : Реч, 2008. - с. 360.
66. Психологический словарь / Под ред: В. П. Зинченко, Б. Г. Мещерякова. - М. : АСТ. Астрель, Транзиткнига, 2006. - с. 255.
67. Психология и психотерапия семейных конфликтов: хрестоматия / Под ред. Д. Я. Райгородского. - Самара : Бахрах-М, 2003. - 736 с.
68. Психология семьи / Под ред. Д. Я. Райгородского. - Самара : Бахрах-М, 2002. - с. 752.
69. Сатир В. Вы и ваша семья: руководство по личностному росту. 2-е изд. / Ин-т общегуман. исслед. - М. : Апрель-Пресс, 2007. - 288 с.
70. Сатир В. Психотерапия семьи. - СПб : Ювента, 1999. - с. 250.
71. Седрамян С. А. Из истории изучения психологических вопросов семьи // Актуальные проблемы истории психологии (всероюз. конф.). - Ер., 1984. - с. 105-111.
72. Седрамян С. А. Социальная психология семьи. - Москва-Воронеж, 2011. - 368 с.
73. Смелзер Н. Социология. - М. : Феникс, 1994. - 390 с.
74. Столин В. В., Романов Т. Л., Бутенко Г. П. Опросник удовлетворенности браком // Вестник МГУ. - Сер. 14. - Психология. - 1984. - №2. - с. 54-60.
75. Столин В. В. Психологические основы семейной терапии // Вопросы психологии. - М., 1982. - №4. - с. 104-115.
76. Столин В. В. Самосознание личности. - М. : Изд. МГУ, 1983. - 286 с.
77. Сысенко В. А. Молодежь вступает в брак. - М. : Мысль, 1988. - с. 254
78. Сысенко В. А. Супружеские конфликты. - М. : Мысль, 1989. - 176 с.
79. Тийт Э. Факторы риска, вызывающие расторжение брака, // Психология семьи / Под ред. Р.Я. Райгородского. - Самара, : Бахрах-М, 2002. - с. 721-733.
80. Хейли Д. Стратегии семейной терапии / Д. Хейли, М. Эриксон. - М., 2000. - 512 с.



81. Худоян С. С. Онтогенетические перестройки самосознания и кризисы развития личности. - Ер. : Зангак-97, 2010. - 232 с.
82. Шепанский Я. Элементарные понятия социологии. - М. : Прогресс, 1969. - 239 с
83. Шибутани Т. Социальная психология. - М. : Прогресс, 1969. - 535 с.
84. Эйдемиллер Э. Г., Юстицкис В. Психология и психотерапия семьи. 4-е изд. - СПб : Питер, 2008. - 672 с.
85. Эриксон Э. Детство и общество. - СПб : Речь, 2002. - 416 с.
86. Barker Ph. Basic Family Therapy. - London : Granade,1981. - p. 29, 296, Richter H. E. Patient Families. - Rowohit : Reinben, 1970. - p. 35.
87. Bowen M. Family Therapy in clinical practice. - N.Y : Aronson,1978. - 565 p.
88. Brown R. Social Psychology. 2nd. - N.Y.,1985. - 342 p.
89. Danziger K., Socialization. Harmonsworth (England). - N.Y. : Penguin Books, 1978. - p. 58-59.
90. Linton R. Culture and mental Disorders / Ed. by G. Deveroux. - Springfield,1956. - 176 p.
91. Mead G. H. Mind, Self and Society. - Chicago, 1934. - p. 237-243.
92. Parsons T. American Society: Toward a Theory of Societal Community (The Yale Cultural Sociology Series) / Ed. by G. Sciortino. - Paradigm, 2007. - 537 p.
93. Sarbin T. Role Theory / T.Sarbin,V.L.Allen. The handbook of Social Psychology / Ed. by G. Lindzey, E Aronson. - Reading (Mass),1968. - Vol.1. - p. 488-567.
94. Sedrakyan S. A. Children's fears and their overcoming in the family. - Jerusalem,1997. - p. 41-42.
95. Sedrakyan S. A. Principal Causes of Conflicts in the Armenian Families. - Jerusalem,1997. - p. 113-114.
96. Sedrakyan S. The influence of Economic Changes on the Family Psychological Atmosphere. Sweden, 2000.

«ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ»

(ըստ Վ. Վ. Ստոլինի)

1. Երբ մարդիկ միասին երկար են ապրում, ինչպես դա լինում է ամուսնության մեջ, նրանք ժամանակի ընթացքում անխուսափելիորեն կորցնում են միմյանց ընկալելու սրությունը, իսկ նրանց փոխըմբռնումը խախտվում է:

- ա) ճիշտ է
- բ) չգիտեմ
- գ) ճիշտ չէ

2. Իմ հարաբերությունները ամուսնու (կնոջ) հետ ինձ բերում են.

- ա) անհանգստություն և տառապանք
- բ) դժվարանում եմ պատասխանել
- գ) ուրախություն և բավարարում

3. Հարազատներս ու ընկերներս իմ ամուսնությունը գնահատում են որպես.

- ա) հաջողակ
- բ) ինչ-որ միջին մի բան
- գ) անհաջող

4. Եթե կարողանայի, ապա շատ բան կփոխեի իմ ամուսնու (կնոջ) բնավորության մեջ:

- ա) ճիշտ է
- բ) չգիտեմ
- գ) ճիշտ չէ

5. Ժամանակակից ամուսնության խնդիրներից մեկն այն է, որ ժամանակի ընթացքում նրանում ամեն ինչի գրավչությունը նվազում է, այդ թվում՝ սեռական հարաբերությունները ամուսնու (կնոջ) հետ:

- ա) համաձայն եմ
- բ) դժվար է ասել
- գ) համաձայն չեմ

6. Երբ իմ ընտանեկան կյանքը համեմատում եմ ընկերներիս և ծանոթներիս ընտանեկան կյանքի հետ, ապա ինձ թվում է, որ ես.

ա) ուրիշներից դժբախտ եմ

բ) դժվար է ասել

գ) ուրիշներից երջանիկ եմ

7. Կյանքն առանց ընտանիքի և մտերիմ մարդու՝ չափից ավելի թանկ գին է լիատար ինքնուրույնության համար:

ա) ճիշտ է

բ) դժվար է ասել

գ) ճիշտ չէ

8. Կարծում եմ, որ առանց ինձ իմ ամուսնու (կնոջ) կյանքը կլինի անլիարժեք:

ա) համաձայն եմ

բ) չգիտեմ

գ) համաձայն չեմ

9. Ամուսնական կյանքում մարդկանց մեծամասնությունը խաբվում է իր սպասելիքներում:

ա) ճիշտ է

բ) դժվար է ասել

գ) ճիշտ չէ

10. Ես արդեն վաղուց եմ մտածում բաժանվելու մասին, և միայն մի շարք հանգամանքներ են խանգարում ինձ ընդունելու այդ որոշումը:

ա) ճիշտ է

բ) դժվար է ասել

գ) ճիշտ չէ

11. Եթե ինձ կրկին հնարավորություն տրվեր ամուսնանալու, ապա իմ կինը (ամուսինը) կլիներ.

ա) ուրիշ մարդ

բ) չգիտեմ

գ) նույնը

12. Ես հպարտանում եմ նրանով, որ իմ կողքին կա այնպիսի մարդ, ինչպիսին իմ ամուսինն է (կինը):

- ա) ճիշտ է
- բ) դժվար է ասել
- գ) ճիշտ չէ

13. Իմ ամուսնու (կնոջ) թերությունները, ցավոք, գերակշռում են արժանիքներին:

- ա) ճիշտ է
- բ) չգիտեմ
- գ) ճիշտ չէ

14. Մեր երջանիկ կյանքին խանգարող հիմնական խոչընդոտները թաքնված են իմ ամուսնու (կնոջ) բնավորության մեջ:

- ա) համաձայն եմ
- բ) դժվար է ասել
- գ) համաձայն չեմ

15. Սկզբնական զգացմունքները, որոնցով ես ամուսնացել եմ, ժամանակի հետ ուժեղացել են:

- ա) համաձայն եմ
- բ) չգիտեմ
- գ) համաձայն չեմ

16. Ամուսնությունը նվազեցնում է մարդու ստեղծագործական ներուժը և նրա հնարավորությունները:

- ա) ճիշտ է
- բ) չգիտեմ
- գ) ճիշտ չէ

17. Իմ ամուսինը (կինը) ունի այնպիսի արժանիքներ, որոնք փոխհատուցում են նրա թերությունները:

- ա) համաձայն եմ
- բ) դժվար է ասել
- գ) համաձայն չեմ

18. Իմ ամուսնության մեջ, միմյանց հուզական աջակցություն ցույց տալու հարցում, ցավոք, ամեն ինչ չէ, որ բարեհաջող է դասավորված:

- ա) ճիշտ է
- բ) չգիտեմ

գ) ճիշտ չէ

19. Ինձ թվում է, որ իմ ամուսինը (կինը) հաճախ է հիմարություններ անում. անպատեհ խոսում է, անտեղի կատակում և այլն:

ա) համաձայն եմ

բ) դժվար է ասել

գ) համաձայն չեմ

20. Իմ ընտանեկան կյանքը քիչ է կախված իմ կամքից:

ա) ճիշտ է

բ) չգիտեմ

գ) ճիշտ չէ

21. Իմ ընտանեկան կյանքը, պարզվեց, այնպիսին չէ, ինչ որ ես սպասում էի:

ա) ճիշտ է

բ) չգիտեմ

գ) ճիշտ չէ

22. Իրավացի չեն նրանք, ովքեր կարծում են, որ մարդը ընտանիքում չի կարող հույս դնել իր հանդեպ հարգանքի վրա:

ա) համաձայն եմ

բ) դժվար է ասել

գ) համաձայն չեմ

23. Որպես կանոն, իմ ամուսնու (կնոջ) միջավայրը (նրա ներկայությունը) ինձ հաճույք է պատճառում:

ա) համաձայն եմ

բ) չգիտեմ

գ) համաձայն չեմ

24. Իմ ամուսնական կյանքում չկա և չի եղել ոչ մի լուսավոր պահ:

ա) ճիշտ է

բ) չգիտեմ

գ) ճիշտ չէ

**ԱՆՁԻ ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՆԱԽԱՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ**

**ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

**(ըստ Կ. Թոմասի)**

1. ա) Երբեմն ես ուրիշներին հնարավորություն եմ ընձեռում իրենց վրա վերցնել վիճելի հարցի լուծման պատասխանատվությունը:  
բ) Փոխանակ քննարկելու այն, ինչում մենք հակադրվում ենք, ես փորձում եմ ուշադրություն դարձնել այն բանին, որի հետ մենք երկուսս էլ համաձայն չենք:
2. ա) Ես փորձում եմ փոխզիջումային լուծումներ գտնել:  
բ) Ես փորձում եմ գործերը կարգավորել՝ հաշվի առնելով իմ և ուրիշի շահերը:
3. ա) Սովորաբար ես համառորեն ձգտում եմ հասնել իմ ուզածին:  
բ) Ես փորձում եմ դիմացինիս հանգստացնել և գլխավորապես պահպանել մեր հարաբերությունները:
4. ա) Ես փորձում եմ գտնել փոխզիջումային տարբերակ:  
բ) Երբեմն ես զոհում եմ սեփական շահերս՝ հանուն ուրիշների շահերի:
5. ա) Հարթելով վիճելի իրադրությունը՝ ես միշտ փորձում եմ աջակցություն գտնել դիմացինի մոտ:  
բ) Ես փորձում եմ ամեն ինչ անել՝ անօգուտ լարվածությունից խուսափելու համար:
6. ա) Ես փորձում եմ խուսափել տհաճություններից:  
բ) Ես փորձում եմ հասնել իմ ուզածին:
7. ա) Ես փորձում եմ վիճելի հարցի լուծումը հետաձգել՝ ժամանակի ընթացքում այն վերջնականապես լուծելու համար:  
բ) Ես հնարավոր եմ համարում մի բանում զիջել՝ մեկ այլ բանի հասնելու համար:
8. ա) Սովորաբար ես համառորեն ձգտում եմ հասնել իմ ուզածին:  
բ) Ես առաջին հերթին փորձում եմ հստակորեն հասկանալ առաջադրված հարցերի ու շահերի էությունը:

9. ա) Կարծում եմ, միշտ չէ, որ արժե անհանգստանալ ինչ-որ տարածայնությունների պատճառով:  
բ) Ես ջանքեր եմ գործադրում, որ հասնեմ իմ ուզածին:
10. ա) Ես համառորեն ձգտում եմ հասնել իմ ուզածին:  
բ) Ես փորձում եմ գտնել փոխզիջումային լուծում:
11. ա) Առաջին հերթին փորձում եմ հասկանալ, թե որն է առաջադրված հարցերի էությունը:  
բ) Ես փորձում եմ հանգստացնել դիմացինիս և պահպանել մեր հարաբերությունները:
12. ա) Հաճախ խուսափում եմ վեճեր առաջացնող դիրք գրավել:  
բ) Ես դիմացինիս հնարավորություն եմ տալիս ինչ-որ տեղ պաշտպանել իր կարծիքը, եթե նա էլ ինձ է ընդառաջում:
13. ա) Ես առաջարկում եմ միջին տարբերակ:  
բ) Ես պնդում եմ, որ արվի իմ ասածով:
14. ա) Ես դիմացինիս հայտնում եմ իմ տեսակետը և հարցնում նրա կարծիքը:  
բ) Ես փորձում եմ դիմացինիս ցույց տալ իմ հայացքների տրամաբանականությունը և առավելությունը:
15. ա) Ես փորձում եմ հանգստացնել դիմացինիս և գլխավորապես պահպանել հարաբերությունները:  
բ) Ես փորձում եմ անել անհրաժեշտ ամեն ինչ՝ լարվածությունից խուսափելու համար:
16. ա) Ես փորձում եմ ուրիշի զգացմունքներին չդիպչել:  
բ) Ես փորձում եմ դիմացինիս համոզել իմ հայացքների առավելությունը:
17. ա) Սովորաբար ես համառորեն ձգտում եմ հասնել իմ ուզածին:  
բ) Ես փորձում եմ ամեն ինչ անել անիմաստ լարվածությունից խուսափելու համար:
18. ա) Եթե դա կերջանկացնի ընկերոջս, ես նրան հնարավորություն կտամ մնալ իր կարծիքին:  
բ) Ես ուրիշին հնարավորություն եմ տալիս ինչ-որ տեղ մնալ իր կարծիքին, եթե նա էլ ինձ է ընդառաջում:

19. ա) Առաջին հերթին փորձում եմ հասկանալ առաջադրված բոլոր հարցերի էությունը:
- բ) Ես փորձում եմ հետաձգել վիճելի հարցի լուծումը՝ հետագայում այն վերջնականապես լուծելու ակնկալիքով:
20. ա) Ես փորձում եմ անմիջապես հարթել մեր տարածայնությունները:
- բ) Ես փորձում եմ գտնել երկուսիս ձեռքբերումների ու կորուստների լավագույն համակցությունը:
21. ա) Բանակցություններ վարելիս փորձում եմ ուշադիր լինել դիմացինիս ցանկությունների նկատմամբ:
- բ) Ես միշտ հակված եմ հիմնահարցի ուղղակի քննարկմանը:
22. ա) Ես փորձում եմ իմ և դիմացինիս տեսակետների միջին տարբերակ գտնել:
- բ) Ես պնդում եմ իմ ցանկությունները:
23. ա) Որպես կանոն, ես մտահոգված եմ երկուսիս ցանկությունների բավարարմամբ:
- բ) Երբեմն ես ուրիշներին հնարավորություն եմ տալիս իրենց վրա վերցնել վիճելի հարցի լուծման պատասխանատվությունը:
24. ա) Եթե դիմացինիս իր տեսակետը շատ կարևոր է թվում, ապա ես կփորձեմ ընդառաջ գնալ նրա ցանկություններին:
- բ) Ես դիմացինիս փորձում եմ համոզել գնալ փոխզիջման:
25. ա) Ես փորձում եմ դիմացինիս ցույց տալ իմ հայացքների տրամաբանականությունը և առավելությունը:
- բ) Բանակցություններ վարելիս ես փորձում եմ ուշադիր լինել դիմացինիս ցանկությունների հանդեպ:
26. ա) Ես առաջարկում եմ միջին տարբերակ:
- բ) Ես համարյա միշտ մտահոգված եմ նրանով, որ բավարարեմ յուրաքանչյուրի ցանկությունը:
27. ա) Հաճախ ես խուսափում եմ վեճեր առաջացնող դիրք գրավելուց:
- բ) Եթե դա դիմացինիս երջանկություն կպարզևի, ապա ես հնարավորություն կտամ նրան հավատարիմ մնալ իր տեսակետին:
28. ա) Սովորաբար ես համառորեն ձգտում եմ հասնել իմ ուզածին:



բ) Հարթելով իրադրությունը՝ ես սովորաբար փորձում եմ օգնություն գտնել դիմացինիս մեջ:

29. ա) Ես առաջարկում եմ միջին տարբերակ:

բ) Կարծում եմ՝ միշտ չէ, որ արժե անհանգստանալ ինչ-որ տարածայնությունների պատճառով:

30. ա) Ես փորձում եմ ուրիշների զգացմունքներին չդիպչել:

բ) Վիճելի հարցի դեպքում ես միշտ այնպիսի դիրք եմ գրավում, որ ես և մյուս շահագրգիռ անձը միասին կարողանանք հասնել հաջողության:

## «ԸՆՏԱՆԻՔԻ ՆԿԱՐԸ»

(թեստ)

## Նկարի գնահատման նախանշանները

NN	Ը ն դ գ ծ վ ա ծ ն ա խ ա ն շ ա ն ն եր	Նշումներ նախանշանների առկայության մասին
1.	ընդհանուր նկարի չափը	
2.	ընտանիքի անդամների քանակը	
3.	ընտանիքի անդամների պատկերված չափերի համապատասխանությունը	
	-մայրը	
	-հայրը	
	-քույրը	
	-եղբայրը	
	-պապը	
	-տատը	
4.	ընտանիքի անդամների միջև հեռավորությունը	
	իրենց միջև որևէ իրի առկայություն	
5.	կենդանիների առկայությունը	
6.	պատկերման ձևը	
	-սխեմատիկ պատկերում	
	-ռեալիստական պատկերում	
	-գեղագիտական պատկերում	
	-նկարի ներսում, բնանկարի ֆոնի վրա	
	-փոխաբերական պատկերում	
	-շարժման, գործողության մեջ	
7.	դրական հույզերի դրսևորման աստիճանը (միավորներով՝ 1, 2, 3 ...)	
	նեգատիվ հույզերի դրսևորման աստիճանը (միավորներով՝ 1, 2, 3 ...)	

լրացման կոկիկության աստիճանը (միավորներով՝ 1, 2, 3 ...)	
--	--

**Հավելված 4**

**ՀԵՏԱԶՈՏՎՈՂԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԱՎԱՐՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

1. Համեմատած ընտանիքների մեծամասնության հետ՝ իմ ընտանիքը ...
2. Կնոջ (տղամարդու) իդեալը ինձ համար հանդիսանում է ...
3. Եթե բոլորն ինձ հակառակ են, ապա ...
4. Ես միշտ ուզում եմ ...
5. Կարծում եմ, որ իմ հայրը հաճախ ...
6. Իմ մայրը և ես ...
7. Կարծում եմ, որ իսկական ընկերը ...
8. Իմ ընտանիքը ինձ հետ վարվում է ինչպես ...
9. Կարծում եմ, որ աղջիկների (տղաների) մեծամասնությունը ...
10. Կարծում եմ, որ բավականին ընդունակ եմ, որ ...
11. Ես կարող եմ երջանիկ լինել, եթե միայն ...
12. Ես կուզենայի, որ իմ հայրը ...
13. Ես կուզենայի, որ իմ մայրը ...
14. Չեմ սիրում մարդկանց, որոնք ...
15. Ինձ ծանոթ ընտանիքների մեծամասնությունը ...
16. Կարծում եմ, որ կանանց (տղամարդկանց) մեծամասնությունը ...
17. Իմ ամենամեծ թուլությունը ...
18. Իմ թաքուն ձգտումը կյանքում ...
19. Կուզենայի, որ իմ հայրը ...
20. Կարծում եմ, որ մայրերի մեծամասնությունը ...
21. Ամենից շատ սիրում եմ այն մարդկանց, որոնք ...
22. Երբ ես երեխա էի, իմ ընտանիքը ...
23. Ինձ դուր չի գալիս, որ կանայք (տղամարդիկ) ...
24. Երբ սկսում է իմ բախտը չբերել, ես ...
25. Ամենից շատ կյանքում կուզենայի ...
26. Կարծում եմ, որ իմ հայրը ...

27. Ես սիրում եմ իմ մայրիկին, բայց ...

28. Երբ ես բացակայում եմ, իմ ընկերները ...

**Հավելված 5**

**ՀԵՏԱԶՈՏՎՈՂԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ԹԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ**

***Կանանց փարբերակ***

1. Մարդու տրամադրությունը և ինքնազգացողությունը կախված է նրա սեռական պահանջների բավարարվածությունից:
2. Ամուսնությունում երջանկությունը կախված է ամուսինների սեռական ներդաշնակությունից:
3. Սեռական հարաբերությունը գլխավորն է ամուսնու և կնոջ հարաբերություններում:
4. Ամուսնության մեջ գլխավորն այն է, որ ամուսինը և կինը ունենան ընդհանուր շատ հետաքրքրություններ:
5. Ամուսինը ընկեր է, ով կհսում է իմ հետաքրքրությունները, կարծիքները, զբաղմունքները:
6. Ամուսինը նախ և առաջ ընկեր է, ում հետ կարելի է խոսել սեփական գործերի մասին:
7. Ամուսնու ամենագլխավոր հոգան է՝ ապահովել ընտանիքի նյութական բարեկեցությունը և կենցաղային հարմարավետությունը:
8. Ամուսինը պետք է զբաղվի տնային տնտեսությամբ կնոջ հետ հավասար:
9. Ամուսինը պետք է կարողանա սպասարկել ինքն իրեն, և չսպասի, որ կինը իր վրա վերցնի նրա բոլոր հոգսերը:
10. Ամուսինը պետք է զբաղվի երեխաներով կնոջից ոչ պակաս:
11. Ես ուզում եմ, որ իմ ամուսինը սիրի երեխաների:
12. Տղամարդու մասին ես դատում եմ նրանով, թե նա ինչպիսի (լավ կամ վատ) հայր է իր երեխաների համար:
13. Ինձ դուր են գալիս եռանդուն, գործնական տղամարդիկ:

14. Ես շատ եմ գնահատում այն տղամարդկանց, ովքեր լրջորեն տարված են իրենց աշխատանքով:

15. Ինձ համար շատ կարևոր է, թե ինչպես են գնահատվում ամուսնուս գործնական և մասնագիտական որակները աշխատանքի վայրում:

16. Ամուսինը պետք է կարողանա ընտանիքում ստեղծել ջերմ, վստահություն ներշնչող մթնոլորտ:

17. Ինձ համար գլխավորն այն է, որ իմ ամուսինը ինձ լավ հասկանա և ընդունի ինձ այնպիսին, ինչպիսին ես կամ:

18. Ամուսինը նախ և առաջ ընկեր է, ով ուշադիր և հոգատար է իմ ապրումների, տրամադրության, վիճակի հանդեպ:

19. Ինձ դուր է գալիս, երբ իմ ամուսինը գեղեցիկ և մոդայիկ է հագնված:

20. Ինձ դուր են գալիս բարձրահասակ, տեսքով տղամարդիկ:

21. Տղամարդը պետք է այնպիսի տեսք ունենա, որ նրան հաճելի լինի նայել:

22. Կնոջ ամենագլխավոր հոգան այն է, որ ընտանիքում բոլորը լինեն խնամված/սպասարկված:

23. Ես միշտ գիտեմ, ինչ գնել իմ ընտանիքի համար:

24. Ես հավաքում եմ տնտեսուհու համար օգտակար խորհուրդներ՝ ինչպես պատրաստել համեղ ուտեստներ, պահածոյացնել բանջարեղեններ, մրգեր և այլն:

25. Երեխայի դաստիարակության մեջ գլխավոր դեր է խաղում մայրը:

26. Ես չեմ վախենում դժվարություններից՝ կապված երեխայի ծնվելու և դաստիարակելու հետ:

27. Ես սիրում եմ երեխաներ և հաճույքով եմ զբաղվում նրանց հետ:

28. Ես ձգտում եմ կյանքում հասնել իմ տեղին:

29. Ես ուզում եմ դառնալ իմ գործի լավ մասնագետ:

30. Ես հպարտանում եմ, երբ ինձ հանձնարարում են դժվար և պատասխանատու աշխատանք:

31. Մտերիմները և ընկերները հաճախ են դիմում ինձ՝ խորհրդի, օգնության կամ աջակցության համար:

32. Շրջապատողները հաճախ են ինձ վստահում իրենց խնդիրները:

33. Ես միշտ անկեղծորեն և կարեկցանքի զգացումով եմ հանգստացնում և աջակցում մարդկանց, ովքեր ունեն դրա կարիքը:

34. Իմ տրամադրությունը շատ անգամ կախված է նրանից, թե ես ինչ տեսք ունեմ:

35. Ես սիրում եմ գեղեցիկ հագուստ, կրում եմ զարդեր, օգտվում եմ կոսմետիկայից:

36. Ես մեծ նշանակություն եմ տալիս իմ արտաքին տեսքին:

### **Տղամարդկանց տարբերակ**

1. Մարդու տրամադրությունը և ինքնազգացողությունը կախված է սեռական պահանջների բավարարվածությունից:

2. Ամուսնության մեջ երջանկությունը կախված է ամուսինների սեռական ներդաշնակությունից:

3. Սեռական հարաբերությունը գլխավորն է ամուսնու և կնոջ հարաբերություններում:

4. Ամուսնության մեջ գլխավորը այն է, որ ամուսինը և կինը ունենան ընդհանուր շատ հետաքրքրություններ:

5. Կինը ընկեր է, ով կիսում է իմ հետաքրքրությունները, կարծիքները, զբաղմունքները:

6. Կինը նախ և առաջ ընկեր է, ում հետ կարելի է խոսել սեփական գործերի մասին:

7. Կնոջ ամենագլխավոր հոգան այն է, որ ընտանիքում բոլորը լինեն կերակրված և խնամված:

8. Իմ աչքերում կինը շատ բան է կորցնում, եթե նա վատ տնտեսուհի է:

9. Կինը կարող է հպարտանալ իրենով, եթե նա իր տան լավ տնտեսուհին է:

10. Ես ուզում եմ, որ իմ կինը սիրի երեխաներին և նրանց համար լինի լավ մայր:

11. Կինը, որը նեղվում է մայրությունից, ոչ լիարժեք կին է:

12. Ըստ ինձ՝ կնոջ մեջ գլխավորն այն է, որ նա լինի լավ մայր երեխաների համար:

13. Ինձ դուր են գալիս գործնական և եռանդուն կանայք:

14. Ես շատ եմ գնահատում կանանց, ովքեր լրջորեն զբաղված են իրենց գործով:

15. Ինձ համար շատ կարևոր է, թե ինչպես են գնահատվում իմ կնոջ գործնական և մասնագիտական որակները աշխատանքի վայրում:

16. Կինը նախ և առաջ պետք է ստեղծի և պահպանի ջերմ, վստահելի մթնոլորտ:

17. Ինձ համար գլխավորն այն է, որ իմ կինը լավ հասկանա ինձ և ընդունի ինձ այնպիսին, ինչպիսին ես կամ:
18. Կինը նախ և առաջ ընկեր է, ով ուշադիր է ու հոգատար իմ ապրումների, տրամադրության, վիճակի հանդեպ:
19. Ինձ դուր է գալիս, երբ իմ կինը գեղեցիկ և մոդայիկ է հագնված:
20. Ես շատ եմ գնահատում կանանց, որոնք կարողանում են գեղեցիկ հագնվել:
21. Կինը պետք է այնպիսի տեսք ունենա, որ իր վրա ուշադրություն դարձնեն:
22. Ես միշտ գիտեմ, թե ինչ է պետք գնել մեր տան համար:
23. Ես սիրում եմ զբաղվել տնային գործերով:
24. Ես կարող եմ վերանորոգել բնակարանը և դրա հարդարումն անել, նորոգել կենցաղային տեխնիկան:
25. Երեխաները սիրում են խաղալ ինձ հետ, սիրով շփվում են, գալիս են ինձ մոտ:
26. Ես շատ եմ սիրում երեխաներ և կարողանում եմ նրանց հետ զբաղվել:
27. Ես ակտիվ մասնակցություն կունենայի իմ երեխայի դաստիարակության մեջ, եթե նույնիսկ մենք կնոջս հետ որոշեինք բաժանվել:
28. Ես ձգտում եմ կյանքում հասնել իմ տեղին:
29. Ես ուզում եմ դառնալ լավ մասնագետ իմ գործում:
30. Ես հպարտ եմ, երբ ինձ հանձնարարում են դժվար և պատասխանատու աշխատանք:
31. Մտերիմները և ընկերները հաճախ են դիմում ինձ՝ խորհրդի, օգնության կամ աջակցության համար:
32. Շրջապատողները հաճախ են ինձ վստահում իրենց խնդիրները:
33. Ես միշտ անկեղծորեն և կարեկցանքի զգացումով հանգստացնում և աջակցում եմ դրա կարիքն ունեցող մարդկանց:
34. Իմ տրամադրությունը շատ անգամ կախված է նրանից, թե ես ինչ տեսք ունեմ:
35. Ես աշխատում եմ կրել այն հագուստը, որն ինձ սազում է:
36. Ես բժախնդրորեն եմ վերաբերվում կոստյումի ձևվածքին, վերնաշապիկի ձևին, փողկապի գույնին: